




828

L 2.5









ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Ռ

№ 7 1889

ՅՈՒՂԻՍ

1889 № 7

Ա. Թ Ա. Զ Ա. Տ Ի Ռ

Կրեա

1 ԱԱՐԴԱՅԱՆՑ ԼԵԽՈՆ . . . . .	991	ԱԱՐԴ ԹԻՐԱՄԱԳ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ (Հար.):
2 ՄԱՆՈՒԷԼԵՍՆՅ ԼԵԽՈՆ . . . . .	1016	Լմ զրիչը-իմ ծառան (բանաստեղծ.):
3 " " " . . . . .	1018	Արամանք (բանաստեղծութիւն):
4 ԱՏՐՓԵՏԵԱՆ ԱԱՐԴԻՍ . . . . .	1019	Խե Վարապետ (Հարուճակալութիւն):
5 ԱՐԴԻԵՍԱՆ . . . . .	1077	Երդ և մեռազ (բանաստեղծութիւն):
6 ՔԱԼԱՆԹՈՐ ԱԱՐԵՔԱՆԵՐ . . . . .	1078	Յ. Յավհաննիսեանի բանաստեղծ.
7 ՔԱԼԱՆԹՈՐ ԶՈՒՐԴ . . . . .	1094	Կասօնական ասասպել (բանաս.):
8 Տ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ (Պղարցի) . . . . .	1100	Բարակացալի ծագման պատճառ.
9 Լ. Ա. . . . .	1105	«Յեցիր»:
10 Յ. ՏԻՐ-ԱԵՐԱՔԱՆՅՑ. . . . .	1109	Կրօնի դասագրքեր:
11 ԼՈՒՄԵՆԻ . . . . .	1116	Ամառալ Քրօնիկ:
12 ԽՄԲ. . . . .	1127	«Մարգարի նամակազրութիւնը»:


ՅԱՅԱՐԱՐՈՒԹԵՒՆՆԵՐ:

Թ Ի Ց Լ Ի Ո

Մ. Գ. ԱՅՏԻՆԵԱՆՑ: ՏՊԱՐԱԿ

Տիպոգրիա M. D. Ռումիանց, ուղղ. պող. սու. ձ. № 44.

1889



# ՄՈՒԽԻՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱՎԴԻՔ

№ 7 1889

ՅՈՒԼԻՒ

1889 № 7

ԱՊԱԶԻՆ ՏԱՐԻ

ՅԻԳԻՆ  
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ  
1889

Дозволено цензурою Тифлисъ, 22-го Июня, 1889 года.

Типографія М. Д. Ротинянца на Гол. просп. домъ № 41.

# ԱՅՅ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

(հայ տուրիստի յիշողութիւններից)

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

(Շաբաթնակութիւն 1)

## III.

ՏԱՄՆՈՒԹՅ ՕՐ ԿԱՐԻՆՈՒՄ

...Բնակեալ ի կեանս իւրեանց  
երբե և թանձքամած խաւարի  
և ոգիքն արգելեալք ի մարմնի  
երբե զեենդանի ի գերեզմանի...

ԵՐԻՇԵ:

Մենք գտնուում ենք Բարձր-Հայքի կենդրոնում, Կարին քաղաքի մօտ, աւելի քան 6000 տոնաչափ բարձր ծովի մակերեւոցթից։ Արեւ է և կէսօրից անց։ Նրջակայ բնութիւնը թաղւած է նոր եկած ձիւնի տակ։ Աջ ու ձախ բարձրաւանդակների վերաց զետեղւած ամրութիւնների միան սրածալը երկար ցիցերն են երեսում ձիւնի թանձր խաւի տակից։ Մեր առջև Կարինն է, իսկ աւելի հեռու՝ Կարինի դաշտը և յետոց հօրիզոնում՝ սարերը։ Ահա՝ անցանք Թօփ-Դաղի մօսից և արդէն քաղաքի հաստ պարիսպների տակն ենք։ Այդ պարիսպների շարունակութիւնը աշ և ձախ կազմում են վիթխարի սարերի մի շարք։ Այնպէս որ մուտքը արևելքան կողմից թէ

1) Տե՛ս «Մուրճ»-ի 4 և 5 համարները։

գէպի քաղաքը և թէ Կարինի պաշտը փակւած է և ամուր պաշտապանած:

Խալիլի և երկու ձիաւոր տաճիկների հետ, որոնք Կավարօյնուսարը բարձրանալիս ընկերացան մեզ, անցայ պարսպի մէջ երեւացող երկար կամարակապ անցքով և մոտ քաղաքը: Կարբանների մօտ կանդնած էին տաճիկ պահապան զինորներ, իսկ աջ կողմը գտնուող մի շինութեան առջև—մի քանի պաշտօնեաներ: Ոչ ոք ինձ չարգելեց շարունակել ճանապարհութեան բաց ուր դիմել այդ անծանօթ քաղաքում, ո՞րտեղ իջնել:

Հասան-ղալայի խանների պէս իջեաններից զզւել էի, իսկ թէ քաղաքում կայ փոքր ի շատէ մարդավարի տեղ մի քանի օր, գուցէ և շաբաթ ապրելու մինչև իմ Մուշ գնալս վճռւիլը՝ այդ չը զիտեի ոչ ես, ոչ էլ Խալիլը: Ես մտաբերեցի Եջմիածնի բարեկամներիս խորհուրդը՝ Կարին համնելուն պէս դիմել Սանասարեան վարժարանի պատուելի ուսուցիչներին, որոնց հիւրասիրութեան ու քաղաքավարութեան վերայ նոքա այնքան մեծ վսուահութիւն ունէին, որ աւելորդ էլ էին համարել մինչև անդամ յանձնարարական նամակ տալու ինձ: Վճռեցի դիմել այդ ազնիւ էֆէնդիներին և ինդրել, որ օգնեն ինձ Կարինի «հիւրասէր» հայերից մէկի տան մէջ մի յարմար սենեակ վարձելու:

—Դու տա՛ր ինձ ուղղակի շալոց մեծ մէքդէքը, որը շինել է մի հարուստ ռուսահայ, ասացի ես Խալիլին. (այդ կերպ միայն կարելի էր հասարակ տաճկին հասկացնել Սանասարեան վարժարանի մասին):

Ուղեցոյցս ինձ տարաւ քաղաքի դուներից սկսող մի լայն երկար փողոցով, որի երկու կողմից կամ բաց տեղեր էին կամ վլած պատերի ու աների մի շարք: Թէև զեռ ցերեկւայ ժամի մօտ 2 էր, բայց փողոցներում չէր երևում եւրոպական քաղաքներին յասուկ շարժում ու կենդանութիւնը: Ահա՝ անցնում ենք մի կարմիր-մոխչացոյն քարեալ տան առջեւից, որի հարթ կտուրի վերայ կանդնած էն մի քանի տաճիկ էֆէնդիներ. նոցա ծոց ու թմրած գէմքերը արտայացում են բոսկական զարմանք ու հետաքրքրութիւն ինձ տեսնելիս: Ես քշում եմ ձիս համարեա ամայի փողոցով, ուր հազիւ են պատահում մի երկու անցնող կամ ուղտապաններ իրանց այլանդակ

անստուններով։ Ոչ մի կառք կամ սահնակ չի երևում։ Մտնում ենք մի փոքրիկ հրապարակ, ուր կանգնած են գիւղացիների սալերը՝ լծած եղ ու գոմէշներով և բարձած յարդ, խոտ, աթար ու ցախ։ Սայլերի մօտ, հայ և տաճիկ շինականների շուրջը, աղմուկ հանելով խոնում է ֆէսաւոր ամբոխը։ Սակարկութիւն անողները տաք-տաք վիճում են կամ իրար ձեռք բռնած ուժգին անվերջ թափահարում, որ նշանակում է թէ համաձայնութիւն կայացաւ։ Դէպի այս փոքրիկ, կեղսուտ շուկան ամեն կողմից նայում են իրար կողքի շարւած, առջեխց բաց կրպակները, փռները ու ողորմելի արհեստանոցները։ Փողոցները և շուկան լիքն են մուտուլմանների առանձին հովանաւորութեան տակ գտնուող զզւելի շներով։ Անցնելով այդ շուկալից, մտանք մի մռազլ, նեղ փողոց, որը դուրս բերաւ ինձ քաղաքի համարեա հակառակ ծայրը։ Նոր փողոց բացւեց մեր առաջ, որը ճիւզաւորւում էր աջ ու ձախ։ Այդ նոր փողոցը մոնելիս դէմ ու դէմ կանգնած է մի երկարկանի կարմիր-մոխրագոյն քարեայ շինութիւն, որի կամարածե մուտքի զլիսին հայերէն վերնագիրը ցոյց է տալիս, թէ գա հայոց առաջնորդարանն է։ Այդ շինութեան աջ կողմից շարունակուում էր մի բարձր պատ, որի միւս կողմից երևում էր Կարինի միակ հայոց երեղեցին փայտեայ անշուք զանգակատնով։ Այնտեղ, ուր խրոխա դէպի երկինք են բարձրանում ուղղահաւատների ջամիների մինարէները, այնտեղ պէտք է խննարհած կուշ գայ ու մուտուլմանի աչքին շընկնի քրիստոնէական եկեղեցու զանգակատունը։

Դեռ նոր էի մոնել այդ փողոցը և առաջնորդարանի մօտից ուղում էի ծուել դէպի փողոցի աջ ճիւզաւորութիւնը, երբ յանկարծ առջեւս տնկւեց մի տաճիկ պաշտօնեալ։ Դա ալստեղի գրոլիս-էֆէնդիսներից էր (օկոլոծօպնայ)։ Այդ կոլոլ, շէկ միրուքաւոր, լիքը կարմիր թշերով և կանաչ-մոխրագոյն աչքերով գրոլիսը կանգնեցրեց ինձ և սկսեց հարց ու փորձ անել, թէ ո՞վ եմ, ո՞րտեղից և ո՞ւր եմ գնում։ Երբ ես գոհացում տւի նորա հարց ու փորձերին, նա ցոյց տւեց Սանասարեան վարժարանը, իսկ ինքը կանգնած նայում էր մինչեւ իմ տեղ հասնելը։ Փողոցի աջ ճիւզաւորութեամբ գնալիս, առաջնորդարանից սկսւող պատը շարունակուում է ձախ կռան վերայ։ Մի քիչ հեռանալով բօլիս-էֆէնդուց, կանգնեցինք բարձր պատի մէջ շինած ամուր մէծ դարբասների առջեւ։ Ես իջայ ձիուց և սկսեցի

դուռը ծեծել։ Դուրս եկաւ մի երկարահասակ երիտասարդ և հարց-  
րեց թէ ո՞վ եմ և ի՞նչ եմ կատենում։

Ես մի կերպ հասկացրի և նա հրաւիրեց ինձ վարժարանի «հիւ-  
րասենեակը»։ Պատուիրելով Խալիլին սպասել զրան մօտ՝ ինքս մտայ  
լայն մեծ բակը, որի մէջ տեղում բարձրանում էր մի երկարկանի  
կոկիկ շինութիւն (առաջ ազգային օրիորդաց վարժարանն է եղել)։  
Մենք անցանք դորա մօտից և դիմեցինք բակի մի անկիւնում  
գանուղ ուրիշ նոր շինութեան։

Մաքուր փոքրիկ նախասենեակի աջ անկիւնում երեսում էին  
դէսի վերև տանող փայտեաց աստիճանները։ Խոկ մուտքի դէմ ու  
դէմ մի դուռ կար։ Խմ անծանօթ տուաշնորդս մտաւ ացլ դոնից և  
մի քանի վայրկեանից յետոց բանալով՝ ինձ ներս հրաւիրեց։ Դա հիւ-  
րասենեակն էր. — մի սիրուն, մաքուր և եւրոպական կօմ ֆօրտով կա-  
հաւորած սենեակ, որի սպիտակ պատերին կախած էին գեղեցիկ շրջա-  
նակներում երկու մեծ պատկերներ՝ Մակար կաթուղիկոսի և Մ. Սանա-  
սարեանի։ Բարձր լուսամուտից թափանցում էր առաս լոյս։ Մի ան-  
կիւնում կանգնած էր մի գեղեցիկ պահարան զրքերով։ Անեսակի  
մէջ տեղում կանաչ մահուտով ծածկած էր մի մեծ սեղան, շուրջը  
սիրուն կոկիկ նստարաններ։ Սեղանի մօտ նստած էին մօտ 30 տա-  
րեկան երկու երիտասարդներ «ալաֆրանկա» խառակ, սև հագուս-  
տով, բարձր ալ ֆէսերը զլիմներին։ Մենք ներկացացնք միմեանց։ Թխա-  
հեր էֆէսիին տաճկաց լեզուի ուսուցին էր, խոկ խարտեաշը (բլծ-  
ռէն)՝ ների ինձ շնորհալի պարոնը՝ մոռացել եմ թէ ի՞նչ առարկացի դա-  
սատու էր։ Երկուն էլ կարծեմ Պօլսեցիք էին։ Դարբասի մօտ ինձ  
ընդունողը վարժարանի տնտես-կօշկակարն էր, որը խոյն հեռացաւ  
ծանուցանելու Մաղաթեան էֆէսունը, իմ մասին։ Դեռ նոր էր կցւել  
մեր խօսակցութիւնը, երբ յանկարծ շտապով ներս մտաւ սենեակը մի  
փոքրահասակ, երկար սև միրուքով, կապոյտ ակնոցներով մի պարոն՝  
անզիացի ջէնտուլմէնի պէս հազնւած և տաճկական բարձր ալ ֆէսը  
զլիսին։ Դա վարժարանի երեք տեսուչներից զլիսաւոր դեկավարը՝ Յ.  
Մաղաթեանն էր։ Թէև ներկացանալով, ես պատմեցի ամենը, ինչ հար-  
կաւոր էր իմ անձնաւորութիւնը ճանաչել տալու, բայց նա հազիւ  
կարողանալով սքօղել իւր անբաւականութիւնը և թերահաւատու-  
թիւնը, սպասում էր երեխ մի որ և է յանձնարարական նամակի։ Խոկ ես,

բացի իմ անցաթուղթից, ոչինչ շօշափելի և կասկածանք փարա-  
տող վկայագիր չ'ունէի: Հիմա եմ ափսոսում, որ տաճկաց պօլիցիա-  
յից առաջ, Յ. Մադաթեանին չը ներկայացրի իմ անցաթուղթը  
Մենք կանգնած մնացած էինք: Մադաթեան էֆէնդին նկատեց.

— Խնդրեմ պ... նախ և առաջ գտէք ձեզ համար մի տեղ և  
տեղաւորւթեցէք, որովհետև վարժարանի դրան մօտ ձիերով կանգնել  
չի կարելի, իսկ յետոյ՝ կը տեսնենք...

— Ներողութի՛ւն, բայց հէնց այդ է պատճառը իմ այստեղ  
դիմելու, որ այնքան բարի գոնուէք՝ իջևանելու աեղ ցոյց տաք,  
կամ հիւրանոց, կամ մի որ և է հայի տուն:

Պ. Մադաթեանը պատւիրեց կօշկակար Աւագին տանել ինձ մի  
ոմն Յովհաննէս աղա Աստուրեանի «Խան»-ը: Ես դուրս եկաց վարժա-  
րանից: Ասցնելով մի քանի սակաւամարդ փողոցներով, մոանք կը կին  
այն շուկան, որը արդէն տեսել էինք: Դէպի այդ փոքրիկ հրապա-  
րակը նայում էր մի եռյարկանի կարմիր-մոխրագոյն քարից շինած տուն,  
որի միայն երրորդ յարկը ունէր գէպի շուկան նայող պատուհաններ:  
Կամարածե բաց մուտքի գլխին կախած յուշատախտակը կրում էր  
հետեւել հայերէն բառերը. «Հիւրանոց, ընթերցարան և ճաշարան»:  
Մոանք մի փոքրիկ բակ. ուղղակի մուտքի ձախ կողմում երեւա-  
ցող մութ սանդուղքների մաշւած ու ցեխոտած աստիճաններով բարձ-  
րացանք և դուրս եկանք երկրորդ յարկի փոքրիկ նրբանդքը, որի աջ  
պատուամ երեւում էին չորս փոքրիկ անճոռի գոներ, իւրաքանչիւրը  
միմի ճախարակով (ՅՈՅԵ), վրայից քաշ արած չւան, որի ծայրից  
կապած ծանրութիւնը փակել էր տալիս այդ մի փեղիեաց դուռը  
բանալիս:

Մշեցի ծառայ հաջի-Դավարը կանչեց վերեկից (ընթերցարան-  
թէյարան-դայցիէարանից) հիւրանոց պահող Յովհաննէս աղա Աստու-  
րեաննէն: Այդ յաղթանդամ, գեղեցիկ գեռ երիտասարդ տղամարդը մի  
տիպ էր խստաօդ Բարձր-Հայքի քաջառողջ հայերի, որոնք չը  
նայած դարերով կրած ամենաանտանելի, ծանր, մաշող սլայմաննե-  
րին, գեռ ևս չեն այլասեռւել: Վերին աստիճանի քաղաքավարի և  
հրապուրիչ ձեւեր ունէր պարոնը թէ խօսելիս և թէ վարւելիս: Նա  
յայտնեց, որ երկու տեսակ «օդաներ» (սէնեակ) կան. ներքեւի յարկում յար-  
մարութիւններից զուրկ և արժանազին, և երկրորդում՝ այնպիսի սէնեակ-

ներ, որ տեսնում եմ այժմ և բոլոր այն յարմարութիւններով, որ կարելի է միայն Կարինում ցանկալ: Պէտք է նկատել, որ այս հիւրանոցը մի քանի տարի է միայն որ բացւել է և միայն է իւր տեսակում Կարինի մէջ. իսկ առհասարակ ացատեղի վասները շատ էլ հեռու չեն Հասանդալացում՝ տեսածից: Այս սենեակներից ազատ էին երկուսը. յարմարութիւնները և գինը հաւասար: Սենեակի վարձը ամսական մի ոսկի ու կէս (14 րուբլի) էր, օրեկան՝ 5 զուրուշ՝ Վառելիքը առանձին է կենողի հաշւով: Խնքնահու չի արւում, որովհետեւ ամբողջ հիւրանոցում միայն մի հատ է (Խուսաստանից է բերում), այն էլ թէջարան-լնթերցարանի համար միշտ հարկաւոր է: Կամաց ակամաց պէտք է բոլոր պայմաններին ի հարկէ համաձայնւելի:

Ճախսարակաւոր գուռը բացւեց, նորա ետևից գտնեւող կապոյտ ներկած դուռը նոյնպէս և մենք, գլուխներս խոնարհելով, մտանք երգում քաղաքի ամենալաւ հիւրանոցի ամենալաւ համարներից մէկը: Իրերս ներս բերիս: Վերջացրի Խալիլի հետ հաշիւս (Նորա վարձը մի ձիու համար Զվինից մինչև Կարին 50 զուրուշ էր, մօտ 5 րուբլի, կերակրելը և բոլոր ճանապարհի ծախսը ինձնանից) և տալով նորան մի սպիտակ մէջիդիէ իբրև «բաշխիշ» ու մի նամակ յոյն «Հէքիմբաշու» անունով, ճանապարհ գցեցի: Տնտես-կօշկակարը նոյնպէս հեռացաւ և սենեակը մտաւ մշեցի ծառան՝ Յովհաննէս աղացին յայտնելու, որ «մի մարդ կուզէ քեզի տեսնել վարը»: Նորան կանչողը իետոյ բանից դուրս եկաւ, որ Սանասարեան վարժարանի վերոցիշեալ տնտես-կօշկակար էֆէնդին էր, որին պ. Մադաթեանը յանձնարարել էր յայտնել Յովհաննէս աղացին հետեւալը. Աս ոռւսահայր մեզի անձանօթ մէկն է. մենք նրան չենք ճանչնար. յանկարծակի եկաւ մեզի մօտ և կ'ըսէ թէ Ռուսիաէն է. Էջմիածնաց վարժապետների անունը կ'ուտայ, բայց նամակ մը չ'ունի. կասկածելի մարդ մը է. մարդասպան մը կերեւի կամ չարագործ ու փախստական ոմն. իմացիր՝ անցաթուղթ ունի....» Այդ խօսքերի ազգեցութեան տակ Յովհաննէս աղան մտաւ կրկին սենեակս և չը կորցնելով իւր քաղաքակարական ձևերը, ասաց թէ պօլիցիան ճիշդ տեղեկութիւններ է պահանջում եկուոնների մասին և ինքը, Յովհաննէս աղան, իբրև հիւրանոցի տէր, պարտական է վաղը անպատճառ յայտնել պօլիցիային; թէ ո՞վ է իր «միսավիրը» (Հերթ): Ես յանձ-

նեցի նորան իմ անցաթուղթը, որի վերայ կարսի տաճկական հիւ-  
պատու արել էր իւր նկատողութիւնները։ Հիւրանոցի տէրը ուշադ-  
րութեամբ քննելով և կարգալով անցաթուղթս համոզւեց երևի, որ  
ոչինչ կասկածելու բան չը կայ և որ Սանասարեանների երևակայու-  
թիւնը շատ մեծ թուիչքներ է գործում։ Մի քանի րոպէից յետոց  
նա հեռացաւ՝ միամտացնելու Աւագին, ասելով թէ այդ մարդու բո-  
լոր թղթերը կարգին են, օրինաւոր և օամաննեան հիւպատոսից ու սահ-  
մանագլւխին, մաքսատնում, նշանագրւած։

Հիմա մի ծանօթութիւն տանք ընթերցողին կարինի ամենաե-  
րելի հիւրանոցի ամենաշքեղ համարներից մէկի մասին։ Ճա-  
խարակաւոր հասարակ և յետոց կապոյտ փոքրիկ գոնից մտնում էք  
համարս. ուղղակի դրան հանդէպ սենեակի մի մասը՝ բաժանւած է կա-  
պոյտ ներկած փայտեայ վանդակով, որի ետևից ընկած են մի քանի  
կոտրտած և անպէտք կահկարասիք ծածկած փոշիով։ Ամբողջ սե-  
նեակը 10 քայլ երկարութիւն ունէր և համարեա նոյնքան լայնու-  
թիւն։ Ցածր առաստաղը կապոյտ ներկած տախտակներից էր. պա-  
տերին կպցրած էին մոխրագոյն աժանագին պատուաներ։ Երեք  
պատուհան նայում էին դէպի նեղ փողոցը կամ, աւելի ճիշդն ա-  
սած, տների և բաղանիքների կոսուրը, որովհետև փողոցը տեսնելու  
համար պէտք է մարդ ճակատը կպցնէր պատուհանի ապակիներին։  
Երեւ լուսամուտների վարագոյրներ՝ ծառայում էին կարմիր շիլայի  
կտորներ։ Յատակը դժւար էր զանազանել՝ փայտից էր թէ հողից,  
այնքան անտաշ տախտակամածը շրացած ցեխից հողի գոյն էր  
ստացել։ Պատուհանների տակ, պատի բոլոր երկարութեամբ, մի կի-  
սաղիւանի պէս բան էր դրած՝ հասարակ չթի կտորով ծածկած, մի  
շարք խոռովի լքցրած քառակուսի կոշտ բարձերով պատերին յենած։ Պա-  
տերից մէկի մօտ տեղացի արհեստաւորների ճաշակին համեմատ շինած  
մի գահաւորակ, միւսի մօտ՝ անկողնակալլ և կողքին՝ մի սեղան երկու կտո-  
րած հասարակ աթոռներով։ Սենեակի մէջ տեղում (աօբան) էր (Երկաթէ  
կտորաբան)։ Զընալած որ կարինում ձմեռը երկար է լինում և խիստ,  
բայց և այնպէս, այնտեղի մարդիկ գեռեւս ձմրան ոչ մի յարմա-  
րութիւնների տեղեակ չեն։ ոչ գիտեն կրկնակի պատուհաններ շի-  
նել, ոչ էլ կարգին վատարաններ պատի մէջ։ Իմ սենեակումն ցրտից  
ես չէի կարող ոչ վերարկուս, ոչ էլ կրկնակօշիկներս ու գլխարկս հա-

նել։ Երբ հաջի-Ղազարը վառեց «սօբան», ծուխը լքցւեց սենեակը և կուրացնում էր ու խեղդում։ Ծխնելոյզի մէջ ագռաւները բոյն էին դրել և փակել ծուխի համար անցքը, այնպէս որ պէտք է պատերից մէկը ծակէին և խառակելով ծուխի համար ճանապարհ բանալին ծխնելովում։ Մինչ այդ բոլորը կատարւում էր, ես շըջելով նըրբանցքում տեղեկացաց հիւրանոցի միւս կենողների մասին։ Համարներից մէկում երկու ուուս ծառայողներ էին՝ չէրքէզի հագուստով։ Դոքա Օլթւայ կողմերից էին և ինչ որ պլիսսոսմների օգնականներ էին։ Տաճիկ տեղական վարչութիւնը խլել էր նոցա հրացանները և առանձին հսկողութիւն էր նշանակած նրանց վերաց։ Մուսաց հիւպատոսարանի պահանջները անկատար էին մնացել. և մինչև որ բոլորովին չը հեռանացին այդ մարդիկ Կարինից, նրանց հրացանները չեին վերադարձնելու։ Ներքեւի յարկում կենում էր եգիստական զօրքի մի գնդապետ, որին նոյնպէս հսկողութեան տակ էին պահում և արգելել էին Կարինից գուրս գալ, մինչև որ Եգիպտոս կառավարութիւնից տւած հեռագրին՝ թէ ի՞նչ մարդ է այդ զինւորականը՝ պատասխան ըլ գար։

Ժամկի 6-ին, տեղական սովորութիւնների համեմատ, հիւրանոցը փակում է և հիւրանոցի տէրը զնում է իւր տունը։ Դեռ ժամի 9 էր երեկոյեան. դուրսը մութն էր, պատուհանիս դէմ ու դէմ գըտընտող ջամիի բարձր մինարէն լուսաւորւած էր։ Ժամանակ առ ժամանակ թնդանօժի որոտներ էին լսում. մահմեդական աշխարհը տօնում էր իւր մեծ մարգարէի ծննդեան օրը։ Մի քանի ժամանակից յետոց հանգան ճրագները, դադարեցին որոտների ձայները և բնական խաւարը ու թմրութիւնը տիրեց այդ քաղաքին։ Մեռելացին լուռութիւնը ընդմիջւում էր ժամանակաւորապէս շների լէգէօնների կառաղի հաշիւնով, կամ հեռու պահականոցներից լսող զինոր-պահապանի փողի մելամաղձոտ ձայնով։

Վերջապէս հասայ ուրեմն Կարին։ Մինչև այժմ տեսած և լըսածս միայն անսահման թախիծ, վիշտ և մորմոք էին յարուցանում իմ մէջ, բայց դեռ շատ բան անորոշ էր ինձ համար։ Ես քնեցի, յուսալով որ շուտով ամեն բան կը պարզեի ինձ համար և գուցէ միսիթարական կողմեր ևս ցոյց տայ Կարինը թիւրքա-հայերի կեանքի վերաբերեալ...

Միւս օրը, ուրբաթ նոյեմբերի 4-ին, առաւօտեան ժամի 10 էր, երբ ևս բարձրանում էի փոքրիկ նրբանցքի մի ծացրին երևող հին, մաշւած սանդուղքներով վերևի յարկը՝ ընթերցարան-թէյարանը: Դուռը բանալով մտայ մի նեղ և երկար գահին: Այդ դունից աջ մի այլ դուռ էր երևում, որը տանում էր գէպի մի փոքրիկ սենեակ, ուր թէյ և ղացիկ էր պատրաստում, նարգիլէներն էին շարւած և այն, մի խօսքով ծառաների և պատրաստութիւնների համար սենեակ էր դա: Սորա կից պատի խորութիւնում (քուֆէտն) էր դարանների (ՊՈՂԱ) վերայ շարւած էր մի քանի շիշ րօմ, ծխախոտի կապոցներ և արկղիկներ, ասպակեայ բղուղներ (ՅԱԿԱ) քարի պէս կարծրացած նկանակներով (լուսակա) կամ աղանձած «փատաբագամով»: Դահլիճի հակառակ պատը նայում էր գէպի շուկան իր բազմաթիւ մեծ պատուհաններով, որոնցից իւրաքանչիւրի վերևից կախած էին կարմիր վարագոյններ: Պատուհաններին զրած էին խեցիկներ ծաղիկներով: Պատերը ծածկւած էին հասարակ պաստառներով: Տախտակած առաստաղը կապոյտ գոյնով էր ներկւած, ինչպէս և պատուհանների բոլոր փայտեայ մասերը: Տախտակամածը գծւար էր զանազաննել գետնից՝ այնքան չորացած ցեխ կար վրան: Դահլիճի մէջտեղում զետեղւած էր սօրբան, դահլիճի երկու ծացրին՝ մի մի մեծ բիլիարդի սեղաններ: Պատերի մօտ շարւած էին մի կարգ աթոռներ և գահաւորակներ՝ առաջներին զրած սեղաններ, մարմարաշին երեսներով: Դահլիճի ճակատը զարդարւած էր Փաղի-Նահի՝ Սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի՝ իւղանկար պատկերով շրջանակում, որը կախւած էր պատին կացրած կողոլ կտրած կապոյտ կտորի մէջ տեղում: Այդ արւեստական երկնքի վերայ ոսկեզօծ և արծաթեզօծ թղթերից լուսին և աստղեր էին կտրտւած և կացրած կտորից, շրջանակի չորս բոլորը: Փաղի-Նահի պատկերի երկու կողմից կախած էին մի մեծ հայելի:

Դահլիճում բաւական մեծ բազմութիւն կար: Ես անցայ և նատեցի մի անկիւնում ու թէյ պատուիրեցի ինձ համար: Զը նայած որ առաւօտ էր, այնու ամենայնիւ երկու բիլիարդի սեղանի շուրջը ևս կանգնած էին երկար փայտերը ձեռներին անզործ հայեր և տաճիկներ և աղմուկ-գոչիւնով բիլիարդ էին խաղում: Տաճկաստանում ամեն բան զլիխվայր է. օրւայ այն ժամանակը, երբ կրթւած եր-

կիրներում գործով են զբաղւած—այսուեղ անգործ էվինդի ու ազաները զւարձանում են. իսկ երբ եւրոպացիք օրական աշխատութիւնից յետոյ երեկոները գնում են զանազան կլուքներ, թատրոններ, կօնցերտներ և այլն՝ զւարձանալու ու հանգստանալու, տաճկաստանցիք կամ, հետեւելով հաւերի ու աքլորների օրինակին, փակում են իրանց տներում և կամ... բաղանիքներում տաճկական զւարձութիւններ են անում...: Տաճիկները չեն հաւանում «ալաֆրանկա» (Եւրոպական) ժամերի հաշիւք. նրանց մօս երբ արել մայր է մտնում, վերջանում է և օրը և լրանում է 12 ժամը և յետոյ էլի սկսում է նոր հաշիւք: Որովհետև արեի մայր մտնելը տարւաց մէջ հաստատ և միշտ նոյն ժամում չի լինում, այլ փոփոխում է՝ այդ պատճառով չի էլ կարելի ասել թէ տաճկական ժամի 12-ը ճիշդ՝ «ալաֆրանկա» ժամի ո՞րն է. նոյնեմբերին դա մօտաւորապէս հաւասար է ժամի 5-ին: Իիլիարդ խաղալը միակ թոյլատրւած զւարձութիւնն է Կարինում:

Երբ Ներսէս պատրիարքը կենդանի էր, այսուեղի հայերը փոքր առ փոքր սկսել էին զարթնել մտաւոր-բարոյական թմրութիւնից: 1879 թւականին թատրոնական ընկերութիւն էր կազմել, ներկայացումներ էին տալիս, մատենադարան էին ուզում բանալ, մինչև անգամ տպարան և լրագիր էլ էին կամենում ունենալ, բայց... «կորեաւ ժողովողն, թագեաւ նաւահանգիստն, ելիք օգնականն, լոեաց ձախն յորդորեցուցիչ... բարձաւ քահանայապետն, որ զերասամակս ի բուռն առեալ՝ ուղղէր զդէմն, և սանձահարէր զլեզուս օտարաձայնս...»:

Թէ մեծ և թէ փոքր, թէ հարուստ և թէ աղքատ Կարինում բիլիարդ են խաղում: Սրճարանում յաճախ կարելի է պատահել տաճիկ մսագործներին անգամ, որոնք իրանց գործը մի քանի ժամով թողնում են և կեղտոտ ցնցոտիները հագներին վազում են ու մոնում զայֆէարան-ընթերցարանը մի մի ֆինժան զայֆէ խմելու և բիլիարդ խաղալու: Եղող տարածը կամ տարւածը հազիւմի քանի կրպէկի է համնում: Տարւողը մի քանի փարա պէտք է վճարի հիւրանոցի տիրոջ և, պայմանին նայած, բացի այդ (աւելի ունեորները) մի քառորդ հօիս աղանձած «փստաբադամ» կամ 10—20 հատ «ցիզար» (պաղէրս») վերցնի բութէախից և տակ տանողին: Ծիծա-

զելի է տեսնել, թէ ինչպէս մի որ և է խրոխտ գայմագամ (պրիստու) կամ սպաց ածում է իւր թաշկինակը մի քանի փարացի տարած աղանձած «վատաբադամը», և ուրախ ուրախ, յաղթական գոչիւններ արձակելով հեռանում է լահլիճից: Երկիրս աղքատ լինելով, սարասափելի տղիտութեան և անկարգութեան շնորհիւ փողն էլ թանգ է. չը նայած որ մի բաժակ թէցը կամ դայֆէն 10 փարա (2 կոպ.) արժէ, այնու ամենայնիւ այդ խրոխտ տաճիկ հազարապետները, հարիւրապետները, յիսնապետները ու գայմագամները չեն կարող միշտ վճարել խմած մի երկու բաժակի համար. և ամեն մէկը աղդպիսով 3—4 ոսկու արարտք ունի չը վճարած հիւրանոցի տիրոջ. նա էլ չի կարող պահանջել. պէտք է հաճոյանալով, շողոքորթութիւններ անելով սպասի մինչև որ տաճիկը բարեհաճի ամսականը ստանալիս գոնէ մի ոսկի վճարել<sup>1)</sup>: Բայց գեռ Կարինի հայերը փառք են տալիս Աստուծուն, որ գոնէ մաս մաս, շողոքորթելով ստանում են իրանց փողերը, իսկ գաւառներում, Մուշի և ուրիշ կողմերում, տաճիկը ինչ որ ուզի, կարող է վերցնել և ինչ բարեհաճի՝ այն կը վճարի և «զեավուրը» ծպտուն հանել չի կարող, թէ ոչ—սրի հարւածը կամ ծեծը կը լինի նրան պատասխան: Մուշի կողմերում բացի քրդերի բարբարոսութիւնից, տաճիկների հարստահարութիւնները նոյնպէս անտանելի են. հայ արհեստաւորին, բանւորին ամեն տաճիկ իրաւունք է համարում հարկադրել ձրիապէս իւր համար աշխատելու: Մոլեռանդութիւնը և սարսափելի տղիտութիւնը թոյլ չեն տալիս տաճիկն մի բուզէ մտածել անգամ թէ «զեավուրն» էլ իւր պէս մի մարդ է, և գուցէ իրանից առաւել ևս օգտակար հպատակ կառավարութեան:

Այդ դահլիճը միևնոյն ժամանակ և «ընթերցարան» է. այդուեղ ստացւում է Պօլսից 1 հայերէն լրագիր՝ «Արևելք», 2 տաճկերէն թերթ և 1 Փրանսերէն-անգլիերէն լրագիր (Oriental Advertiser): Ահա բոլորը, ինչ որ ստացւում է «ընթերցարանում». ոչ մի գիրք չը կայ: Չը նայած որ ուրիշ երկիրներում մի սովորական բան է, որ թէյարանները, կաթնարանները, գարեջրատները և այն ստանում

<sup>1)</sup> 40 փարան մի դուբուշ է (մօտ 10 կոպ.). իսկ 103 դուբուշը մի օսմանեան լիրու (սովոր մէջ բէրէն):

են յաճախողների համար մի-երկու թերթ, առանց այդ տեղերին «ընթերցարան» անունը տալու կամ պահողներին «աիրեկուօւ», ինչպէս էրզրումում. այսու ամենայնիւ պէտք չէ զարմանալ, քանի որ տաճկաստանցիներին մնում է գոնէ մեծ մեծ անուններով միխթարւել։ Պօլսի հայերից ի՞նչ կարող են սովորել գաւառացիք։ Այդ ազգային մեծ ապուշանոց-գմբանոցում (և ոչ մոտաւոր մեծ կենտրոնում, ինչպէս իրանց են կոչում պօլսեցիք) ամեն բան սահմանափակւում է փքուն, գեղեցիկ խօսքերով. «ահմանազրութիւն», «յառաջադիմութիւն», «մեծ ազգասէր», «մեծ հանճար», «երևելի քաղաքագէտ էֆէնդի» և այն և այն խօսքերը նոյն նշանակութիւնը ունին պօլսեցիների համար, ինչ որ պարծենկոտ երեխանների համար մեծերից լսած և առանց հասկանալու արտասանող բառերը։ Երբէք չի ել կարելի հաւատալ պօլսեցիների անկեղծութեան, երբ նրանք կոկորդիլոսի արտասունքներ են թափում թիւրքա-հայաստանցիների թշւառութիւնների վերայ. որովհետև շատ են տգէտ, փշացած և չնչին, որ կարողանան խորը զգալ, իրերի դրութիւնը լմբունել և մի զործ կատարել։ Ի՞նչ շինեցին նոքա ահա 30 տարի է իրանց «ազգային սահմանափրութիւնով» և «ազգային ժողովով», ուր մի կարգին մարդ չը կաց և բոլորը զանազան սեղանաւորներ, վաճառականներ և պաշտօնեայ էֆէնդիներ կամ թեթեսոլիկներ են։ Եւ եթէ ուզելու լինինք խմանալ ացդ անամօթ ժամավաճառների և անսիրտ էֆէնդիների արածների արգասիքը, պիտի տեսնենք որ կամ վնասէ եղել, կամ մի մեծ դրօ և կամ անմիտ ճառերով և գովասանքներով լքցրած թղթերի առպրակներ։ Բայց թողնենք այդ...

Գահաւորակիներից մէկի վերայ կիսապառկած էր մի տաճիկ մօլլա և շիբուխը քաշելով կիսաձայն կարդում էր մի տաճկերէն թերթ։ Մի սեղանի առջև նստած էր մի տաճիկ սպաց և այս ու այն կողմ էր շուռ տալիս մի այլ տաճկերէն թերթ։ Յոյն գեղագործներից մէկը խորասուգւած էր անզլիերէն-վրանսերէն լրագրի ընթերցանութեան մէջ. ինձնից ոչ այնքան հետու մի սեղանի առջև նստած էր «ալաֆրանկա» հագնւած, վէսը զլիսին, ու միրուքաւոր և ակնոցները քթին մի հայ էֆէնդի և «Արևելք» էր կարգում ու նարդիլէն ծծում։ Բայց ահա՝ ներս մտաւ մի շնորհալի կերպով հագըն-

ւած արտաքուստ եւրոպականացած էֆէնդի և այդ երկուսը սկսեցին Փրանսերէն կոտրատել. երեսում էր, որ զոքա պօլսեցիների ջրից էին խմել և նրանց հացից կերել... Յոլոր յոյները իրար հետ միմիայն յունարէն էին խօսում, թէև նրանց մէջ էլ կացին Պօլսում ուսում առածներ. բայց միայն հացի յատկութիւնն է՝ շուտ մոռանալ իւր լեզուն: Տեղացի հայերից նոքա, որոնք Պօլսի մթնողորատում չեն ապել և Ֆրանսիացում չեն եղել, խօսում են հայերէն իրար հետ, բայց ընդհանրապէս տիրող լեզուն առանկերէնն է:

Դահլիճում բազմաթիւ էին պարագ նառած և խաղացողներին զիտող մարդիկի: Յոյն Կօստի անունով՝ ծառան, որը հիանալի խօսում էր հայերէն, այս կամ այն կողմն էր գնում, սրան-նրան զայֆէ կամ թէյ մատուցանում, նարգիլէ բերում: Իլի իարդի սեղաններից մէկի մօտ կանգնած էր Յովհաննէս աղան և պատից կահած համրիչի վերաց լսադի հաշիւր պահում:

Ահա՝ մտաւ սենեակը մի մշեցի պատանի սեացած հիւծեալ դէմքով, նիհար երկար մարմինը ցնցոտիների մէջ փաթաթած, գլխին դրած մի պատառուտած արախչի. նա ուսերի եսուից ձգած ունի մի արկղիկ՝ կօշիկներ սրբելու պարագաները մէջը: Այդ օբյաշինս մի քանի փարայով ցանկացողների կօշիկներն էր սրբում: Նա մտաւ դահլիճը, երկիւղածութեամբ մի անկիւնում կանգնեց և սկսեց պատեցնելիւր հայկական մեծ մեծ, հեղ ու թախծալից սև աչքերը: Յոյն մաքրասէր զեղագործ էֆէնդիներից մինը կանչեց նորան և մեկնեց իւր ուները. մշեցին չոքեց նորա ուների տակ, հանեց ուսից արկղիկը, նրա միջից էլ պարագաները և խնամքով բարձրացնելով էֆէնդիի ոսոլ՝ դրեց արկղիկի վերաց ու սկսեց սրբել: Հայը իւր բնիկ երկրում հանգիստ ու ապահովութիւն չը կարողանալով գտնել և ամաշելով մուրալուց, պանդխոտութեան մէջ ամեն աշխատանք յանձն առած՝ իւր համար մի կտոր հաց է ճարում: — իսկ եկւոր տաճիկը, որը իւր անընդունակութեամբ և բարբարոսութեամբ մնանկութեան մատնելով երկերը ինքն էլ քաղցածութիւնից մեռնում է՝ լաւագոյն է համարում զժւար տեղը լնկած ժամանակը մուրալ. և ճիշդ. մինչ ես զիտում էի մշեցո՞ն, զահլիճի դուսը բացւեց և ներս մտան երկու առողջ, բայց աղքատ տաճիկներ, որոնք սկսեցին մօտենալ բոլորին և ողորմութիւն իմայրել, ուողները էլի հայեր էին...

Ես թէյս վերջացրել էի, երբ սենեակը մտաւ մի պօլիցիական. դա երեկւայ շիկահեր «քօլիսալ»՝ Ալի-էֆէնդին էր: Նորան տեմնելով Յովհաննէս աղան, իսկոյն մօտեցաւ, շողոքորթական ձևերով բարեկց և հրամայեց ծառային էֆէնդու համար զայֆէ բերել. ի հարկէ, կերած-խմածի համար «քօլիս-էֆէնդին» ոչինչ չի վճարում: Նա կիսաձայն մի բանից հարց ու փորձ էր անում հիւրանոցի տիրոջ և ժամանակ առ ժամանակ դէպի իմ կողմը նայում: Յետոյ վերկենալով, Յովհաննէս աղայի հետ մօտեցաւ ինձ: Հիւրանոցի տէրը ասաց ինձ, թէ Ալի-էֆէնդին ցանկանում է տեսնել իմ անցաթուղթը: Առհասարակ սովորութիւնն է այսուեղ բաւականանալ հիւրանոցի տիրոջ մատեանում նշանակւածով «միսաֆիրո»-ի մասին. բայց այժմ կասկածում տաճիկը ուղում էր իւր աչքերով տեսնել իմ թղթերը: Ես տւի իրան. նա քննական աչքով զննեց, յետոյ գրանից մի թուղթ հանեց ու մկսեց ինչ որ գրել:

—Կարելի՞ է ձեր անցաթուղթը տանել սարայը (Քառականը լեռն պուհ), հարցրեց նա:

—Ինչու չէ, եթէ շուտ կը վերադարձնէք, որովհետեւ իբրև ռուսահպատակ՝ պէտք է ներկայացնեմ ռուսաց հիւպատոսարանին, պատասխանեցի ես:

—Անպատճառ վաղը կը բերեմ: Ինչո՞ւ էք եկել երգրում, յանկարծ հարցրեց նա:

—Գնալու եմ Մուշի ս. Կարապետ ուխտ:

—Այսպէս ո՛ւշ:

—Հանգամանքները չը ներեցին աւելի շուտ, և ի՞նչ զարմանալու բան է, քանի որ գուք գիտէք, որ մի երկու օր ինձնից առաջ մի ռուսահպատակ այսուեղից ճանապարհ ընկաւ ս. Կարապետ:

Յովհաննէս աղան, որը օգնում էր ինձ դժւար ընկած տեղը տաճկերէն խօսելիս, յիշեցրեց «քօլիսին» այն նոր-նախիջեանոցի վաճառականի մասին, որը մի երկու օր էր միայն, որ գնացել էր ս. Կարապետ և կրկին պիտի վերադառնար:

—Լա՛ւ, դարձեալ հարցրեց Ալի-էֆէնդին, բայց ձեր անցագրում Կարսի մեր հիւպատոսը գրել է, որ նախ Վան էք զնալու և յետոյ դէպի Կարին անցնելու:

—Ես ճիշդ որ առաջ այդպէս էի մտադիր ս. Կարապետ զնալ,

բայց ընկեր չը գտնելով ուղղակի Վան գնալու, եկայ որ այսահղից անցնեմ ս. Կարապետ:

— Իսկ յետոյ ո՞ւր պիտի գնաք:

— Որովհետեւ ուշացայ, գուցէ ուղղակի ս. Կարապետից վերադառնամ էրզրում, բայց շատ կարելի է, որ դէպի Վան էլ գնամ:

— Եթէ վերադառնաք այստեղ, յետոյ ո՞ւր պիտի գնաք:

— Տրապիզո՞ն, Ստա՞մբուլ, Ֆրա՞նքոստուն, Գերմանիա և ուր քէֆս է... պատասխանեցի Համբերութիւնս Հատած ու գուրս եկայ դահլիճից, վերջ դնելու համար անթիւ հարցերին:

Պօլիցիական կազմակերպութիւնը նոր է Կարինում: Հայերի երեւակայական շարժումների արմանները որոնելու համար են «քոլիսները»: Քաղաքի ամեն մի թաղ ունի երկու «քոլիս» (օքոլոծուն) ու մի «բաշ-քոլիս» (քոլունակութիւն): Հասարակ պօլիցիականներ (городовоий) չը կան:

Ես գուրս եկայ հիւրանոցից ու սկսեցի շրջել քաղաքում: Կարինի ամենամեծ և իստակ փողոցը այն է, ուր գտնւում են եւրոպական զանազան հիւպատոսարանները, բողոքական միսսիօնարների ուսումնարանը և տունը: Ամերիկացի միսսիօնարների վարժարանի շինութիւնը և իրանց միսսիօնարների բնակարանը ուուսաց հիւպատոսարանի տան հետ, որը պատկանում է մի ուուսահայ Մ.-ին, քաղաքիս ամենալաւ տներիցն են: Նոյն փողոցում կան ուղտերի համար խաներ, որոնց առջեւ փողոցի մէջ տեղում դիզւած են այդ անասունների կղկղանքի բլուրներ, որոնց վերայ բազմած են լինում շների ընտանիքներ իրանց լակուններով: Այդ Կարինի «ալրօսակեկտուի» վերայ գտնւող աներից շատերը ողորմելի աւերակների են նման: Եթէ այդ տաճկական անճոռնի ճաշակով շինած տները մի քանի յարկանի են՝ առաջի յարկը բոլորովին զուրկ է լուսամուտից կամ մի երկու թղթածածկ գունակներ ունի, երկրորդ յարկը պատշգամբաբար դուրս է պրծած դէպի փողոցը և թէպէս պատուհաններ կան, բայց շատ քիչերը ունին ապակիներ, այլ կամ թղթով են ծածկւած լինում կամ փայտեայ վանդակներով ու տախտակներով: Լուսամուտները պատի մէջ շինւած են առանց որ և է սիմեարիայի, մինը մեծ, միւսը փոքր, մէկը վերև, միւսը ներքեւ: Եթէ լինում է երրորդ յարկ, նա էլ երկրորդի վերաբերեալ նոյն կերպ է շինւած լինում, որպէս երկ-

րորդը առաջինի, այսինքն՝ պատշգամբաբար երկրորդի վերայ առաջ է դուրս պրծած։ Քաղաքի ծուռ ու մուռ փողոցներից շատերը այնքան նեղ են, որ մի բեռնած անասուն անցնելիս համարեա տեղ չի մնում կողքերից։ Մի քանի փողոցների աներն ու պատերը աւելի աւերակների ողորմելի կոյտ են ներկայացնում, քան թէ մի վարչական և առևտրական կենտրոնի շինութիւններ։ բայց դեռ վերջին տարիներս, պատերազմից յետոյ, Կարինը լաւացել է, ասում են... Ամբողջ Կարինում (եթէ չը հաշւենք եւրոպական հիւսատոսներին) երկու կառք կայ. մինը պատկանում է մի հարուստ անդամալոյն տաճկի, միւսը՝ մի հայի, որը վարձով է տալիս Տրապիզոն գնացող ունեոր ճանապարհորդներին իւր կոտրտած կառքը։ Այդ կառքը և ուրիշ ժառացութիւններ է անում։ Օրինակ, ինձ պատմում էին, որ մի քանի ամիս առաջ Կարին էր եկել մի յոյն առամնաբոյժ, որը հէնց ապրում է եղել նոյն համարում, որտեղ ես այժմ։ Այդ հէքիմքաշին վարձել էր այդ կառքը և ամեն օր նասում էր նրա մէջ, առնելով հետը իւր արհեստին վերաբերեալ բոլոր պարագաները և շրջում էր քաղաքում՝ բղաւելով. «Հա՛ ատամ եմ հանում, առամ եմ բժշկում! ինչպէս որ մեղանում կինածները փողոցներում են շրջում՝ ա՛յ ալուչա, ալուչա» կամ մի ուրիշ բան կանչում։ Երբ մէկը ուզում էր բժշկւել, իսկոյն կառքը կանգնում էր և փողոցի մէջ տեղում հէքիմքաշին կամ ունելիքով հիւանդի ատամն էր հանում կամ զեղ տալիս նրան ու կրկին շարունակում իւր բժշկական պտոյտը փողոցներում։

Քաղաքիս բոլոր փողոցներում, մանաւանդ հրապարակներում, շրջում են խումբ խումբ չներ ամեն չափ ու հասակի։ Դէսի այդ կենդանիները մի առանձին սէր ու յարգանք են զգում ուղղահաւատոներ։ Եւ զարմանալի էլ չէ։ Տաճիկները հասկացողութիւն չ'ունին, թէ ի՞նչ է քաղաքի մաքրութեան համար առանձին ծախս անելը. նրանք սկահում են այդ անթիւ շների բաղմութիւնը, որպէս զի վայելելով մուսուլմանների յարգանքը և հովանաւորութիւնը՝ ամելով ամեն ու բազմանան և աներից ուղղակի փողոցները թափւող կոտրտանքները ու անմաքրութիւնները և փողոցներում ու հրապարակներում մորթւող անասունների մնացորդները կամ սատկածների գիտակները ոչնչացնեն։

Կարինում հազիւ 20 ծառ լինի. հասարակական գբօսատեղ, այզի կամ ծառուղի ծիծաղելի կը լինէր սպասել այս տաճկական քաղաքում. իսկ բիզ բիզ ցցւած քարերով ծածկւած գերեզմանատներ՝ ո'րքան կամենաք:

Ճաշելու արդէն ժամանակն էր, երբ ես վերադարձաց հիւրանոցը՝ Բարձրանալով երկրորդ յարկի նրբանցքը՝ ձախ կուան վերայ գտնուող մի գոնից մտաց մի փոքրիկ նախասենեակ հողի յատակով։ Այդ նախասենեակից ձախ մի դուռ ուղղակի բացւում էր դէպի մի կտուր, որը մի և նոյն ժամանակ և ճանապարհ էր դէպի խոհանոցը։ իսկ ուղղակի իմ հանդէպ կախւած էր մի հին կապերտ, որ ծածկում էր ինձանից միւս կողմում գտնուող ճաշարանը։ Բարձրացնելով կապերտի մի ծայրը՝ մտաց ճաշարանը, որը գաճած պատերով միջակ մեծութեան սենեակ էր։ Զախ կողմից երեք մեծ պատուհաններ դէպի վերոյիշեալ կտուրն էին նացում։ Սենեակում, մուտքի դէմ ու դէմ գտնուող պատի մէջ, մի քառակուսի ծակ էր բացւած դէպի խոհանոցը։ կերակուրը ստացւում էր այդ ծակից։ Ճաշարանի մէջ տեղում մի մեծ սեղան էր դրած ըսպիտակ հասարակ սփուռյով ծածկած և մի քանի հին աթոռներ շուրջը։ Ճաշարանի մի անկիւնում կրակով ամանղալն, էր։ Մի քանի հոգի վերարկուներով, կրկնակօշիկներով ու ֆէսերով նստուած սեղանի շուրջը՝ ճաշում էին։ Այս ճաշարանը Կարինի ամենաարիստոկրատիական, մաքուր և թանգ գրեսորաննո՞ւ էր։ նորան պահում էր մի ախալցիսացի հայ, որը իւր կերակուր պատրաստելու հմտութեան և եւրոպական ճաշակի մասին աւելի էր կարծում, քան Պարիզից Մօսկուակած մի որ և է երեւելի ֆրանսիացի խոհարար։ Հասարակ ախալցիսացի խոհարարը կարինցիներին եւրոպական ճաշակ էր սովորեցնում։ ու բերեց և ռաք քայլական ճաշակ էր սովորեցնում։

Ինձնից յետոց իսկոյն ճաշարանը մոտաւ Յովհաննէս աղան և սկսեցինք միասին ճաշել։ Ես նրան հաքնում էի ներկայ եղողների մասին։

Ճաշողներից երեք մաքուր հազնւած երիտասարդները տեղիս յունաց վարժարանի ուսուցիչներն էին. յոների վարժարանը Կարինի միւս գալրոցներից ամենականոնաւորն է. ուսուցիչները պատշաճաւոր պատրաստութիւն ստացած երիտասարդներ են և ստանում են կարգին ռոմիկ ու ապրում մարդավարի։ նրանց մօտ նստած էր դեղա-

գործի համազդեստով մի երխուասարդ՝ նոյնպէս յոյն (Հայերին Հայաստանում պաշտօն չեն տալիս): Բացի գոցանից նստած էին՝ մի տաճիկ սպազ, մի հայ կաթօլիկ՝ ռուսաց հիւսաստարանի թարգմանը, անբարոյական մէկը, և մի ծեր ֆրանսիացի ինժեներ վիշապի բերանով և թրաշած ղարհուրելի տգեղ դէմքով, որը իբր թէ ճանապարհների վերաց գլխաւոր հսկող ինժեներն էր, սակայն բացի հարբելուց ու ուժիկ ստանալուց, ուրիշ ոչ մի բանով նա չէր զբաղւած, գիտենալով որ «ինժեներ» անունն էլ, ինչպէս շատ ուրիշ բաներ Տաճկաստանում, ձեւի համար է: Սեղանի մի ծացրին նստած էր մի բողոքական հայ «աօքթեօռ», նրա մօռ՝ մի արծւաքիթ գեղեցիկ երիտասարդ, «ալավըրանկա» մաքուր հագնեած, Փէսը զլիսին. դա մի նշանաւոր քիւրդ փաշացի որդի էր: Նրա հացը իբրև ապստամբ մի ցեղապետ իւր բազմաթիւ բարբարոսութիւնների համար բերւած էր երգուում և մեծ պատով ու ամսական 10 ոսկի ռոմիկով պահւում էր այն պայմանով, որ Կարինից դուրս չը գնայ: Այլպէս է պատժեւում Տաճկաստանում կառավարութեան գէմ քիւրդ ապստամբը. իսկ երբ քիւրդերը կամ չէրքէզները միմիացն հայոց զիւղեր են թալանում ու հրդեհում, հայեր են կոտորում ու ողջ ողջ այրում, հայ աղջիկներ ու կանաչք են բռնաբարում ու առևանդում—մի թեթև պատիժ անգամ չը կայ նրանց համար: Միայն երբ բոլոր բարբարոսութիւնների լուրը հասնումէ Եւրոպացին, այն ժամանակ կառավարութիւնը զիմումէ իւր սովորական միջոցներին՝ ոչնչացնելու համար լուրերի անախորժ տալաւորութիւնը նրա զեսպանները յախարարում են, որ այդ հայերի գանգատները սուտ են կամ չափազանցացրած, կամ ասում են թէ այդ մեր քրուերը չեն արել, այլ Պարսկաստանից Հայաստան անցած թափառական ցեղերը, թէւ այդ լինի այնքան հեռու սահմանից, որքան օրինակ Մուշն է:

Ճաշողներից մի քանիսը գինի պահանջեցին, բայց որովհետեւ արգելած էր հիւրանոցում գինի գործ ածելը, ուստի մշեցի հաջի-Ղազարը շորերի տակին բռնած բերեց մի կուժ Խարբերդի գինի, և լցրեց ցանկացողների ջրի բաժակները: Ամեն մէկը մի քիչ խմեց և գրեց իւր բաժակը զետնին, ոտերի մօտ, աթոռի տակ, որպէս զի ոստիկանութիւնը յանկարծ մտնելով սեղանի վերաց գինի չը տեսնի:

Խնձ զարմացրեց թէ ինչո՞ւ առհասարակ այդքան քիչ են

ճաշողների թւռում տէրութեան ծառայողները։ Պատճառը այն էր, որ շատ քիչերը տաճիկ պաշտօնեաներից կարողութիւն ունեին ամեն օր այս «երևելի» բեստորանում ճաշելու։ Զը նայած որ կերակրի մի բաժինը 60 փարա արժէր՝ (15 կոպ.), այնու ամենայնիւ շատերը միջոց չ'ունեին յաճախել ճաշարանը։ Տաճիկ պաշտօնեաները ու զինուորական ծառայողները իրանց ոռոճի միմիացն մի մասն են փողով ստանում, իսկ միւս մասի փոխարէն նրանց տալիս են մի թուղթ, ուր աստիճանի համեմատ նշանակւած են լինում այն կենասական պիտոյքները, որ իրաւոնք ունի իւրաքանչիւրը նոցանից ստանալ «կօնդրատչիո-ից» (ուժքագույն)։ Օրինակ, եթէ ցիսնապետը ունի իրաւոնք ստանալ օրեկան մի յացնի քանակութիւնով հաց, միս, իւղ, ձու, շաքար, թէյ, վառելիք, ձիու համար դարման, գարի և այլն, հազարասպետը իւր աստիճանով աւելի բարձր լինելով՝ աւելի մեծ քանակութիւնով է ստանում նոյն պիտոյքները։ Այսպէս զիցուք, հարիւրապետը իրաւոնք ունի օրեկան 4 հաց ստանալ, հազարասպետը կօնդրատչի ից կը ստանայ 8 հաց և այլն։ Ամեն մի ծառայող կարող է կօնդրատչի ից իւր ստանալիք պիտոյքների իրաւոնքը ամբողջապէս կամ մասամբ ծախել ում կամենում է և ստանալ փոխարէնը փող։ Շատերը հէնց այդպէս էլ անում են և ստացած փողով ճաշում են հիւրանոցներում։

Ճաշից յետոյ ես առանձնացայ իմ սենեակը և մտածում էի այն օրւայ տեսածիս ու լսածիս վերաց։ Ճիշդ որ ողբալու աշխարհ է Հայաստանը և մարտիրոս ժողովուրդ՝ է հացոց ազգը։

Կարինը, ինչպէս և Հայաստանի ամեն մի թիզ հողը, միշտ օտարները ձեռքից ձեռք են խլել. — յոյն, պարսիկ, արաբ, թուրք, թաթար և այլն Հայաստանը շինել էին ասպարէզ ամեն տեսակ բարբարոսութիւնների։ Դեռ հինգերորդ դարում Կարինը, որ երեխ այն ժամանակ մի աննշան գիւղ էր, յունաց ձեռքումն էր և Անառօլի անունով զօրավարը ամբացնելով նորան քաղաք շինեց և ի պատիւ իւր Թէոլոս կայսեր — Թէոլո-Պոլիս անունը տւեց Հայկական աննշան Կարինին։ Հայաստանում գերակշռութիւն ունենալու համար Յունաց և պարսից մէջ եղած անթիւ կոխւների ժամանակ անտէր երկիրը թշնամիներից կամ մէկի կամ միւսի ձեռքն էր ընկնում, մինչեւ որ Vll դարում հայերի զիսին մի այլ պատուհաս էլ թափեց՝ ա-

բարացիք, որոնք առաւել ևս մեծ բարբարոսութիւններով աւերեցին թշւառ երկիրը և խլեցին նորան յոններից։ Արաբացիք Թէօդօֆոլսին Արզուրում՝ այսինքն երկիր ուռումների (Հոռոմ, յոն) անունը տւին։ Յոյների և արաբների մէջ պատերազմները շարունակւում էին, մինչև որ XI դարում մի աւելի ևս կատաղի թշնամի՝ թաթարները՝ թափւեցին Հայաստան։ Ողբալի Հայաստանը սարսափելի եղեւնագործութիւնների ասպարեզ դարձաւ. հայերը գունդ գունդ սկսեցին գաղթել իրանց երկրից։ Լանգթէմուրներ իրանց անգութ արշաւանքներով մի կողմից, սովոր միւս՝ ամայացրին ամբողջ Հայաստանը և հասցրին նրա ժողովուրդը թշւառութեան վերջին ծայրը։ Անվերջ պատերազմներից յետոյ թաթար ցեղերից մինը (տաճիկ) XV դարում հայաստառուում է Հայաստանում։ Կարինը այնուհետև գառնում է տաճկական քաղաք։ Զարմանալի չէ, որ այսքան փոփոխութիւններից յետոյ անկարելի է գոյնել այժմ Կարինում որ և է հետքեր, յիշատակներ հացկական անցեալ կուլտուրացից։

Կարինը Թիւրքաց-Հայաստանի և առհասարակ Փոքր-Ասիայի ամենամեծ վարչական-առևլուտրական կենդրոնն է. նա երգրումի վիլայէթի գլխաւոր քաղաքն է։ «Վիլայէթը» կարելի է համեմատել ռուսաց նահանգների կամաւելի ճիշդ «օճախ»-ների հետ, որովհետեւ վալին՝ որին տեղական հայերը կուտակար են ասում՝ վիլայէթի ընդհանուր կառավարիչը, պետը, գեներալ-նահանգապետների իրաւունքները ունի և նշանակւում է Սուլթանից։ Վալիից է կախւած վիլայէթի բոլոր վարչութիւնը և իրականապէս նորա ինքնիշխանութեան ոչ չափ կայ և ոչ սահման։ Վիլայէթը բաժանուում է «սանջակների» (օքրուց, յնչեալ), որոնց գլխաւոր վարչական անձինք միւթե սար ի Փներն երն են (իպական օքրուց, յնչեալ)։ տեղական հայերը անւանում են «կառավարիչ»։ սանջակին տալիս են և «միւթեսարը» անունը։ Սանջակում միւթեսարի փը վալիի կատարեալ ներկայացուցիչն է. նորանից է ստանում նա հրահանգներ և նորան է զեկուցանում։ Սանջակը իւր կողմից բաժանուում է «ղէզէ»-ների (участок), որոնց գլխաւոր կառավարիչները գայմագամն երն են (приставъ)։ Միշտ վալիի սեպհական ցանկութիւնից է կախւած նշանակել ում և ո՞ր պաշտօնի մէջ ուզում է։ Վէզէն բաժանուում է «նահիյէների» (օթքество, վոլոս্ত), որոնցից իւրաքանչիւրի գլխաւոր վարչական անձը

միւդի ըն է, որին ընտրում է միւթեսարիֆը, իսկ հաստառում է վային: Ամեն մի զիւղ ունի իւր մուխտարը, որին de jure պէտք է ընտրէ ժողովուրդը, իսկ de facto ընտրում է միւգիրը: Ամեն մի պաշտօննեաց կախումն ունի իւր դիրքով իրանից մեծից զանազան և պարագաներով։ Փոքրը հաստատ է իւր տեղում, մինչեւ որ իրան հովանաւորող մեծը տաք տաք նստած է իւր տեղում։ Բայց իւրաքանչիւր պաշտօնի համար, իբրև միջոցի այնպիսի յետ ընկած տեղում պղտոր ջրի մէջ ձուկ որսալով հարստանալու՝ տնկւած են բազմաթիւ ծակ աչքեր, որոնք ոչ մի միջոց չեն խնայում համնելու իրանց փափագներին ու տենչանքներին։ Էրզրումի վիլայէթը կազմւած է երեք սանջակներից—Կարինի, Բայցաղէդի և Երզնկալի։ ուրեմն, ինչպէս վերև ասածից պարզ է, զրանցից ամեն մէկում նստած է մի միւթեսարիֆ։ Կենդրոնական (Կարինի) սանջակի<sup>1)</sup> միւթեսարիֆը վալիի բացակայութեան ժամանակ բռնում է նորատեղը։ Էրզրումի սանջակը բաժանուում է հետևեալ 10 զէզեների—Կարինի գաշտը, որից արեմուտք գտնուում է՝ Դերջան։ Հարաւ Խընուս։ Հիւսիս-արևելք՝ Բայրուրտ, Խապիր և Կեսդիմ, Թորթում, Քղի. արևելք՝ Բասեան։ Հարաւ-արևելք՝ Թօփրաք-զալա (Ալաշկերտ) և Ղարաքիլիսէ։ Ամեն մէկը այս զէզէներից ուրեմն գայմագամլը է, այսինքն իւրաքանչիւրում մի մի գայմագամ է նստում։ Մենք անցանք Բասեանով, որի գլխաւոր քաղաքը Հասանդալան էր և այժմ Կարինի գաշտումն ենք, Բարձր-Հայքի կենդրուումն։

Իմ Հաւաքած տեղեկութիւններին նայած, (Տաճկաստանում կարգին վիճակագրութեան մասին նոյնքան հասկացողութիւն ունին, որքան և կարգին կառավարութեան) Կարին քաղաքում ընդամենը (մօտաւորապէս) 10000 տուն բնակիչ կայ։ Այդ թւից

2500 տուն Հայ-լուսաւորչական։

120 » Հայ-կաթոլիկ։

35 » Հայ-բողոքական։

75 » յոյն։

Իսկ մնացեալը տաճիկ Բայց պէտք է ի նկատի ունենալ, որ «Հայ-

<sup>1)</sup> Ինչպէս օքէնակ Կարսկա օբլաստի Կարսկի օկրուգը կենդրոնական օկրուգը համարէնք։

տուն» ասելով պէտք է միշտ աւելի շունչ հաշւել քան տաճիկ, որոնք չեն սիրում պսակւած եղբայրներով միասին ապրել, այնպէս որ չընայած տաճիկների տների թւի մեծ առաւելութեան, նրանց շունչերի թիւը համեմատաբար այնքան էլ մեծ չէ հայերից։ Մօտաւորապէս կարելի է ասել, որ հայերի թիւը 26 հազար կը լինի, իսկ տաճիկներին՝ 36 հազար, թէ արական և թէ իգական սեռը հաշւած, մօտ 8 հարիւր էլ յոյներ կը լինին, բացի այդ մի 2 հարիւր հոգի էլ պարսիկներ և այլ ազգութիւնների մարդիկ կարելի է հաշւել։

Տաճիկները զլխաւորապէս կալւածատէրեր են, զինւորական և այլ ծառայողներ, թէև այն պաշտօնները, որոնք պահանջում են փոքր ի շատէ գիտութիւն ու ուսում, օրինակ՝ դեղագործ, բժիշկ, հեռագրատան ծառայող—օտարներ են լինում, զլխաւորապէս յոյները, որովհետև Տաճկա-Հայաստանում հայերին պաշտօն չեն տալիս։ Թիւրքերը արհեստներ չը գիտեն. նրանց մէջ շատ են մսագործներ, կան և չնչին բաներ ծախող մանրավաճառներ։ Հայերի մեծ մասը արհեստաւորներ են, յետոյ վաճառականներ ու զրամատէրեր և սակաւ՝ ծառայողներ։ Յոյները վաճառականներ և ծառայողներ են։ Կարինում կան և պարսիկներ (աջամ), որոնք զլխաւորապէս մանրավաճառներ են։

Երզրումը պատերազմից առաջ բացի առևտորական-վարչական կենդրոն լինելուց, նաև ամբողջ ՓոքրԱսիայի՝ Անատօլեան զօրաբաժնի՝ (կօրպուս, օրէու) զլխաւոր կայարաններ, բացց ուսու-տաճկական պատերազմից յետոյ տաճիկները քաշւելով «շէկ գեավուրից», Թիւրքաց-Հայաստանի մէջ գտնւող զօրքի զլխաւոր կենդրոնատեղին փոխեցին Երզրումից Երզնկայ, որը սահմանից աւելի հեռու է և Կարինից դէսի արեմուտք է գտնւում։ Ազգանունը է նստում զօրաբաժնի ընդհանուր հըրամանատարը (միւշիրը) ու նրա շտաբը։ Անատօլեան զօրաբաժնը խաղաղ ժամանակը հազիւ ունի 30,000 զինւոր։ Կարինը առաջնակարգ ամրութիւն է և տաճկաց կառավարութիւնը ոչինչ չի խնայում իւր կարողացածին չափ անառիկ շինել նրան։

Գտնւելով այն մեծ ճանապարհի վերաց, որը Տրապիզոնից Պարսկաստան է տանում, և լինելով Տաճկա-Հայաստանի այն զլխաւոր կենդրոնը, ուր Հայաստանի զանազան կողմերից (Ակաշկերտ, Բայազէդ, Վան, Տիգրանակերտ, Բիթլիս (Բաղէշ), Սղերտ, Մուշ, Բալու, Խարբերդ, Արարէկեր, Զմշկածագք, Երզնկա, Խնուս, Մանազկերտ, և

այլն) հաւաքում են ամեն՝ տեսակ բերքեր և ապրանքներ՝ Կարինը ունի նաև մեծ առևտորական նշանակութիւն։ Նա մի տեսակ օղակէ, որ կապումէ հեռաւոր ասիական Արևելքը եւրոպական Արևմուտքի հետ։ Եթէ չը նայած իւր այդ դիրքին, նա այնու ամենայնիւ բաւականին աղքատ և ողորմէլի է թէ տնտեսապէս և թէ քաղաքակըրթութեան տարածման կողմից, գորա միակ պատճառը երկրիս ներկայ քաղաքական—վարչական կազմակերպութիւնն է։

Խս հետո վերցրել էի Մխիթարեանների հրատարակած Հայաստանի քարտէզը, որի վերաց փնտում էի վերոյիշեալ տեղերը։ Նոր էի նորան ծալել և դրել ճանապարհորդական պայուսակս, երբ յանկարծ սենեւ կիս դուռը բացւեց և ներս մտաւ, առանց նախապէս իմացնելու, Ալի-էֆէնդի «Քօլիս»-ը։ Ես զարմացած ացդ յանդգնութեան վերաց, մօտեցայ նորան և հարցրի թէ ի՞նչ է կամենում։

—Հա՛, էֆէնդմ, դուք ասումէք, որ անպատճառ վա՞զը բերեմ ձեր անցաթուղթը, սկսեց նա դանդաղ արտասանելով ամեն մի խօսքը, որ ժամանակ վաստակի իւր խորամանկ պլազ աչքերը իւր չորս կողմը կտտեցնելու և կասկածութեամբ սենեակիս ամեն մի անկիւնը գննելու։

—Այո՛, անպատճառ վազը, սկստասխանեցի ես, հասկանալով նրա յանկարծակի այցելութեան նպատակը։

—Հերեթ (Ե հարիչ), էֆէնդմ, հերեթ, վազը կը բերեմ։ շա՛տ լաւ, ուրեմն կը բերեմ։ Շա՞տ ժամանակ այստեղ կը մնաք։

—Մի երկու շարաթ, ասացի ես այնպէս ինձ ձևացնելով, որ աւելի բացատրութիւններ տալ չեմ կամենում և մտադիր եմ հանգստանալ ճաշից յետոյ։

—Շա՛տ լաւ, ուրեմն վազը կը բերեմ, կրկնեց նա մի վերջնական քննող հայեացք ձգելով իւր չորս կողմը և հեռանալով։

Նա յանկարծակի էր մտել՝ տեսնելու ի՞նչ կասկածաւոր բան կայ մօտս և լրտեսելու—չի՞ցէ թէ մի որ և է տաճկաստանցի հայի հետ տեմնելու ու խօսել ունիմ։ Լաւ է, որ քարտէզը նա չը տեսաւ, եթէ ոչ Տաճկա-Հայաստանում ամենամեծ քաղաքական յանցանքներից մէկը Հայաստանի քարտէզ ունենալն է։ Արել մայր մտնելու մօտ էր. ըստ տեղական սովորութեան շուտով հիւրանոցը փակւելու էր։ Ես բարձրացայ վերև թէ խմելու։ Այնտեղ լիքն էին ամեն կարգի

Հայեր, տաճիկներ և յոյներ և ծխում էին, բիլիարդ խաղում, վիճում և թէյ կամ զայֆէ խմում:

Ահա՝ մօտառը ջամփի բարձր մինարէի պատշգամբում երեաց մուկզզինը և իւր զիլ ձայնով ուղղահաւատների ազանը տւեց: Կամաց կամաց հիւրանոցից դուրս էին գալիս մարդիկ: Նուառվ և ինքը հիւրանոցի տէրը՝ Յովհաննէս աղան՝ ինչպէս և ախալցիսացի ճաշարանատէրը վերջացնելով իրանց հաշիւները պիտի կողպէին՝ մինը ընթերցարան-թէյարանը, միւսը իւր երևելի բետօրանը՝ և հեռանային հիւրանոցից իրանց տները՝ թողնելով շխանում, միմիայն «միսաֆիր»-ներին (հետք) և մշեցի ծառայ հաջի-Դաղարին:

Հիւրանոցից բոլորովին գնալուց առաջ Յովհաննէս աղան մտաւ սենեակս. ես նորան պատմեցի Ալի-է-Շէնդիի այցելութիւնը: Նա վախենալով հարցրեց, թէ արդեօք մի որ է կասկածելի բան չ'ունի՞մ իմ մօտ: Ես ցոյց տւի Մխիթարեանների հրատարակած հին քարտէզը: Նա զարհուրեց, ասելով թէ կորած է ինքը, եթէ բօլիսը մի այդպիսի բան տեսնի իւր հիւրանոցում և թէ լաւ է, որ մինչև նորա մըտնելը անզիտակցաբար ծածկել եմ, եթէ ոչ այդ մի ամենամեծ առիթ կը լինէր, որ պահանջէին ինձ մօտ խուզարկութիւն անելու: Նա խնդրեց կրկին, որ խնայեմ իրան և եթէ որ և է կասկածելի թղթեր ունեմ՝ իսկոյն ոչնչացնեմ: Ես հաւատացրի, որ աւելի ոչինչ չ'ունիմ և հանգստացնելու համար ասացի, թէ կը թագցնեմ քարտէզը մի որ և է տեղ: Տաճկաստանը մի կատարեալ տղիտութեան և խաւարի երկիր է. իսկ երբ տղիտի խելքում մի որ և է կասկածանք է յարուցւում, նա այն ժամանակ հասնումէ մինչև սարսափելի անհեթեթութիւնների... Այո՛. «Որոց ողիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէ՝ յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ, յամենայն հողմոյ շարժի և յամենայն բանէ խոռվի, և յամենայն իրաց դողալ. երազագէտ է այնպիսին ի կեանս իւրում, և յանգիւտ կորուստնու... յուղարկէ զերկիրն իւր—աւելացնենք մենք յարմարեցնելով այս խօսքերը տաճկաց կառավարութեան բռնած ընթացքին խեղճ, հլուհպատակ հայերի վերաբերեալ Տաճկա-Հայաստանում:

Յուրտ, մուայլ սենեակումն վառեցի «աօքան» և, ինչպէս միշտ, վերարկուով, կրկնակօշիկներով և գլխարկով նստած մտածումէի, թէ հայերի մէջ եմ՝ բայց հայերից հեռու, Հայաստանի մէջ՝ բայց

Հայրենիքիս կարօտ... Տաճկա-Հայաստան դիրք մուտք չ'ունի. ինձ յաջողւել էր հետս առնել մի ռուսերէն դիրք, որը արդէն կարդացել վերջացրել էի: Կարելի էր նստել ցիշողութիւններս գրել, բայց այդ էլ ինդրել էր հիւրանոցի տէրը չը գրել, ով է իմանում ինձ խուզարկեն, առնեն կարդան և յետոյ մի որ և է խօսքի պատճառով նրան էլ բանի մէջ ձգեն: Խեղճը արդէն չորս տարի բանտում մնացել էր, համը գիտէր: Մնում էր մաքում ծրագիրներ կազմէի՝ թէ կարինում զեռ ո՞ւմ և ի՞նչ պէտք է տեսնել: Ամեն մի կիւրակէ իւրաքանչիւր մարդ իրաւունք ունի այցելել Սանասարեան վարժարանը, ուստի ես էլ մոռագրւեցի առաջիկայ կիւրակէ օրը գնալ վսեմաշուք էֆէնդիներին և նրանց դպրոցը տեսնել. յետոյ պէտք է ներկայանացի առաջնորդին, տեմնէի աազգացին» և բողոքականների ու կալթոլիկների ուսումնարանները:

Արդէն «սօբայ»-ի կրակը մարել էր և սենեակիս րոպէական չոր տաքութիւնը կրկին անցել: Դեռ ժամի 10-ն էր, բայց ամբողջ քաղաքը քնած էր: Անթափանցելի խաւար էր դուրսը: Մեռելային լրութիւնը ժամանակ առ ժամանակ խանգարւում էր շների կատաղի հաշիւնով, հեռու պահականոցներից լսւող զինւորական փողի ձայնով և փողոցով անցնող, հիւրագնացութիւնից ուշ վերադարձող մարդկանց խօսակցութիւնով: Աւելորդ էլ է նկատել, որ կարինի փողոցներում լուսաւորութիւն չի լինում: Դիշերը շրջողները պարտական են հետները վառւած լապտերներ ունենալ թէ ճանապարհը տեսնելու համար և թէ գորանով ցոյց տալու պահապաններին, որ իրանք գողեր կամ կասկածաւոր մարդիկ չեն, այլ «Փաղը» քաղաքցիք:

(ԿԸ Հարուճակւի)

## ԻՄ ԳՐԻՉԸ—ԻՄ ԾԱՌԱՆ

ԼԵԽՈՆ ՄԱՆՈՒԵԼԱՆՑԻ

Հեզաբարոյ և սիրելի  
Մի հատ ունիմ ես ծառալ,  
Որ իւր տիրոջ մինչ գերեզման  
Հաւատարիմ կը մնալ:  
Միշտ ուզածս կատարում է,  
Հընազանդ է իմ կամքին.  
Համբերութեամբ և անտըրտունց  
Խլնամում է իմ հոգին:

Երբ սև թախիճ և դառն ցաւեր  
Ինձ տանջում են չարաչար,  
Յուսահատւած նա իմ սըրտին  
Միշտ լինում է մըխիթար:  
Ինչ բորբոքւած հրաբուխի պէս  
Պըլպըլում է կըրծքիս տակ,  
Նա խըլում է և աշխարհին  
Նա յայտնում է համարձակ:

Թող իմ բաղդըն ալսպէս լամառ  
Օտար մընալ յաւիտեան,  
Հոգու հանգիստ կը պարգևե  
Ինձ մըտերիմ իմ ծառան:  
Թող ես երբէք չը ճաշակիմ

Վայելչութեան բաժակից,—  
Պատանեկան ցընորքներով  
Թող չը վառւեմ բընաւին.  
Ծառալ ունիմ հաւատարիմ,  
Որ երկնային սահմանից  
Ոգեորիչ հուր կը ժմափէ,  
Կը բորբոքէ իմ հոգին։

---

Դըժնեալ զըրկանք և կոյր ծաղրանք  
Թող դաշնակցեն իմ դիմաց,  
Թշնամութիւն և զըրպարտանք  
Թող ինձ քըշեն կուրացած։—  
Ամենուրեք՝ հըեշտակի պէս՝  
Ինձ կը հետևէ ժըրաջան  
Եւ համբերող և սիրտ տըւող  
Իմ գըրիչըն, իմ ծառան։

Թէֆլիս, 1888 թ., 22 յունիսի:

## ԱՐՏԱՍՈՒԻՔ

ԼԵԽՈՆ ՄԱՆՈՒԷԼ ԵԱՆՑԻ

Երբ, ինչպէս երկինք, ամպում են աչքերս,  
Եւ, ինչպէս անձրև, արցունք է ցօղում,—  
Գիտցէք—այդ ժամին ցըրւում են վըշտերս,  
Եւ ես պարզ, պայծառ՝ նոր կեանք եմ առնում։

Բայց երբ ժամերով աչքերըս ամպած՝  
Մի հատիկ կաթիլ արցունք չէ ցօղում,—  
Գիտցէք—այդ ժամին տառապանք դառած՝  
Գերեզմանական հանգիստ եմ խընդրում։

Մօսկվա, 1889 թ., մայիսի 21.

# ԽԵՒ ԿԱՐԱՊԵՏ

ՍԱՐԳԻՍ ԱՏՐՊԵՏԵԱՆԻ

(Եազունակութիւն 1)

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ս Է Ր

~~~~~

**ԺԲ.**

Կ Ա Կ Ո Ս

Զ'անցաւ շատ ժամանակ, երբ Յովակիմը բէդը Պօլսից իմացաւ  
իւր ուղարկած դրամների կեղծ լինելը; Աստիվանութեան խուզարկու-  
թիւնը հասաւ Դաւթի խանութը, որը զննելուց յետոյ՝ Դաւթին  
ձերբակալեցին, իսկ խանութը կնքեցին: Դաւթին տարան բանտ, որին  
և մենք կը թողնենք մի առժամանակ գլուխը խոնարհած բանուապետի  
և նորա ստորագրեալների առաջը իւր գլխին եկած ձախորդութեան մա-  
սին խորհելու: Թողնենք նաև Յովակիմը բէդին իւր կանտօրում բոր-  
բոքւած, տէր-Կարապետին պաշտօնեաների դոները չափչփելիս, Լուցիա  
խանումին՝ ցաւիցը նւազած, քաղաքացիներն՝ արմանքի ու զար-  
մանքի մէջ և ընթերցողի հետ մոնենք քաղաքի Մեծ-նոր խանը,  
առանց ուշք դարձնելու բէզագների խանութաւորների կամ մադա-

1) Տե՛ս «Մուշճ»-ի 6-ըն. համարը:

զինների աշկերտների հրամմեցէքներուն, առաջ գնանք երկու հարիւր քայլ քարւանսարայի խորը ու մտնենք Կակոսի զայֆան:

Տաճկական Հայաստանի քաղաքներում վաճառանոցները ամփոփ և քաղաքի մի առանձին մասում են գտնուում, հեռու ընտանեկան բնակութիւններից: Այս վաճառանոցները զբեթէ ամեն տեղ զանազան մասերի են բաժանած՝ էաթտարների, բէզազների, դերձակների, կօշկակարների, ատաղծագործների, աղծախների, ոսկերիչների, զարբինների, զասապների և այլն: Տեղ տեղ սոցա մէջ խառն երեւում են փուռեր, խոհանոցներ, սրճանոցներ, շատ հազիւ զինետներ: Վաճառանոցների, նամանաւանդ թանկազին ապրանքներ ծախողների խանութների փողոցները ծածկւած են լինում կամարակապ կամ փայտածածկ, և փողոցների ծայրերում երկիքեղկ խոշոր դռներ ունին, որոնք արևէ մայր մտնելիս՝ կողպւում և դուրս գալիս՝ բացւում են: Գուցէ գողութիւններն են պատճառը այս ծածկած բազարների յառաջանալուն. բայց մինչեւ այս օր էլ տաճկական քաղաքներում վաճառականները հաւաքւում են այն վաճառանոցները կամ խաները, որոնք աւելի ամուր ու ապահով են: Այս հանգամանքները փաշաններին ստիպել են իրանց փառքի ծայրայեղութեան համելու համար՝ շինել մի մի խան, բռնութեամբ առևտրականներով լցնել ու էվլազիէ վագիֆին յանձնելով, թողնել այդ կայքը իրանց հարեմներում մնուցած զաւակներին՝ թոռանց թոռ հեշտ ու ծով ապրելու համար:

Մեծ-նոր խանը արտաքուստ շատ շքեղ չէր, միայն դռների կողմի պատերի արտաքին երեսները զարդարւած էին մի հին շինութիւնից քանդւած սրբատաշ քարերով: Յիսուն սենեակներ ուներ, ազշափ էլ խանութ և ախոռ, մարագ ու սրճանոց: Մէկյարկանի էր ու փայտի ծածքով: Թէ սենեակների և թէ միջին անցքի առաստաղները սրբատաշ զերաններով էր ծածկւած՝ ութն անկիւնանի գմբէթածե իրար վերաց շարւած, որոնց ամենաբարձր մասում գործում էին լուսամուտները: Այս ծածքը անւանում են դարն անդուշ:

Այս խանը Կարինի առևտրականական հարստութեան կենդրոնը կարելի էր համարել և ամեն մի աչքում երեքից մինչեւ քսան հինգ հազար լիրայի ապրանք էր զետեղած:

Այս խանի մէջն էր Կակոսի սրճանոցը: Սա խանի մնացեալ սենեակներից տարբերում էր արևելեան կողմը երկու պատի միջի

լուսամուտներովը և նրանց կրկին մեծութիւնովը։ Զորս արշին բարձրութիւն ունէր, տասն և երկուսական արշին քառակուսի տարածութիւն։ Արեւելեան լուսամուտների միջոցի պատում գտնուում էր զայֆայի օճախը։ Անընդհատ ատրուշանների նման վառւում էր կրակարանը, որի բոցերի առաջ արծաթի պէս փայլում էին զայֆայի ջրի կենած պղնձից ջէ զէն երը մի մի արշին բարձրութեամբ։ Դոցա մօտ շարած էին նոյնպիսի փոքր ամաններ մաքուր և կոկ։ Արտաքուսա վառարանի զարդարուն փայտէ շրջանակը գոյնզգոյն ներկած էր, որի կամարաձև ճակատի վերայ փորւած էին տերևներով ծառի ճղներ, թռչուններ, ծաղիկներ, ոստեր ու կոկոններ և ամենաբարձր գագաթում աստղը մահիկի մէջ։ Այս շրջանակի կողքերի արտաքին և ներքին երեսների վերայ կաւիճով քաշած էին զանազան գծեր, մեծ մասամբ կարծ և ուղղահայեաց շարքով, որոնք զայֆաջիկ ապառիկների տոմարի թերթերն էին։ Ղայֆի արևեմտեան կողմը կապած էր սէքիւն երկու կանգուն բարձրութեամբ, որի վերայ բանում էր Կ։ Պօլսեցի եւրոպական շորերի գերձիկ հաջի Մկրտիչ աղան։ Ղայֆի չորս բոլորը կապած էր փէքեաց երեք քառորդ կանգուն լայնութեամբ, որի վերայ մեխած էին ընտիր կարպետներ բաւական մաքուր։ Պատերից կախած էին ոսկեզօծ շրջանակներով երկու հատ խոշոր հայելիններ, արևելեան զարդ ու զարդարանքներով կանանց պատկերներ, կալիօնը կամ ներգիլէն ձեռքերը զայֆայ կամ օշարակ խմելիս։ Մէջտեղը շինած էր մի քառակուսի սաժէն տարածութեամբ կրակարան, որի կլորակ ծակերի վերայ զրւած էին ֆէսի մետաղեայ կաղապարներ (կամ ութուններ) զանազան մեծութեամբ և ձեռվ. զա մի նոր մօզա էր Կարինի համար։ Քսան փարայով նորոգում ու ձևաւորում էին ֆէսերը։

Կակոսը իւր եկամուտի կողմից նախանձելի զրութեան մէջ էր. ոչ թէ միան խանի յայտնի վաճառականների ու նոցա երևելի յաճախորդների համար զայֆայ էր մատակարարում, այլ սա իւր մաքրութիւնով, ֆէսի ութուններով, ճարպիկութիւնով ու ճարտարութիւնով գրաւել էր ողջ քաղաքացիների համարումը. գերձիկ հաջի Մկրտիչ աղայի պատճառով էլ պակաս յաճախորդներ էին գալիս սրճանոցը։ Այստեղ յաճախում էին, եթէ կարելի է ասել, քաղաքի բոլոր արիստոկրատ, ինտելիգենտ և ծառայող դասակարգը ամենահարուստ վաճառականների հետ։

Աս սրճանոցում խաղ չը կար, ոչ դամայ, ոչ նարդի, ոչ թուղթ և ոչ էլ ջուխտ ճան (վեժ, ծեւգ): Խաղը բոլորովին արտաքսւած էր. բայց օրը մինչի իրիկուն այցելուներն անպահաս էին: Ամեն տեսակ խօսակցութիւն ու գործ ունեցողները գալիս, նստում, խօսում, զնում, վերցնում ու վերջացնում էին: Ահա երեք մարդ եկան և մի կողմը ծանր նստեցին, մի մի զայֆայ խմեցին, առանց բարձր ձախնի վերջացրին իրար մէջ իրանց առուտուրը: Գործը վերջացնելուց յետոյ՝ շատ անգամ պաշտօնապէս բազմութեանը յայտնում են թէ՛ ի՞նչ են կատարել և մի մի ֆինջան զայֆայով նոցա էլ պատում: Այստեղ խռովածները հաշտում, ցաւածները բացատրում իրանց վիրաւորանքները և ամեն գործ պարզուում է: Կարճ խօսքով, սրճարանը մի տեսակ կլուք, ժողովարան էր: Այստեղ էին խօսուում ամեն նորութիւններ, հարցեր, այստեղ վճռուում և այստեղից տարածւում քաղաքի ամեն կողմերում:

Կակոսը պանդուխտ էր Կարինում: Ինքը բնիկ Թ.-ից էր: Սաքսան և հինգ տարեկան էր, տարիքի համաձայն արագաշարժ, վառվլուն, ժիր և արհեստին պատշաճ ասող, խօսող, ծիծաղեցնող մի երիտասարդ: Սորա բօյը, բօյսը, գուրեկան դէմքը, շէկ մազերը, քնքոյշ բեխերը, խոշոր ու զէլթունի աչքերը, կարմրած այտերը, շարքն ու շարժւածքը և ուրախ ընդունելութիւնները ամենին իրան բարեկամ էին շինել: Սորա զայֆան մանողը ուրիշ զայֆաներում ունեցած հաշիւը մաքրում էր և հեռանում: Կակոսը Կ. Պօլսում շատ տարիներ ծառայած լինելով, այնտեղի ձեռվ էր սարքել ամեն բան, որի մաքրութիւնը և նորութիւնները քաշում էր յաճախորդներին: Կակոսը գրաւել էր նոյնապէս Կարինի աղջիկների սիրարը: Թէև շատ օրիորդների մտքից անցնում էր այս շագանակագոյն մազերով երիտասարդին տէր ու պսակ ունենալ, բայց արդէն Կակոսը սոցանից մէկին իրան անուշ ջան էր ընտրել:

Կակոսի խելքը, միտքը, ուշքը ամբողջապէս դիւթել էր իւր սիրեկանը: Նորա պաշտելի պատկերը երբէք չէր հեռանում իւր երեւակայական տեսութիւնից, որով հոգեկան բարձրութիւն էր զգում Կակոսը: Անընդհատ մակաբերում էր այն տեսարանները, որտեղ հըրեշտակային անմեղութեամբ, համեստ շարժմունքով, պարզ հագուստով, նազելի դիրքով և հմալիչ նայւածքով տեսել էր նորա շողշո-

զուն դէմքը, որը մագնիսի նման քաշել, պոկել ու տարել էր իւր սիրտը: Նա իրան միշա մտաբերում էր աչքերը խոնարհած, ողջ մարմնով ցնցւելով իւր սիրուհու լուսամուտների առջեկոց անցնելիս, որտեղ անզիտակցաբար աչքերը բարձրացնելով ապակու ետել նկատում էր նորա լուսարձակ ճակատը, կեռ ունքերն ու խոշոր աչքերը իւր վերաց ուղղած, որոնք դանդաղաբար հեռանում էին սենեակի խորը՝ առանց նայւածքը խոտորելու: Կակոսի մոտահայեացքի առաջ անջնջելի կերպով կանգնած էր իւր տարփաւորի անդրին, արևի ճառագայթների տակը, իրանց տան գաւթումը, գետի ափումը՝ պարտիզակի մօտ կապած չւանների վերաց լւացքը փոելիս: Անյագաբար Կակոսը խելագարի նման գննում էր նորա իրանը մխնոցի (բան անելու շոր) ու թողլ շորերի տակից: Սիրտը ուռչում, չնչառութիւնը արգելում և ականջը չէր լսում՝ ոգւով այս պատկերի բարձր ու սպիտակ վիզը, կիսամերկ ու շողողուն կուրծքը, մինչև արմունկը բաց, ողորկ ու պլալան դաստակները, բարակ շորերում ամփոփւած ու նոր զարգացած կլորակ ատինքները և արձակ մազերը քամու հետ ծածանելը երևակացելիս:

Կակոսը կուրացել էր իւր սիրուց, ընկել նորա անծայր ու անյատակ ծովը և ծփում նորա ալիքների վերաց, յուսալով հասնել մի օր խաղաղական նաւահանդիսառը, որտեղ յաւիտեան պիտի վայելէր երազած քաղցրութիւնը:

Կակոսի սրտին տիրացել էր Թաթոս աղայի աղջիկը —օրիորդ Տիրուհին:

## ԺԳ.

### Տ Ի Բ Ո Ւ Հ Ի Ն

Տիրուհին մի տասն և չորս տարեկան աղջիկ էր, ոչ շատ բարձը հասակով, բարակ կազմւածքով, մեւ սեւ աչքերով և թուլս մազերով, որոնք փայլում էին սեւ սաթի նման: Մի քիչ թուլս էր մորթը, ոչ թէ սեւ ու զեղին, այլ ճիշդ այն գոյնով, որին մեր ժողովրդը ցորենագոյն է անւանում: Բայց չքնաղ էր նորա զէմքի գծագրութիւնը, իրար կցւած բարակ ու երկար նուրբ ունքերը, խոշոր աչքերը՝ բամբակի նման սպիտուկուցներով, երկայն թերթեինե-

ըլ, ողորկ, նուրբ ու բութծայր քիթը, վարդագոյն թշերը, կարմիր ու բարալիկ պունիները—այս ամենը նորան տեսնող երիտասարդի սիրտն էր կտրատում, ոգին թռցնում, ուշքը տանում: Թէև քիչնիշար էր այդ տարիքում, բայց առողջ կազմւածքը լցւելու ապագայ էր խոստանում, այնպէս որ մի օր մօր կոր ու գէր տիպարը կը ստանար, առածի ասածի պէս՝

«Կտաւի քեանարն,

«Աղջկան էլ մայրն

«Հաւանի՛ր ու ա՛ռ:

Մատաղ գէմքի վերայ հայելու պէս երեւում էր սրտի անմեղութիւնը, բարեսրտութիւնը և առաքինութիւնը: Տխուր էր Տիրուհու գէմքը, այնպէս արտմալի, որ կարծես կրծքի վերայ նստած լինէր մի թռւնաւոր օձ ու անդադար խածխծելով նորա սիրտը, կսկծացնելով մղկացնէր: Քարասիրտ մարդը նորա ցաւալի գէմքը տեսնելիս՝ գութ էր զգում և ակամայ սէր տածում դէպի նա: Նա ուղղութեան մի կենդանի օրինակ էր անառակների համար գէպի բարութիւնը փոխւելու: Նորան ուրախացնելու համար հարուատը չէր խնայիլ իւր գանձը, աղքատը իւր աշխատանքը, երիտասարդը իւր արիւնը, ծերը իւր փաղաքշանքը, անմեղ հրեշտակն էլ իւր սրտի խոնարհութիւնը: Մէկ խօսքով, ապառաժի վրայի փշերի մէջ մի կոկն վարդ էր:

Տիրուհին թէև չը գիտէր հաստատապէս թէ ի՞նչ բան էր իսկ սէրը, սիրում էր փոխադարձաբար Կակոսին: Այս սէրը մի անկեղծ համակրութիւն էր, որը օր ըստ օրէ սաստկանում էր և անկարող էր ընդհատելու: Տիրուհին ուրախանում էր նորան տեսնելիս՝ կամ նորա լաւը լսելիս, ուսրում նրան չը տեսնելիս՝ կամ նրան չարախօսելիս: Կակոսը յաճախ անցնում էր նոյա դրան առջևից և գետի ափով գարի վար էր զնում զբօնելու: Լարւած մեքենայի նման ամեն օր, միենոյն ժամում, անցնում էր Կակոսը և այդ բոպէներում Տիրուհին էլ նստած էր լինում իրանց պստի օղի («Ենեածէ») լուսամուտի մէջ և շատ անգամ Կակոսը փայտէ նօսր ճաղերի («Ճանդառ») միջից նկատում էր նորա զլուխը, ձեռքերը, շորերը և երբեմն էլ գէմքը: Կակոսի ամօթխածութիւնը, քայլերը, նամանաւանդ շըմ չսովատողները արգելք էին լինում երկար ժամանակ վեր նայելու և

մի կամ երկու ակնթարթից յետոյ գլուխը կախած, պռկները (շը-  
լսունիները) սեղմելով հանդարտ ու լուս, բայց խոր սրտիցը մի ա՛խ  
էր քաշում ու հեռանում: Այս ա՛խերը, կակոսի հայեացքը և ձե-  
երը Տիրուհուն հաղորդում էին, որ իւր համար է տանջւում, դրա  
համար իւր սէրը աւելի ու աւելի բորբոքում էր:

Այս սիրոյ սկզբնաւայսամճառը Տիրուհու մայրը՝ Լուցիա խանումն  
էր եղել: Սա՝ իւր սովորութեան համաձայն՝ մի տօն օր այցելուների  
միջից ետ էր պահել կակոսին, խնդրելով որ այն օրը իրանց մօտ  
ճաշէ: Նա ստիր (հարազար) արիւնակցի պէս որդի ու ջան բառե-  
րով խօսել, խօսեցրել, զւարձացրել ու հազար ու մէկ պատիւներով  
ճամբել էր, խօսք առնելով կակոսից, յաճախ գտնւելու իրանց  
սեղանի վերայ: Սրան էլ խոստացել էր օտարութեան մէջ երկրորդ  
մայր դառնալու, իւր խնամոց տակն առնելով: Հենց այդ օրւանից  
կակոսի սրտում մի կայծ ընկաւ և նոյն օրն իսկ սկսեց տարածւել  
նորա մէջ:

Մի թշւառ տղայ, խելքը հասած օրից մինչի քսան և հինգ  
տարեկան հասակը, մօր գրկից դուրս, հարազատների խնամքից հե-  
ռու, թափառած տար աշխարհներ, իւր կեանքը ծառալութեան  
մէջ անցկացրած Կ. Պոլսի մեծատունների տներում կամ սրճանոց-  
ներում ու սափրանոյներում և երկար տարիներ ծովերի վերայ շո-  
գենաւերռում անարգւած, անպատած, ծաղրւած ու խայտառակ-  
ւած այդ շրջանների մէջ տէրերից ու մեծաւորներից, ի՞նչպիսի մեծ  
բաղդաւորութիւն էր համարելու այդ ընդունելութիւնները՝ դժւար չէ  
մակաբերել: Նատ ու անչափ փառք էր կապոյտ երինքի, ծովի, փո-  
ղոցների ու ներքնատնների մէջ մեծացած մի տղի համար ազատ ու  
մարդավարի մուտ գործելը Թաթոս աղայի նման մարդու տունը:

Լուցիա խանումը ճանապարհ էր բացել կակոսին պարբերապէս  
այցելելու իւր տունը: Նա որ առաջ տարին մէկ երկու անգամ, այն  
էլ տօն ու տաղաւար օրերին, հազիւ հինգ-տասը բոպէի չափ այցե-  
լում ու դուրս էր գալիս այդ տունը, այժմ ամեն կիւրակի օր կանչ-  
ւում էր հէրիսա կամ խաշ ուտելու: Եթէ կանչւած էլ չը լինէր,  
ճաշից յետոյ տան մի մօտաւոր բարեկամի հետ մի քիչ զբօննելուց  
յետոյ, գնում էր հանգստանալու և մի ֆինճան զայֆայ խմելու:

Զէ կարելի ճիշդն ասել, թէ՝ ի՞նչն էր ստիպում Լուցիա խա-

Նումին Կակոսի պէս մի զայֆաջիխն այդքան պատւելու. բայց շատ ճշմարիտ էր, որ նա խիստ համակրում էր այդ պանդխատին և տան սրտանց բարեկամի նման յարգում: Կակոսը իւր բնական յատկութիւններով, գեղեցկութիւնով, առողջութիւնով, հանճարով և բարեսրտութիւնով արժանացել էր խանումի խնամքներին: Նորա դիրքովը և հարստութիւնովը չէին շացել երբէք հաջի աղայենք, բայց նորա ազնիւ սրտի, մաքուր խղճի և անարատ անտւնին գերի էին դարձել: Կակոսը խիստ վայելուշ երխուասարդ էր, ինչպէս ասում էին՝ զիտես թէ ազնւական զարմից լինէր: Բնաւ արհեստաւորի կերպարանք չ'ունէր և իւր եւրոպական նորելուկ տարազներով աւելի բժշկի ու կօնսուլի էր նմանում: Բնականի հետ արեւեստականը խառնելով քաղաքում Կակոսը կուախնձոր էր դարձել: Թէև սորանից շատ ու շատ գեղեցիկ տեսքով տղամարդիկ կային Կարինում, բայց Կակոսը իւր օտար լինելովը և հարաւում հազւագիւտ շէկ մազերովը առաւելութիւններ ունէր: Գեղեցկութիւնը և հազւագիւտութիւնը իւր եակը զցում է ծերերին էլ, երիտասարդներին էլ, հարուստներին էլ, աղքաններին էլ, զիտուններին էլ, անզէտներին էլ: Կամայ ակամայ ամեն մարդ սիրահար է գեղեցկին և նրան սիրում, համակրում, պաշտպանում և պահպանում է:

Լուցիա խանումը թէև ոչ ոքի չէր ասել, թէ Կակոսին այն աստիճան սիրում է, որ մինչև անգամ ցանկանում է կիսայ շինել, բայց իւր մարդու մօտիկները զցում և կարծում էին, որ այդ մոտագրութիւնն ունի: Եւ ի՞նչ կայ եղել, ոմի աղջիկ մի մանչու միշտ մատաղ է եղել ու պիտի լինի: Կակոսի պէս ժիր, խելքը զլուխը, աչքը բաց, բանիբուն երիտասարդին ո՞վ աղջիկ չէր տալ: Չուռ ու դրկից, բարեկամ, չարեկամ, նամանաւանդ պառաւններին նիւթ էր պէտք բամբասելու. նոքա արդէն նշանը փոխել պրծել էին:

Այսպէս ծիրուհին Կակոսին յաճախ տեսնելով՝ սկզբում համակրել, աստիճան աստիճան տաքանալով մտերմացել, անհանգչելի կացծերով բռնկել ու սիրել և վերջապէս իւր բոցավառ սիրու ամբողջապէս նրան նւիրել էր: Այս սիրոյ կապը հիւսելու օգնել էին Տիրուհուն իրանից հասակով ընկերուհիները սոցա նախանձորդ անընդհատ ակնարկներով, հարցերով և զանազան պատմութիւններով: Այդ ընկերուհիներից այդպիսի դէպքերում Տիրուհին թէև միշտ

փախել էր և խօսակցութիւնները լացակամած լսել, բայց իւր տարիքում լսելու և սովորելու հետաքրքրութիւնը խիստ զօրեղ լինելով, նոցա բերաններից գուրս եկած բոլոր բառերը իւր սրտի խորքերում անջինջ տառերով դրոշմել և զգացմունքները զարգացրել՝ ու պնդացրել էր:

### ԺԴ.

#### ՍԻՐՈՑ ԺԱՄԵՐ

Կարինի տների կտուրները, Հայաստանի մեծագոյն մասի համաձայն, հողած են և երդիքները տարւայ եղանակների հետ փոխում են իրանց գոյները: Մայիսին տեսնում ես կանաչազարդ տանիքների վերայ կանաչք նատած իրանց ձեռագործերով պարապելիս, ամառը ոսկեգոյն չորցած, աշունքը կրկին կանանչում են, իսկ ձմեռը կէս արշին բարձրութեամբ ձիւնը նստում է և երեխանները այդ տեղերում խաղում են ձմթօփ կամ ձիւնից մի գունդ գլորելով կոյտեր են շինում, զրանով բերդեր ու ամրոցներ հիմնում, զօրավարներ ու իշխաններ կարգադրում, իրար բերդեր առնում ու քանդում են: Գարնանամուտին էլ քերում են տանիքները հալոցին տունը չը կաթելու համար: Սովորաբար Կարինի տները երկարկանի են, կան նաև մի յարկանի և սակաւ՝ եռյարկանի: Բայց ամեն տան տունը (իսկանց) մի յարկանի է: Այսպէս տների տանիքները տեղ տեղ բարձր են, տեղ տեղ էլ ցածր և բարձր մասերը ցած երդիքների վերայ ունին մանր լուսամուտներ:

Հաճի աղացնց տանիքը երեք աստիճան բարձրութիւն ունէր, տան երդիքը, երկարկանի սենեակների կտուրը և եռյարկանի մեծօղի (սենեկի) բաջան: Երկարկանի սենեակների կտուրը թէ իրանց և թէ զրացիների տան բարձր մասերով երեք կողմից պատած էր, միայն գետի կողմից բաց էր փողոցից տասն արշին բարձրութեամբ և նմանում էր քէօչքի: Այսուեղ տաք և լաւ եղանակներում տանեցիք երեք-չորս դրկիցներով նստում և խօսակցելով պարապում էին: Կիւրակի և տօն օրերը Տիրուհու և իւր ընկերուհիների զբօսարանն էր, ժողովում, խաղում, խօսում, ուտում, խմում, մէկ խօսքով՝ ուրախ ժա-

մանակ էին անցկացնում։ Այդ օրիորդների խմբում երբեմն մտնում էին նոյնպէս նոր հարաներ։

Այս աղջիկները կարինի յայտնի օրիորդներ էին և եթէ կարելի է ասել՝ լուսաւորեալները։ Սոքա բոլորն էլ կարդում էին, լաւ ձեռագործ գիտէին և տեղական շորերը թողած, եւրոպացի բժիշկների և կօնսիւների կանանց հազած ձևերով դէլրայ էին հագնում։ Այս օրիորդներին արգելւած էր զիր սովորել, կղերները զգուշացնում էին, որ չը լինի թէ դոքա կարողանան իրանց ուզած մարդուն նամակ դրել ու մեղանչել։ Բայց արգելւած պտուղը միշտ աւելի քաղցր թւալով, աղջիկները տպագրի ձեռվ ածուխով կամ կաւիճով պատերի, դոների վերաց ացնքան էին գրում ու ջնջում, որ բոլորն էր սովորել էին քիչ թէ շատ գրել և իրանց միտքը իրանց սովոր բառերով արտայացտել մի քանի տառասիալներով։ Վարակետ կանացը թէւ աղջիկներին կարդալ սովորեցնում էին, բայց կարդացածը նրանցից ոչ ոք չէր կարող հասկանալ։ Կարդացածներն էլ դրաբար գրքեր էին՝ ի՞նչ պիտի հասկանացին։ Վա՛յ էն կարդալուն—կակազելով, քառասուն սխալով մի նախադասութիւն մի ժամում հազիւ էին կմլմում։ Լուսաւորեալ ասելով պէտք չէ ուսեալ կամ զարդացած համարել, այլ սել ճերմկից ջոկող։

Սոցա խօսակցութեան նիւթը երեխայական էր և սովորաբար խաղալով, խնդալով, երգելով ու պարելով էին պարապած։ Երբեմն պատմում էին զանազան առասպելներ ու հէքիաթներ, որոնք սոսկացնում էին ու սաստիկ տիրացնում օրիորդներին։ Յաճախ խօսում էին շորերի ու զարգերի, ոսկու ու արծաթի, մատանու ու մարդարտի, ապարանջանի ու օղերի վերաց։ Քննութեան առարկաները միայն դոքա էին։ Լսած, տեսածները իրար հաղորդում էին։ Մտերիմ ու սրտակիցները առանձնանալիս՝ իրանց սրտի խորքերում թաղւած զգացմունքներն ու գաղտնիքները, ցաւերն ու դարդերը չէին թագցնում։ Այս հարցի վերաց աւելի լրջօրէն հայեացքներ էին զցում և ականջէ ականջ փսփսում, անդադար չորս կողմերը նայելով, լրտեսողներից կամ մեծերից զգուշանալով։ Սիրացին արկածները շատ անդամ խորը թաղւում էին տենչւածների մէջ և շատ խիստ մտերիմները ամիսներով հետևելուց յետոյ, մասամբ միայն կարողանում էին գուշակել և յաւիտեանս աներևոյթացներ այդ գաղտնիքները։

Ամառային շոդ եղանակներում, մի կիւրակի օր ճաշից յետոյ, երեք-չորս աղջիկներ ժողոված խաղում էին: Լուցիա խանումի սիրտն էլ նեղանալով՝ երդիք ելաւ: Այս միջոցին՝ Պապը և Կակոսը փողոցից անցնում էին: Լուցիա խանումը սրանց տեսնելիս՝ ասաց.

—Աղբ'ր, երեխաները մօտքւել են, մի քիչ բազարից միրգ բեր ու արի՛, քեզ հետ խօսելիք ունիմ: Դառնալով Կակոսին՝ շարունակեց.

—Կակոս ջա՞ն, էսօր ո՞ւր էիր, ճաշին աչքս քեզ վնտուեց. վե՛ր արի, քիչ խօսենք:

—Նա՛տ լաւ-, պատախանեց Կակոսը, Պապ աղայի հետ կը գանք:

Լուցիա խանումը տուն մտաւ, սպասում էր հիւրերին: Աղջիկները իրանց խաղը շարունակեցին: Վերոնը և Կատարինէն աննշան ակնարկով Տիրուհուն աչքալոյս տւին, որը ժամտաց ու շիկնեցաւ: Երկու աղջիկների էլ տները իրանց աղդականները հաւաքւելով՝ կանչւեցան և երեքը ազատ մնացին: Լութիւնը տիրեց: Այս միջոցին երդիքի ճանապարհով եկաւ Տիրուհու քեռին, աղլուխումը մի մեծ ձմերուկ և մի լաւ սեխ կապած տւեց Կատարինին: Կակոսն էլ սպիտակ ծաղկուն ապրեշումի մի մեծ թաշկինակով զանազան շաքարեղիններ ձեռին՝ իջաւ սանդուղքներից ու կապոցը երկնցուց Տիրուհուն, որը ձեռքիցն առաւ ու ամօթից կապտեց: Կակոսը առանց չորս բոլորը մոիկ տալու՝ Պապ աղայի ետելից մտաւ տունը շնչասպառ:

Պողնոցներն ու դանակները բանանող Մարիամը բերեց, կտրտեց ձմերուկն ու սեխը, տանեցւոց բաժինը ներս տարաւ, մնացեալն էլ աղջիկները հաւաքւեցան կերան ու մաքրեցին չորս կողմը: Կրկին եկաւ Մարիամը, պնակներ բերեց ու շաքարեղինները բաժանեց և ամեն մէկին պատուելուց յետոյ՝ մնացածը կապոցով ետ տարաւ: Մարիամը աշխատելիս, Վերոնը մօտեցաւ Տիրուհուն և մի քանի խօսք փախսաց նորա ականջում: Կատարինէն Մարիամի հետ զբաղած լինելով՝ չը նկատեց այս խօսակցութիւնը: Մարիամը ներս գնալուց քիչ յետոյ, Տիրուհին տուն գնաց և բանանողի ձեռքից առաւ ապրեշումէ թաշկինակը: Դորա վրայի մատիտով գրերը տեսաւ Տիրուհին, բայց որովհետեւ այնքան վարժ չէր, որ շուտով կարդար այդ գրերը, ծոցը գրեց կապոցը և վերադարձաւ ընկերուհիների մօտ: Նորա սիրտը սաստիկ բաբախում էր և հէնց այդ բաբախած տեղի վերայ դրած էր մողական թաշկինակը, որը աւելի տագնապեցնում ու համբե-

րութիւնը կտրում էր։ Աղլուխը, շերամի մանածի հիւսւածքը ուրախացնում էր նրան, մատիտի խազերը նորա մէջ զօրեղացնում էր ցանկալի սիրոյ բոցերը և ամրապնդում յոյսերը։ Օրը չէր մթնում։ արել չէր շարժւում և այդ ժամերն ու րոպէները անցնելը անտանելի էր Տիրուհուն։ Նա շտապում էր, վռազում էր՝ շուտ, շատ շուտ ուզում էր բաց անել, կարդալ կապարի հետքերը և գրւած սիրալի խօսքերն ու բառերը անգիր անել, երգել, մրմնջալ նոյն խօսքերը։ Անդադար առանձնանում ու համբուրում էր թաշկինակը, քսում ճակատին, աչքերին, թշերին և տեղը զնելով՝ անմիջապէս վերադառնում։ Այդ աղլուխը նրան բերել էր իւր հոգով սիրածի սրտիցը բղխած երանութիւնները, որից առնում էր պաշտամծի հոտը։

Թէև կամաց, բայց անցել էր ժամանակը. արել թեքւել ու զովութիւնն ընկել։ Երիկւայ զանգերը հրաւիրել էին բարեպաշտ ժողովրդին դէպի աղօթատունը։ Փողոցների անց ու դարձը սաստկացել էին ծերերով, նամանաւանդ պառաւներով, որոնք առաջները խառնած հարս ու աղջիկներին՝ ծանր ու բարակ շորորալէն դիմում էին եկեղեցին։ Տիրուհու ընկերները հեռացել էին, բացի Վերոնից, որը վայելում էր ընկերուհու ամենամտերիմ սէրը։ Լուցիա խանումը սովորաբար տնեցոց առաջը խառնած՝ գնացել էր ժամ։ Տանը մընացել էին ծառաները և Տիրուհին, որը Վերոնի հետ պստի օդան (սէնետէրամ) լուսամուտի առաջը նստած, բաց էին արել ապրեշումէ աղլուխը, աշխատում գրերը կարդալու։ Պէտք է ասած, որ Կակոսն էլ Տիրուհու չափ հազիւ կարող էր գրել, բայց ամեն ջանք թափել ու բաւականի խոշոր գրերով պարզ գրել էր։ Տիրուհին և Վերոնը իրար օգնելով՝ հազիւ կարողացան հետեւել տողերը կարդալ.

(Տիրուհի ջա՞ն, հոգուդ մատա՛ղ, թէ ինձ սիրում ես, աղաչում եմ, էս զիշեր ժամը տասնումէին դուրս արի երդիք։ Ինձ կը գրտնես մարագի և մեծ օճախի մէջ տեղը։ Ենտեղ իրար սիրտ բանանք և հասկանանք։ Դուն ու քու Ստեղծողդ, ինչպէս գիտես՝ էնակէս արա՛։)

Տողերը գեռ չէին վերջացրած, երբ Կակոսն ու քեռին իրանց դռնից անցան, գնացին եկեղեցի։ Տիրուհին շշկած՝ չէր իմանում ի՞նչ անէր։ Երկու մատաղահաս օրիորդների սրտերն էլ սաստիկ բարախում էին և լոռութեամբ կամ իրար երես ու աչքերի

մէջ էին նայում, կամ աչքերը խփած՝ մտմտում էին, կամ էլ գիտինն էին նայում զողղողալով։ Նատ մոքեր անցան երկուսի էլ լիշողութիւնից, շատ խօսքեր դասաւորեցին իրանց կոկորդում, բայց լեզուները կապւեցին, բերանները չը բացւեցին և ձայնները դուրս չ'ելաւ իրար իմացնելու ցանկութիւնները և առանց որոշ վճռի բաժանւեցին։

Օգոստոս ամսում պարզ, մութ և աստեղաղարդ գիշեր էր, կարծես մի մեծ ուրախութիւն էր կատարում երկնքում։ Ծիր-կաթիւնը կարծես երկնացին հրեղէն լուսով լուսաւորած էր և ասողերը սովորականից աւելի ճաճանչաւոր և աւելի բազմաթիւ լինէին։ Ասուպներն էլ վերելից վար թռչոտելով, մի աստեղատնից միւսը անցնելով, գիտենաս թէ՛ լրատարի կամ պատգամաւորի դեր էին կատարում։ Հօրիզոնը երեք կողմից վիթխարի մութ լեռներով էր պատած և արևելեան կողմից ընդարձակ անծայր դաշտավայրով, որտեղ չը կար կենդանութեան շարժում։ Հիւսիսում գտնւած բարձր և ուղղահայեաց կողերով ժայռերի զլսին տարածւած էր միջնաբերդը, որի լուսամուտներից ցոլացած լոյսերը հազիւ զանազանում էին երկնակամարի աստղերից։ Լեռների և ժայռերի կողերի վերայ ամփիթատրոնի նման կըր և իրար վերայ դարսած տների լուսամուտներն, որ մի երկու ժամ առաջ ճրագալոցի գիշերւայ պէս այնպէս գեղեցիկ լուսաւորւած և այդ լոյսերն էլ գետի պարզ ջրերում հայելու նման անդրադառնալով՝ այնպիսի մի չքնաղ տեսարան էին կազմած, որ մարդու զմալլեցնում ու սքանչեցնում էին, — արդէն հագել էին մժութեան և հանգստութեան քօղը, և խաղաղութիւնը տիրել էր ողջ քաղաքին։ Գերեզմանական լուսութիւնը խանգարում էր կարկաչահոս և սրբնթաց գետը, որը կատաղաբար խփւելով ժայռերին՝ ոլոր-մոլոր, ձագերը կորցրած վագրի նման մոնչելով հեռանում էր։ Քաղաքի ամեն կողմը թագաւորում էր լուսութիւնը։

Կակոսը մի ժամ առաջ եկել էր և կկզած սպասում էր նշանակեալ տեղում։ Տանը ամենքը հանգստացած էին, ոչ մի ձայն ու ծպտուն չը կար։ Կակոսը երբեմն երբեմն զգուշութեամբ ծխում և մուխը արտաշնչելիս՝ անզգալի կերպով «ա՛խ» էր քաշում։ Նրան այդտեղ մնալու ոչ ոք չէր արգելում, բայց դրացու չնից, որը յիսուն քայլ հետու, մի տուն այն կողմը, ունում ու անդաղար հաչե-

լով իսանգարում էր միանդամայն իւր տիրոջ քունը Որոշեալ ժամը եկել ու անցել էր: Կակոսը, ժամացոյցը բռնած, զլանակի ճրազի լսի տակ անհամբեր հաշում էր բոպէներն ու վայրկեանները: Նա մոածում էր, որ մի գուցէ կարդացած չը լինի իւր տոռնակը ու տեղեկութիւն չ'ունենայ: Բայց երբ մոածում էր, որ, ժամից գուրս գալուց յետոյ, Տիրուհին տանիքից ցոյց էր տեղել թաշկինակը և հասկացրել նշաններով իւր կարդացած լինելը՝ չէր կարողանում լուծել խնդիրը: Յաճախ իրան յոյս էր տալիս մոածելով, որ կարող է պատահել, նորա սենեակում կան ուրիշները, որոնք գեռ խոր քուն մոած չեն, որպէս զի կարողանայ աներկիւղ զալ: Բայց Կակոսը, սպասելու սովոր լինելով, պատրաստ էր մինչի լոյս անընդհատ համբերելու: Այս առաջի անգամը չէր, նա մի տասը գիշեր ժամերով սպասել է՝ պատահմամբ նրան գուրս զալիս տեսնելու յուսով և դարտակ վերադարձել:

Տիրուհու քունը վազօրօք կտրւել էր, նա իրիկնահացից յետոյ քաշւել էր իւր սենեակը և ձեռքն առնելով «Որբոց – վարքը» կարդում էր: Մայրը եկել և խնդրել էր, որ բարձր կարդայ, որ լինքն էլ լսէ, բայց Տիրուհին մերժել էր զլիսի ցաւը պատճառ բռնելով: Տիրուհին թէւ կարդում էր, բայց խելքը ուրիշ տեղ էր: Անդադար մոնում էր մեծ օղան զանազան պատճառներով ու տեսնում ժամը քանիսն էր, կամ թէ բոլորն էլ քնե՞լ են: Բոլորին քնեցնելուց յետոյ, բացեց իւր պատի պահարանը, որը մի մատ հասուութեան տախտակով բաժանուում էր Վերոնի սենեակի պահարանը, որը մի կլոր ծակ բացւած, որտեղից կարելի էր տեսնել Վերոնի ննջարանի մէջ գտնւած բոլոր առարկաները: Լաւ քննելուց յետոյ, ասաց ցած ձայնով.

—Վերո՞ն, Վերո՞ն:

—Պա՛տրաստ եմ; պատասխանեց Վերոնը:

—Դէհ շո՛ւտ արա. ահա ես տախտակը հանում եմ:

—Եկայ, պատասխանեց, ու եկաւ պահարանից մոաւ Տիրուհու ննջարանը:

—Լա՛ւ հսկիր, աչքդ չորս բաց, երդիքի զրան ետևը կա՛ց և մի բան պատահելիս՝ զգուշութեամբ գուրս արի առանց ձայն հանելու, ես կը գամ ներս և ամեն բան կարգի կը մանի:

Երկու ընկերուհիները զգուշութեամբ դուրս եկան ննջարանից և ուղղեցին դրան կողմը՝ Վերոնը ներսը կանգնեց դողալով, Տիրուհին դուրս թռաւ, վազեց դէպի որոշեալ տեղը և մժնումը ընկաւ Կակոսի զիրկը:

—Կակոս ջա՞ն, դո՞ւ ես. տ՛ւս, լո՛ւս, ձայն մի՛ հանիր:

Կակոսը մտիրի մէջ չոքած, առել էր Տիրուհու աջ ձեռքը իւր ձեռքում ըստերնին մօտեցրած՝ անկուշտ համբուրումէր, միւս ձեռքը մէջքին տարածած: Տիրուհին թեւից քաշելով վեցրեց նրան, որը էլ չը կարողանալով համբերել, չը կարողանալով մինչեւ անգամ մի բառ արտասանել, իւր միոքը լիովին արտայացնելու համար տարածեց թեւելը Տիրուհուն գրկելու, որը թուլացած, այրւած ու պապակւած ջերմ սիրով ընկաւ Կակոսի կրծքի վերաց և թեւերովը պինդ փաթաթւեց Կակոսի վզովը և վարդագոյն այտելը մօտեցրեց նորա շրթունքներին: Այս առաջին սիրոյ համբոցն էր կորիճի շրթունքներից, որ դրոշմեց կոյսի անարատ թշերի վերաց Երկուսն էլ անմեղ էին և սէրը հաւասարապէս բորբոքւել էր երկուսի էլ սրտում: Ուրախութիւնից Կակոսի լեզուն բռնւել էր, խելքը թռել, իսկ Տիրուհին Կակոսի զրկումը նւազել էր: Կակոսը ամուր սեղմած Տիրուհուն իւր կրծքի վերաց, երեսը երեսին զրած անշարժ, անշունչ ու անմուռնչ սիրոյ նաւակում նստած ծփում էր: Ուրախութիւնից այն աստիճան տաքացել ու թուլացել էր, որ զրկած անմեղ հրեշտակի մարելը չէր զգում: Այս զրութեան մէջ մնացին մի քանի բոպէներ: Կակոսը նոր հոգի, նոր կեանք ստացած՝ զեռ շատ ժամեր կարող էր սպասել անվրդով, անզգայաբար նոյն դրութեան մէջ, բայց Վերոնի համբերութիւնը հասնելով՝ կանչեց.

—Պարո՞ն Կակոս, պարո՞ն Կակոս, Տիրուհի՛, Տիրուհի՛. ու Տիրուհու թեւից բռնելով դէս ու դէն էր շարժում կրկնելով—Տիրուհի՛, Կակո՞ս:

Տիրուհին սժափւեց: Կակոսը վար թողեց գրկից Տիրուհուն: Վերոնը ետ քաշւեց: Կակոսը զողղողալով ասաց.

—Տիրուհի ջա՞ն, էս խօ երազ չէ՞, զո՞րդ, էդ դո՞ւ ես, դու ինձ սիրում ե՞ս:

—Ի՞նչ երազի բան կայ, Կակո՞ս ջա՞ն. ե՛ս եմ, ե՛ս, մի՛ վախիր:

—Դու էլ սորանից յետոյ իմն ես:

—Մինչեւ սեւ հող ու սեւ գերեզման մտնելս քուկդ եմ՝ սրառվս էլ, հոգովս էլ, կեանքովս էլ:

—Ա՛խ, մի ասի՛ր, խէր խօսիր ու հոդիս մի՛ դաղիր: Քո կեանքդ, քո հոգիդ, քո սիրում իմն է և ես առանց դրանց չեմ կարող ապրել: Ախ, գիտենաս թէ...

—Զանանջա՞ն, գնա՛, հերի՛ք է, գնա՛, Վերոնը մեղք է, գնա՛, կարծես թէ էլի թուլանալու եմ, գնա՛, էլ չեմ կարող զիմանալ: Բայց թէ ինձ սիրում ես, թէ արեւդ սիրում ես, ամեն գիշեր այս ժամին արի՛ ինձ տես ու յետոյ գնա՛ քնիր: Թէ գիշերը ինձ չը գտնես, ցերեկը դրան առջեկց անցիր, որ գոնէ ես քեզ կարողանամ տեսնել: Ախ, ի՞նչպէս արոփում է սիրտս, առանց քեզ ես օր չ'ունիմ: Գնա՛, գնա՛ հանգստացիր:

## ԺԵ.

ԼՈՒՅԻՍ ԽԱՆՈՒՄԻ ՍԽԱԼՆԵՐԸ

Տիրուհին և Կակոսը գրեթէ ամեն գիշեր տեսակցել էին, խօսակցել և ժամանակ անցկացրել: Այս անկեղծ և սուրբ սիրոյ մասին բայցի երկնքի լուսնից ու աստղերից և երկրի անշունչ առարկաներից՝ ոչ ոք տեղեկութիւն չ'ունէր: Միայն Վերոնը, Տիրուհու մոներիմն ու հաւատարիմը, թէև ամեն բան տեսել, ամեն խօսք լսել և ամեն գաղտնիք իմացել էր, բայց մի անխօս արձան էր նոցա վերաբերութեամբ: Մէրը երկար ժամանակ այս անմեղ սրտերում աստիճան աստիճան ինչպէս բորբոքւած լինելը անհնար է նկարագրել: Տիրուհին, որ մի քնքոյց ու թուլասիրտ արարած էր, այս ծանր հոգեկան տանջանքներում աւելի և աւելի տկարացաւ: Յաճախ նա հիւանդանում էր ջերմով կամ զլխացաւով և սաստիկ տաքութեան մէջ դէլին տալիս ու շատ անգամ մրմնջում Կակոսի անունը: Լուցիա խանումը մի քանի անգամ լսել էր Կակոսի մասին Տիրուհու բերնից թռած զանազան սիրալիր խօսքեր ու համոզել հաւատարիմ բանանող Մարիամի ասած ճշմարիտ նկատողութիւններին:

Տիրուհին կցկտուր պատասխաններով խոսառվանել՝ էր մօրը իւր սէրը, բայց թագցրել էր իրանց գաղտնի տեսակցութիւնները: Մայրը մեղմ էր վարւել, մինչեւ անգամ հաւանութեան պէս ցոյց տւել և

խրատել էր հանդարտութեամբ համբերելու մինչի գործի վախճանը Տիրուհին սիրու առած, ուրախութիւնից գժւած, պատրաստւել էր հինգ այդ խօսակցութեան գիշերը աւետելու իւր սիրելոյն մօր հաճութիւնը:

Բայց էլ ե՞րբ կը տանէր մօր քունը. աղջիկը սիրահարւած, հիւանդ՝ ե՞րբ կը հանգստանար: Քար ու երկաթ լինէր էլ չէր զիմանաց, մայրն ի՞նչ ձիւն տար գլխին: Մթութեան հետ հանգստութիւնը թագաւորում էր քաղաքին: Տիրուհին որոշ ժամին դուրս էր եկել իւր ննջարանից և մի քանի րոպէներ մութ արալուխում զանազան դռների առաջը ականջ դնելուց յետոյ՝ մօտեցել էր տանիքի դրան ու կամաց բաց անելով դուրս եկել: Բաւական չէր տանիքի վերայ նստած սպիտակ ձեան քողը, լեռնային հողմերը բարձրացել, փչում էին: Ցուրտը սաստիկ էր: Տիրուհին մօր մեծ մուշտակում փաթաթւած՝ մօտեցել էր Կակոսին: Լուցիա խանումը, որ մեծ օդայի դրան ներսի կողմից ականջ էր դնում և սպասում գործի վերջին, էլ չը կարողանալով համբերել, կատաղած դուրս եկաւ, ուղղւեց սոցա կողմը բարձր ձայնով՝ անէծքներով ու հայշոյանքներով անպատւեց ու խալտառակեց սիրահարներին: Կակոսն ու Տիրուհին շւարած ձեռք ձեռքի տւին ու չոքեցին և արտասւախառն աչքերով մեղայ էին կանչում:

—Ապերա՛խտ, անհաւատի զաւա՛կ, ասաց կատաղած Լուցիա խանումը, էլ քեզ դռներո՛ւմս չը տեսնեմ, թէ չէ՝ շան պէս սատկեցնել կը տամ: Կորի՛ր, կորի՛ր աչքիս առաջից:

Այս ասելով բռնեց Տիրուհու թևից և քաշքելով ներս տարաւ ու պառկեցրեց: Կակոսը սրտատրով Տիրուհու շրթունքներից Լուցիա խանումի հաւանութեան աւետիսը լսելուց և սիրուհու մօր նախատինքը ընդունելուց յետոյ՝ հեռացաւ:

Լուցիա խանումը իւր սկզբնական սխալները աչքի առաջ բերելով և նրանց վերայ մի լաւ խորհելով, այս մասին վճռել էր բոլորին լոել:

Հետեւեալ օրը՝ գողերից ահ լինելը պատճառ բերելով, Լուցիա խանումը իրանց տան ետևը բարձր տախտակամած քաշել տւեց, դռների և լուսամուտների երկաթները նորոգել տւեց ու սիրահարների տեսնելու բոլոր միջոցները խափանեց: Կակոսի համար Անգերենց տան դուռը փակւեց:

Այս անցքից յետով մտածում էր Լուցիա խանումը մի կերպ վերջ տալ Տիրուհու ասպագալին։ Նա թէև շատ համակրում էր Կակոսին և աղջկայ դէպի նա ունեցած սէրը տեսնելուց յետոյ՝ ուզում էր անմիջապէս նշանել, կարգել, բայց երեք մեծ արգելք կար նորա առաջը։

Նախ, որ հաճի Թաթոս աղան ոչնչով չէր համոզւում և չէր ցանկանում մի տակն ու վրէն անյացա զայֆաջու աղջիկ տալ, այն էլ կնկայ խօսքով։ Թէև Լուցիա խանումը կարող էր, աղջկայ սէրը յայտնելով, մի քիչ լացով, մի քիչ զօրով, մի քիչ էլ վախով էրկան համոզել և գործը զլուխ բերել, բայց ի՞նչ անէր, միայն հաճի Թաթոս աղայով գործը չէր գլուխ գալ։

Գլխաւոր արգելքը տէր-Կարապետն էր։ Սա երբեմն կատակի, երբեմն հաստատի ձևով ասում էր, թէ Տիրուհուն ինքը նշանել է։ Վաղուց է՝ ես Դաւթին որդի եմ կոչել, նա էլ ինձ հարս կը լինի։ Թէև ընտանեկան գործերում ոչ մի իրաւունք չ'ունէր տէր-Կարապետը, բայց կամքն ու խաթրը կոտրելով Լուցիա խանումը մեծ կորուսներ կ'ունենար և հէնց այս կորուսները կաղմում էին ամենանշանաւոր արգելքը։

Այս կորուսաները ընտանեկան և ժառանգական գործերն էին, մի Գորգեան հանդոց, որի լուծման համար զոհ էին պահանջում մի աղջիկ Անդերենց տանից. և մայրը իւր ձեւքովը զենելու էր անմեղ մատաղը նախանձի և ատելութեան սեղանի վերայ։

Դժւար էր մօր համար բաժանել իւր աղջիկը սիրեկանից։ Շատ ու շատ մորմոքում էր, բայց ի՞նչ արած, յաղթութեան համար քաջասրտութեամբ պէտք էր համբերել։ Պատգամը կատարելու էր։ Ի՞նչպէս կարելի էր դիմադրել եօթը-բլրեայ աստիճաններով պատւանդանի վերայ ոսկուց ու փղոսկրից զուղած, ակով ու մարգարիտով զարդարած գահի վերայ բազմած եօթը զլխանի վիշապի պատգամախօսի վճռին, որ անքննելի, անվիտիսելի, անսխալական և անդառնալի էր, և առանց այս զոհի՝ գործի թնջուկը քանդելու չէր։

Լուցիա խանումը շատ աղերսում էր, որ այս դառը բաժակը չը խմեցնեն իրան, շատ աղաչում էր, որ թէթեւացնեն իւր լուծը, շատ լալիսէր, որ չը լացացնեն իւր առջինեկը. բայց ի զուր, միշտ աղատ

իւր կամքին էին թողնում որոշելու. կամ գառնուկին զոհել՝ կորուս-  
ար գտնելու համար և կամ հրաժարել գանձերից ու աղջիկը փըր-  
կել՝ դատարկ ու աղքատ սիրահարի գիրկը հասցնելու համար:

Լուցիա խանումը ի՞նչպէս վճռէր հարցը. ոչ ժառանդութիւնից  
ուղում էր զրկւել և ոչ էլ աղջիկը վշտերի ու տառապանքների  
մատնել: Նա երբեմն իրեւ մայր մտածում էր, աշխարհի ամեն վա-  
յելքներից ձեռք քաշելով, իւր բոլոր կրքերը մեռցնել մի միակ աղջ-  
կան երջանիկ կեանք տալու համար: Բայց անմիջապէս նախանձն ու  
փառասիրութիւնը այս միտքը բոլորովին անարդար էին համարում,  
նամանաւանդ որ նա իրան զրկելով, զրկելու էր իւր միակ որդուն,  
որը ոչնչով չէր զանազանում Տիրուհուց և որը պիաի կանգնէր  
թշնամու աչքի դէմ իւր օճախի զլուխը: Մարտիրոսը, արու զա-  
ւակը, պիտի պահպանէր հայրենի տունը, գերդաստանի անունը և  
յաջորդութիւնը: Աւելի լաւ էր համարում աշխատել և մի կերպ  
Տիրուհուն համոզելով սառեցնել սէրը: Բայց ի՞նչ ասէր աղջկան,  
ինքն էր սիրոյ սկզբնապատճառը, ինքն էր բորբոքեցրել և այս ար-  
նաքանդ ու մահառու սխալը ինքն էր գործել:

Երբեմն էլ, երբ նորա աչքի առաջ պատկերանում էր իւր հա-  
կառակորդների փառքն ու վայելքը և իւր եղբօր տնանկութիւնը,  
կրքերը շարժւում էին, ինքն էլ, կատաղութիւնից կրակ դարձած,  
աչքերը արիւնով լցրած, սիրաը բորբոքած, գութը քարացած՝ ու-  
ղում էր լոկ իւր կամքը առաջ տանելու և վրէժը լուծելու համար  
զոհել ամեն ինչ, մինչև թշնամու տան հիմքերը լոյս արեգակը  
հանելլ:

Լուցիա խանումը և իւր եղբայրը իրանց հօր չ'ունեցած  
ժառանդութիւնից էին զրկւած: Թէև հաստատապէս չ'եղածն էին  
կորցրել, բայց կարծիքով բիւրեր էին պատռում:

Յովակիմ բէդ Մելիք-Ղարագեօղեանցը Աարինի ամենահարուստ,  
ամենանշանաւոր, Տաճկա-Հայաստանի, Պարսկա-Հայաստանի և Կովկա-  
սի քաղաքներում, նոյնպէս Կ. Պօլսում հուչակաւոր, Սուլթանից ա-  
ռանձին Ֆէրմանով արտօնատէր վաճառական, արքունի Մէջիդիկ ա-  
ռաջին կարգի նշանակիր և Կարինի տէրունական գանձարանի սար-  
բաթը ստիր Լուցիա խանումի հօթերօր որդին էր: Յովակիմ բէգը և  
իւր եղբայրը բէգլար բէդ Խան-էվէնդին Լուցիա խանումի և նորա

եղբօր Պապի պէս հայրենի նիւթական ժառանգութիւնից զուրկ էին, բացի մի փայտաշին խրճիթից, որը թողել էին Պարսկա-Հայաստանի Ա. գիւղաքաղաքում և, Պատկեհի պատերազմից անմիջապէս յետոյ, Տաճկա-Հայաստանի դարտակւած քաղաքներից Կարին եկել—տեղաւորւել, առուառուրով պարապել ու մեծ հարստութեան տէր դարձել։ Սոցա յառաջադիմութեան և հարստութեան ամենազլիսաւոր աղբիւրը եղել են Օսմանեան կառավարութիւնը և Կ. Պօլտում ունեցած ազգեցիկ բարեկամները։

Պատկեհի պատերազմից յետոյ՝ Արզրումի (Կարսին) Կարապետ եպիսկոպոսի առաջնորդութեամբ գրեթէ սահմանի մօտ եղած բոլոր քաղաքների և գիւղերի քրիստոնեաց ժողովուրդները Ռուսաստան էին գաղթել ու այդ դարտակւած տեղերում բարելի գործերի ասպարէզի վերայ արժանաւորներ չէին մնացել։ Յովակիմ բէզը, ոսը տրեխով, մի քանի անգամ Ա.-ից Կարին կտաւ, շիլա ու մանուսաց բերել ու ծախելուց յետոյ, գործերի յաջողութիւնից քաջալերւելով, հաստատել էր ազգութ։ Այդ ժամանակ Կարինի վալի Ահմէզ փաշան Յովակիմ բէզի հետ բարեկամական կապերով կապւելով, նորա գործունէութեանը հաւանելով, նշանակելէրնահանգի գանձարանին վերատեսուչ։ Այդ ժամանակները քրիստոնեաների համար տաճկական պաշտօններում ամենաբարձր կէտը սարրա ֆութիւնն էր։ Եւ ուղիղ, որ նորոգութիւններից առաջ այդ պաշտօնը շատ իւղալի էր։ Խչե՛ր չէր կարող գիգել մի սարրաֆ, որին առանց կօնտրօլի յանձնւում էին մի վիլայէթի հաղարաւոր եկամուտները։ Սարրաֆի պարտականութիւնն էր ստացածի և գուրս տւածի հաշիւները զիտենալ, գանձը իւր հսկողութեան և իշխանութեան տակը պահել ու պատասխանառու լինել։ Սարրաֆները իրանց օգտին տոկոսով էին տալիս այդ գումարները, առևտուրի մէջ բանեցնում էին այդ փողերը, բայց ըստ պահանջին վճարում էին զինսորական և քաղաքական ծառայողների թոշակը, զօրքի ուտելիքի վճարքը և ուրիշ ծախքերը։ Բացի այս, ստանում էին ողջ ստակ (ոսէն ու արծաթ փող), գուրս էին տալիս փտած (ողլին չամ ողջն չափառ արծաթ), որից միշտ սարրաֆի քսակը մնում էր հարիւրին տասը կամ տասնուհինց։ Ունէին լաւ ոռմիկ և տասն էլ մարդու ու ձիու ուտեսու-հաց, միս, բրինձ, իւղ, շաքար, սուրճ, մոմ, փայտ, յարդ, խոտ և գարի։ Առ-

քա իրաւունք ունեին զարդարած ձի նստելու, առաջը ե է դակ  
(ժամանակ պարբերած չե) խառնած, սէրայլ գնալու և քաղաքում  
ման գալու: Այս բոլոր բարիքների հետ կար նոյնպէս դառնութիւն-  
ներ էլ: Եթէ սարրաջը պահանջած րոպէից քսան և չորս ժամ  
յետոյ պէտք եղած գումարը չը ներկայացնէր, նրան կախաղան կը  
հանեին ու ինչքը կը գրաւէին յարքունիս:

Այսպիսի պաշտօնով առաջ էր գնացել Յովակիմ բէդը: Սորան  
օգնութեան էր հասել և իւր եղբայր Բէգլար բէգը, որին եօթը տա-  
րեկան հասակում Պարսկաստանից գրկոն էր բերել Կարին, իւր  
հսկողութեան տակ մեծացրել և գործերում վարժեցրել: Բէգլար  
բէգը բացի մայրենի լեզուից, սովորել էր մաքուր տաճկերէն գրել ու  
կարդալ, մի կաթօլիկ վարդապետից էլ մի քիչ Փրանսերէն և լաւ  
ուսումնասիրել տաճկած օրէնքները, որոնք նոր-նոր տարածւում  
էին խալիքի ընդարձակածաւալ պետութեան անկիւնները: Բէգլար  
բէգի առևտրական յաջողակ գործունէութեան և ժրաշանութեան  
համար պարսից Շահզադէն իւր ձեռքով էր կախել կրծքից Արե-  
Առիւծի աստղը խանութեան տիտղոսով, Սուլթանն էլ Մէջիղիէի  
երկրորդ աստիճանով զարդարել շինքը և Ռուսաց կօնսուլն էլ Ան-  
նայի երրորդ աստիճանի խաչով: Մելիք-Ղարազեօղեանների համբա-  
ւը տարածւել էր ողջ Տաճկաստանում:

Թէ Մելիք-Ղարազեօղեանները ո՞քան կարողութիւն ունեին  
այդ անկայտ էր, բայց նոցա հարստութիւնը անբաւ էր երևում:  
Կարինի բամբակեղէն, բրդեղէն, մետաքսեղէն, շաքարի, չայի, սուր-  
ճի, սոսի, երկաթի, պղնձի, կաշու, ոչխարի և մալի նախիրների,  
ցորենի, գարու, կտաւատի ամենամեծ առևտուրը սոցա ձեռքն էր:  
Տէրութեան զօրքի պաշարը, հագնելիքը, վառելիքը, անսասունների  
ալա ֆը սոքա էին մասուկարարում: Կառավարութեան եկամուտ-  
ները, աշարը (պատունէրարդը բնութիւնների), էզնամն ու րուսումը (հենդանի-  
ների հարքիւն), մաքսը, անտառները, աղի և աղջրերի հանքերը, բո-  
լորը սոցա ձեռքով էր կառավարում: Զը կար առևտրական գործու-  
նէութեան մի շըջան ամբողջ վիլայէթում, որտեղ Յովակիմ բէգի  
մատը խառնած չը լինէր:

Ոսկու և շարժական հարստութիւնների չափը թէ չէր երևում,  
անշարժ կայքերն էլ չէր կարելի ծածկել: Էլ խաներ, էլ բաղեր, էլ

բաղանիքներ, էլ տներ, էլ փուռեր, էլ խանութներ, էլ ջրաղացներ, էլ գործարաններ օճառի, մոմի, ալքօհօլի, կաշու և այլն Հապա գեղերը, արտերը, ազարակները, մարգերը, անտաները, բաղերը, պարտէդները, բանջարանոցները, լճերը, եղեգուտ ճահիճները, ո՞ր մէկը համարեմ, ո՞ր մէկը ցիշեմ, որը փողով, որը խաթրով, որը զօրով տիրել ու տիրապետել էր: Եւ այս ճոխութիւնների տէրերը՝ Մելիք-Ղարագեօղեանները՝ Լուցիա խանումի հօրեղբօր որդիքն ու հակառակորդներն էին: Նոքա այնքան ճոխութեան և հարստութեան մէջ լողան, ինքը մի չնչին կարողութիւնով ապրի, իսկ եղբայրը բոլորովին դատարկ և լնտանիքի օրական ապրուստը հայթհայթելու անկարող: Դէ՛հ, մի՛ տրաքւիր, Լուցիա խանում եղիր ու մի՛ ցռքի ը:

Լուցիա խանումի ատելութիւնը գլխաւորապէս սասակացել էր նորա համար, որ Յովակիմ բէզը ի սկզբանէ Լուցիաին շատ էր սիրում, սորա խօսքը երբէք չէր կոտրած, սորա սրտից անցածը կէտ առ կէտ կատարած էր բէզը. նորա մուտքը բոլորովին ազատ էր Մելիք-Ղարագեօղեանց տանը և, իբրև տալ, չը քաշւելով հրամացելու, կարգադրելու, սնօրինելու սովորած էր տան մէջ: Ինչպէս միայն մի քոյր՝ երկու եղբայրների սերնդի մէջ մեծ յարգանք ու սէր էր վայելում Յովակիմ բէզիցն ու եղբօրիցը: Անտանելի ցաւ էր բէզի սիրաը կոտրելը և երեսը շուռ տալը, որը հարսների յաղթութիւնն էր համարում Լուցիա խանումը և սաստիկ զայրութից յաճախ գլխացաւով հիւանդանում էր:

Պապը սառագրութեամբ Յովակիմ բէզից վեր առած և կորցրած փողի պատճառով չէր երեսից լնկնելը, այլ Լուցիայի մեծասրտութիւնից ու վայրահաջութիւնից: Յովակիմ բէզի համար այդ կորուստը նշանակութիւն չ'ունէր և յաճախ ասում էր, որ ինքը իւր ընտանեկան և ազգակցական պարտականութիւնը սիրով կատարել և ազատւել է, մեղքը Պապի և պատճառ եղողների գլխին, որոնք արժանի չէին եղել օրինաւորապէս վայելելու իրանց շնորհւած բարիքները: Բայց նա սաստիկ վշտացել էր, երբ լսել էր, որ իւր սիրելի հօրեղբօր աղջիկը մի խնճոյքում ասել էր. — Ե՛հ, ի՞նչ անենք, որ եղբայրս այդ փողերը կորցրեց, թո՛ղ նորա բաժինում հաշւեն, բէզի հետ հաւասար բաժինի տէր է և իմ հօրեղբօրս որդին: — Այս խօսքերը կատաղացը ել էր Յովակիմ բէզին և սաստիկ զայրացած, տան հարս-

ների վաղուցւայ խնդիրքի համաձայն, հրամայել էր, որ արգելեն Լուցիացին իրան առջև երեկուց։ Հարսներն, որ խիստ ձանձրացած էին դրա ել ու մուտից, նամանաւանդ, իբր տալ, տեղի անտեղի արած նկատողութիւններից՝ ուրախացել էին բէդի այդ տնօրինութիւնից։ Լուցիացի ատելութիւնը տանապատիկ սաստկացել էր և օրէ ցօր նախանձը աճում, բորբոքւումէր։

Լուցիա խանումը եղբօր համար աշխատելով՝ զիսաւոր պատճառն այն էր, որ նա արդէն մօտ երեսուն տարւայ հարս էր Անգերենց տանը, դատ անելու ժամանակամիջոցը կորցրել էր։ Եթէ եղբօր բաժին դուրս բերէր, ինքն էլ դրանից մի մաս կը սուանար Եղբօր անունով գործ տեսնելով՝ բամբասանքից ազատում էր և ամեն տեղ ասումէր, որ—Ասոուած իրան բաւականաչափ տւել էր, ինքը ոչնչի կարիք չ'ունէր, միայն աշխատում էր իւր ցնորւած եղբօրը և նորա որդիկերանց մի կտոր հացի տէր շինելու։ Այսպէս մտնելով եղբօր փէշի տակը և պինդ բռնելով բժժածի պոչը՝ ազատում էր Լուցիա խանումը քաղցած դատավարի անարդ տիտղոսից։

## Փ. Զ.

ՀՈՒՑԻՍ ԽԱՆՈՒՄԻ ՍԻԱԼՆԵՐԻ ՇԱՐՈՒՅԱԿՈՒԹԻՒՆԸ

Տէր-Կարապետին յայտնի էր այս ամենը։ Նա զանազան կատակներով ու ծաղրածութիւններով ցիշեցնում էր Լուցիա խանումին իւր դասերը և միշտ ցոյց էր տալիս իբր թէ, նրան զայրացնելով, ուզում էր կուշտ կուշտ ծիծաղեցնել իրանց շրջապատողներին, բայց իսկութեամբ բորբոքում էր նորա ատելութիւնը։ Այս կատակներում երբեմն հիմնաւոր փաստեր էր ցոյց տալիս դատի վերաբերմամբ։ Օրինակի համար, նա ասում էր. — Արիւն քրտինքով դատող եղբօր հետ տանը բնբուլ կողինքում պառկող եղբայրը հաւասար ժառանգորդ է։ Կամ թէ—Երկայ իշխանութեան տակ ճնշւած կինը դատ վարելու ժամանակամիջոցը (Ճանաչութեան) անցկացրած էլ որ լինի, իրաւունքից չի զրկում։ Թէ բաժանմունք չը կայ ու միասին են ապրել՝ հաւասար իրաւունքի տէր են։

Ուղիղ որ տէր-Կարապետի խօսքերը ծիծաղ էին առաջ բերում, բայց Լուցիա խանումի դլիսում քննութեան նիւթ էին դառ-

Նում: Պասլը թէն ցնդած էր, բայց քոյրը սատանից էլ երեք օր առաջ էր աշխարհ եկած: Վարդապետը լաւ ճանաշելով իւր խոստովանորդուն, զնդակը ճիշդ կրծքին էր խփում:

Տէր-Կարապետը ունէր այս գործում իւր շահերը, զուր տեղը չէր ցանել նորա սրտում նախանձն ու ատելութիւնը. ուստի փութքն առած՝ գիշեր ցերեկ բորբոքում էր խանումի ներքին կրակը: Եթէ իւր օգուտները չ'ունենար, ինչի՞ն էր պէտք զայրացնել գնդին, այնպիսի զօրաւոր մէկին, որը միշտ կարող էր նորան վասել: Վարդապետը անտարակոյս առիւծի նման ամենախղալի, ամենամեծ, ամեն... բաժինը իրան էր հաշում:

Բայց թէ ի՞նչն էր ստիպում տէր-Կարապետին Տիրուհու ձեռքը Դաւթի համար խնդրելու, կամ թէ թո՛ղ չը լինէր Դաւթը, լինէր Կակոսը, ի՞նչ տարբերութիւն կար: Ո՞վ կարող էր զրկել տէրհօրը իւր բաժնից: — Ուղիղ էր, որ տէր-Կարապետին ոչ ոք չէր կարող մերժել իւր աշխատութիւնների համար ստանալիք վարձքից: Բայց նոյնպէս ուղիղ էր, որ Դաւթի տէր-Կարապետի համար արած և անելիք ծառացութիւնները երբէք չէր կարող կակոսը կատարել:

Տէր-Հօր համար Դաւթիթը մի հերոս էր, մի արի և քաջ զինւոր, մի բանաւոր և շնչաւոր մեքենայ, մի լրտես, մի կոյր հապատակ, մի աշքաբաց զործակատար, մի խելքը զլուխը միջնորդ, մի ցենարան, մի գաւազան, մի պահապան, մի... մի... մի... մի... և այլն և այլն: Տէր-Կարապետն ինքն ու իւր զլուխն էր կարինում. մարդ չ'ունէր և ոչ ոքի չէր հաւատալ: Նորան շատերը խնդրում էին ծառայել, բայց մարդու նա գործ չէր տւել: Նորա մշտական սպասաւորը, (տիրացուից ջոկ), նորա սենեկապետը, նորա խոհարարը, նորա ծառան, նորա ախոռապետը, մի խօսքով նորա բոլոր սպասները կատարողը մի խուլ ու մունջ աղայ էր: Խոկ իւր բոլոր զործերը ինքն էր կատարում, իւր չը կարողացած՝ Դաւթին յանձնում: Դաւթիթը վարդապետի հաւատարիմն էր: Տէր-Կարապետին մի մարդ հարկաւոր էր Դաւթի նման աշքաբաց, խելքը զլուխը, ուշքը վրէն, բանից տեղեակ և նամանաւանդ հաւատարիմ, Դաւթին էլ մի մեծ, մի տէր, որի շւաքի տակը զործելով մարդ զառնար: Կարճ խօսքով, գլորել էր խուփը, գտել պուտուկը:

Տաճկաստանում, ինչպէս յայտնի է, հոգևոր պետերը՝ զադին,

միւֆթին, առաջնորդը, յաջորդը, բարին ու բաբունապետը իւրաքանչիւր վիլայէթում, սանճաղում ու զագացում աշխարհական, նահանգական և գաւառական վարչական ժողովների անդամ են: Ժողովներին թէւ նախագահում էին պետութեան կողմից նշանակւած կառավարչապետները իրանց օգնականներով ու գլխաւոր քարտուղարներով, բայց կրօնականները միանալով ժողովրդի ներկայացուցիչների (ժողովի մնացեալ անդամների) հետ, մեծամասնութիւն էին կազմում և մեծ ազդեցութիւն բանեցնում բոլոր ծառայողների վերայ: Պէտք է իմանալ, որ ժողովրդի ներկայացուցիչները ընտրում էին հոգևորականների միջնորդութեամբ. դորա համար աշխարհական պատգամաւորներն իրանց աթոռը պինդ բռնելու համար՝ հոգևորականների պաշից պոկ չէին գալիս: Վարչական անդամները իրանց կամքը առաջ տանելու համար՝ պարտաւորեալ անդամների սիրութ շահելու էին աշխատում և շատ անգամ փոխադարձաբար ձայն էին տալիս իրանց կուսակիցներին: Ժողովուրդը իւր որ և իցէ խնդիրքը կառավարչապետին ներկայացնելուց առաջ, գնում էր հոգևորականներին տեսնելու և նոցա պաշտպանութեանը ապաւինելու: Թէւ արդարութեան, առևտրականութեան, հարկերի, գանձերի, պոլիցիայի և այլն ժողովներում հոգևորականները մուտք չ'ունէին, բայց այդ բոլոր ատեաններում եղած վճիռները կարող էին վարչական ատեաննում քննութեան ենթարկել: Ուստի հոգևորականներից հասկացողները մեծ իրաւունք էին բանեցնում ծառայողների վերայ և շատ անգամ եղած ապօրինի գործերի մասին բողոք բարձրացնում, քննութիւններ նշանակել տալիս և խայտառակութեամբ պաշտօնազուրկ անում շատ պարտազանց ծառայողների: Այս էլ պէտք է ասած, որ ծառայողներից շատերը յիմար, տգէտ, վախկոտ և իրանց կոչման անարժան անձննքներ էին ու իրանց պաշտօնները կաշառքով ու խնամութեամբ էին ձեռք բերել: Այս պատճառով ծառայողները միշտ հոգևորականների խօսքերն յարգում ու ազդեցիկների խնդիրքը անպայման կատարում էին:

Տէր-Կարապետը իւր հասկացողութիւնով, առողջ դատողութիւնով և ինչպէս նոր օրէնսդրութիւնների, նոյնպէս Վուրանի—Շէրի Փի՛—Շէրի աթի՛—Ահմէդի էջի լաւ հմուտ լինելով մեծ ազդեցութիւն ուներ բոլոր պաշտօնեանների վերայ և բարձր դիրք ունեցող-

ները նորան շատ յարգում էին։ Նա, տեղն եկած ժամանակը, Դուրաս-  
նից այնպիսի օրինակներ էր բերում, որ կ ծ ան մոլլաները մինչև ան-  
գամ խոնարհում էին նորա հմտութեան և ճարտարախօսութեան  
առաջ, լեզուները փորերը քաշելով։ Այսպիսի բարձր դիրք ունենա-  
լով քաղաքի մէջ, վարդապետը չէր կարող ամեն բոպէ գնալ տեսակ-  
ցել այս ու այն ծառայողի հետ։ Զիւբբէն նորան արգելում էր։  
Գրագրութիւնով նա երբէք չէր զիջանում գործ բռնելու, շատ քիչ  
գրում ու գմւար ստորագրում էր։ Նորա այս պէտքերը լրացնում  
էր Դաւիթը։ Նա, փորձելով Դաւիթի գաղտնապահութիւնը, հա-  
մարձակութիւնը, խոհեմութիւնը, խորամանկութիւնը և վարպետու-  
թիւնը, հաւանելու իրան գործակատար էր կարգել։ Դաւիթը մտնելով  
զանազան հիմնարկութիւններում պաշտօնեաների մօտ, այնպիսի  
գործեր էր կարգադրում, որոնք տէր-Կարապետը կաշկանդւած լինե-  
լով իւր դիրքում, չէր կարողանալ տարիների ընթացքում գլուխ  
բերել։ Տէր-Կարապետը հարկը պահանջած տեղերը շատ անգամ ու-  
ղարկում էր մի գլուխ շաքար, մի քանի հօխայ զայֆայ, մի թոփ  
սէվայի, մի ջիւբբացու չուխայ, մի քանի ոսկի և այլն և այլն։ և  
այս ծառայութիւնները կատարելու Դաւիթը միշտ պատրաստ էր։  
Եատ անգամ հարկ էր լինում փոխանորդի կամ փաստաբանի զանա-  
զան ատեաններում։ Դաւիթը մուրճը ձեռքից վեր թողնելով, երե-  
սի մուրը լւանում և սէթրի ու պանթալոնը հագնելով՝ զնում  
իրաւաբանի աթոռի վերայ բազմում էր։ Վերջապէս ամեն պարա-  
գայում Դաւիթը վարդապետի գործերը առանց այլ և այլի ճշգու-  
թամբ և նորա հրամանների ուղղութեամբ կատարում էր։ Եւ այս-  
պիսի մի մշակ վարձատրելու համար՝ վարդապետը Լուցիա խանու-  
մից խնդրել էր Տիրուհու ձեռքը։

Դաւիթը վազուց Տիրուհուն կին ունենալու փափագով տանջ-  
ւում էր։ Այս սէրը առաջացել էր ոչ թէ անկեղծութիւնից ու սըր-  
բութիւնից, այլ շահասիրութիւնից։ Դաւիթը գիտէր, որ հաճի Թա-  
թոս աղան մի տասներկու կամ տասնուշինգ հազար ոսկու կարո-  
ղութեան տէր մարդ էր, անշուշտ աղջկան այդ գումարից չորս-հինգ  
հազար ոսկի մաս կը հասնէր։ Այս գումարը թէև հաստատ էր, բայց  
չէր կարող հրապուրել Դաւիթն, նորա համար որ մի նշանաւոր  
զումար չէր և այն էլ հաճի Թաթոս աղջից յետոյ էր սունա-

լու։ Դաւիթի խելքը գլխից հանողը նոյնպէս ժառանգական խնդիրն էր, Մելիք-Դարագեօզեանցների թիախներով խառնած ոսկու ամբարները։ Տիրուհու՝ իւր սիրասուն ամուսնացուի բաժինը իւր հաշով հասցնում էր մինչև երեսունը հինգ հազար ոսկու։ Այդ գրամագրը խով մտածում էր իւր ապագայում ձեռնարկելիք գործերի վերայ և երբեմն այդ գումարը երեք անգամ բազմապատկում և հինգ անգամէլ կրկնապատկելով՝ երեք միլիոն անգիտական ֆունտ ստերլինգի հասցնում։

Այս պատճառով նորա մտածմունքի միակ առարկաներն էին ամենահաստատ փասսեր գտնելը դատը վաստակելու համար։ Իւր խորամանկութեամբ, տէր-Կարապետի առաջնորդութեամբ և Կ. Պոլսի երեսելի անձանց ազդեցութեամբ յոյս ունէր անսպառնառ տանելու այդ գործը։ Դաւիթը հաստատապէս սիրում էր այս ժառանգութիւնը, հետեւապէս և այն էակը, որի պատճառով այս գանձը իւր ձեռքն էր անցնելու։ Դաւիթը տոչորւած այս երեակալութիւններով, մտքով անգամ չէր անցկացնում թէ՝ արդեօք Տիրուհին նրան սիրելու կամ թէ ընտանեկան յարաբերութիւնների մեջ նրան ուրախացնելու և բաղդատորացնելո՞ւ էր, թէ ոչ նա չէր էլ մտածում անգամ, որ Տիրուհին կամ նորա ծնողները մերժեն նորա առաջարկութիւնը, որովհետեւ նա համոզւած էր, որ տէր-Կարապետը իրանց երկուսի օգտի համար այս գործը կատարելու խոստացել էր և վարդապետը իւր միտքը զրած բանը կը կատարէր անսպառնառ։ Բացի այս, Լուցիա խանումը այս գործը վարդապետից և հետեւաբար իրանից ջոկ ոչ ոքի չէր կարող յանձնել և քանի որ իրանց ձեռքով կատարւելու էր, իւր ցանկութիւնը ինչի՞ գլուխ չը պիտի գար։ Դեռ Դաւիթը նազ էր անում։ Վարդապետը երբ Լուցիա խանումի ներկացութեամբ առաջարկութիւն էր անում, Դաւիթը չեմ ու չում էր անում։ Ժամանակ չ'ունիմ, տուն ու տեղ չ'ունիմ, աղքատ մէկն եմ, գործերս կարգի գնեմ և այն և այն պատասխաններով։

Խնչպէս վերել յայտնեցինք, ցնդած ու ցնորած Պապը կամ կարծեցեալ ժառանգը Յովակիմ բէզից վեր առած հինգ հազար ոսկին քոռ ու փուչ անելուց յետոց, իւր բաղդը յանձնել էր Լուցիա խանումին և տէր-Կարապետին։ Սոքա էլ փոխանորդութիւն տւին

միւսիւ Յանեսին, որը մեծ փաստաբան էր և գործիք Ժիզուխտների Ընկերութեան Ժիզուխտներն պիտի պաշտպանէին զրկեալի դատը: Յովակիմ բէզը Պապին այդ վողը յանձնելիս իւր աներձագի՛ Խւ Կարօի հետ ընկեր էր շինել, որ կառավարէն գործերը: Խւին ու ցնորածին ընկերացնելով, Ցովակիմ բէզը ցանկացել էր բարեխառնել այս երկու թշւառների դրութիւնը և մի կտոր հացի տէր շինել: բայց դըժբաղդաբար մին շւայլութեամբ վատնել էր, միւսն էլ ապրանքով ու փողով գողացել և ու օրերի համար պահ տւել քրոջն ու փեսին: Այս գումարի ինչպէս վատնելը թէև յացնի էր Ցովակիմ բէզին, բայց—գլուխներն ուտէ—ասելով, իրանց մեզքը իրանց վզին էր թողել, գիտենալով որ ինքը իւր պարտականութիւնները դէպի իւր մերձաւորներին արդէն կատարած էր և աշխարհի տեղի ու անտեղի բամբասանքներից ազատւած: Պապը, որ շւարել, մնացել էր, թէ ինչպէս իւր ստորագրութիւնը ազատէր, յացնի բան է, որ պատրաստ էր ամեն զիջողութիւն անելու:

«Եէրի»-ի համաձայն, երկու մասը հասնում է արու ժառանգներին, մի մասը՝ աղջիկներին: Դաւթի հաշւի համաձայն՝ հարիւր քառասուն հազար ոսկի Լուցիա խանումը բաժին էր ստանալու, հետեւապիս Պապին հասնելու էր երկու հարիւր ութսուն հազար ոսկի: Անհաւատալի՛ թիւ: Զի կարելի կարծել, որ Կարինի պէս փոքրիկ մի քաղաքում ապրող մարդ, մի սարրաֆ, սուետրական և արքունական գործերում կարողացած լինի երեսուն կամ քառասուն տարւայ ընթացքում ութ հարիւր քառասուն հազար ոսկի դարսել, որի երրորդ մասի համար հօրեզքօր զաւակները ժառանգական դատ էին ու զում բաց անել: Այո՛, անհաւատալի կը լինէր բոլորովին, եթէ աչքի առաջ չ'ունենալինք այսօր մի քանի ԾՄէճլիմներիւ (Ժողով) իմամները (ՃՃէա) միլիօնաւոր գումարներ Տաճկա-Հայաստանի զանազան քաղաքներում վճռած: Եթէ լաւ ուսումնասիրենք Տիգրանի եղ ու մեզը բղխող երկիրը, բնաւ չենք զարմանալ այս գումարի վերաց: Այս աշխարհում ոսկու, արծաթի կամ հարստութեան աղբիւրները այն աստիճան առատ են, որ, որչափ էլ անցեալում չար ձեռքերը փըշացրել են դոցա ակունքները, բայց դոքա էլի այնքան առատ են տալիս, որ միշտ հարստութիւնները ամբարանոցներում ու պահեստներում փչանում են: Ասածներիս օրինակ ենք տալիս իւրաքանչիւր

տարւայ ամեն մի վիլայէթից հարիւր հազարներով Հերոդոսի նկարագրած խոշոր զմականի ոչխարները, որոնք դէպի Ասորիք, Փիւնիկէ, Հրէատանի, Արարիա, Նդիպտոս և խորերն են տարւում, արջառները դէպի Փոքր-Ասիա, մինչի Զմիւռնիա և Կ. Պօլսի դռները, ցորենը, կտաւատը՝ Մարսէլ և այլն և այլն:

Այսպիսի մի մեծ գումարի անուն լսելիս՝ Պապը երազ էր կարծում, Դաւիթը գողղողում, Լուցիա խանումը հրճւում, իսկ տէրկարապետը կարմրում էր: Պապը ոչ միայն բոլոր ծախսերն իւր բաժնից էր խոստանում տալ, այլ իրան մնալիք բաժնի մի քառորդը նոյնպէս տէր-կարապետին էր բաշխում իւր հոգու փրկութեան համար:

Տիրուհու և Կակոսի բռնւած օրից երեք չորս օր յետոյ վարդապետը Լուցիա խանումենց մեծ օրէն (առնետէ) նատած էր: Լուցիա խանումը պատմել էր մի առ մի գեռահասների զլսին եկած անցքերը: Տէր-կարապետը բոլորովին սառը կերպով լսել և միշտ գործի վերաբերեալ կարճ հարցերով ընդմիջել էր պատմութիւնը: Վերջապէս կծու, բայց ոչ բարկացոտ կերպով յանդիմանել էր Լուցիա խանումին:

—Դու չե՞ս գիտեր, ասում էր, որ կրակը վառօղի մօտ չե՞ն տանիլ: Ախա'ր դու ի՞նչպէս մացր ես, ի՞նչպէս աղջկաց տէր ես, երբ քո պարտականութիւններդ չես կատարում: Դու ո՞վ, Կակոսն ո՞վ: Նաստ էլ սիրով ուզում էիր տալ, մի՞թէ կարելի է թողնել, որ գործը այդ գոներին համնէ: Մարդ ուղարկէիր, յայտնէիր կամքդ, նշանը բերէր և մէկ-երկու ամսից յետոյ պսակէիր, տուն-տեղ անէիր, վերջացնէիր: Թողնել խեղճ աղջկան երթալու սատանի ճանին ընկնելու: այդպիսի խացտառակութիւն քաղաքում իմացա՞ծ բան է: Քըսըր, փըսըր ականջիս ձէն էր հասնում, գիտէի թէ բամբասանք է: Տես թէ ինչե՞ր են անցել մեր չորս բոլորը: Վանդակի թռչունը կատար մօտ դի՛ր, դռները բա՛ց և կատարին պատւիրի՛ր, որ չ'ուտէ: Ապրե՛ս, հազա'ր ապրես, զորդ որ այդպիսի սխալ հազար մօրից մէկըն էլ չէր անիլ: Էլի չ'ասի՛ մի լաւ մտածէ, դուն ո՞վ, զայֆաջի Կակոսն ո՞վ: Էն էլ գիտես, որ զորա համար հաճի աղան մեծ բերանը բանալով հազար հայդոյանքը մէկտեղ կը թափէ: Քո գիտենալու բանդ է, ինչպէս որ կ'ուզես:

Տէր-կարապետը շարունակում էր իւր մենախօսութիւնը և Լուցիա խանումը երբեմն երբեմն սրտի խորերից «ա'խ» քաշելով լուռում էր։ Թէե ցանկանում էր լաց լինել, բայց նորա կանացի թոյլ սիրող կարծր քար էր դարձել, աչքերն էլ չոր ապառաժ, արտասունքի մի կաթիլ անզամ չէր հոսում նորա այտերից։

—Ուրե՛մն, շարունակեց վարդապետը, գործն որ այդ դրութեան է հասել, հարկաւոր է օր առաջ նշանել պրծնել, էլ համբերելու ժամանակ չէ, պսակեցէք վերջադրէք։

Այս խօսքերը ասելիս՝ նա մի քննող հայեացք գցեց Լուցիա խանումի վերայ, նորա հոգու տրամադրութիւնը, սրտումը եղածը երեսի վերայ կարդալու համար։ Բայց Լուցիա խանումի տարտամ դրութիւնը չէր թողնում նորան մի որոշ զիրք ատանալու. վարդապետն էլ ոչինչ չէր կարողանում հասկանալ։ Վարդապետը անճարացած սկսեց կարծ հարցերով խօսակցել՝ Լուցիա խանումի գաղտնիքը իմանալու համար։

—Զարմանում եմ, թէ որ գործը այդ դրութեան էր, ինչի՞ ինձ բան չեիր ասում։ Ես էլ խեղճ տղին խօսք չեի տալ։ Նա էլ քիչքիչ տաքացել է և հիմա բան խօսելիս՝ մըմթմթում է։ Բաւական ժամանակ կայ, որ ինչ ասում եմ ձեր գործի մասին, չէ կատարում։ Կարծես թէ իմացել է այս պատմութիւնները, շատ տրտում է և սիրտը կոռորւած։

—Վա՛րդապետ, ճշմարիս որ ոչնչից տեղեկութիւն չ'ունեի։ Ամենից թագցնել, ամենից պահել պարտքս էր, բայց քեզանից, դուինքդ լաւ զիտես, որ ոչինչ չ'ունիմ ծածկելու։

—Ախա՛ր վեց ամիս, եօթն ամիս նոցա մէջ յարաբերութիւն լինի ու մայրը չ'իմանա'։ Մի՞թէ հաւատալու բան է, արի՛ ու համոզւիր։

—Ուրեմն մտածածներդ բոլորը «մոշլա» եղաւ, փտաւ, գնաց։

—Ի՞նչպիս անենք, վա՛րդապետ։

—Ամենից լաւն է՝ ձեռքդ լւա՛ այն գործից։ Դաւիթը մազի չափ անգամէլ չի աշխատիլ, ես էլ նորա մօտ ամօթով մնացի։ Կարող է գնալ գնդին մատնել և կորցնել մեզ։ Մի խոր հառաչանք քաշելուց յետոյ ասաց։ —Քո խօսքերիոդ համաձան, ես նորան խօսք էի տւած, հիմա նորա գլխին կամ մեզ մի բան եթէ սւատահի, ես իմ խղճիս

առաջ պիտի մնամ պարտական:

—Վա՛րդապետ, ես ոչինչ չեի խոստացել:

—Այո՛, պարզ չեր ասել թէ՝ կը տամ, նշանը բերէք, բայց միշտ ասում էիր թէ՝ գեռ պատիկ է, մի քիչ համբերեցէք, տեսնենք: Աղջկայ տէրն էլ ասէ թէ՝ ահա՛ տարէք, անշուշտ մի քիչ նազ է անելու: Փողոցում դուած խօ՞ չերք, տունը մնացած խօ՞ չէր: Դեռ անմեղ երեխայ էր: Նամանաւանդ որ իմ նորա համար արած մըշտական հարցերիս լուած ու չես պատասխանած: Զը զիտէի՞ր, որ լըռելը համաձայնութեան նշան էր: Ես ուրեմն մեղաւո՞ր եմ:

—Վա՛րդապետ, շատ լաւ, բայց ի՞նչ արած, աղջիկը նորա վերայ տաքացել է, էլ պաղեցնելու յոյս չ'ունիմ:

—Դատարկ դատարկ մի՛ խօսիր. տաքացել է, մէկ-երկու ամսից յետոյ կը պաղի: Անմեղ երեխայ, նա ի՞նչ զիտէ այդպիսի բաներ: Իրար մօտենալով թէ տաքացել են, որ հեռանան՝ կը պաղին: Լա՛ւ պահպանիր, որ էլ չը կարողանան իրար տեսնել, մէկ էլ կը տեսնես քիչ քիչ սառեցան: Նամանաւանդ, որ հօրը ինչպէս պիտի գըլուխ երթաս: Այ կնիկ, հաճի աղան կը մեռնի թէ տեսնի Կակոսին օճախի գլուխը իբր փեսայ նստած: Բաղարում Կակոսը նորան տասը փարացի երկու ֆինջան զայֆէ տալով՝ դուքանի առաջ մի ժամ կանգնած ծառայէ, տունը նորա գերդաստանը զայֆաշո՞ւն ծառայեն: Խրատի՛ր, խօսի՛ր, պրծաւ գնաց: Թէ աղջկան իրա կամքին թողնես, կամ դավուլչուն կ'առնէ և կամ զուռնաչուն:

—Վա՛րդապետ, քանի որ խօսք եմ բաց անում՝ խրատում, այնքան տիրում ու օրէ օր ետ ետ է գնում: Տասն ու չորսից տասն և հինգերորդ տարին փոխեց, այնքան տիսուր է, որ մատի չափ չը բարձրացաւ: Նիշարացել, մաշւել, կաշին ոսկորին է կակել:

—Զը զիտեմ, ես քո գործերի մէջ չեմ կարող խառնել, էլի չ'ասի, ինչպէս որ կամքդ է, բայց...: Կարծեմ թէ Դաւիթը, եթէ ցանկանայ, մենք քսան ու չորս ժամի մէջ կը կորչենք: Դու գիտես... լա՛ւ մտածիր: Եթէ ես մի քանի խօսք խօսեմ, կարծում եմ, որ Տիրուհին կը համոզւի ու ետ կը կանգնի ամենայն սիրով:

—Վա՛րդապետ, վա՛րդապետ, թէ էդ շնորհքն անես, մեր տունը կը փրկես, մենք քո ազատածներդ կը լինինք: Մի խօսքով, հըրաշքով մեղ բաղդաւորեցրած կը լինիս:

— Մեծ է Աստուած, մենք նորանից երբէք յոյսերս կտրելու չենք, ինչ որ բարի է, թո՞ղ առաջնորդէ։ Մենք մեր ամեն քայլը, ամեն գործը անելիս՝ պարտաւոր ենք յիշելու, որ մենք բարի և սուրբ սրտով անումենք նորա փառքի համար։

— Օրհնե՛ալ լինի նորա կամքը. վա՛րդապետ, թէ կարող ես՝ փրկի՛ր։

— Տէրն յաջողէ։

— Ամէն։

— Դու էլ կը համոզւես այն ժամանակ և Դաւթի պէս գործունեայ մէկին աղջկանդ ձեռքը չես խնացիլ։

— Ես աքօր էլ կը տայի համաձայնութիւնս, եթէ աղջկանս խելքի բերած լինէի։

— Եղ բանով դու էլ բազգաւոր կը լինես, աղջիկդ էլ, եօթը պորտդ էլ։

## ԺԷ.

ՏԻՐՈՒՀԻՆ ՈՒԽԾԸ ՓՈԽՈՒՄ է

Յետինք էր։ Արեգակը իւր ոսկեշող, բայց նւազ տաք ճառագայթները գցել էր միջնաբերդի սարի փէշերում զանւած տների լուսամուտների ապակիների վերայ ու այդ տեղերից անդրադարձ ճանչներով խտացնելով ծակում էր մարդու աչքը։ Կարծես լուսոց ասովը իւր վերջին ժամանովը ուզում էր մահկանացուներին հակացնել թէ՝ ձեզ ես շատ եմ սիրում, թէև բնութեան օրէնքը կատարելով հեռանում եմ, բայց էլի չը դիմանալով ձեր սիրոյն, կը գամոչ շատ ուշ, և իմ շրջանս խենթացած այնքան արագ եմ կատարելու, որ գեռ հանգստութիւններդ չը վայելած՝ ինձ տեսնելու էք արեւելքից, բարձր լեռների գաղաթին, աւելի զւարթ և ծիծաղերես քան վերջալոյսիս։

Տիրուհին մօր առաջն ընկած գնում էր ժամ խոստովանելու։ Նա ամբողջ շաբաթը պատրաստել էր, իւր բոլոր մեղքերը մէկ մէկ միտքը բերելով ուզում էր թափել բոլորովին, քաւել զղջալով և առաջադրել էր յաւիտեան չը գործել այդ մեղքերը։ Նա մարմնով հիւանդ էր և սաստիկ տառապում, բայց միայն հոգու առողջացնելուն,

դարմանելուն և խոցերից ու բծերից ազատելու համար էր հոգում։ Անմեղ գառն, արգեօք ի՞նչ մեղքեր ուներ։ Նա մի աղօթագրքեր «Պատրաստութիւն խոստվանութեան» աղօթքները մի առ մի հանդարտութեամբ ու մտածութեամբ կարդացել էր և իւրաքանչիւր տողի ու տան վերջը կանդ առնելով մտածել թէ՝ արգեօք այդ տողերի մէջ յիշւած մեղքերը գործե՞լ է։ Նա ինքն իրան ասում էր։ — Անցած օրը տանը ամեն մարդ իրան գործն էր կատարում և ես, հիւանդ եմ ասելով, խարեցի ու ողջ օրն լուսամուտից գուրս նայելով անցկացրի։ Ո՞ւմէի որոնում։ Նա երկու անգամ եկաւ, անցաւ փողոցից և այդ միջոցներին ատացած ջղալին ցնցումներից անզգաց գլուխում էի։ Այն իրիկուն աղօթելիս խելքս գլուխս չէր, աղօթելիս խառնուում էի և շատ անգամ ուխտածս աղօթքները կիսատ թողած՝ թմրել ու քնել եմ։ Մօրս հրամանը ճշգութեամբ չը կատարեցի ու մեր խեղճ հացթուխին երկու մոմի տեղ հինգը տևի։ Ճակատիս ոսկու հետ կտուց ունենալու համար՝ քանի անգամ հօրս խնդրեցի, աղաչեցի, լաց եղայ, ձեռը պաշեցի, խոռվեցի մինչև առնել տւի։ Կիրակի քեռուս ընծացած ոսկիները մինչև ճակատս չը կարեցի՝ ժամ չը գնացի։ —

Տիրուհին այս բոլոր իւր կարծած մեղքերը խոստվանարանում վարդապետի առաջը չոքած մէկ մէկ խոստովանել էր. աւելացնելով թէ՝ ուրիշ ոչինչ չէր յիշում և սրտանց ցաւելով զրանց վերաց ու այն գործած մեղքերի վերաց, որոնք միտքը չէին գալիս՝ թողութիւն էր խնդրում վարդապետից, խոստանալով որ հաստատ միտքը զրել է այդ մեղքերի մէջ յաւիտեան էլ չը գլորւելու։

Տէր-Կարապետը անհամբեր սպասում էր Տիրուհուց իւր սիրացին արկածների մասին խոստվանութիւնները լսել, բայց սաստիկ շփոթւած ու զարմացած էր նորա լսութեան վերաց։ Տէր-Կարապետը մինչև վերջը հանդարտութեամբ լսել էր խոստվանորդուներելի մեղքերը և միայն կցկուր հարցերով հանգամանքները պատմել տւել։ Տիրուհու աւարտելուց յետոց, հերթը խոստվանահօրն էր եկել խըրատելու և զանազան հարցերով մնացեալ մեղքերը միտքը զցել տալու։

Հարցերից առաջ վարդապետը սկսեց հետևեալ նախաբանական խրատը։

— Աղջի՛կս, ուռն ուռոց են շխտկում: Եթէ ծուռը թողնես՝  
 « հաստանալուց յետոց էլ չի ուղղւիլ: Դու դեռ այն թեթև ու թոյլ  
 « հասակումն ես, որ աստանայի չարաթոյն քամին քեզ իրան խա-  
 « ղալիկ շինած՝ մէկ աջ է ծոռում, մէկ ձախ, մէկ առաջ, մէկ ետ:  
 « Եթէ այս հասակումդ քեզ չը շխտկես, այդ թեթև, փոքրիկ,  
 « աչքի չը զարկող մեղքերը սովորական կը դառնան և այն աստի-  
 « ճանի կը սեւացնեն սիրտդ ու հոգիդ, որ մահացու մեղքի ծանրու-  
 « թիւն ստանալով՝ կը քաշեն կը տանեն յաւիտենական խաւարը,  
 « այն գժոխքը, որտեղ ժողովւում են բարեգութ Յիսուսի տեսութիւ-  
 « նից զրկողները: Այս, քանի՛ քանի՛ անմեղներ, քանի՛ քանի՛  
 « երեխաներ գեռ վեց ու եօթը տարիներում միրուած նորա աւա-  
 « զանում, զրոշմւած քրիստոնէական կնքով, իրանց վատ ու չար  
 « զործերով արժանացել են բարելոնեան կրակին: Դու արդէն տա-  
 « րիքդ առած ես, խելքդ հանում է, չարն ու բարին ճանաչում  
 « ես, եթէ հիմիկուց քեզ չուղղե՞ էլ ե՞րբ ես ուղելու: Մի ծուռ  
 « ու ծերացած ծառ, եթէ փայտահատը կորելու լինի, անշուշտ ծուռած  
 « կողմը կը գլորի, խօ՛ չէ կարող այդ վերջին րոպէում ասել փայտա-  
 « հատին.—Սպասի՛ր, որ ուղղւեմ:—Երեք ամիս առաջ քո վերջին  
 « խոսափանանքիդ ժամանակ քեզ կրկնեցի, որ հեռանաս այդ մեղքերից,  
 « ո՞ւր է քո դիտաւորութիւններդ և առաջադրութիւններդ՝ հեռու  
 « մնալու այդ մեղքերից: Ելի չասի, սովորական են դարձել: Մտածի՛ր,  
 « մտածի՛ր, որ աշխարհացին մի քանի հոգսերդ՝ շորի, զարդի,  
 « զբօսանքի և ուրիշ բաների համար աղաշանքներով, լացով և  
 « ուրիշ միջոցներով ձեռք ես բերում, հապա յաւիտենակա՞նը: Մենք  
 « աշխարհի վերայ եալյայ դուրս եկածներս, մի քանի տարւայ մեր  
 « մարմնի համար որ ոչինչ չենք խնայում, ինչու մի քիչ էլ չենք  
 « խորհում մեր հոգու համար, որ յաւիտեանս յաւիտենից ապրելու  
 « է փառքերով կամ տանջանքներով և դրա ընտրութիւնը մեր  
 « ձեռքն է: Կամքդ որ չես կարողանում կոտրել և սովիպում ես  
 « ծնողներիդ խոնարհել քո առաջ, հնազանդեցնում ես քո կրքերին,  
 « էլ կարող ես ասել, որ սիրում ես քո Ստեղծողիդ: Յաւի՛ր, յաւի՛ր  
 « այդ մեղքերիդ վերայ, չոքէ-չոք գնա՛, լնկի՛ր Տիրամօր պատկերի  
 « առաջը և խոսապայիր, որ էլ ոչ մի դէպքում չես դուրս գալու  
 « ծնողներիդ կամքիցը: Էլ ուրիշ մի մեղք չունի՞ս արդեօք սրտիդ

« վերայ բեռնաւորւած, շարութիւններ՝ խօսքով, գործով, շարժմաւն-  
« քով, մտքով, երազով, նամանաւանդ գաղտնի ծնողներիցդ, շուտ  
« խօսիր վերջացրո՛ւ, որ ստանաս արձակումդ։»

Տէրուհին դողալով բացասական նշան տւեց։ Տէր-Կարապետը  
կատաղեց։ Նա մասնաւորապէս շեշտել էր «գաղտնի ծնողներիցդ  
խօսքերը, որ գուցէ Տիրուհին ինքն սկսի սպատմել այն բանը, որի  
համար հարցեր առաջարկելուց զգուշանում էր։ Բայց երբ Տիրու-  
հու լութիւնը երկու, երեք բոսէ տևեց, տէր-Կարապետը ասաց.  
—Լա՛ւ մտածիր,—ճակատը բռի մէջ ամփոփելով, արմունկը նստարանի  
յենարանին կոթնեցնելով։

—«Դու, ինչպէս երեւում է, մի քիչ յետոյ շարունակեց վար-  
« գապեալը, մի բան ունիս շրթունքներիդ վերայ և չը գիտեմ թէ։  
« ի՞նչի չես կարողանում յայսնել։ Գուցէ ստանան կապել է լե-  
« զուգ, փակել է բերանդ, չի թողնում խօսելու։ Կամ այդ հոգու  
« ամենասոխերիմ հակառակորդը քեզ քո մեղքերիդ վերայ դատա-  
« ւոր է շինել և ինչպէս Եւային խաբեց, քեզ էլ ասում է. —Այս  
« բանը մեղք չէ, այն բանը ոչինչ է և այն և այն։ Բայց դու պիտի  
« իմանաս, որ այստեղ ոչ թէ մարդու, այլ նոյն ինքն Քրիստոսի  
« առաջն ես չոքած, Նա էլ այստեղ աներեւոյթապէս նստած է։ Դու  
« լաւ զիտես, որ Նա ամեն բան գիտէ, ամեն խորհուրդ և ամեն  
« գաղտնիք Նրան յայտնի է։ Դու քո սրուումդ եղածները մանրա-  
« մասնաբար պիտի պատմես Նորա փոխանորդին, պիտի խոստովանես  
« մի առ մի նորա բոլոր գիտեցածները քո բերանովդ, որպէս զի ստանաս  
« կատարեալ թողութիւն, ինչ որ քեզ պատահել է, ինչ որ տեսել ես, ինչ  
« որ մտքովդ անց ես կացրել, ինչ որ երեւակայել ես, ինչ որ լսել ես, առանց  
« քննելու պիտի խօսես և քննողը միմիացն ննքն է։ Այս էլ զիտենաս,  
« որ մի ամենաչնչին բան խոստովանանքից գիտութեամբ պահողը  
« յաւիտեանս յաւիտենից կորած է, նրան սպասում է սանդարա-  
« պիտի դժոխքը, որտեղ նախ հոգւով և ապա հոգւով ու մարմնով  
« այրւելու, դաղւելու, տապակւելու, խորովւելու է և որ այդ տանհանք-  
« ները նորոգւում են ամսէ ամսիս երինքի լուսնի պէս։ Ես համոզ-  
« ւած եմ, որ քո սիրոտ այնպէս կրթւած, վառւած է Տիրամօր  
« սիրով, որ մեղանչելու բոլորովին անընդունակ է, բայց սատանան  
« հէնց ոխերիմ թշնամի է այդպիսի մաքուր սրսերի և հաղարա-

« ւոր մտքերով, կարծիքներով ու չար խորհուրդներով տոչորում է  
 « զրանց: Դու այն սատիճանի վերաց ես, որտեղ սատանան անդադար  
 « թէ արթուն և թէ երազում բերում, ներկայացնում է մոքի աշ-  
 « քերի առաջը կտրիծ երիտասարդներ, գեղեցկադէմ, զարդարւած,  
 « վայելուչ և ակամայ մարդու սիրար կապում դոցա հետ, այնպէս  
 « որ մարդը դոցա յաճախ տեսնելու մեծ փափադ ու իղձ է զգում:  
 « Այս սատանայական պատկերը երբեմն այնպէս է լինում, որ մարդու  
 « աչքի առջելից երբէք չի հեռանում: Լաւ զիտենաս, որ մենք՝ մահ-  
 « կանացուներս՝ ունինք ինչպէս պահապան հրեշտակներ, նոյնպէս  
 « և գեհենական դեեր: Դեերը չեն հեռանում մեզանից և մենք մատըն-  
 « ւած ենք նոցա ձեռքը մեր նախամօր մեղքի պատճառով: Այդ  
 « գեերը քեզ բացատրել հարկաւոր չէ, սուրբ Անոն ճգնաւորի  
 « վարքի մէջ կարդացած ես: Ասա՛, արդեօք քեզ մի ացդպիսի փոր-  
 « ձանք խօ չէ՞ պատահել, կամայ կամ ակամայ զու ացդպիսի մի  
 « դիւական թակարդ խօ՛ չե՞ս ընկել:

Տէր-Կարապետը առանց խոստովանորդու վերայ մտիկ տալու, ա-  
 կանջը մօտեցրել էր ճաղերով (Վանդառ) լուսամուտին և սպասում էր  
 նրանից պատասխանի: Տիրուհին արձան էր կտրել, ոչ ձայն կար,  
 ոչ խօսք և ոչ շարժում: Նա թէև ցանկանում էր մի բան խօսել,  
 բայց կարծես բիից սեղմում էին և խեղդում: Սաստիկ տանջւում էր:

Վրան արիւն-քրտինք թափեց, աչքերը դոցւեցին, երեսը  
 նիթլիսու շիլայի պէս կարմրեց, շնչառութիւնը սաստկացաւ և սկսեց  
 անմեղ երեխայի նման լալ, արտասունքն էլ գոհարի նման սկսեցին  
 թափւել՝ գլորւելով այտերի վրայից: Վերջապէս բոլոր ճիղը թա-  
 փեց, ուշքն հաւաքեց և կակազելով ու խեղդւած ձայնով ասաց.

— Այո՛, ես միշտ մէկին ունիմ իմ աչքիս առաջ, բայց դա...  
 Ուժն սպառեցաւ ու էլ չը զիմանալով այդ տանջանքներին, չը կա-  
 րողացաւ շարունակել և վրան մի ջղային սարսուռ գալով՝ թուլացաւ,  
 բերանքսվար ընկաւ ու կոթնեց իւր և խոստովանահօր մէջ գտնւած  
 տախտակի պատի վերայ:

Խոստովանահայրը զգաց իւր տւած վէրքի խորութիւնը ու  
 ցաւը, զգաց նոյնպէս, որ խոստովանորդու սիրտը այնպէս փքւել ու  
 տագնասպել էր, որ մի խօսք ևս խօսելու էլ կարողութիւն չէր մնա-  
 ցել: Նորան սթափեցնելու յուսով մի քանի անգամ—Տիրուհի՛, Տիրու-

հի՛—կանչեց ցած ձայնով վարդապետը և համոզւելով, որ այդ իրիկունը նրանից պատասխան ստանալն էլ անհնար է, դուրս եկաւ խոստովանարանից:

Խոստովանարանից դուրս գալուց յետոյ՝ վարդապետը աշ-քը չորս կողմը ածեց մթութեան մէջը մէկին որոնելով, որպէս զի տանէ խոստովանորդուն: Բարեբաղդաբար բոլոր ժամոր-ները հեռացել էին և Լուցիա խանումը դեռ եկեղեցում չոքած ա-զօթում ու սպասում էր աղջկանը: Տէր-Կարապետը նորա կողմը դառ-նալով ասաց.

— Դիտես թէ՛ Տիրուհու սիրտն անցաւ, մոտի՛ր խոստովանատուն, ձեռքից բռնի՛ր ու տա՛ր տուն: Առաւօտ կանուխ ժամ եկէ՛ք, որ ժա-մերգութիւնից առաջ արձակում տամ, որ հաղորդւի:

Խոստովանարանի դուռը բանալուն պէս՝ Լուցիա խանումի սիր-տը մորմոքեց: (Մայր եղի՛ր ու դիմացիր): Աչքից արտասունքի տեղ սրաից արիւն էր վազում: — Ա'խ, վա՛ց, վա՛յ—վազլա՛խ, քոռա-նա՛մ, չորանա՛մ, ամա՛ն, Աստուած, Յիսո՛ւ, Մարիա՛մ, ձիւնը գըլ-խուս, գետինը մտնէի, մարեցա՛յ, թուլացա՛յ աման, օ՛ֆ ամա՛ն . . .

Էլ կցկոտը խօսք չը մնաց, էլ անէծք ու նախատինք չը մնաց, որ Լուցիա խանումը չ'ասէր: Հապա ի՞նչ կը լինէր այն մարդու սիրտը այդ բոպէում նորան տեսնելիս. նա երբեմն ձեռքերն իրար էր զարկում, երբեմն ճակատը ճանկուառում կամ մազերը քաշում, երբեմն բը-ռունցքով սրտին խփում, երբեմն ծնկները տրորում, երբեմն գլուխը պատերին ու սանդուղքներին խփում: Էլ ո՞ր մէկը պատմես: Ասոծու տւածից ժամորներն վազուց դուրս էին եկել ու ժամը դարտակւել էր. ժամկոչ քեռին լաւ վրայ հասաւ, վարդապետի օգնութեամբ Տիրուհուն շալակեց ու տուն տարաւ: Բարեբաղդաբար տունն էլ մօտ էր:

Մի քանի բոպէ յետոյ, Տիրուհին կողինքում անշունչ պառ-կած էր. հայրը, մայրը, եղբայրը, դրկիցներն ու մօտիկ ազգական-ներն շըջապատել էին կողինքը և ամեն եկող պառաւ մի գեղ էր առաջարկում: Անենեակը ցած ու փոքր, օճախը վառած, լուսամուտ-ները թղթած՝ այնպէս որ շնչել չէր կարելի: Սաստիկ տա-քութիւնից և բազմութիւնից սենեակի օդն անպիտանացած էր: Երկու-երեք ժամ տեսեց այս զրութիւնը: Տիրուհին իւր

ամենասիրելիների և ոչ մի փաղաքշական հարցին չեր պատասխանում: Կենաց-փայտի արծաթեաց տուփը զարդարած գոհարներով, մարդարիտներով ու սրբոց մասոնքներով, ոսկեթելով բանւած թափշեաց քսակովը զբած էին Տիրուհու բարձի ետևը: Մի քանի անգամ էլ օրհնած ջուր սրսկեցին, որ ծով դառնայ հիւանդի չորս բոլորը և ոչ մի դեի նաւ չը կարողանայ անցնել ու մօտենալ տառապեալին:

Լուցիա խանումը անդադար համբուրելով իւր աղջկայ ճակատը՝ լացակամած ասում էր.—Տիրուհի ջա՞ն, մի բերանդ բա՛ց, մէկ սփառք Քեզ Աստուած, ասա՛, մի Յիսուս-Մարիամ կանչիր:

Տիրուհին թմրել էր: Նորա դէմքը, մի քիչ հանգստանալուց յետոյ, ուրախութեան նշաններ արտացայտոց սկզբում և հետզհետէ տիսրելով դեղնեց ու գերեզմանական գոյն ստացաւ. ապա զւարթացաւ և կրկին պայծառացաւ հրեշտակային գեղեցկութեան անթառամ փայլով: Խեղճը ասստիկ տաքութիւն ունէր և անողորմ պառաւները չորս կողմից հաստ վերմակների ծայրերը փաթաթում ու ամուր սեղմում էին, որ չը պաղի տառապեալը: Վարդապետն եկաւ: Պառաւներն աղաջեցին, որ մի գլուխ Աւետարան կարդայ. բայց նոյն վերայ զայրացած, վատ յանցաւորի նման ձայնն էլ փորը քաշած, մօտեցաւ, հիւանդի զարկերակը քննեց, վրայի վերմակները վերցնել տւեց, մի թեթև վերմակ թողեց հիւանդի վերայ և մի լուսամուտի թուղթը պատռեց ու սենեակի օդը մաքրեց: Մի քանի րոպէից յետոյ Տիրուհին սիժափւեց: Դորա վերայ աէր-Կարապետը բացեց բերանը.—Խելքերդ բան չի կորում, ինչի՞ էք չարչարում երեխային, այդքան էլ կը տաքացնե՞ն սենեակը, այդքան էլ ծանր վերմակների տակ կը ճնշե՞ն մարդու, յիմար, ցնդած քառթառնե՛ր:

Տիրուհին այնպիսի երազներ էր տեսել, ուղիղ որ եթէ ծանր մեռնելու հիւանդ էլ որ լինէր, էլ չէր պառկիլ: Նորա վերայ երազն այնպէս էր աղղել, որ նա մի քանի ժամւայ մէջ, մի քանի րոպէների մէջ փոխւել էր: Նա էլ չը ցանկացաւ կողինքին ծառայել:

Հետևեալ օրը արշալոցի շաւզի հետ Լուցիա խանումը առաջը խառնած Տիրուհուն՝ գնաց եկեղեցի: Տէր-Գրիգորը, որը այդ օրերը հիւր էր Կարինում, ժամերգութիւնը արդէն սկսել և տիրացուների հետ

քաղցր եղանակով և աղիողորմ ձայնով երգում էին զիշերացին ժամերգութեան Զարթիք փառք իմ, զարթիքը լը: Երբեմն երբեմն եկեղեցու դուռը ճռչելով բացում էր և քուները կարած ծերերը կուցած, կոթնած իրանց գաւազաններին մտնում էին ժամ: Տէրկարապետը թէև դասում իւր աթոռի վերայ նստած մասնակցում էր ժամերգութեան, բայց խելքը և աչքը դրան վերայ սպասում էր անհամբեր իւր խոստովանորդուն: Տիրուհուն տեսնելուն պէս, վարդապետը փիրնը գրեց աթոռի վերայ և ոչխարը գտնող հովեի նման, ուրարը վիզը գցած, գնաց մտաւ խոստովանատուն:

Տիրուհին կանանց սանդուղքի կշտին երկրագելով երկծունկ չոքեց, զղջման աղօթքը ասաց և կրկին երկրագելով, աղօթագիրքըն ու վարդարանը մօրը յանձնեց, գնաց մտաւ խոստովանատուն, որտեղ իրան անհամբեր սպասում էր տէրկարապետը:

Տիրուհին առանց ընդհատելու և առանց կարմրելու սլատմեց խոստովանահօրը իւր և կակոսի մէջ տեղի ունեցած բոլոր անցքերը մանրամասնութիւններով և յայտնեց իւր զգւանքը ու այդ մեղքերից յափիտեան փախչելու հաստատ զիտաւորութիւնը: Վարդապետը դրանց վերաբերեալ խրատները խօսելուց յետոց, ապաշխարանքը որոշեց և ուղում էր արձակում տալ. Տիրուհին նրան ընդհատեց, ասելով, որ ուղում է իւր տարօրինակ երազը պատմել, իսկզնը բոլորովին հանդարտեցնելու համար: Ուշի ուշով լսեց վարդապետը Տիրուհուհետեալ նկարագրութիւնը:

## Ժ.Բ.

### Ե Ր Ա Զ

—Գիշեր էր: Ես սովորական ժամին դուրս եկայ սենեակիցս և տանը ամենին խորը քնի մէջ գոնելով, համարձակ վաղեցի, երդիքի դուռը բացի, գնացի կակոսին մշտական թաքնւած տեղը, մեծ օճախի ետելը գտաց: Ուրախութիւնս անչափ էր: Ճիշդ քառասուն օր էր, որ նորան չէի տեսել: Թէև փայլուն լուսինը իւր արձաթաշող լուսովը մեզ ուղում էր մատնել, բայց բարձրագագաթ Լանկ-Թեմուրի աւերակ բերդը իւր երկնամերձ աշտարակովը մեր վերայ մի անսպիսի մութ վարագոյր էր գցել, որ հրեղէններից ջոկ մեզ տեսնող

չէր կարող պատահել։ Կապոյս երինքի վերայ գիշերւայ թագուհին ասողերի լոյսը խաւարացրել էր և բամբակի քուլաների նման կտոր կտոր նօսր ամփերն էլ կարծես երինացինների աչքերն էին կապել, որ մեզ չը տեսնեն։ Քաղաքը հանգստութիւն էր վայելում, բայց միջնաբերդի լեռան վեշերի վերայ գիշերւած տների երկուսի լուսամուտներից պլավացող աղօտ և մարող լոյսերը նմանում էին չարանախանձ պառաւի անզօր, կուչ եկած, թաղանթապատ ու ջրոտ աչքերին, որոնք դէպի մեզ դարձած՝ ցանկանում էին կարծես տեսնելու մեզ մեր սիրացին բոպէներում։ Ողջ բարձրութիւնը, կարծես, մի ահւելի, ահազին ճիւաղ լինէր գետի ափում բերանքալար պառկած, գըլուսը բարձրացրած և արմուկներին յենած։ Դետափնեայ սպիտակ ծեփած տները նմանում էին բալիշի՝ նրա արմունկների տակը դրած, և երկու դեղնագոյն բարձր աները նրա բազուկներին։ Լոյսը շողջողացնելով այդ հրէշի իրանը նմանեցնում էր անսպառ լուսով ծածկւած անմահականներին։ Սշասշողջող, մարմարեայ, վիթխարի մերկ բազուկները կարծես զարդարւած լինէին շողակնեայ ապարանցաններով, որոնք պսպղում էին ճառագայթարձակ լուսով։ Այս սոսկալի սպատկերը ինձ լիշեցնում էր առասպեկներում լիշւած այն ջագու պառաւներին, որոնք տկար աչքերն ու ականջները սրած՝ գիշերը մինչի լոյս պառկած լեռների գաղաթին ուշադրութեամբ զըննում ու քննումեն, ականջները կախած լուսմ բոլոր գիշերացին գաղտնիքները և արշալոյսի արեգական լուսոյ ճառագայթների հետ թափում ու սրսկում զանազան բամբասանքներ աշխարհի վերայ Քուները կորած, հաւախօսին վերկացած, երդիքներն ընկած, շատ խօսելուց դնչի միսն հալած պառաւներն էլ այդ աւետիսի լրերն իմանալով, մեծ ուրախութեամբ ընկնում են տնէ տուն, պատմում այդ նորութիւնները նոր-նոր յաւելւածներով, մեծացնելով, փոքրացնելով, լայնացնելով, նեղացնելով, երկնցնելով, կարճացնելով, իրանց սրտի, կամքի, քմքի համաձայն սուտ ու մուտ վրադիրներով։ Հէնց այդ առասպելական ջաղու պառաւը կարծես ոչ շատ հեռուից գիտում էր մեզ։ Տայտի վերայ կանգնած միջնաբերդի կոր պարիսպը նմանում էր այդ քաւթառ ջաղու զլիսի կոկոչակին, որ պսպղում էր ուկով ու մարգարտով, ակով ու աղամանդով և ակտունանքով զարդարւած վարսակալի պէս։ Այն աստիճան սոսկում էի այս տեսարանից, որ

կոնակս դարձրի նորա կողմը և շատ զգուշանում էի կրկին նորա դէմքը տեսնելուց։

Երբ ետ դարձայ, քթիս տակը կանգնած էր Կակոսը։ Ուրախութիւնս այնչափ էր, որ էլ չը սպասեցի, ուղղակի ընկայ Կակոսի գիրկը, փաթթւեցի նորա զղովը և ամուր սեղմեցի նորա զղուխը իմ կրծքիս Կակոսը իւր ուժեղ թւերը կամարի պէս պատել էր մէջքս, հեկեկալով և արտաւելով թրջում էր սիրոս և քանի որ խելագարի նման շարժում էր զլուխը երկու ստինքներիս մէջ, ո՛չ, ողջ մարմինս թնդում ու ցնցում էր։ Զարմանում էի ինձ վերայ, որ ի՞նչպէս զիմանում էի այդ ջղացին տառապանքներին (չէի զգում, որ նւազած էի)։ Դեռ այս հերիք չէր, կատարեալ կերպով լսում էի Կակոսի հեկեկանքներում մրմնած խօսքերը։ «Ա՛ս, ասում էր և նա, Տիրուհի ջա՞ն, քեզ ինձնից ուզում են խլել, քեզ ուզում են և մի չար գաղանի ճանկը զցել։ Ա՞յց, վա՛խ, երբէ՛ք, ո՛չ երբէ՛ք և ինձնից էլ մարդ չէ կարող քեզ խլել։ Դու իմս ես և յաւիտեան և իմս կը լինիս։ Ասա՛, ասա՛, Տիրուհի ջա՞ն, ասա՛ աղաչում եմ, և ոտքերդ ընկած պաղասում եմ, ինձ խօ չե՞ս մոռացել, խօ՛ միտռ քըդ չե՞ս փոխել, խօ խոսառումդ, երգումդ, ուխտդ չե՞ս մոռացել։ Առանց քեզ ապրել, առանց քեզ չնշել, առանց քո ընկերուա և թեանը շրջել չեմ կարող, չէ՛։ Ասա՛, պաշտելի՛ս, ասա՛ աղաչում և եմ, ինձ կեա՞նք ես տալու՝ ապրելու համար, թէ դաստապարա և տում ես յաւիտեան ցնորւելու, խելագարւելու և փշանալու։ Նա անդադար տրոքելով իւր զլուխը կրծքիս վերայ՝ աղիողորմ ձայնով գժւածի նման ոգեւորւած կրկնում էր իւր ասածները, որոնք թմբուկի պէս հնչում էին ականջիս և երկաթէ գրչով կարծես զրգուելով գրւում սրտիս և ուղեղիս վերայ։ Այդ ձայնը, այդ եղանակը, այդ հնչումը, այդ բոլոր խօսքերը այնպէս տպաւորւել են մոռքում, որ կարծես յաւիտեան անհետանալու, ջնջւելու չեն։ Երեւակայութեանս միջից։ Դեռ այս հերիք չէ, հապա նորա ողորմելի պատկերը, նորա թշւառ ձեւը, նորա խեղճ հայեացքը, կարծես, հոգէառ Գաբրիէլից ժամանակաւոր կեանք էր խնդրում իւր դարեւոր մեղքերի վերայ լալու, զղալու և քաւելու համար։

Կարող ես մակաբերել, թէ ես ի՞նչ զրութեան մէջ էի։ Սիրաս ի՞նչպէս բաբախում էր։ Ա՛հ, չեմ հասկանում թէ ի՞նչպէս այն ա-

Նիծեալ օրից, երբ սեղանի վերայ նա նստած մերոնց հետ ճաշում էր, նորան հերիսի պնակը տալիս՝ աչքս աչքին որ ընկաւ, էն ի՞նչ սարսուռ մոտաւ հոգիս, էն ի՞նչ սէր ու համակրութիւն զգացի նորա համար, որ դեռ մինչի այս օր էլ ոչնչով չեմ կարողանում հեռացնել սրախց այդ զգացմունքը: Եւ այն օրից մինչև հիմա մեծանալով այդ անբացատրելի, սիրոս մաշող, հոգիս հալող, միտքս ու ուշքս ամբողջապէս զրաւող մէրը՝ տիրապետել է իմ կամքիս ու զատողութիւններիս: Նորա ամեն մի շարժումը, ամեն մի ձեւը, ամեն մի խօսքը թռցնում էր խելքս զլիիցս, նամանաւանդ որ արդէն վաղուց էր, որ չէի տեսել նորան, ուստի այնպէս կարօտել էի, այնպէս իղձս ու կրքերս բորբոքել էին նորան տեսնելու ցանկութեամբ, որ ոչ թէ նորան կատարելապէս յուսադրել էի ուզում կամ հաւատացնել նորան իմ հաստատամութիւնս ուխտածներիս՝ այլ գործով կամենում էի ապացուցանել իմ դէպի նա ունեցած անկեղծ սէրս:...

Նախատեսել էի, որ ծնողներս ուզում են մեզ բաժանել, հեռացնել իրարից: Այդ բանը մեզ երկուսիս էլ մահ էր սպառնում: զրա համար մոտադիր էի Կակոսի հետ փախչել և ազատուել: Իմ մահը ինձ չէր սարսափեցնում, բայց երևակայում էի, սէրս այն աստիճան կատաղի էր, որ նորա զլիին գալիք (Տէրը մի' արացէ) մի որ և է փորձանք ինձ համար սոսկալի և անտանելի կարող էր լինել, մինչև անդամ մահացու: Ես, որ ամեն բան զոհելու պատրաստ էի, նորա հետ շնչելու, նորա շւաքում հանգչելու, նորա կողքին կպչելու և նորա զրկումը հոգիս փչելու համար ինչե՞ր չէի անիլ: Ես, որ միայն նորա փոխադարձ սիրոյ մէջ տեսնում էի իմ ապագայ երջանկութիւնը և աշխարհային ամեն մի հաճոյքը նորա մի քաղցր նայւածքի հետ չէի փոխիլ, կարո՞ղ էի դիմանալ նրան տառապանքներում կամ վատ օրում տեսնելիս: Ես, որ ամիսներով նորա վերայ մտածելով էի օրերս մթնացրել, թէ քուն թէ զարթուն ամեն բոպէ նորա պատկերն էր խաղացել իմ աչքում, գիշեր, ցերեկ նորա հրեշտակացին մեղեղիի նման քաղցր ձայնը հնչել իմ ականջներումս և ջղերում՝ կարո՞ղ էի այլ ևս նորա խաթրը կոտրել: Վերջապէս ես, որ նախանձում էի էն օդին, որը նրան շրջապատում էր, էն շորերին, որ նա հագնում էր, էն թռչունին, որը

նորա գլխի վրայից թռչում էր, էն ճանձին, որ նորա մազի վերաց հանգում էր՝ կարո՞ղ էի տեսնել մի ուրիշի ծնկի վերաց զլուխը դըրած ու քնած։ Կարճ խօսքով, ամեն զոհողութեան պատրաստ էի։

Որչափ որ սիրոս բաբախում էր, ցանկութիւնս բորբոքում և կոկորդիս, լեզուիս ու շրթունքներիս մկանները շարժում էին, բայց ակամայ չէի կարողանում երկու խօսք արտասանելով կակոսին մի առաջարկ անելու՝ չը դիտեմ, ամօթիսածութիւնս էր, համեսութիւնս, դասողութիւնս, անհամարձակութիւնս, թէ ինչ որ արգելում էր ինձ։

Այդ անորոշ զրութիւնից ազատեց ինձ կակոսը։ Նա անվառահիմ համաձայնութեանս, ծունք չոքած, ձեռներն իրար կցած, մատներն հիւսած, զլուխը ետ գցած, երեսն և աչքերն դէմքիս յառած, ցած բայց աղերսալի ձայնով ասաց։

« — Տիրուհի ջա՞ն, հոգի՞ս, ազատի՞ր ինձ տառապանքից։  
« — Ի՞նչ ես խօսում, չեմ հասկանում, պատասխանեցի։  
« — Մեռնո՞ւմ եմ, մեռնո՞ւմ, մի ճա՛ր, մի հնար արա՛, որ ասպ-  
« բենք։

« — Մի՛ վախիլ, ասացի, կը մեռնեմ և քեզնից ջոկ մարդու  
« կին չեմ լինիլ։

« — Դու, ես դիտեմ; որ չես ուրանալ, բայց ծնողներդ երկու-  
« սիս էլ կը զոհեն։

« — Ոչինչ, ոչինչ, համբերենք։  
« — Այո՛, համբերենք, ասաց հեգնական կերպով։ Մի քիչ էլ

« որ համբերենք, քեզ ուրիշի տունը հարս կը տանեն։  
« — Ի՞նչ անենք, ասացի, բացի համբերելուց ուրիշ միջոց։

« չունինք։  
« — Ազգպէս ուրեմն, զլուխը կախած պատասխանեց, ուխտոդ

« մոռաննում ես։  
« — Ո՛չ, երբէ՛ք, երբէ՛ք, ասացի։ Լաւ է, որ մեռնեմ, քան

« քեզ ուրանամ։  
« — Բռնի կը տանեն քեզ և դու էլի կ'ասես՝ համբերենք։

« — Դու ասա՛, ի՞նչ անենք, հարցը վերջապէս։

« — Փախչե՞նք, մրժնջաց աչքերիս մէջ նայելով։

« — Փախչե՞նք, փախչե՞նք շուտով, պատասխանեցի դողդողալավ։

Այս խօսքերի վերայ վեր կացաւ Կակոսը, քաշեց զլիսիցս ոսկու ու մարգարտի շերտը և լուսամուտից տուն դցեց, ասելով.—դրանք ճանապարհի անօթի գայլերին մեղ վերայ յարձակելու առիթ կարող են տալ:—Լեղապատու նստեցի շալակը և մեր տան ետևի ճանապարհից սկսեցինք զառի վեր լեռան վերայ բարձրանալ: Ոչոք չը կար փողոցում և ոչ մի պահապան շուն չէր հաշում: Օղը սաստիկ տաք էր և կարծես թռնրի ջերմութեան նման դոլ քամի էր փրչում: Ո՛հ, սոսկում եմ, քանի որ ցիշում եմ ան զրութիւնս: Ճակատիս ոսկու հետ ֆեսս ու վալէս գցել էր: Գլուխ բաց, երկար ու սե մազերս արձակ թափւած էին թեւերիս և տարածւած Կակոսի ուսերի վերայ: Նտապով դուրս գալուս պատճառով միայն մեայի խըրիսս էի հագել, որի երկայն ու լայն թեւերը ետ երթալով կռներս մինչի արմունկը բացւել էին: Ես ամուր փաթաթւել էի Կակոսի վզովք, նա էլ թեւերը, կռնակը տարածելով կակուծ սեղմել էր ազդրերս: Ա՛հ, ամաչում եմ ասելու, մոռացել էի հազնելու մինչեւ անգամ դուլպաներս և Կակոսն այնքան արագ էր գնում առանց կանգ առնելու, որ հագած բարուջներս ընկել էին ճանապարհին և ոտքերս մինչև ծնկներս մերկ ծածանւում էին: Կարմիր զանաւուզ շապիկիս կրծքի ոսկի կոճակը պատառել էր օղակը և բաց կուրծքս ծածկում էր Կակոսի ալ ֆեսով գլուխութ: Երբ լեռան գագաթին մօտենալով էինք, Կակոսը մի ինչ որ բան էր մոտածում, նա սկսեց զանգաղ շարժւել:

«—Ի՞նչ ունիս, շտապի՛ր, ասացի:

«—Խորհում եմ, ասաց, թէ լեռան գագաթից գնամ՝ գուցէ հրեշտակները նախանձելով քո բարութեան և անմեղութեան վերայ, քեզ ձեռքիցս երկինք թռցնեն, թէ տափով, գետի ափով երթամ, ջրի պառաւը քաշէ ու խլէ քեզ շալակիցս, թէ ճանապարհով գնամ, մարդիկ կը միրահարւեն քո տեսքովդ ու անպատճառ կը յափշաաս: կեն ինձանից: Ուստի աւելի լաւ եմ համարում՝ այս ուղղահայեաց ժայռերի կողերից անցնելով, թէւ մի քիչ դժւարութեամբ, բայց ապահով վտանգներից գնանք համնենք մի այր, մինչև տեսնենք ի՞նչ բարի օր և ի՞նչ բարի ճանապարհ կը բացի արևագալին մեղ համար:

Սարսափելի՛ տեսարան: Լանկ-Թեմուրի լեռան կցւած լեռնաշղթայի

ժայռերի կողքերից թռչելու պէս վազում էր Կակոսը։ Քաղաքը հարաւում էինք թռղել և մենք ձորակի ուղղութեամբ, դէպի հիւսիսարեկլք, գետի աջ ափով և նրա ուղղութեամբ գնում էինք։ Լուսինը մեղնից իւր երեսը միշտ պահել էր։ Մուժ ու վիթխարի ասպառաժների ահեղ կողերից կաշծակի արագութեամբ ցատկուում էր Կակոսը։ Ես բոլորվին ինձ նորան յանձնած, այնպէս պինդ էի կպել նորա շալակը, որ ջուխտակ գոմշուկների լուծքերն էլ չէին կարող մեզ իրարից բաժանել։ Թէև ահ ու վախիցս բան չը տեսնելու համար աշքերս շարունակ խփում էի, բայց իւրաքանչիւր ցնցումն ակամայ սովիսում էր բանալու։ Գանւում էինք լեռնաշղթայի գագաթից մի հարիւր ոտնաշափ ցած, իսկ վտակից կամ լեռների սոորոտից՝ մօս երկու հազար ոտք բարձր։ Վեր բարձրանալը կամ վար իջնելը անկարելի էր։ Եւ եթէ գժբաղգաբար Կակոսի մի ոտքը սահեր, զլորւելով՝ սուրբանկիւն, սրակող և սրածայր կարծր քարերին զարնելով փշուր փշուր, կաոր կաոր կը համնէինք մինչև գետի ափը, թողնելով ամենամեծ կտորը մեր ականջները՝ տունը բօթի նշան տանելու և միսերս ժռչուններին ու ձիներին կերակրելու։

Քարափի վերայ չը կար ոչ ծառ, ոչ ծաղիկ, ոչ կակուղ հող և ոչ փափուկ խոտ։ Միայն տեղ տեղ գոնուում էին վայրի վարդի թփեր, որոնք աշունքը իրանց տերևները թափել, ցուրտ ու չոր քամուց չորացել էին։ Բլրունների հանդասարաններն ու օթևանները մարդկային ձեռքերից փախչելով այդ անմատչելի ժայռերում պատապարել էին և երբ մեզ իրանց կշտով անցկենալիս տեսան, իրանց վշտերը նորոգւած, սկսեցին միայն իրանց բնատուր սրածայր զէնքերովը պաշտպանել և ասղանման փշերով երբեմն երբեմն մերկ սրունդներս այնպէս էին խայթում, որ կարծում էի թէ արիւնը ջրի նման հոսում էր։ Այդ դառը կակիծները հերիք չէին, երբեմն երբեմն Կակոսը թռչկոտելիս հաւասարակշռութիւնը կորցնում էր, և այնպէս դէս ու դէն կուանում, որ կարծում էի թէ՝ էն էր, զլորւելու էինք մինչի անդունդը։ Այդ բոպէին սիրտս այնպէս էր թրթռում, այնպէս էր բարախում, այնպէս ուռչում, որ կարծես ուղում էր ժակել կուրծքս և դուրս գալ։

Բայց այն ի՞նչ զարմանալի ոյժ էր սոացել Կակոսը, այն ի՞նչ սիրտ էր, այն ի՞նչ կրակ ու բոց, այն ի՞նչ աշխոյժ։ Կարծես երկա-

թից լինէր նորա ոտքերը, պողովատից նորա ծնկները; Ո՛չ կանդ առնել, ո՛չ չորս կողմը նայել, ո՛չ հանգստանալ, ո՛չ մտածել, ո՛չ վախել, ո՛չ պլստել, ո՛չ սխալւել, ոչի՞նչ, ոչի՞նչ չէր արգելում մթումը իւր ուղին կորցնելու կամ նպատակից շեղւելու։ Նա էլ սասախի տաք էր, բայց սովորականից բարձր չէր շնչում; Գլխից շոգին բարձրանում էր՝ բայց չէր քրանում; Մինչև իմ մէկ անգամ աչքերս թերթելը՝ նա տասնեակ քաղեր էր փոխում, մինչև իմ մէկ հետ շնչելս՝ նա սարեր էր անցնում; Այն էր քաղաքից բաժանել էինք, մէկ էլ ի՞նչ տեսնեմ, Կարմիր-ծացւերում—Արնոտ քարափի մէջն էինք, քաղաքից երեք ժամ հետու։

Ուղիղ որ արիւնոտ էր քարքարութ և արիւնի հոտը մանելով մարդու քիթը, ակամայ զգում էր սպանդանոցների գարշահոսութիւնները; Նուազով հեռացանք այդտեղից էլ և ահա ոչ շատ հեռու երևում էին Սև-Խաչ աւերակ շնի կիսակործան եկեղեցին և փլփլկած բերդի աշտարակները; Հենց այն էր, մտածում էի թէ գիշերը այդ գիւղում մի քէհի տանը կը հանգստանանք, մէկ էլ կակոսը ժայռի վերևից վայր մի երկան ճեղքից ներս մտաւ մի մուժ այր; Ուզումէի ասել թէ Կակո՛ս, վախենում եմ, զնանք զիւղ, հեռանանք այս քարայրից, բայց կարծես թէ բուկս սեղմում էին, ինձ խեղդում, ձայնս կոկորդից չէր դուրս գալիս; Այդ այրումն էլ կարծես թէ սատակած շան հոտ կանգնած լինէր. ճիշդ նմանում էր տաք քուրսու կամ թոնրի մէջ դրած ծծումբի ծխին, որտեղ բորսներին են նստեցնում առողջացնելու համար; Ներս քաշածս շնչից նւաղում էի, արտասունքը աղբիւրի պէս աչքերիցս թափւում էր; Որչափ որ սեղմում էի բերանս ու քիթս, բայց անհնար էր, զզւելի շոգին կուլ էր գնում; Կակոսը այսուել էլ շարունակում էր իւր արագ քաղերը; Սկզբումը մթումը ես ոչի՞նչ չէի տեսնում, բայց վերջապէս նկատեցի, որ նորա քաղերը հեռու կրակի բոցի նման պլազմող լոյսի կողմն էին ուղղում; Որչափ որ առաջ էինք գնում, լոյսը այնքան խոշորանում և պարզում էր:

Մէկ էլ ի՞նչ տեսնեմ, մի ահռելի գազան, որի աչքերից, քթի ծակերից, լայն բերանից երևում էին նորա ներսում վառւած սոսկալի կրակի բոցերը; Նա մթումը կանգնած՝ արձակել էր լոյսը չորս կողմը, այնպէս որ կարելի էր որոշ տեսնել նորա կազմն ու ձեւը;

Դորա մեծութիւնը խելքից ու մաքից դուրս բան էր: Ոչ սար, ո՛չ ձոր, ո՛չ աշխարհ, ոչնչով չէր կարելի համեմատել նորա ահռելի մեծութիւնը: Նորա երկու ականջները մեր քաղաքի երկու սարերից բարձր էին, նոցա հեռաւորութիւնների մէջ մեր քաղաքի պէս մի քանի տասնեակ երկրներ կարելի էր տեղաւորել: Այդ երկու ականջներից գուռում-գոչումով, կայծերով ու պէծերով ծուխ էր բարձրանում և այդ պէծերն թափւելով գետնի վերաց, վառում ու մոխիր էին գարձնում ամեն բան: Նորա աչքերից բղիսած արտասունքները խոշոր խոշոր կուպրի և նաւթի նման վառւած, բանկած վիժում, թափւում էին անզագար փլփլալով: Նա իւր պնչի ծակերից դուրս էր շնչում կրակի բոցեր ամպերի նման խոշոր խոշոր, իսկ ներշնչելը սարսափելի սանդարամետական էր: Նորա ծծած օդի հետ աշխարհից բարձրանում էին սար, ձոր, ծով, չոր, ծառ, ծաղիկ, կենդանի, անկենդան, գաղան, անսատուն, մարդիկ, վերջապէս ամեն և այդ բոլորը փոշու նման նա կուլ էր տալիս իւր ներքին կրակը սաստկացնելու համար: Պարզ տեսաց, թէ ի՞նչպէս կուլ գնացին իմ մէկ քանի ընկերներս՝ Մազմանենց Դարանը, Նալբանդենց Փեփրոնը և Էլլարենց Մարիամը:

Այս որ տեսաց, մազերս փշաքաղլեցին ու կասկածներ ծնան իմ սրտում: Մոտածում էի, չը լինի՞ թէ Կակոսը իմ ձախակողմեան գեն է, որ Կակոսի կերպարաննքով ինձ գժոխսք է առաջնորդում: Այս բուպէտական սոսկումիս միջոցին ո՞ւմ կարող էի դիմել: Միայն այսքան դիտեմ, որ նւազած ու նւազած ձայնով ամեն ուժս հաւաքած՝ Յիսուս, Մարիամ՝ ասելուն պէս, Կակոսը բերանքավար զլորւեց, փշուր փշուր եղաւ: Անհամարձակ աչքերս բարձրացրի տեսնեմ՝ որ գաղանը չը կայ: Ետ գարձայ, տեսնեմ՝ այրի զրանն եմ գտնելում: Սոսկումից էլ չը մնացի, դուրս եկայ: Կանզնած էի ժայռի եգերքին: Ճար չը կար, ճանապարհ չը կար, թէ էլ չ'ունէի, որ թռչունի պէս ուզած տեղս թռչէի: Ետև՝ սարսափելի գժոխային հուր, առաջս՝ ուղղահայեաց ժայռոս կողերով անցատակ ձոր ու ջուր: Ակամայ աչքերս երկինք բարձրացրի, (ինչպէս ամեն յուսահատւած անում է), այս անելանելի գրութիւնից աղատւելու համար օդնութիւն խլնդրելու:

Երկինքն ողորմեց: Տիրամայրը անարժանիս վերայ զթալով՝ ի-

ջել էր հանդէպի լերան գլուխը և ողջ սարը լուսոյ շաւդով փայլում էր։ Նա վարդագոյն շապիկ էր հագած և ոսկեշող քօղ էր զցել զլւից մինչև ոտքերը։ Դէմքը հրեղէն լուսով լուսաւորւած էր և թե-երը կարծես տարածել էր մեղաւորիս զրկելու։ Զւածեւ ճառագայ-թաւոր մի լոյս շրջապատել էր նորան և այդ լոյսը անդրադարձել էր ձորի յատակից անցնող պարզ, հայելանման վտակի վճիռ ջրում։ Ոչ մի ձայն չէր համարձակւում բարձրանալու. լուել էր մինչև անգամ ձորի գեփիւուը և կարկաչահոս գետակը։ Սարերը անշարժ համբա-բար տալիս էին իրանց երկրպագութիւնը և կապոյտ երկնքի աստղե-րը աւելի ու աւելի ասստկացրել էին իրանց լոյսը՝ հանդիսի զիշերը շքեղացնելու։ Ել չը զիմացայ, կարծես մէկը ինձ սիրո տուեց թռչե-լու, ընկնելու նորա ոտքերը։ Այն էր կոներս տարածեցի, ոտքերս կտրեցի հողից, մէկը գօտիիցս ամուր բունեց։ Պլուխս ոլորեցի՝ տես-նեմ մի անմեղ հրեշտակ, գլուխը բաց, թեւերը տարածած, մի ձե-ռին սուր, միւսում վահան, մի ոոքը գօտիս անցկացրած, միւսը օ-դում ծածանելով ինձ հանդարտ իջեցրեց ձորը, մինչի գետի ափը և կանգնեցրեց մի մեծ ապառածի վերայ։

Իջնելիս մասածում էի հարցնել թէ—ո՞վ ես, այս ի՞նչ հրաշք է. բայց վախիցս շարժւելու իսկ անկարող էի։ Երբ հանգստացայ քա-րի վերայ, ետ դարձայ հարցնելու, տեսնեմ, որ նա արդէն հեռա-ցել էր։ Միայն նա հասկացաւ իւր երկնացին զօրութեամբ իմ միու-քըս և այս խօսքերն արտասանեց ու աներեւութացաւ։

—«Անարատ յղացեալ, ամենօրհնեալ Սուրբ Առւսի եռուից գնա՞»։

Զոքեցի ապառածի վերայ, աչքս բարձրացրի Տիրամօր կանգ-նած լերան գագաթը և սկսեցի «Ողջոյն քեզ Մարիամ»։ Երբ երկրո-պագեցի ու կրկին զլուխս բարձրացրի, տեսնեմ բիւրաւոր հրեշտակ-ներով, աննկարագրելի լուսոյ ամպերով բարձրանում էր երկինք բազ-մելու իւր աթոռը՝ իւր սիրելի Որդու մօտ։ Երբեմն երբեմն ողորմե-լի ու զթած աչքերը իջեցնում էր երկիր վերայ, համբ բարբառով կարծես ասում էր մարդկանց.— Եղէ՛ք անմեղ և անարատ, որպէս զի վայելէք յաւիտենական փառքը։ Նետզհետէ անմահական լոյսը փոք-րացաւ, աներեւութացաւ և նորա տեղը մնաց լուսոյ աստղը։ Ան-գիւտ գանձը աչքիցս կորցնելուց յետոյ, երբ չորս բոլորս նայեցի, կրկին տեսայ խաւարը և վտակը, որ կարկաչելով խփում էր կանգ-

նածս ժայռին ու անցնում; Բարձրածունկ չոքած գոհութեան առջօթքս անելուց յետոյ, երբ բարձրանում էի սահեցայ, ընկայ ջուրը՝ Սցդ սոսկումից զարթնեցի արիւն-քրտինքում կորած, աչքերս բաց արի, ինձ կողինքումս գտայ; Դուք այդ րոպէին տանն էիք, մնացեալը տեսաք:

### ԺԹ.

#### ՀԱԼ ՈՒ ՄԱՇ

Տիրուհու այս խոստովանանքից յետոյ Լուցիա խանումը բոլորին մոռացաւ Կակոսին և տէր-Կարապեաի խորհրդի համաձայն ուշքը դարձրեց Դաւթի վերայ; Տիրուհին մինչեւ վերջը մերժեց մօր խնդիրքը և իւր վանք մտնելու հաստատ մտադրութիւնը յայտնելով, համաց կամաց սկսեց ձեռք քաշել աշխարհացին վայելչութիւններից; Սորա այս մտադրութիւնը Լուցիա խանումին սոսկացնում ու ցնորեցնում էր; Հայ մօր համար որդին տան օճախին է, սիւնն է, թշնամու առաջ աղեղն ու վահանը, տէղն ու սուրն է, իսկ աղջիկը, գառն րոպէներում; ցաւի ու վշտի ժամերում, միակ միսիթարիչն ու սփոփիչն է կամ ամենաազդու սպեղանին:

Նատ մայրեր իրանց տառապանքները իրանց աղջկայ տւած քաջալերութիւններով համբերութեամբ տարած ու մոռացած են: Հայ մօր անշահասէր, \*ամենահաւատարիմ և ամենասերտ վշտակիցն ու ցաւակիցը՝ աղջիկն է: Ցղաները շատ անդամ մոռանում են, յաճախ երես շուռ տալիս, անզգայանում, բայց աղջիկները լաւ գիտեն նորա յարգը և ցաւերի ու խոցերի դեղը: Լուցիա խանումը միսիթարել էր մօրը և յոյս ունէր աղջկանից փոխադարձն սուանալու: Բայց Տիրուհու օտար աշխարհը գնալու և վանք քաշւելու մտադրութիւնը կարում, մարում էր այդ յոյսը: Փուշ աշխարհ...: Մարդու մաքից ինչե՞ր չի կարող անցնել: Այս մաքերը Լուցիա խանումին հալում, մաշում էին: Օրէ օր նա բարակ էր մանում:

Տիրուհին նոյն տեսիլքից յետոյ հաստատ միտքը դրեց մոռանալ Կակոսին: Բայց սէրը հանաք-մասիարութիւն չէր: Ամիսներով շարունակ սիրել, երաղել, մտածել, երեւակայել միմիայն սիրոյ առարկան՝ Կակոսը և մի անգամից մոռանա՞լ:

Խնչպէս ատում են, հոգու հակառակ սատանան էլ անդադար Տիրուհու սրտի մէջ պատկերացնում էր Կակոսին: Տիրուհու համար ամեն շուք, ամեն շշուկ, ամեն ձայն, ամեն ձուկ, քսքոց, փսփաց՝ Կակոսին էր: Գիշերներն էլ նորան էր երազում: Աղօթքի ժամանակն անգամ Կակոսը խանգարում էր նորա «Հայր-մերն ու ողջոնը»: Որչափ աշխատում էր հեռացնել իրանից այդ ակամայ իրան տիրապետող անվերջ երեւակայութիւնները, այնքան հալում, մաշւում ու նւազում էր: Զուր աշխատում էր սթափւել այդ սիրոյ թմրութիւնից, զուր կորցնում էր իւր ոյժն ու սպառում արիւնը: Նատ ու շատ տկար էր Տիրուհին յաղթելու բնական պահանջին: Խւր յամառութիւնովը թառամեցրեց իւր գոյնը, թափւեց վարդագոյն այսոերը, ընկան խոշոր աչքերը խոր փոսում, մարեցան լոյսի փայլփիմունքը, կուչ եկան աչքի պոչերը, երկարելով երկարեցին թերթեռնքները, կապուտիրուեց ճակատը, սրացաւ քիթը, խորշումնեցան այտերը, թափւեցին ծամերը, կուզը զուրս եկաւ, ճռները ծռւեցին, մէկ խօսքով՝ դիմից մինչև կրնկները տիրեց ցաւը: Թէ միշտ կողինքում չէր, ոտքի վերայ էլ չէր: Ներս թէ դուրս՝ շալլ ուսերից վար չէր գալիս:

Նատ անգամ նստում էր լուսամուտի առաջ, աչքերը պաղած մոիկ էր տալիս կչկալով վազող գետի վերայ. աահանքները, ալիքները, պղպջակները, քարերի վրայից փոշիանման վազող կաթիները զրաւում էին ժամերով նորա հանդարս հայեացքը: Քարերի, կզզիակների շուրջը և ափերի մօտը բուսած կանանչները նորան մոտածութիւնների մէջ էին գցում: Գետի ալիքների հետ գնացող ծեղերն ու տաշեղներն նորա հայեացքը տանում էին ու հեռացնում քաղաքի հեռաւոր ծայրը, որոնց հետ ուշքն ու միտքը գնում հասնում էին մինչի անծանօթ ծովերը: Արեւ իւր առաջւան պայծառ լոյսը չ'ունէր Տիրուհու համար, ճառագայթները չէին հասնում մինչի նորա սառած սիրտը, լուսինը պահւել էր մութ ամսերի ետեւ և աստղերը հանգել: Օդն էլ այն քաղցրութիւնը չէր տալիս նորա թոքերին, չէր զւարթացնում նորա գէմքը, քամին նորա սառած ճակատն էլ չէր շոյում և սե սե մազերը ծածանում: Թառամել էր վարդը շատ կանուխ, առանց սոխակի ձայնը լսելու և նորան իւր թարմ թփերում ընկունելու:

Այս զրութեան մէջ յաճախ լեզուին էր տալիս ու ցաւերը ալիք-

ներին յանձնելով՝ տար աշխարհներ էր ուղարկում։ Մեղմ մրմռնջները, որ դողդողալով դուրս էին գալիս նորա շրթունքներից, լուսամուտի փանդախների ծակերից դուրս թռչելով, կորչում էին անհուն եթերի մէջ։ Միմիայն երբեմն այցւած ու խորոված սրտի խորքերից ճեղքելով ու մռնչելով դուրս եկած ա՛խերն քամիների հետ գետի միւս ափին անցնելով՝ լուսամուտի գողում նւազած մի անձի ականջներին թնդանօթի բոմբիւնի պէս խփում, ջիղերը մորմոքում և հին ցաւերը նորոգում էին։

Մերթ թմրութիւնը կոխում էր վերան և երեւակայում էր իւր կշտին նախկին սրտի սիրածին, խօսում էր հետը, համբուրդում էր նորան, գգւում ու շցում։ Այտերը կարմրում էին, աչքերը ցոլում, հրճում ու ծիծաղում։ Նարժում էր գլուխը, ձեռքերը և ոտքերը, սիրտը սկսում էր սաստիկ բարախել... մէկ էլ նւազում էր։ Այս դրութեան մէջ երբեմն լուսամուտի գողից զլորում էր բազմոցի վերաց, երբեմն էլ քովինները օգնութեան էին հասնում ու վրան ջուր սրսկում, ուշքի էին բերում։ Կարճ խօսքով, ծիրուհին մեռած էր, թաղած չէր։

## Ի.

### ՎԱՆ ԳԻ ԴՈՒՐԸ

Դաւիթը վաղուց ատելի էր ծիրուհուն, բանտարկութիւնից յետոյ էլ արհամարհելի գարձաւ։ Քանի որ լսում էր, թէ իւր ձեռքն է ուզում այդ բանտից փախածը, ողջ մարմնով սոկում էր ու սարսուում։ Նշանելու խօսակցութիւնները իրանց տանը դադարել էին և Դաւիթը շահամարդական հաշիւներով շարունակում էր մտնել ու ելնել Անգերենց տունը։ Անցան օրեր, անցան ժամանակներ՝ վարդապետը իւր խոստումը կամաց կամ ակամաց շը կարողացաւ կատարել։

Դաւիթը իւր երեւակայած հաշիւներին աւելի շատ էր սիրահարւած, քան թէ ծիրուհուն։ Նա, հազարաւոր սոկիները մակարերելիս՝ համարեա զժուում էր և մի ահաւոր տան կործանման սպասելով, փառաւոր ապահովւած ապագայի յոյս ունէր, որը չէր կարողացել ձեռք բերել ոչ իւր ճակաաի քրտինքով, ոչ թերի ուժով, ոչ խորամանկութեամբ և խարէութեամբ և ոչ էլ խարդախութեամբ։ Երբ

աչքի առաջ էր բերում իւր ժառանգելիք անհամար կայքն ու կայանքը և իշխանավայել՝ ապարանքները, մտածութիւնների մէջ խորասուզում և ապագային դրանց կառավարելու ու արժանաւորապէս վայելելու ծրագիրներ կազմում:

Այս գեռ հերիք չէր. Դաւիթը մտքով հեռանում էր աւելի և աւելի հեռու: Նա ինքն իրան խօսում էր:—Լուցիա խանումը ունի ժառանգութիւն հարիւր քառասուն հազար լիրայի. բարակացառորդու բաժինը գուրս գալուց յետոյ, իրան կը մնար երեսուն և հինգ հազար լիրայ: Դորանով մտածում էր, որ գծւար գլուխ կը գան իւր նապատակները: Ելի մի այդքան և աւելի գումարի կարիք կար: Եթէ շուտով ընդհատւէր Մարտիրոսի կեանքը՝ այն ժամանակ կը հաներ բաղձանքին. բայց այդ կէտը մութն էր և ժամանակն՝ անորոշ:

Դիսում էր, որ օրէ օր նւազում էր այդ երեխան և բժիշկների անօգուտ դեղերն ու փորձերն մօտեցնում էին նորա օրհասը: Բայց, ասում էր Դաւիթը, կարող է պատահել, հիւանդութիւնով երկար ու շատ տարիներ ապրել: Մարտիրոսը տարւայ մէջ ինն ամիս կողինքն էր ընկած: Տամնութ գարունք էր տեսել, բայց կեանքի մէջ տասնութ անգամ կանանց գալարների մէջ չէր նստել: Մանկութիւնից դորա համար կարւած շորերը անտիրական որբեր էին մաշել, եփւած կերակուրները՝ աղքատներն ու տնանկները կերել: Մի գառն պատիժ էր ու անտանելի վիշտ իւր ծնողների համար: Բայց քանի որ շնչում էր ու շարժւում, նա էր օրինաւոր ժառանգորդը, կամայ ակամայ հարկ էր նորան հպատակել:

Բաւական չէր Մարտիրոսի պատճառով ծնողների քաշած վիշտն ու տառապանքը, սորա վերայ աւելացել էր և Ցիրուհու հալ ու մաշը: Ցիրուհին մօրը յայտնել էր իւր վերջնական վճիռը, որ մեռնելը նախապատիւ էր համարում Դաւթի հետ պսակւելուց: Լուցիա խանումը իւր աղջկայ այս որոշումը փոխել տալու ստիպողական միջոցներ գործ չը դրեց, յոյսը ապագայի փոփոխութիւնների վերայ գնելով սպասում էր: Դաւթին էլ անուղղակի կերպով համարձակութիւն չէր տալիս խօսք ուղելու: Տէր-Կարապետի միջոցով հազորդում էր Դաւթին, որ ինքը տւած պրծած է և աշխատում է աղջկանը համոզելու: Դաւիթն էլ այս յուսով սպասում էր հանելու իւր երեւակայած բաղձանքներին:

Տիրուհին անփոփոխ միշտ իւր որոշման վերայ հաստատ մնաց. ատեց Դաւթին անընդհատ, բայց իւր ուշքն ու միտքը չէր բաժանւում կակոսից: Դատողութիւնը բնազգման չէր կարողանում յաղթել: Սիրել էր ու անկարող էր ետ մնալու այդ սիրուց, թէև իրան յայտնի էր, որ այդ սէրը պիտի կրծէ իւր կուրծքը՝ դուրս գայ և իրան յաւիսէնական հանգիստը իջեցնէ: Նատ անդամ աշխատում էր մոռանալ, ուզում էր հեռացնել իւր մտաւորական տեսութեան առաջից այն պատկերները, այն տեսարանները, որտեղ Կակոսը պաշտեալի և պաշտողի գեր էր կատարել, բայց զուր էին անցնում իւր ջանքերը: Կակոսի տիպը, ձեռքերը կրծքին շարած, ոսների տակը ծունկ չոքած աղերսելիս՝ միշտ ամեն ակնխարթում նորա երևակայութեան մէջն էր: Երբեմն Տիրուհին այն ճանապարհների վերայ էր գարձնում աչքերը, որտեղից յաճախ անցել էր Կակոսը իւր ընկերներով ու բարեկամներով ուռած, փքւած, հպարտացած իւր նազելու սիրովը, և այժմ այդ կողմերը աչքերին այնպէս էին թւում, իբր թէ Կակոսը զջլուած, նիհարած, ամօթից ընկերներին չ'երևալու համար պատերի տակն պահ էր մտնում: Այդ զգացումների մէջ երբեմն զուռում ու ճշում և սթափում էր:

Տիրուհին երկար այս ցաւերը ըլ կարողացաւ տանել, սաստիկ նիհարութիւնից ջղային ցաւեր ունեցաւ և սկսեց մարել: Առաջին անգամին սարսափեցին ծնողները, բայց վերջը վարժւեցին. բարեբաղաբար մարելը թողլ տեսակից էր և երկու րոպէից աւել չէր տեսում: Առաջ լացի նման ծիծաղում էր, արտասունքը թափուում ակունքներից, յետոց թեերն ու սրունգները ձգուում ու տատանւում էին և ամբողջ մարմնով գողում էր, հետզետէ նւազում: շուտով սթափում և այլանդակաբար աչքերը բաց անելով՝ շուրջը մտիկ էր տալիս: Սկզբումը ուշ ուշ էր պատահում, վերջը սաստկացաւ և երեք օրը մի անդամ բռնում էր:

Համի Թաթոս աղան, նամանաւանդ Լուցիա խանումը, ցաւերի ու տանջանքների մէջ տապակում էին, յուսահատ դիմում էին բժիշկների, սակրիշների, պառաւ կանանց, բայց ոչ ոք կարողացաւ օգնել: Զարկեցին, բաղնեցին ամեն տան դուռը ու դատարկ գարձան: Մայրական գութը ամեն տեսակ զիջումն անել տւեց Լուցիա խանումին: Սա իւր խոստովանահօրից դադոնի, դրացիներից թագուն-

Նեխնոց գիւղի մօլլէն կանչել տւեց տունը։ Մօլլէն թասին նայելուց և երկար ժամանակ հիւանդին հոտաւէտ ծխերի մէջ նստեցնելուց յետոյ, թուղթ ու գիր գրեց, կախեց հիւանդի վզից, և հաւատացնելով, որ այլ ես զեկերը նեղացնելու չեն տառապեալին՝ լաւ վարձարութիւնով հեռացաւ։ Մօլլի աշխատանքն էլ զուր անցաւ։

Աշնան վերջերը Եւրոպացի նշանաւոր բժիշկներ էին եկել Խիջէի ջերմուկները քննելու։ Սոցա համբաւը տարածւել էր ողջ նահանգում և ամեն կողմերից հիւանդներին, ցաւազարներին, ախտաւորներին սկսեցին տանել Խիջէի ջրերը։ Բժիշկները լաւ գործ ունեցան և ճշմարիտն ասած՝ շատերին էլ օգնեցին։ Նասերն էլ ջերմուկների օգնութեամբ առողջացան։ Այդտեղ տարան նոյնպէս Մարտիրոսին ու Տիրուհուն։ Բժիշկներն էլ չը կարողացան օգնել Անգերենց հիւանդներին, և յուսահատ ծնողները տուն էին վերադարձնելու իրանց մեղքերի պատիժները։

Խիջէում գտնւում էր «Անարատ Յզութեան քոյրերի» ամարանոցը, որտեղ հաւաքւում էին ամառը տկարութիւն ունեցող կոյսերը։ Փոքրիկ ծառաստանի մէջ գտնւում էր երկարկանի կոկիկ մի տուն, որի ներքեւի մի սենեակը յատկացրած էր մատուռի համար, որտեղ ժամու պատարագ էին մատուցանում։ Այդ օրերը Տրապիզոնից երկու կոյսեր էին եկել այդ ամարանոցը, որոնց հետ գտնւում էր գեղնած ու նւազած մի նորինծաց վարդապետ։ Ամեն օր Լուցիա խանումը Տիրուհու հետ գնում էր մատուռը պատարագ տեսնելու։ Կոյսերը շատ անգամ սոցա վեր էին հրաւիրում մի մի բաժակ կաթնով դայֆայ խմելու։ Երբեմն էլ Տիրուհին տանը նեղանալով գալիս էր կոյսերի մօտ ժամանակ անցկացնելու։ Մեծ քաղաքների մարդիկ փոքրիկ տեղերում իրար հետ աւելի սերտ յարաբերութիւն են կապում։

Մարտիրոսը այդ օրերը մրսել էր և սաստիկ ջերմութիւն ունէր։ Լուցիան բոլորովին Մարտիրոսի հոգսերով էր և, իւր տանջանքները Տիրուհուց ծածկելու համար, նորան հեռացնում էր միշտ իւր մօտից։ Տիրուհին համարեա տասն և հինգ օրւայ աղատ ժամանակները կուսանոցում անցկացրեց։ Միշտ իւր հետ կարելու գործ էր տանում և երկու թելից աւել չէր կարողանում կարել։ Խօսակցութիւնով էր անցկացնում ժամանակը և նորա հարցասիրութիւնը գոհացնում էր կոյս Մարթան։

— Քո՛յր իմ, ասաց մի օր Տիրուհին, ձեր կենդրոնական վանքում վարժարան էլ ունի՞ք:

— Ե՛ն, ի՞նչ էք ասում, օրիո՛րդ, մեր ուսումնարանը իւր նմանը չունի Կ. Պօլսում: Մեր մայրապետաների առաջնորդութեամբ կուսացուների ոսկեթելերով կարած ձեռագործները Եւրոպայի թագուհիներին ներ են ուղարկում: Անցեալ տարի թագաւորազուն մի իշխան իւր տիկնոջ հետ մեր վանքն այցելեց: Ես գեռ այսուեղ էի: Մի մետաքսէ պատի գորդի խիստ շատ հաւանեցին, որը մեծ-վեզիրին նամասզլուղի համար էինք գործել, բայց սխալմամբ վերան երկու թռչնիկ բանւած լինելով, (կենդանու պատոկերով գորդի վերայ մահմեղականները չեն ազօթում), մի ուրիշը գործեցինք, ուղարկեցինք ու այդ մնաց: Մեր մայրապետը խնդրեց, որ բարեհաճեն վանքի կողմից այդ գորդը լիշելիք լնելունեն: Նոքա տարան, բայց գիտե՞ս վանքը որքան նշանաւոր բարեկամներ ունեցաւ և ի՞նչ աստիճան բարձր անձերի սիրաը շահեց: Երեք ամիս յետոց վանքին երեք հարիւր ոսկի էին ուղարկել, որով մի կղպակ գնեւեց Կ. Պօլսի Բէզէզթէնում, որ վանքին տարին երեսուն ոսկի մուտք է բերում:

— Ազգափախ մեծ հիւրեր շա՞տ ե՞ն գալիս:

— Ի՞նչպէս չէ: Տարին հարիւրաւոր եպիսկոպոսներ, նւիրակներ, բէգեր, իշխաններ, դքսեր, մարքիզներ պատում են մեր կուսանոցը:

— Ո՞րքան կոյսեր կան ձեր միաբանութեան մէջ:

— Նաուոր չենք, զեռ նոր է բացւած մեր ուխտը: Քառասուն և հինգ հոգի ենք, բայց պատրաստւած տասն և երկու օրիորդներ էլ կան, որ առաջիկայ դեկտեմբերի իննին պիտի ուխտեն:

— Ա՛յս, երանի թէ մայրս ինձ ազատ թողնէր, ես էլ մի օր կարողանայի այդ սե շորերը հագած, վարդարանը կուշտս կախած՝ ձեր վանքին անդամ կոչւելու:

— Մա՞յրդ, մա՞յրդ. մի՞թէ նա հակառակում է ձեզ: Ասուած մի՛ արացէ: Օրիո՛րդ, նա աշխարհին քարոզում է՝ սրբութիւն, ջերմուանդութիւն, սէր և անձնուրացութիւն Յիսուսի և նորա «ամենօրհնեալ անարատ յղացեալ մօր» համար, մի՞թէ կարծում ես, որ քո վանք մտնելդ նորան հոգւով չը պիտի միսիթարէ:

— Նատ անգամ ինդրել եմ, աղաչել, պաղատել, լացել, կոծել, ձեռքն ու ոտքը համբուրել. բայց զ՞ւր, ոչնչով չեմ կարողացել նո-

բան կակդացնել, միշտ սասակել է, միշտ բարկացել և օրերով տրոմել ու տիրել իմ կամակորութեան վերաց:

— Աչ, օրիո՞րդ, ո՞չ, սիսալում ես Մայրդ աչքի առաջ ունենալով քո գեռահասութիւնը և մտածելով, որ զեռ չես մտած այն տարիքը, որտեղ կարելի է առողջ դասողութեամբ վճռել այսպիսի մի ծանր հարց, աղայական ցնորքների է վերածել քո խօսքերը և փորձել քո հաստատամոռութիւնը: Բայց մի՞թէ կարծում ես, որ մայրդ կը փոխէ յաւիտենականութիւնը այս փուճ աշխարհի ունախն փառքերի հետ և քեզ կը խնացէ մեր շամենօրհնեալ անարատ յղացեալ մօրը» որգեզրելու:

— Քո՞յք, ել ի՞նչ մեծ փառք պիտի ցանկամ աշխարհումն: Իմ աշխարհը անցաւ և ես միայն հոգեւոր զբաղմունքներում պիտի գոնեմ իմ միսիթարութիւնները:

— Եթէ հաստատ պատով ցանկանում ես, ուրեմն կոչումն էլ ունիս և կը համաս բազծանքիդ:

— Ահա՛, ո՞րքան ժամանակ է, որ այդ մտադրութիւնը ունիմ:

— Թէ բարի է, Աստուած կատարէ, օրիո՞րդ:

— Ամէ՛ն, ասաց քոյր Մարթան:

Լոռութիւնը տիրեց մի քանի վայրիեան:

— Օրիո՞րդ, ասաց քոյր Մարթան, որքա՞ն մեծ կը լինի մօրդ ուրախութիւնը, երբ մի օր յանկարծ քեզ այս կուսական քողի տակ տեսնէ: Ուրախութիւնից խելքը պիտի թուցնէ և մայրական ջերմ համբոցներով ծածկէ երեադ: Տասը տարի ես մօրս չը տեսայ: Նա էլ սկզբում շատ դէմ կացաւ իմ վանք քաշւելուս: Բայց երբ ինձ մեր Անկիւրի քաղաքում վանատուն բանալու ուղարկեց գերերջանիկ հայր Հասունը, զնացի ու մօրս տեսայ: Նորա ուրախութեանը շափ չը կար: Բոլոր իմ ծանօթ աղջիկները, որոնցից շատերն արդէն մայրեր էին դարձել, ինձ երանի էին տալիս: Երկու օրւայ աշխարհի դառնութիւնների հետ ինչի՞ կապւենք:

— Մայրդ որ համաձայն չեր, ի՞նչպէս զնացիք:

— Դրանից ել հեշտ բա՞ն: Մի կոյս էր եկել մեր քաղաքը, որ երկու աղջիկ տաներ և. Պոլիս՝ վանքը: Ես էլ խօսք մէկ արի այդ կոյսի հետ, զնացի մութն ու մութը ու, նոյա կառքի մէջ տեղաւորւելով, ճանապարհ լնիաց: Աստուած կանչել էր, առն կողմից էլ

յաջողւեց, ես մտայ վանքը, պատրաստեցի, ուխտեցի և բաղձանքիս հասայ:

—Քեզ տարան, բայց գուցէ ինձ տանող չի լինի:

—Վանքի դուռը բաց է մեր «ամենօրհնեալ անարատ յղացեալ մօր» գիրկը դիմաւորողների համար: Յանկացողները ամեն օգնութիւն կը գտնեն:

—Ինձ չէք կարող ուղարկել, ասաց գողալով Տիրուհին:

—Ինչի՞ չէ, երբ որ կամենաս:

—Ես միշտ պատրաստ եմ, կարմրելով ասաց Տիրուհին, դուք ե՞րբ կարող էք ուղարկել:

—Մենք շուտով ճանապարհ պիտի դուրս գանք:

—Ե՞րբ:

—Վաղը կամ միւս օրը:

—Ուրեմն միասին գնա՞նք:

—Եթէ ցանկանաս, տեղ շատ ունինք:

Տիրուհին բորբոքւեց և սիրող սաստիկ բաբախում էր: Նորա երեակացութիւնը թուաւ հեռու տեղեր և շրթունքները չին շարժւում խօսելու: Քոյր Մարթան զնաց երկու, երեք սրւակներ բերեց, հոտոտեց և հոտոտել տւեց Տիրուհուն: Մի քիչ լցրեց ացդ սրւակներից բուռը, արորեց Տիրուհու ճակատը և քոնքերը: Տիրուհին ուշի եկած, խեղդւած ձայնով ասաց.

—Քո՛յր, շատ շուտ ինձ ացդ վանքը հասցրէք:

—Նա՛տ բարի, շա՛տ բարի, համբերէ այս իրիկուն, վաղը արշալցասին կրկին արի՛ այսոեղ և ճանապարհ դուրս գանք:

—Լա՛ւ, ես կը գամ շատ վաղ:

—Գիտե՞ս, օրիո՞րդ, ասաց քոյր Մարթան, մօրդ նեղութիւն մի՛ տալ, թող չ'իմանայ մինչւ մեկնելդ ու վանք համնելդ: Յետոյ կը գրես վանքից, որ քո փափագիդ և իրան բաղձանքին հասար: Այն ժամանակ ամեն բան կը մոռանայ և միշտ աղօթող կը լինի քեզ համար, որ մեր «ամենօրհնեալ անարատ յղացեալ մայրը» քեզ իւր շնորհքների մէջ սլահէ: Նամանաւանդ, որ նա արդէն շատ նեղութիւն ունի այս օրերս խնամելով եղբօրդ՝ Մարտիրոսին, թող նորանով զբաղւի և շուտով քեզ մոռանայ, որպէս զի թեթևանայ իւր քեռը:

— Եա՛տ բարի:

— Ոչնչի հոգ մի՛ քաշիլ, ամեն բան պատրաստած է մեր «ամենօրհնեալ անարատ յղացեալ մայրը» իւր սիրելիների համար: Դու միայն սովորական ժամից մի քիչ շուտ մատուռն արի':

Իլիջէի զայմագամը առաւօտը ժամի տասին իւր ձիաւոր ոստիկաններն Պարխար լեռների կողմերը ուղարկեց անցնող ու զարձող լազերին քննելու ու փնտուելու փախցրած մի քրիստոնեաց աղջկաց:

Ամեն տեղ ատում էին՝ «անպատճառ լազերը տարան»:

Այդ օրը լազերը իրանց էշերի կարաւաններով անցան դաշտից, մասն իրանց ձորերն ու անտառները՝ անհետացան: Սովորական երևոյթ էր աղջիկ փախցնելը, էլ ո՞ւմ մեղքը կարելի էր աւնել: Տիրուհուն փախցրել էին:

(Կը շաբառնակւի)

## ԵՐԳ ԵՒ ՄԵՏԱՂ

ԱՐԾԻԻԵԱՆԻ

Երգիչը քեզ երգ նըւիրեց,  
Մեծատունը — իւր ոսկին.  
Երգիչը քեզ «կեանք» տնւանեց,  
Մեծատունը — «սիրուն կին»...

«Ճնշը ինձ ձեռքդ» — հարուստն ասաց —  
«իմ ողջ գանձը քեզ պարգև».  
Իսկ երգիչը սիրուց տանջւած՝  
Միայն ողբաց քո առջե...

Բայց դու, զաւակ փարթամ կեանքի,  
Երգչի երգը մերժեցիր  
Եւ քո սիրուը ժանդ-մետաղի  
Խաւար փալին զոհեցիր...

Մօսկով. 8 ապրիլի, 1889 թ.

# ՅՈՎՅԱՆՆԵՍ ՅՈՎՅԱՆՆԻՍԵԱՆԻ ԲԱՆԱՏԵՂԺՈՒԹԻՒՆԸ

Գ Ն Ն Ո ւ Թ ի ւ ն

Ա. Ք Ա Լ Ա Ն Թ Ա Ր Ի

Մեր առաջ դրւած է պ. Յովյաննիսեանի բանաստեղծութիւնների գրքովկը՝ տպւած. Մօնկւալում, 1887 թւականին. Ազդ գրքովկը լուս ընծագելուց լետու, պ. Յովյաննիսեանը հրատարակել է «Աղբիւր» ամսագրում և Մօնկւալի «Հանդէս»-ում մի քանի ոտանաւորներ:

Մենք կը խօսենք միայն առանձին հրատարակւած գրքովկի մասին: Ընթերցող հասարակութիւնը կարող է նորան հեշտ իւր ձեռքին ունենալ և, որչափ լսում ենք, հասարակութիւնը բաւականին ուշադիր է եղել դէպի մեր նոր բանաստեղծը: Ազդ գրքովկից զուրս գրած ոտանաւորների մէջ արդարե կան շատ գեղեցիկ տողեր, բայց չեն նշմարւում դեռ այնպիսի նոր գալլապիկներ, որոնք անծանօթ լինէին գրքովկի ընթերցողին: Ուստի գրքովկի մէջ ամիտիած բանաստեղծութիւնների մասին ասածները մերձաւորապէս ձիշդ կարելի է համարել և առհասարակ մինչև այժմ լուս ընծագւած ոտանաւորների համար:

Ամենքը ողջունեցին պ. Յովյաննիսեանի երևալը, որովհետև վերջապէս տեսան բանաստեղծ, որ ուշադիր է զգացմունքների կեանքին և որին հետաքրքրում են թէ իւր և թէ շրջապատկների սրտի լուզմունքների ելեէջները. կարդացին երդեր, որոնք ակնարկում են աղնւութեան, ոսկի երազների, քաղցր մեղեղիների և վերին թուչքների մասին, որոնցով այնքան աղքատ է մեր առօրիհայ անբանաստեղծական կեանքը: Եւ ազդ բոլորը — գրւած աղատ գրչով, որ չէ վարանում բառեր գտնելու իւր սրտի զեղմունքը արձանագրելու:

Ընթերցողը կարգաց, գնահատեց և պ. Յովյաննիսեանին ուրախութիւնով ընդունեց մեր սակաւաթիւ բանաստեղծների շարքը:

Շնորհաւորում ենք՝ մեր հասարակութեան մէջ ազդ նոր բանաստեղծի գալուստը, բանաստեղծի, որի գասակարդին է վերապահւած, ըստ աւանդութեան:

դութեան, խօսքով թնդացնելու սրտի լարերի ամենանուրբ շարժումները և արձագանք լինելու մեր հոգեկան կեանքի փոխիսութիւններին:

Խակական բանաստեղծներ մեր մէջ հազւադիւտ են և այդ պատճառով շատ կարեոր է, որ մենք գիտակցարար վերաբերմնք դէպի ան նոր երիտասարդները, որոնք փորձում են խօսել մեր զգացմունքների, մեր երեւակալութեան աշխարհից:

Ընդունելով ալ. Յովհաննիսեանի մուտքը մեր հասարակութեան չըջանները կատարւած և նորա բանաստեղծութեան ընդհանուր արժեքը լաւ կողմից գնահատւած՝ թուլ ևնք տալիս մեզ՝ խօսելու մեր առաջ դրած գրքովի մասին, աւանց չանձնարարականների:

Մեր լողւածը կը բաժանենք երկու մաս՝ ընդհանուր և մասնաւոր: Առաջինում կը խօսենք ընդհանրապէս պ. Յովհաննիսեանի բանաստեղծութիւնների մասին, որոշելով նոցա որականութիւնը, բավանդակութիւնը և արտադարձում ձեր: Երկրորդում կը քննենք, իրեն նմուշներ, ոտանաւորների մի ամբողջ շարք, ցոց տալով նոցա՝ իրեն առանձին գրւածքների՝ առանձնակատկութիւնները:

## I

Պ. Յովհաննիսեանը իւր գրքովիով ովեորւած գրողի տպաւորութիւն է թրզնում ընթերցողի վերաբ: Նա խօսում է անդադար, չաճախ կրկնելով իւր գիմառնութիւնները, առաջարկելով իրան խնդիրներ և զանազան տեսակ նոցա ձևակերպելով: Չը նակելով զորան՝ ընթերցողը այնու ամենանիւ չէ կարողանում պարզել իւր չարաբերութիւնները դէպի նոր բանաստեղծը և մեսմ է վերջի ի վերջու տարակուսած:

Ոտանաւորների լուվանդակութիւնը, նոցա մէջ չափանած բանաստեղծի հակեացքները զեռ պարզ գաղափար չեն տալիս մեղ՝ թէ ինչն է իսկապէս պ. Յովհաննիսեանին ովեորուզը. ինչն է կազմում նորա ներքին իոդը. թէ ինչ կարելի է սպասել նորանից ապագացում:

Թէ ոտանաւորների մէջ չափանած հակեացքները խառն են, այնուամենանիւ փորձենք նոցանից մի քանի եղբակացութիւններ դուրս բերելու: Տեսնենք՝ դիցուք՝ ինչպէս է վերաբերուամ բանաստեղծը դէպի բաղդը, դէպի երջանկութիւնը, Ոտանաւորների ընթերցումից աճնպէս է դուրս գալիս, որ բանաստեղծը բաղդին չափակացնում է անդորրութիւն, փափկութիւն և անգործութիւն: Կա ասում է:

Անտեղ դգում եմ փարթամ երջանիկ  
Գըլորուելու ևն իմ կեանքի օրեր,  
Աչագեղ կուսը հակեացք չքնաղիկ  
Պարզնում է ինձ և սրբանուէր

Նոճիների տակ պիտ' գլուխըս հանգչի  
Նորա մարմարին կուրծքին նազելի... (Երես 4)

Այդ տեսակ որոշումներ շատ են կրկնում գրքովկում. Բանաստեղծը շատ մեծ նշանակութիւն է տալլա այդ առօրեակ հասկացւած լազղին—ամեն տեղ հրճւանքով է խօսում նորա հրապուրների մասին և նորան իր դէալացնում է՝ օժտելով շատ գրաւիչ պարագաներով; Կարծես թէ զգացական կեանքը արդէն շատ հեշտ ձեռք բերելու բան է և կամ լարատե ու մեծաբովանդակ ուրախութեան մի աղբիւր է:—Գիռ շատ վիճելի խնդիր է, թէ խկապէս որչափ է աշխարհում շաղողւում անպիսի մի կեանք, որտեղ միան զւարձութիւններ վնէին, խակ ցաւերը, առօրեակ հոգսերը՝ բացակաչ: Բանաստեղծը տալիս է հետեւեալ բացասարութիւնը.

Երջանիկ մի օր ես մտածում եմ  
Բազգը չի բանսկ երբէք ինձ համար...  
Զէ կարող եի և ես բիրտ ովտով  
Կամ մի ստորաքարշ շողոքորթութեամբ  
Հաշտուել մարդկանց հետ և պատաժ ոսկով  
Հռչակ ստանալ պատուաւոր անուամբ.  
Բայց ոչ, չը կամիմ զըլուս խոնարհել... (Երես 42)

Բանաստեղծը ալղպիսով կարծում է, որ երջանկութեան նա կարող է հասնել, եթէ միան համաձանի իրան ծախսի՝ ուրիշին շողոքորթելով կամ բիրտ ովտ գործադրելով: Եւ որովհետեւ երջանկութիւնը ձեռք է բերում այդ տեսակ, ուստի բանաստեղծը հրաժարում է նորանից: Բայց այն, ինչ որ բանաստեղծը հականերկաչացնում է երջանկութեան՝ այնքան ներքին ուրախութիւն, հոգեկան երջանկութիւն չէ իւր մէջ ներկայացնում, որչափ զոհ, զրկանք, տանջանք և նահասակութիւն: Մինչդեռ ընթերցողը սպասում է բանաստեղծից, որ նա մի ուրիշ երջանկութեան պատկեր բանաչ նորա համար, մի անպիսի երջանկութեան, որի առաջ ամենավ զրկանք և զոհ կորցնեն զրկանքի և զոհի նշանակութիւնը. ինչպէս հին ժամանակում ճղնաւորի անտանելի կեանքը համարում էր դէպի Աստուած ունեցած սիրոյ առաջ—երջանկութիւն:

Բանաստեղծը կարծես այն հին կարծիքին է, թէ երջանկութիւնը ապրում է հովուերգական, նահապեատական աշխարհում, Արկադիացում, և նա կորչում է այն բոլոր տեղերում, ուր տալիս են զիտակցութիւն, չար ու բարու աւելի իրական հասկացողութիւն: Առանձին շնչարով՝ նա խօսում է գիտութեան թունի մասին, նա ասում է.

Գիտութիւնը ինչպէս մի թուն զանդաղկոս  
Աննկատելի վարակեց հոգիս,

Ինչպէս ցուրտ ձմեռ միտքըս կասկածու  
Քաղեց, խորտակեց ծաղիկը կեանքիս... (Երես 44)  
Բայց այն օրից՝ երբ ողջո՞նս հրաժեշտի  
Իմ մանկութեան քաղցր օրերին ևս տըւի  
Երբ ես թոնը ճաշակեցի գլուխութեան՝  
Երբ խողալիք դարձաւ մարդկանց նենգութեան... (Եր. 84)

Այդ տեսակ հասկացողութիւն ունենալով գիտութեան թոնի և առօրեակ բաղդի մասին, բանաստեղծը հեշտ հիմնափակում է նախկին իդէալ-ների վերաբերմամբ և հեշտ է տրամադրուում կարծելու, թէ նա արդէն մաշել է, ծերացել, և լայնուում է այս խոստովանութիւնը.

Զգում ևմ արդէն հանգչում է հոգիս  
Եւ չը կաէ բոցը ոգեսորութեան  
Զուր է քո խրախոչս, զուր է, սիրելիս,  
Եւ ինձ չի ծագի արել գարնան...  
Վառվուն կեանքից ես զեռ չը քաղած  
Եւ ոչ մի ծաղիկ, արդէն ուժասպառ  
Ընկած ևմ որպէս մի ծերուկ մաշուած,  
Եւ վայելչութիւնն արդէն ինձ օտար... (Երես 58)

Եւ սկսում է տրտունջ, լայ, կոծ, անվերջ տանջանքներ և թախիծ և այն՝ մի հիմնափակած մարդու լուսահաստական թախիծ։ Նիշդն ասած՝ այդ թախիծը լուրջ տպաւորութիւն չէ գործում, նա սենեկափն բնաւորութիւն ունի, նա զուրկ է խոր հիմունքներից բըղ-խած պատճառաբանութիւններից։ Եւ այդ պատճառով ընթերցողի աշքում նա ստանում է մի տեսակ նմանողութեան, արհեստականութեան կնիք, իժւար է երևակակել, որ մեր երխասարդ բանաստեղծը իսկապէս լինէր տանջւած, հալածւած և այն էլ խաւարից, մոլեռանդութիւնից (Երես 107—108) և ուրիշ արհաւիրքներից։

Թախիծ, լուսահաստութիւն լսում է շատ ուսանաւորներում, որոնց ազստեղ առաջ բերելը աւելորդ ենք համարում։ Խառն զգացմունքների աղջեցութեան տակ բանաստեղծը հակասութիւնների մէջ է ընկնում, աշխատում է բացատրել իւր այդ զգացմոնքների, իւր թախիծի պատճառը և երբեմն կարծելով, թէ արդէն գտել է նորան, նա ուզում է իրան մի կերպ հաշտեցնել և՛ վայելչութեան և՛ փշոտ ճանապարհի դաղափարների հետ և ասում է.

Եւ ես ասում եմ վայելչութիւնը  
Կեանքի անխորհուրդ ևուն ինջուրի,  
Ուր տիրապլուխ է սև չարութիւնը,  
Բուրմունքը չը կաէ սիրավառ սրտի։ (Երես 82)

Աշխարհ, ևս քո կը հաւատամ վաչելքին,  
Կը հաւատամ երջանկութեան մարդկալին,  
Երբ որ ձգես զու կեղծաւոր՝ այդ դիմակ,  
Երբ ողջոնես մի նոր կեանքի արեգակ.  
Երբ անխնաւ արդարութեան խարազան  
Քո սրտիցը խըլք սերմը չարութեան  
Եւ ականջը բանակ լըսել երկնալին  
Անմահ սիրու սուրբ բարբառը անմելին:      (Երես 85)

Եւ բանաստեղծը զգում է, որ կարող է միսիթարւել, որ կարող է  
հասնել լաւ վիճակի.

Կը զատ և մի օր քո վառ արշալուս,  
Դու կը մոռանաս անցեալի ցաւեր...  
Կ'անցնէ խաւարը մոլեռանդութեան  
Կը զատ նոր սերունդ, զգալու ընդունակ...

Ի՞նչ ուրիշ միտք կամ խնդիր ենք գտնում զրքովի մէջ, որոնց մէջ  
ցոլար բանաստեղծի աշխարհահաւացքը: Մի քանի տեսակ փորձեր կան,  
որ ո՞ք սական չեն բնաորոշում մեր բանաստեղծին: Գաղափարները կամ  
փիլսոփիալութիւնները, որ մտցնում է բանաստեղծը իւր ստանաւորների  
մէջ, նորութիւն կամ մի առանձին թարմութիւն չեն պարունակում իրանց  
մէջ և ալդալառվ ստանաւորները ուժեղ ապաւորութիւն չեն գործում: Փի-  
լսոփիալութիւնները չառ են աւանդական: զորօրինակ՝ համապատասխա-  
նում են մի որ և է առածի: դիցուք՝

Մի թիզ հող է մեր բաժինը      (Երես 23)

Մեր կեանքը վաղանցիկ է      (Երես 16)

Պատանին կը ծերանակ      (Երես 13)

Հող էիր և հող դարձար      (Երես 20)

Ուրախութիւննից վիշտ      (Երես 111) և այլն:

Ձոկ բան է, երբ ասելու մէջ մի որ և է նորութիւն կալ—այն ժա-  
մանակ ոտանաւորը կարող է խոհապէս հետաքրքրել: Իրմէ նմուշ մի ոտա-  
նաւորի, որտեղ մտքի արտադապութեան ձեր փոքր ինչ նորութիւն, ինք-  
նուրայն մշակում է ներկալացնում—առաջարկում ենք ընթերցողին «Երկու  
համբուրը»:

Պ. Յովհաննիսեանը վիրաւի դնում է ամբոխի խնդիրը, րազց երեա-  
կալում է, կամ միշտ նկարազրում է ամլախի կեանքը տանջանքներով,  
տառապանքներով վիքը, միշտ աղքատ, միշտ տարազիր: Այն կերպ են  
դասաւորած մաքերը, որ կարծես, եթէ ամբոխը լիներ երջանիկ—բանաս-  
տեղծը ամբոխով հետաքրքրւելու նիւթ չէր ունենալ: Ամբոխը ամբոխ է

և նա ունի իւր ուրախութիւնը և ցաւը. նա երգում է և լաց է լինում. Ովսիրում է ամբոխը, նա ողևորում է նորա ուրախութիւնով և ստեղծագործական ուժով, նա տաճում է նորա ցաւով. նա արձագանք է նորա բոլոր կեանքին. Ոտանաւորներից մարդ չէ կարողանում մի որ և է զաղափար կաղմել, թէ ինչ դրական զգացմունքների կամ մտքերի են համապատասխանում՝ վաստակաւոր, ճնշող շղթայ ստրկութիւն և ուրիշ այդ տեսակ բառերը:

Մի քանի խօսք պ. Յովհաննիսեանի մտածելու և լորինելու ձեփ վերաց. Պ. Յովհաննիսեանը նախ իւր գրւածքների մէջ շատ սուբիեկտիւ է, զբաղւած իւր անձնական զգացմունքների զարգացումով, իւր սրտի, կեանքի փոփոխութիւններով: Եւ դա առ ալժմ մեր նոր բանաստեղծի շատ լաւ ցատկութիւններից մէկն է: Հայ գրականութիւնը սուբիեկտիւ բանաստեղծներ քիչ ունի Ազգակի բանաստեղծներից է Շահազիկեանը, որի քնարը շատ շրտ լրեց կարճ ժամանակեալ վառուն գործունէութիւնից կտոր: Շահազիկեանը փորձեց չը թագցնել իւր զգացմունքները, չ'ամաչել ասելու, որ նա սիրում է, լացում է, ծիծաղում է, տիրում է, ցաւում է, զմալում է, հիասթափուում է: Մինչդեռ մեր բոլոր հին կեանքը ամաչում էր զգացմունք լաւտնելուց, աշխատում էր ամեն տեղ լինել խելօք, խորհող, մտածող, զգացմունքներ զսպող, զգաւականութիւն սանձող և ալճն: Կար մի ուրիշ շատ լարգելի և հասկանալի պատճառ զգացմունքների քիչ չափով արտավագտւելուն. դա հասարակական կեանքի հանգամանքներն էին, որոնք պահանջում էին սակաւաթիւ հասարակական գործողներից և գրողներից—հասարակական զգացմունքների և սիրած գաղափարների ընդհանուր և լուրջ արտավաշտութիւն և ոչ առօրեակ ցաւ ու խնդումի ժամանակագրութիւն: Թէև հասարակութեան զրութիւնը շատ էլ չէ փոխաւած՝ աճնու ամենաճնիւ նա ալժմ շատ ընդհանուր բաներ գիտէ և պահանջում է բանաստեղծից մի կողմից զգացմունքների աշխարհի ծաւալում, լայնացում, միւս կողմից խկական ոգերութեան թարմ և սրաւաբուզի զգացմունքի, սիրտ թափանցող և վառող գաղափարների ուժովին արտավագտութիւն: Այդ պատճառուի հասարակութիւնը հետաքրքրում է ամեն մի անկեղծ անձով, որ ուշադիր է իւր զգացմունքների անարատ և հարազատ արձանագրւելուն, թէկուղ նա ժամանակաւորապէս զբաղւած լինի զգացմունքների աւելի սահմանափակ շրջանով:

Ի հարկէ պ. Յովհաննիսեանը պէտք է նոր և ուժեղ ապացուցներ տալ ալյունետն, որ նա ոչ միան զգալ գիտէ, ալ և գիտէ զգացնել, ոգեուրել, թարմացնել, որ նա լայնացնում է իւր զգացմունքների, մտածմունքների ծաւալը և բարձրացնում է նոյա ամփոփը:

Իսկ ալժմ պ. Յովհաննիսեանի գրքովիը այդ կողմից միան մի քանի ակնարկներ է տալիս մեզ, և այն ոչ բաւականաչափ լաջողւած: Հասարակական զգացմունքները շատ են ընդհանուր կերպով ներկաչացրած, իսկ

ժողովրդականութիւնը, որի փորձերը պատկանում են վերջին տարիներին, — հարած, արհեստական, շինծու։

Պ. Յովհաննիսեանի ոտանաւորների վերաէ բացի ուրիշներից ազդած են Շահազիզեանի բանաստեղծական զրւածքները։ Դրելու և յօրինելու եղանակները, բառերի ընթրութիւնը, նոցա դասաւորելու ձեւը—ցուց են տալիս, որ Շահազիզեանը ունեցել է, լանձին պ. Յովհաննիսեանի, շատ ուշադիր և գրաւած ընթերցող։ Շատ օրինակներ չը բերելու համար, առաջ բերենք ազատեղ երկու ոտանաւորներ՝ մէկը Շահազիզեանի, միւսը՝ Յովհաննիսեանի մինոն նիւթի մասին իւրաքանչիւրից հանած երկու-երկու տուն։

### Շահազիզեան

Եւ ես երբմն երգում էի  
Անհոգ քնարիս լարերով  
Գեղեցկութիւն միակն ուրի,  
Վառուած նորա լուղմուն քով։

Ես զօրացաւ խորտակեցի  
Այդ մուզավի բռնութիւն  
Եւ սերտ սիրով աղջունեցի  
Քրտնաշան աշխատութիւն։

### Յովհաննիսեան (երես 93)

Երբ մատաղ մուսաս ժայխտն երեսին  
Առաջին անգամ ինձ երևեցաւ.  
Միակն գեղեցկութեան, սիրու պատկերին  
Երկրագելու ինձ պատուէր տուաւ։

Անցան տարիներ, և ներքին մի ձայն  
Մի նոր հուր վառեց իմ լուղուած հոգում,  
Երբ վըրաս լիչպէս կապար ծանրացան  
Կեանքի սիրուքը, մարդկան չարութիւն։

Պ. Յովհաննիսեանը ունի իւր գրքում թարգմանութիւններ, որոնց կարելի է ըստ մեծի մասին համարել չաշողւած։ Մենք շատ քիչ ունինք լաւ թարգմանիչներ, և պ. Յովհաննիսեանը պէտք է շատ մեծ տեղ բռնի մեր թարգմանիչների շարքում։ Ճիշդ է, Նաղսօնի ոտանաւորների բնագիրը աւելի ուժեղ տպաւորութիւն է թողնում, քան պ. Յովհաննիսեանի թարգմանութիւնը, քաց և աճնպէս ընթերցողի համար զգալի է, որ լաւ գրողի ձեռքին է թարգմանութեան նիւթը։

Այժմ՝ խօսենք պ. Ցովհաննիսեանի լեզուի մասին. Լեզուն հարուստ է բառերով, դարձւածներով և ընտիր նախաղասութիւններով։ Չորորինակ, գեղեցիկ է ձևակերպած այն միտքը թէ՝

Ուր միան մէկի ճառն երջանկութեան  
Բուժնում է տասի աւելակներից,  
Ուր մի ժպիտը ծաղկում է միան  
Հարիւրաւորի աղի արցունքից... (Երես 55)

Ես էլ մոռերիմ քեզ հանդէս ելաց  
Կոռուին բերելու ոգնորութիւն, և ալն։

Բայց այդ բառերը շատ են լզկած, շատ են չքեղ և շատ են օլիմպիական կազմածքի. ուստի իրանց կրկնութիւններով նոքա մի տեսակ միօրինակութիւն են առաջ բերում։ Ընտիր բառերով գրաւելը հասցրել է գրաբարականութեան, խրթին ասացւածների, անհասկանալի, անբովանդակու սխալ նախաղասութիւնների և առհասարակ բառամոլութեան։ Բերենք օրինակներ։

Ոտանաւորների մէջ ալնակս են տարւած խօսքերը, որ սալում է ասել՝

զ լ ո ւ ի ս ա շ ի ս ա տ ա ւ ո ր ի ,  
կ ա չ ծ ը խօսքի ,  
ո չ ք և ալն։

Ի՞նչ են նշանակում 4-րդ և 5-րդ տողերը հետեւալ ոտանաւորում։

Ակտեղ պերճափառ վարդ չէ բուսանում  
Միան տատասկը և փուշը վայրի  
Եւ կեանքը մեռած և օղը խեղդող,  
Սրտացաւ խնամք, եթէ ալդ լինէր,  
Միշտ երախտամոռ հողուց ոտնակոխ.  
Չէ ժպտում արե, սեաթոյր ամպեր  
Գոռ փոթորիկ են երկրին զուշակում։

Չորրորդ և հինգերորդ տողերը հասկանալու համար հարկաւոր է շատ մտածել և զանազան ենթաղբութիւնների դիմել։ Երբեմն բոլորովին մութ են մնում ամբողջ տուններ կամ ամբողջ ստանաւորներ. զորորինակ, ալդակս է «Առաւոտս անցաւ» ոտանաւորը։

Զարմանալի տեսակ են և մի քանի համեմատութիւնները. Դեռ կարելի է երեակակել մի կերպ՝ «շրթունքը քաղցր է մողրից»։ Բայց ի՞նչպէս մարդ հասկանալ «քաղցր ինչպէս կնդրուկ» (106 Երես), «նազելի կուրծք» (Երես 4) և ալն։

Բառամոլութիւնը նկատելի է ոչ միան պ. Ցովհաննիսեանի, ալլ և ուրիշնե-

րի գրւածների մէջ և դա կարծես թէ մի ժամանակակից ախտ է դառնում: Քիչ է մնում, որ մի կացնի, մի քարի, մի աղբիւրի՝ մասին խօսելուս ևս այնքան էլ ընտիր բառեր կուտակեն, որչափ և «ոսկի երազների կամ ամօթխած կուսի» մասին: Եւ այդ շատ հեշտ է լաւաճնի բառերի միջոցով: Բաւական է, եթէ կացնի անդ ասւի՛ տապար, քարի տեղ՝ վիմ կամ խիճ, աղբիւրի փոխարձն՝ աղբերակ կամ վտակ և ալճ: Ալդպիսով միտքը սրօղւում է բառերի ծանրութեան տակ: Դիցուք՝ դուք կամնում էք մի հասարակ միտք լավաճնել, որի մէջ ոչ մի առանձին բանաստեղծական բան չը կաչ: Պորօրինակ, «ես նստած էի սարի գլխին և խորոված էի ուստում»: Դուք կարող էք բառեր կուտակել այդ կարծ նախաղասութեան վերաց և տպաւորութիւն զործել, մերձաւորաբար ալպէս:

«Ես նստած էի հոկաէ լիուան ահեղ գաղաթին: Զմրխաւեակ արօտը իւր կանաչ թաւիչով արքական զորդ էր սփուել սովորիս տակ: Լսում էի առւակի անհոգ խոխոջիւնը, նորա արծաթի ձանով մրմնջող քրքիջը և ուտում էի... Ներողութիւն, ալդպէս չէ կարելի—և անձնատուր եղած լինութեան կեանքին, կլանում էի ադան նորա բարիքը—ալդ արօտների հարազատ գառնուկի խորովածը»:

Ես ինձ թող տւի ասս փոքրիկ օրինակը բերելու ան նպատակով, որ ցոյց տամ, թէ ի՞նչպէս կարելի է բառերի միջոցով տպաւորութիւն զործել առանց մեծ ողեսորութեան, առանց բանաստեղծական խորին ներշնչումիւն: Պ. Յովհաննիսեանը փոքր չափով նողնպէս մեղանչում է, և կարեսը համարեցի աղժմեանից իսկ կանգ առնելու ալդ կէտի վերաց, որպէս զի մեր հեղինակները չը դրաւմն ըսպէական զործելիք տպաւորութիւնից, ալլ զգացմունքով խօսեն ան բանի մասին միան, որը պատճառ է եղել խոկապէս ողեսորութեան և զղացմունքին:

Նամանաւանգ հեշտ է փոխ առնել բառեր Շահաղիպեանից, որի բերանում միենողն բառերը իբրև նոր (իւր ժամանակ) զործածւածներ, շատ հետաքրքրական էին և բնարուց, բայց նմուշների փոխ առնողների ձեռքում—երբեմն դառնում են շատ անզաջող: Շահաղիպական բառերից վիշենք մի քանիսը.—աչագեղ, մեղեղի, օրհներգ, որբաղան, վանելչութիւն, ծաղկավառ, կանաչավառ, անդուռն բերան, շուշան, մարմարիոն և ալճ:

Բաւականանալով ալդ ընդհանուր նկատողութիւններով, անցնենք առանձին ոտանաւորներին և կարգանք նոյցա աւելի ուշաղիր կերպով:

## II

Գիրքը սկսում է մի զրաւիչ ստանաւորով, որ նւիրած է բանառտեղի ընկերներին: Սական լաւ քննելով ոտանաւորը, անոնում ենք, որ նա թող է, նորա մէջ լավաճած մտքերը խառն են և շատ ընդհանուր ձեռք ասւած:—

Չեզ եմ նուիրում իմ անլարժ տողեր.  
 Չեզ իմ ընկերներ, որ մաքուր ոլոտավ,  
 Դեռ պահպանում էք ազնիւ միտք և սէր,  
 Որ կեանքն էք տեսնում գեռ պարզ հաւատով:  
     Եւ սիրելի է պատաճեկութիւն,  
 Աչդ վառ հաւատը ոսկի երաղներ,—  
 Թէպէտ և քակէ բաղդն անագործն  
 Մեր սիրուն պսակի չքնազ ծաղիկներ:      (Երես 1)

Կարծես գրողը ինքը ծերէ և ինքն էլ չէ հաւատում, որ կարող է մի  
 որ և է ազնիւ միտք և սէր մնալ այս աշխարհում:—Եւ ինչ է նշանակում՝  
 «սիրուն պսակի չքնազ ծաղիկներ» Ո՞վ է, ինչ է ազդ պսակը: Անցնենք  
 միւս ոտանաւորներին, որ կրում է «Երկու ճանապարհ» խորագիրը (Երես  
 3—5)

Նաևում եմ առաջ—երկու ճանապարհ  
 Բաց է իմ զիմաց, մէկը տանում է  
 Քքեղ, բաղդաւոր նուիրական աշխարհ  
 Գնքուշ զգացմունքի, ուր միշտ ծաղկում է  
 Գարունը սիրու երկնքից օրննած:  
 Այնաեղ անթառամ վարդի պսակներ,  
 Երջանիկ օրեր սիրով զարդարուած  
 Եւ վակելչութեան անձկալի ժամեր  
 Աշխատաւորի վաստակաւոր զլխին  
 Պիտի պարզեն հանգիստ խնդագին:  
 Միւսն անապատ ինձ դուրս է հանում,  
 Որ կարօտում է մըշակող բաղկիւ  
 Այստեղ պերճափառ վարդ չէ բուսանում,—  
 Միայն տատասալը և փուշը վագրի  
 Եւ՝կեանքը մեռած և օղը խեղզող...  
 Զէ ժպտում արև, սեաթոզը ամպեր  
 Գոռ գորթորիկ են երկրին գուշակում:  
 Եւ ես կանգնած եմ և խոր մըտածում  
 Ուր իմ անհատաստ քաղերըս ուղղեմ,  
 Արդեօք երկուսից ես որը ընտրեմ:  
     Բացը այնաեղ կեանքը չունի նպատակ  
 Բացի անձնական բարօրութիւնից,  
 Իսկ այստեղ գործի ասպարէղ արձուկ,  
 Ազնիւ և վսեմ, թէն փշալից:—  
 Եւ ես կանգնած եմ և խոր մըտածում...  
 Կեանքը, ինձ երկուսից ո՞րն ես պատրաստում:

Բաւականին յաջողւած ստանաւոր է. սակայն հակապատկերների համեմատութիւնները փոքր ինչ միամիտ են: Մի կողմում աղջիկ է և սիրոց գարուն, միւս կողմում՝ «օդ խնդրող, տառասկ և փուշ վարի, սեաթոք ամպեր, չէ ժպտում արե»: Թէս բանաստեղծի համակրութիւնը երկրորդ ճանապարհի կողմն է, բայց նա ինքն իրան չի հաւասում և սպասում է կեանքի բերմունքին, հանգամանքների հոսանքին: Ի միջի ալոց մնում է անհասկանալի «աշխատաւոր» բառը առաջին ճանապարհի վերակ (տես 9-րորդ տողը) — ինչ գործ ունի այնտեղ աշխատաւորը:

Բանանք մի ուրիշ երես և կարդանք.

Տեսել ես արդեօք այն բլուրները,  
Ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն,  
Կանաչում թաղուած այն ազիները,  
Ուր իբրև գոհար խաղողն է հասնում: (Երես 8)

Յաջողւած բանաստեղծութիւն է. բայց արդեօք արհեստական չէ հետևեալը.

...հարաւոյ դուստրը, հրապուրքն աչերին,  
Շրթունքը ալ վարդ, ժպիան անթառաւմ...  
Սիրատանջ ալբուած քնքուշ ալտերից  
Քաղել ես համբուլ, որ քաղցր է մնջրից:

Անցնենք մի գեղեցիկ ստանաւորի, որից կ'արտագրենք մեծ մասը (Երես 14—15):

Որպէս լաղթանդամ մի ծերուկ հոկաէ  
Կախուած է ժայռը ջրերի վըրակ.  
Ալքը կապտառ զնում են դալիս  
Եւ ժայռին սիրու համբուլ են տալիս:  
Խաղում են անհոգ ալիքը գետի,  
Ցուցնում են գրկած պատկերն արևի,  
Եւ որպէս մանուկ ժպիան երեսին  
Մեղմիկ շշունչով խօսում են ժայռին.  
«Ասիր, ծերունի, ինչու ճակատիդ  
Սև կնճիռները չեն տալիս դէմքիդ  
Մի օր ինդութիւն շողով ցոլանալ—  
Ողջը փոխուամ է, զու նոշն ես զարձեալ:  
«Եւ քո ականջին միշտ սիրու երգեր  
Մենք արշալուսից կ'ասենք մինչ աստղեր,  
Եւ քեզ կը փարենք և քո ծեր կուրծքին  
Մենք հանգչել կը տանք մեր քաղցըր կրքին...»

Ալիքը կալտառ գնում են զալիս,  
Սև ժայռը նախկին իւր վիշտն է լալիս...  
Խաղում են ալիք, ուրախ կարկաջում—  
Նա կրկին անշարժ, նա կրկին տրտում...

Անհասկանալի է թէ ինչու ժայռը նկարագրւած է վշտով: Ժակու և  
վիշտ—ինչ առնցութիւն: Լաւ է, որ ժայռն էլ չէ խօսում իւր կողմից:  
Ալիքների խօսակցութիւնը աւելի բնական կը լինէր, եթէ նոքա խոստ-  
մոնքներով չը խօսէին, այլ ուղղակի նկարագրէին. փոխանակ ասելու  
«կը փարենք», ատէին՝ փարում ենք, փոխանակ «հանդչէլ կը տանք»—հանգ-  
չել ենք տալիս, փոխանակ՝ կ'ասենք—ասում ենք և ալեն:

«Աւերակ» ոտանաւորը (Երես 16) լաջողւած է, զգացումները ճիշդ  
են, բայց շատ մաշած է նորա թեման—«աշխարհս անցողական է»: Անց-  
նենք հետեւեալ ոտանաւորին:

Ա'յս, տուէք ինձ քաղցրը մի քուն  
Կեանքից հեռու սըլանամ  
Ազն աշխարհը, ուր խնդութիւն,  
Ռւր սէրն է միշտ անթառամ.  
Քնքուչ վարդերն ինձ բարձ լինին,  
Վառ կանաչից իմ վերմակ.—  
Եւ աչաղնող կողմն ականջիս  
Իւր մեղեղին նուազէ  
Եւ հերարձակ սիրով վղիս  
Փարէ, մեղմիկ փաղաքչէ... (Երես 17—18)

Գուցէ քուն առած է երազի մաքայի, որոյինեան միւս նախաղասու-  
թիւնները չեն համապատասխանում քնին: Երազ է թէ քուն, բայց բա-  
նասուեղծի ցանկութիւնները բաւականին խալամական են, աջամական և  
անիրագործելի չեն ալս աշխարհում:

Յակոր քահանաց Սուրէնեանցի վիշտակին զրած ոտանաւորը (Երես  
23—24) աւելի փիլստափակութիւններով է դրաղւած, քան թէ զգացմոնք-  
ներ լազոնելով, միաքը տեղ տեղ հետեղական չէ:

Թնդ հանգչի զլուխն աշխատաւորի  
Կեանքի հոգսերից մարտ երկրի կրծքում,  
Որ վիճ խորհրդի, ազնիւ մաքերի  
Տուել էր նորան ընզունակութիւն:  
Եւ թող բընութիւն շքեղ պճնուած  
Ամենաչն զարուն, զերիթ չընաղ մանուկ,  
Իբրի երդ սիրով հնչէ լաղնտարած  
Անխոնջ մշակին անուն մնծաշուք:

ինչպէս թէ՝ բնութիւնը հնչէ անխոնջ մշակի մեծաշուք անունը։ Միթէ բնութիւնը զանազանութիւններ է զնում լաւ և վատ՝ կամ աշխատաւոր և ծով մարդերի մէջ և մէկի գերեզմանը զարդարում է ծաղիկներով, իսկ միւսինը՝ զրկում նոցանից։ Ինչու պէտք է զգացմունքը ազդէս սիսալ տողեր թելազրէր բանաստեղծին։ Միթէ չէր կարելի ընդհակառակը աւելի ճիշտ զգացմունք լայտնել ան բանի մասին, որ բնութիւնը սառն է և անտարբեր և այդ թեմանով մի հրաշալի ոտանաւոր գրել, ինչպէս է մասամբ փերել վիշած «Որպէս լաղթանդամ մի ծերուկ հսկալ» ոտանաւորը։ Շարունակենք կարդալ գրքոկը։ տեսնենք ինչ է ասում «Գիշերուան երգը (Երես 26—28):

«Գիշերուան երգը» (Երես 26—28)

Տիսուր նստած եմ սենեկում փակուած

Եւ հաղար մի վիշտ սիրտըս են նեղում...

Դուրսը մութն է, ցուրտ, քամին կատաղած

Իմ լուսամուտը ծեծում է, ծեծում։

Զարասանջ ողանդուխտ, քամի դու ձմրան,

Ի՞նչ ես կամնենում, ինչու անհանդիսո

Պատեցնում ես տարափները ծեան,

Ի՞նչ ես դու երգում, այդ սէր է թէ վիշտ...

Արդեօք փախել ես, իբրև խորթ զաւակ

Չարչարուած անմիտ հալածանքներից,

Թէ չէ ձանձրացած դու կեանքից զատարկ

Վաղում ես կորած բաղդի վետեից...

Առաջին տունը շատ լաւ է, բնական, զգացւած, ճիշդ։ Կրկրորդը միայն հասկանալի է, բաց զգացմունքով թով է։ միսաները արհեստական են, մտացածին։ Ոտանաւորը մեծ է, նորա վերջին մասերը վատ չեն։ բաց իբրև քամու խօսակցութիւն տեղ տեղ անդնական են և արտաւագում են չափազանցրած կերպով տպաւորութիւններ։

«Գեղեցիկ օրեր, ծաղկավառ օրեր» ոտանաւորը գրւած է անկեղծ, զգացմունքով։ Նորա մէջ կասկածամութիւնը, չուետեսութիւնը, ներքին վշտակութիւնը մեղմացրած են անորոշութեան հրապուրով։

«Գիւղի ժամը» պ. Յալիաննիսեանի բացառիկ փորձերից մէկն է. գրւած է ժողովրդի հասկացողութեան մօտիկ լեզուով։

Տանդո, տանդո—նազլու, վեր կաց,

Արեն արդէն մակը է մտնում.

Տես, Խաթունն էլ զործը պրծած

Փողոցումն է, ժամ է շտապում։

Ժամը տուին—տանդո, տանդո

Տէր, փառքդ շատ, տանդո, տանդո:  
 Հալրիկը արդէն գընացել է  
 Որ փող ճարի. Երբ պիտի դաւ,  
 Տեսնենք մէկը խղճացել է...  
 Ա'յս, ոե օրը Տէրն էլ չը տայ:

Իրրե բանաստեղծութիւն, միջակ է. չ'ունի լաջող ծրագիր: Թեման  
մաշւած է և նորա արտակարելու ձեզ ոչինչ նորութիւն չ'ունի:

«Աւտարան» ոսանաւորը (Երես 41) լաւ թեմա ունի, բայց չէ ջեր-  
մացրած խորին զգացմունքով: Աւելի զգացմունք ունի «Լինում է բոպէ»  
ոսանաւորը. ափսո՞ս անկատար կերպով է արտակարուել բանաստեղծի մտած-  
մունքների հետեանքը: Բաց թողնենք մի քանի ոսանաւորներ և կանգ  
առնենք հետեւելի վերաբ:

Անապատումը երերուն կեանքի...  
 Միակ սփոփանքն ես դու, կանչ երկնալին,  
 Դու անգին գոհար, սէր, գանձ մարդկութեան.—  
 ...կեանքը սիրել տալիս ես մարդուն  
 Քանի աանջուելով ծանր բեռի տակ  
 Ճնշուած պիտոքիցն առօրէական  
 Դարձնում եմ աչքս այն ջինջ, կապուտակ  
 Երկնքի վերակ անցած մանկութեան,  
 Երբ նոյնաէս էին իմ օրերն անցնում  
 Անհոգ խաղերով, քաղցրիկ երգերով...  
 Աւդ քո պատկերն է, սէր աստուածակին,  
 Դու իբրև մի շող կենդանի լուսով  
 Միշտ բորբոքում ես սիրող մարդկապին  
 Ապրել անլիատ անվախճան լուսով: (51—52)

Պարզ չէ ոսանաւորի միտքը. ինչ բանի մասին է ասում բանաստեղծը  
«կալծ երկնալին, սէր, գանձ մարդկութեան»: Եթէ սիրոց մասին է խօսքը՝  
ինչ առնչութիւն ունին ան ժամանակ երրորդ և չորրորդ տուները:

Բանաստեղծը նկարագրում է «Այս օրելումը» (Երես 55—56) ոսա-  
նաւորի մէջ ահեղ սոսկալի կոիւ:

Ուր միայն մէկի ծառն երջանկութեան  
 Բուսնում է տասի աւերակներից,  
 Ուր մի ժպիտը ծաղկում է միայն  
 Հարիւրաւորի աղի արցունքից:

Բայց ինքը բանաստեղծը անլիատ շարունակում է իւր ճանապարհը,  
ասելով:

Թէ դուցէ մի օր և ես գտնում եմ  
Ան, ինչ չը կամի բաղդը տալ սիրով.

Իսկ այն դէպքում, եթէ նա խորտակւած լուսով խոնարհի ճակատագրին, խնդրում է հնտեսեալը.

Ընկեր սիրելի, զու չը մոռանաս  
Յիշել անունը մատղահաս երգչի,  
Որ գիտէր տանջուել, սիրել հանապաղ  
Գուցէ երջանիկ օրուան արժանի.

Կարծում ենք, որ սկզբի լուրջ դրութեան հակաշռելու համար շատ քիչ է ասւած՝

Որ գիտէր տանջուել, սիրել հանապաղ...

Ոէտք էր աւելի ուժեղ միաք լայտնել, որպէս զի ոտանաւորը չը թուլանար. գիցուք լայտնէր բանաստեղծօրէն մի այս տեսակ բան, որ «խոր զգում էր վիշտը իւր եղբօր, որ անկեալի բաղդով էր հետաքրքիր, որ մաքառում էր չարութեան դէմ, որ ջլատւեց անհաւասար կուից» (գրելու ձեր լարմարեցրած եմ հեղինակի գործածածին):

Բանաստեղծը զարմանալի դարձւածներ ունի աղջկակ հետ խօսելուս. մենք զարմանում ենք, որ նա ասում է իւր աննման հրեշտակին, կամ առաջարկում է նորան կարդալու այս տողերը.

Իրաւունք տուր ծծեմ մեղրը շրթունքիդ,  
Քաղեմ կարմիր աչդ վարդերը թշերիդ.  
Ուլ որ առնի հոտը շամամ ծծերիդ,  
Ել՝ կարող է թէ մի զին տաէ իւր կեանքին (երես 57):

Գուցէ ժողովրդական լինելու համար են գործածւած «շամամ ծծերը» բայց ժամանակն է թողնելու աչդ աջամական համեմատութիւնները. Ի՞նչ հոտ, ինչ անուշահոտութիւն. բաւական է:

«Երանի նորան» (երես 61) տանաւորի մէջ բանաստեղծը իւր սրտին սիրելի ցանկութիւններ է լայտնում.

Երանի նորան, որ տէր է ազատ  
Իւր զգացմունքներին—սիրել և առել,  
Որին բռնութիւն չի տալ լուսահատ  
Բաղդիցը զզուած իւր կհանքն անիծել...  
Երանի նորան ով շընորհք ունի  
Սիրել անձնուէր և անկեղծ սրտով

Սրբել քրտինքը վաստակաւորի  
Եւ տառապեալին խընամել փութով:  
Եւ երկրպագու Փրկչի սուրբ խօսքին  
Անտըրոսնջ բաշխի իւր ձեռի լուման...

Երանեալի համար բանաստեղծը փոքր ինչ արիստօկրատիական դիրք է ստեղծում. երանեալը ինքը վաստակաւոր մշակ չէ, «այս սրբում է քրտինքը վաստակաւորի, անտըրոսնջ բաշխում է իւր ձեռի լուման»:

Բանաստեղծը շատ ունի քնարերգական (լիրական) ոտանաւորներ, որոնք զանազան կերպ երգում են սէր և աղջիկ. նոյցա մէջ լսում է և լուռ սէր, զմալում (երես 87), և տանջւած սէր (92) և թառամած սէր և հակասող սիրոց զգացմունք (50—60) և այլն. նոյնպէս չափաղանց խոստումներ, զորօրինակ՝

Եւ ես կը հիւսեմ պատկ քո դիմին  
Վառ արշալուսու սակի շողերից...

Ուրիշ բան է, եթէ մի որ եէ զե (Լերմօնտովի) ասում լինէր մի աղջակէս բան. նա աղջիկս խոստումներ կարող էր տալ. բայց մենք՝ աշխարհամիններս աղջ խոստումները չենք կարող իրագործել:

Միւս ոտանաւորների վերաց կանգ չենք առնում, զգալով, որ առաջ բերածները բաւականաշափ պարզում են մեր ասելիքի նպատակը:

Վերջացնում ենք մեր քննութիւնը, լատնելով մեր ցանկութիւնը տեսնել շարունակած պ. Յովհաննիսեանի սուելծադուրծութիւնը:

---

Յօդւածիս առաջին մասում մենք պարզեցինք մեր հայեացքը պ. Յովհաննիսեանի բանաստեղծութեան մասին: Այժմ կարճ կերպով ձևակերպելով մեր միտքը բաւտում ենք, որ պ. Յովհաննիսեանը՝ հեղինակելու, յօրինելու արհեստը մշակել է կաստարելապէս, որ նա իբրև առաջին գրական փորձ տեղ է աչքի ընկնող գրքովկ աճպիսի երեսներով, ինչպիսինքեն են 8, 14, 48, 81, 100, 108, 112 և մի քանի ուրիշները: Չը պէտք է ծածկենք սական, որ պ. Յովհաննիսեանը ոչ մի նոր ուղղութիւն չի մտցրել մեր բանաստեղծական գրականութեան մէջ, ոչ մի նոր, ինքնուրուն խընդիր չէ դնում մեր առաջ, նա չէ զործում մի բաւտնի գաղափարով տոփուածի տպաւորութիւն և աղջ պատճառով չէ կապում հասարակութիւնը իւր հետ որոշ բարակերութիւններով. մինչդեռ այն առարկաները, որոնք նորա զրելու նիւթերն են, և այն ոճը, որ բանաստեղծը գործ է ածում ոտանաւորների մէջ, ցոյց են տալիս, որ նա ձգտում է լինել հասարակական շահերի ջատագով: Բարի չաջողութիւն:

---

## ԵՍՈՆԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ

Զ. ԲԱ. ՈՒԴ. ԵԱՆՑԻ

Երբ որ Աստուած ստեղծեց աշխարհ—  
Նընչաւորին, անշընչին—  
Նա բաժանեց պէս-պէս բարեառ,  
Միտք յալտնելու ամենքին:  
Բայց այդ լեզուք արտայատել  
Չէին կարող «Երկնալինն»...  
Տէրն էր նոցա նըշանակել  
Մեր առօրեայ պէտքերին:  
Չը գիտէին ստեղծւածները  
Մի ձև, մի դարձ ձայներից,  
Որ կարենար զգացումները  
Պատշաճ յալտնել սըրտերից:  
Այդ պահանջը էր հոգեկան  
Մի պէտք, բարձըր միւսներից...  
Եւ կենդանիք հաւաքւեցան  
Խընդըել այդ «բանն» Արարչից:  
Դա մի դաշտ էր, դաշտ լայնարձակ  
Եղեմական բոյսերով,  
Ուր ժողովւեցան և մարդ, սոխակ,  
Չեռուն, գազան խումբերով:  
Եւ բոլորը խոնարհեցին,  
Որ աղօթեն առ Աստուած...  
Նոքա այդ «բանն» անւանեցին

«Թարգման սըրտին վըշտացած»:  
 Յանկարծ օդում հընչեց մի ձայն,  
 Օտարօտի մի աղմուկ...  
 Ակկորդները թըռան, սլացան...  
 Տիրեց ճընշող մի անձուկ...  
 Հանդիսականք լուռ ու լալկան  
 Ասլշած իրար նայեցին.  
 Նոքա երբէք նըման մի ձայն  
 Չէին լըսել ոչոքից:  
 Դա երգերի սուրբ հրեշտակն էր,  
 Որ իջնում էր երկընքից...  
 Ամբողջովին նա փայլում էր  
 Իր լուսեղէն շըրջանից:  
 Ամպի սոլիտակ քուլաները  
 Պատել էին անմահին՝  
 Տանջւած կուրծքը դէմ անելով  
 Թշնամու նետին կարկտահար:  
 Յանկարծ երգը լըռեց, դադրեց  
 Մի խոր, անհուն, մուժ ձորում...  
 Մարեց... չը կայ... կարծես, խեղդւեց  
 Չորի խոնաւ յատակում...  
 Բայց ոչ ահա էլ լըսւեցին  
 Դիւժիչ երգի տկարդներ...  
 Սակայն մեղմիկ, հանգիստ հընչեց  
 Նա իր վերջին այդ տողեր:  
 Չէին բուռըն, առաջւալ պէս  
 Ալդ հընչեւններն, թըռչելով...  
 Նոքա դաշտի մի գետի պէս  
 Հոսում էին անվըրդով:  
 Չէին նոքա ալլ նմանում  
 Կրակոտ, վառւած պատանուն...  
 Հանդարտ էին, առանց գոռում,  
 Նըման եփւած ծերունուն...  
 Ջմալլում էին բնութեան շուքով,

Տէրին սաղմոս երգելով...  
 Կընդբուկ ծըխում, խոնարհւելով,  
 Ճըշմարտութեան անունով:  
 Գեղեցկութեան սուրբ սեղանին  
 Դափնիք էին զոհ բերում...  
 Սիրոյ սերմը ցանցում էին  
 Խրանց մշակած արտերում...  
 Եւ այդ վերջին հանդարտ տողեր  
 Բուրում էին կսեմ զգացմամբ...  
 Կարծես, թէ սիրտն ոըրբւած լինէր  
 Խելքի սառը քըննութեամբ...  
 Քաղցըր մի նինջ էր տարածւել  
 Լըսողաց մէջ այդ դաշտին...  
 Նոքա չէին գեռ ըսթափւել  
 Դիւթիչ երգի օրօրից:  
 «Սա երազ է»—հարցնում էին  
 Լուռ, աչքերով միմեանց,  
 Երբ մեղեղին ոգու վերջին  
 Հանդաւ դողդոջ մէջ լերանց...  
 Երկար բոլորն, մընջւած այսպէս,  
 Նայում էին ամպերին.  
 Եւ նա ոսկէ իր թևերը  
 Տարածել էր չորս կողմին:  
 Եւ լըսում էր ողջ բընութիւն  
 Քաղցրահընչիւն հրեշտակին...  
 Անսովոր մի անդորրութիւն  
 Պատեց, կարծես, ամենքին...  
 Լուռ էր անտառ, լուռ էր գետին  
 Եւ լեռնալին տռուներ...  
 Լուռ էր ծովը այն ահագին  
 Եւ մարդ, սողուն, թըրոչուններ...:  
 Չարաճընի արձագանքը  
 Միմոսութիւնն իր թողեց...  
 Եւ ծառերի խիտ արանքը

Մըտաւ ու լուռ պըպըզեց:  
 Իսկ նա ձայնը իր երկնալին  
 Հազար ու մի տեսակով  
 Աըլացնում էր յանկարծ ուժգին  
 Կամ քընքըշացնում մեղմ տօնով:  
 Չեռքում ունէր երեքլարեան  
 Փէղոսկըրեայ մի քընար...  
 Նա խըփում էր մատով վերան,  
 Ձայներ հանում անդադար....  
 Եւ այդ երգը ոլորտում էր,  
 Յանկարծ ողբում, հեկեկում...  
 Աըլտաճըմլիկ թըլպըլտում էր,  
 Կարծես, կողպած վանդակում....  
 Նա յուսահատ կտմ անցնում էր,  
 Կարծես, մէկին փընտռելով...  
 Խըռպոտ ձայնով մերթ կանչում էր  
 Կորած եարին վայվուլով:  
 Ամբողջ կեանքը բազմակողման  
 Պատկերներով խառնիխուռն  
 Նըկարւած էր մէջը կենդան  
 Զգացմունքներով մեղմ ու բուռն:  
 Եւ մանուկը երիտասարդ,  
 Եւ ալեզարդ ծերունին  
 Իրանց հայեսցք, սիրտ, միտք ու դարդ  
 Շընչել էին այդ երգին:  
 Երբեմն ձայնը ուրախ, զըւարթ  
 Թըռչկոտելով, խալտալով  
 Դիմում էր դէպ' հեռւի այն վարդ,  
 Որ բուրում էր քաղցը հոտով:  
 Եւ այդ երգին ականջ գնելով,  
 Կը տեսնէիք մանուկին,  
 Որ, թիթեռին հետեւլով,  
 Քըշում էր իր վայաէ ձին....  
 Նորա կայտառ լըւլըւոցը

Որ գարձրած էր թիթեռին,  
 Հանում կըրծքից խոր հոգւոցը—  
 Չեր նսին մատաղ հասակին:  
 Դուք զմայլում էք, ուրախանում,  
 Անմեղ մանկան նայելով,  
 Երբ խընդում է, զըւարճանում  
 Թիթեռնիկին փախցնելով:  
 Ահա, կարծես, երգը լուզեց...  
 Հեռու, հեռու սըլտցաւ...  
 Որոտալից մի «ախ» լըսւեց,  
 Լի ցաւերով բիւր, անբաւ:  
 Եւ ալդ նօտան բարձրանում էր  
 Բուռն զգացմամբ սաւառնում...  
 Եւ նա քիչ քիչ խըլանում էր,  
 Աստեղց, լուսնի աշխարհում:  
 Կարծես, թէ նա բողոքում էր,  
 Անբաւական նեղ կետնքից,  
 «Ազատ օդ... օդ... ազատ հովեր  
 «Եւ մահ անխիղճ սսոխին»...  
 Նա ձըգտում է իդէալին,  
 Կարմիր գոյնով նըկարած...  
 Նա դիմում է ալդ փարոսին  
 Ճամբով դըժւար-փուշ բուսած....  
 Եւ հրապուրւած, բոլոր ոլժը  
 Լարած, ջարգեց կապանքներ...  
 Նա չէ կորցրել գեռ իր լոյսը...  
 Դեռ չեն սառել երակներ....  
 Իսկ թըշնամիք բիւր են թըրւով,  
 Խանդարում են, չեն թողնում  
 Եւ նա վառւած սիրոյ տենդով,  
 Իր վէրքերը չէ տեսնում:  
 Հըսկալական մեծ քայլերով  
 Նա վազում է շընչառապառ,  
 Ուր նա ծածկւեց ընդ միշտ, կարծես,

Կախարդելով ողջ բնութիւն... :

\* \* \*

Այնուհետև ամեն մի ըով,  
Ամեն մի թոյլ արարած  
Երգել ըսկսեց, երբ մէջ անյոյս  
Դրութեան կը լինէր ընկճւած....  
Այդ երկնալին սուրբ պարգևից  
Վերցըին ամենք մի ջոկ ճիւղ...  
Հողմը մըտքում շատ պինդ պահեց  
Նրա գոռոցը աներկիւղ...  
Ցըստակ աղբըին խիստ դուր եկաւ  
Երգի ուրախ կարկաջիւնն...  
Տերևախիտ կաղնին առաւ  
Ոգու շորի մեղմ շըշիւնն....  
Բուն յօրինեց մի սըրտառուչ  
Ողբ առ անբաղդ իր վիճակն...  
Սոխակն սըրբեց փոքրիկ կընդուզ,  
Որ ըսկըսէ դալալիկն....  
Միայն ձուկը չէր այն դաշտում  
Ոգու երգած ըոպէին...  
Խեղճը զըրկւեց, մընաց ջըրում,  
Որ չը խեղդւէ մէջ օդին:  
Իսկ մարդկային խորունկ սիրտը  
Լըքցւեց «ամբողջ» այդ երգով...  
Նա այժմ էլ է երբեմն դարդը  
Երգում՝ ոգուն նմանելով....

## ԲԱՐԱԿԱՑԱԻԻ ՃԱԳՍԱՆ ՊԱՏԺԱՌՆԵՐԸ

Բժշկ. Դր. Տէր-Դրիգորեանցի (Ղղարցի)

«Մուրճ-ի վեցերորդ համարում, Գրախօսութեան մէջ, բժշկապետ Աւետիք Բաբայեանցի գրւածքի մասին խօսելով՝ մէջ բերեցինք թոքախտի տարածման այն նշանաւոր պատճառը, որի վերայ պ. բժշկապետը հասարակութեան ուշքն է դարձնում, այն է՝ վարակումը. նոյնպէս յիշեցինք այն միջոցները, որ նա առաջարկում է վարակման միջոցով տարածւելու առաջն առնելու համար։ Պ. բժշկապետի այդ փոքրիկ և արժանագին գրքոյկը պէտք է, որ ամեն հայերէն կարդացող ուշազրութիւնով ուսումնասիրի և ոչ միայն ինքը իւր շրջակայքում գործադրի, այլ և ամեն տեղ, ուր կարող է, ջերմեռանդութիւնով քարոզի, որ կատարեն նորա խորհուրդները։ Դորանով վարձատրւած կը լինի հայ մարդու համար քրտինք թափողը։

Բայց դորանից, բազմաթիւ նշանաւոր բժիշկներ, նոյնպէս և պ. Բաբայեանցը, թոքախտի զլիսաւոր պատճառներից մինը ժառանգութիւնն են համարում։

Բայց կա՞ն արգեօք այնպիսի հանգամանքներ, որոնք ուղղակի կարող են թոքախտ յառաջ բերել և այնպիսիները՝ որոնք կարող են նորա յառաջ զալուն օգնել, երբ մարդս տրամադրութիւն ունի։ Եւ մենք պէտք է ասենք, որ այդ հանգամանքները գոյութիւն ունին։ Դոցանից երկուսի վերայ՝ Թիֆլիսի վերաբերութեամբ՝ կամենում ենք այս յօդւածով մեր ընթերցողների ուշքը դարձնել։

Ֆրանսիացի նշանաւոր սիֆիլիտոլոգ Լանսերօն, խօսելով արագի և գինու վեասակարութեան մասին, մէջ է բերում այն վնասները, որոնք կրում են գինով արքեցողները մի յօդւածում, որ ահա'.

Lanceraux, Etude comparé des effets produits par les différentes boissons spiritueuses. Bullet. de l'Acad. de med. p. 1524—

1534. 1885. Բացի թեթև կերպով մարսողութեան խանգարւելուց՝ լեարդի խրշոփուքից<sup>1)</sup> (առ ջիգեարի կուչ գալուց), համարեա գլխաւորապէս միայն չափից դուրս դինի խմելուց յառաջ են գալիս նոյնպէս նեարդացին հիւանդութիւններ, ինչպէս անքնութիւնն, քնած ժամանակ սրտին պառկելը, արտաքին նեարդերի անբնական զգացումները, բանդագուշանքը շատ անդամ, նոյնպէսև թոքերի և փորոտինների թաղանթի տուբեր կուլօգը, ասելէ թէ՝ բարակացաւը:

Այդ ամենը Լանսերօնի կարծիքով յառաջ է գալիս ուղղակի գինուց: Թողնելով միւս կողմը արաղի և ուրիշ ըմպելինների և նոյանից յառաջ եկած հիւանդութիւնների մասին ասածը, մենք մեր ընթերցողների ուշքն ենք դարձնում այն խօսքերի վերայ, ուր նա ասումէ, որ դինին՝ ի հարկէ չափից դուրս գործ դրած՝ յառաջ է բերում թէ թոքերի և թէ փորոտինների տուբերկուլոզ, այն է՝ բարակացաւ:

Մինչև այժմ ամեն մայր և հայր մեզանում, հէնց որ երեխան մի քանի ամսական է դառնում, անխտիր ածում են երեխայի բերանը զինին և եթէ նա շատ է խմում, ուրախանում են ծնողները և պարծենում, որ նոյա կարլուշէն, Սարուսէն կամ Օլան զինի շատ է խմում. մի քանի երեխաններ այնքան սովոր են զինի խմելուն, որ անպատճառ պահանջում են ջուր չը խառնած զինի. իսկ եթէ ջուր խառնւի՝ չեն խմում: Խոկ երբ երեխան առհասարակ զինի չէ խմում կամ սակաւ է խմում, այն ժամանակ ծնողները տիրում են: Ինչքան էլ որ ծնողները քիչ զարգացած լինին, բացառութեամբ մի քանիմների, եթէ նորանց բացատրես, թէ զինին երեխաններին կարող է զանազան նեարդացին հիւանդութիւններ պատճառել, նոյնպէս խելապատակի բորբոքումն, վերջապէս ամենաքիչը երեխային կը բթամուացնի՝ այն ժամանակ նոքա զգուշանում են: Բայց ծնողներից ոչ մեկը անդամ չի երեակայում, որ նոյա որդերանցից մի քանիսը իրանց մանկական հասակում զինի գործ ածելուն սովորելով՝ ժա-

1) Լեարդի խրշոփուքի հետեանքը ջրգողութիւնն է, որից և երբեմն արթեցողները վախճանեում են:

մանակով պատանեկութեան կամ երիտասարդութեան մէջ յայտնի արբեցողներ կը դառնան, որոնց կեանքը թոքախով կը վերջանաց: Կան Թիֆլիսում տներ, ուր մի քանի եղբայրներ՝ ծագելով առողջ ծնողներից, բայց մանկութիւնից աւելրդ զինի գործ ածելու սովորած լինելով՝ արբեցողութիւնից միմևանց ետևից բարակացաւով են վախճանել; Կան հասակաւոր մարդիկ, որոնք ծագում են առողջ գերգաստաններից, տարիներով ահազին քանակութիւնով զինի գործ ածելուց յետոց, սկսում են արիւն թքել և համարեա շատերը շրունակելով խմել՝ վերջապէս թոքախորից մեռնում են. իսկ սակաւները բժշկի խորհրդով զինի խմելուց հրաժարւելով, կամ առողջանում են կամ գոնէ փոքր ի շատէ տանելի կեանք են վարում: Մենք ինքներս վկայ ենք եղել, թէ ո՛քափ մեծ ազգեցութիւն ունի բժշկի խորհրդով ազգպիտիների վերայ: Անչ որ կը վերաբերի այն անձերին, որոնք ի ծնէ թոքախոր տրամադիր են, գորք մեծ մասամբ մի քանի անգամ լաւ արբենալուց յետոց, սկսում են արիւն թքել և ուղղակի խոստովանում են բժշկին, որ մի քանի օր առաջ ընկերների հետ քէփ են արել և ապա սկսել են արիւն թքել կամ թէ մի քանի անգամ է պատահել նոցա հետ, որ իւրաքանչիւր քէփից յետոց արիւն են թքում: Ասել է թէ՝ զինով շուտ շուտ արբենալը ամեն առողջ մարդուն էլ կասակար է և կարող է ուղղակի թոքախոր յառաջ բերել. իսկ թոքախոր տրամադիրների համար՝ զինով արբենալը ուղղակի թոյն է: Խնչակ օրինակ մի կատարեալ առողջ մարդու, որ առողջ գերգաստանից էր ծագում, թէ որքան զինի էր խմել, որ նա սկսել էր արիւն թքել՝ կարող է հետեւալ օրինակը ծառացել: Նա ինքն ինձ սպասում է, որ աւելի քան տասն տարի կը լինի, որ նա օրը վեց շիշից պակաս զինի չէ խմել, բայց պատահել է, որ նա օրը մինչեւ տասնեւմէկ շիշ զինի է խմել: Այս սպարոնը իմ խորհրդով զինի խմելուց հրաժարւել է և ահա երկու տարի կը լինի, որ բոլորովին առողջ է: Կան Թիֆլիսում արբեցողներ, որոնք սովորաբար շիշը մէկ մանէթանոց զինիով չեն բաւականանում, այլ, օրինակ՝ երկու շիշը այնքան եփում են, որ մէկ շիշ լաւնաց և ապա այդ սարսափելի թոյնը իրանց փորն են ածում: Այս վերջիններից մէկը 14 տարեկան հասակից սկսել էր արբենալ և նա 35 տարեկան հասակում մեռում թոքախորից:

Այս բաւական չէ. մեր դիտողութիւնը ցոյց է տալիս, որ սովորական արբեցողների որդիքը ևս թոքախտից են մեռնում, թէև վերջինները (որդիքը) չափաւոր կեանք վարէին, թէ տղերքը և թէ աղջկերքը, թէ նոցա արբեցող հայրը ուրիշ հիւանդութիւնից մեռած լինէր: Ահա մի գերգասատանի պատոմութիւն, որի հայրը ծագել է առողջ ծնողներից, եղել է արբեցող, յախնի չէ թէ ի՞նչ հիւանդութիւնից է մեռել, բայց ոչ թոքախտից. չորս աղջիկ է թաղել և մի տղայ հոլոր չորս աղջիկները մարդի գնացած՝ զանազան հասակներում և վերջինը 35 տարեկան վախճանել են թոքախտից. իսկ տղէն 50 տարեկան հասակում, մի չափաւոր կեանք վարող մարդ, մեռնում է աղջիքների տուբերկուլոզից—բարակացաւից, թէև թոքերում ևս փոքր ի շատէ փոփոխութիւն գտնեց: Այստեղ որդենութիւնը աղջկերանց կեանքը կարճացրել է: Միւս արբեցողի մէկը ծագել է առողջ զերգասատանից, մեռել է յանկարծ, թողել է երկու տղայ և մի աղջիկ: Երկրորդ տղէն 25 տարեկան հասակում վախճաննում է թոքախտից, միւս տղէն և աղջիկը ունին այնպիսի կազմը և ամածք, որ կարելի է ասել, նրանք էլ աղաս չեն մնայ այդ հիւանդութիւնից, միւնոյն ժամանակ որդիքը շատ համեստ կեանք վարող անձեր են:

Նշանաւորն այն է, որ սովորական արբեցողները՝ այնպէս վաղ չեն մեռնում թոքախտից, ինչպէս ժառանգական տրամադրութիւն ունեցողները: Վերջիններս ըստ մեծի մասին վախճաննում են 18-ից սկսած մինչև 30 տարին, իսկ արբեցողները, եթէ հիւանդութիւնը ի ծնէ ժառանգած չեն, աւելի ուշ են մեռնում՝ 35, 40, 50 մինչև անգամ 60 տարեկան հասակում: Նոյնպէս և արբեցողների որդիքը աւելի ուշ են մեռնում թոքախտից, թէև նոցա մացրը կենդանի և առողջ է և հայրը վախճանել է ուրիշ հիւանդութիւնից, բայց ոչ թոքախտից: Սովորական արբեցողների հիւանդութիւնը սկսում է ըստ մեծի մասին՝ արիւն թքելով. նոյնպէս և ժառանգական տրամադրութիւն ունեցողները այդպէս են սկսում հիւանդանալ, եթէ գինի շատ են գործ ածում:

Այժմ դառնանք մի ուրիշ հանգամանքի: Եթէ մեզանից մէկը գնայ Պետակիդօրսի և կամենայ ծծմբի ջրի մէջ լողանալ ու բժշկից խորհուրդ հարցնի, այն բժիշկը իսկոցն կը սկսի նորա թոքերը դնել.

որովհետև նա փորձով գիտէ, որ եթէ թոքերը ամենաաննշան կերպով անգամ վնասւած են, նա մի քանի վաննացից յետոյ արիւն կը թքի: Մենք ինքներս այդապիսի դէպէբում (արիւն թքելուն ծծմբի վաննաներից) Պեատիգորսկում ականատես ենք եղել Մինչդեռ Թիֆլիսում հէսց մարդ իրան մի քիչ լաւ չէ զգում, իսկոն վազ է տալիս բաղնիս և այնտեղ ամբողջ ժամեր անցկացնում: Բայց թէ մեր բաղնիսների ծծմբաջուրը թոյլ կամ վնասւած կուրծք (թոքեր) ունեցողներին մեծ վնաս կարող է հասցնել, հիւանդութիւնը սաստկացնելով՝ դորա մասին ոչ ոք, կարծեմ, կասկած անգամ չ'ունի:

Մի քանի մասնագէտներ այն կարծիքն են յացանում, որ ծծմբաջուրը կարող է սակաւարիւնութիւն յառաջ բերել, մինչդեռ Թիֆլիսեցիք անզգուշաբար բաղնիսի ջուրը խմում են և երբեմն բաւականին շատ: Ասել է թէ սակաւարիւններին ծծմբաջը բաղնիսն անգամ վնասակար է, ուր մնայ այդ ջուրը խմելը, որը կարող է վատհետևանքներ ունենալ:

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑ.—«ՅԵՅԵՐ», վէպ. (արտառպատաժ «Մուրճ» ամսագրից) ԹԻՖԼԻՍ, տպ. ՌԵՎԵՆԵԱՆցի, 1889 թ., 4-ծալ փոքր. 336 երես, տառ. № 12. գինը 1 բուլքլի:

Պ. Պուշկանցը իրբու Արարա- փաղանցութիւնների է հասնում. օրի-  
տեան զաւառի հարազատ զաւակ, իւր նակալ. «Ձորը, որի մէջ անսահման  
զգաւուն սրտի մէջ տպաւորել է այն- էաւ իտենակ անութիւնից (?)  
տեղի հայ ժողովրդի կենցաղը (նոյն) հունական գումարում (Եր. 263)  
և վարչու բարձը, որին ականատես է կամ «Գետակը իւր խոր անդնդում»  
եղել մանկութիւնից: Ժողովրդի մտքի սանդիւ ծալքերը և ամբողջ աշխար- սանդում (?) է վաղում» (Եր.  
հակեցողութիւնը քիչերն են նորանից 265). Նունակս աւելորդ են աւապիսի  
լաւ ըմբռնել և ճանաչել: Այնպիսի կեղծ կլասիկական ոճեր. «Մորփէոսի  
նրբութեամբ և բէալականութեամբ շաղ տւած խաշխաշի փոշին արդէն  
է պատկերացնում «Յեցերի» հեղինակը իւր աղղեցութիւնն արել էր 0.  
ժողովրդի կեանքը, որ ընթեցողը գիւղի բնակիչների վերաչ» (Երես  
կարծես բոլորը տեսնում լինի իւր 312) և «Պարկեան քոքքերը վերջա-  
ներկացութեամբ կատարելիս: Ժո- պէս խղճացին և նորա ցաւալի կե-  
ղովութիւնը բաւ համարեցին լիստ տալու (Եր. 335): Բաց աւդ բոլորը ի հարկէ  
չի կարող նսեմացնել «Յեցերի» իւր- չի մի նշանաւոր վէպի արժանաւո-  
րութիւնը: «Յեցերում» զուրս բերւած րութիւնը աշխարհը, իւր սոսկալի խաւարով և  
աշխարհական կանոնած հէնց իրանք իրանց բերնով լինին ասում: Բայց երբ հե- չարագործութիւններով, նոյնքան ի-  
զինական է և սարսեցնող իւր ճշշ- րական է և սարսեցնող իւր ճշշ-  
դութեամբ, որչափ լեւ Տօլմաօփ դութիւնը պուս ժողովրդական  
կեանքից դրաման: Եթէ «Յեցերի» մէջ

նշանաւոր, համակրելի — զրական տիպեր չը կան, դորա պատճառը այնէ, որ մեր կեանքը՝ որքան հարուստէ բացասական կողմնորով՝ հակակրական տիպերով, նունքան աղքատ է միմիթարական երևութներով, հզօր, ողերող զրական տիպերով: Բալասան աղայի, խաչագող Գնթունու, Գրիգոր Պետրոսիչի, Խուղօյի, տէր-Սուքիսափ և չոլախ Յարութիւնի կենդանի, բացասական տիպերի առաջկանգնած են հին սերնդից զւարձախօս ու պարզասիրտ Մելքիաժադալը և նոր սերնդից՝ Գեորգեան ճեմարանից գուրս եկած աղնիւ երիտասարդ Սիսակը, Սամսոնը (թողների մեղպ. Պոռօշեանցը առանց «փայի եօլա զնալ») և իւր սիրած Սօնան երրորդական տեղ են բանում վէպում. Նրանք աւելի անձնաւորութիւններ են, որոնց զույթիւնը անհրաժեշտ է թէ կապի և թէ զվասւոր հերոսների՝ Բալասան աղայի, Գնթունու, Խուղօյի և տէր-Սուքիսափ՝ բնաւորութիւնների մի քանի կողմերը աւելի ևս բելիք կերպով դուրս բերլու համար:

Զրադացան քաչալ — Մեսուպիկ Բալօն, վետոչ Բալասան աղան կամ Վլագիմիր Նեստորիչ Մելնիկով՝ հակական կեանքում մի կենդանի և չատ տարածած տիպ է: Պոռօշեանցը այդ տիպը առել է կհանքից և զրել մեր զրականաւթեան մէջ. ալսոհեսու ամեն մարդ կարող է ծանօթանալ և տեսնել Բալասան աղաների լիակատար ներկաչացուցին: Ալդ չքաւոր ջրադացապանի որդին, մնձաւորի չնորհիւ զրազիր է զառնում, զնում Վարչաւ, ձիաւոր զրում,

«Հինը ստանում, իւր գալիս մնձաւորնեց ըի աչքը մտնում, լաւ լաւ պաշտօն ներ ճարում, պատերազմի ժամանակ վնասածներին մատակարարելիք նպաստից օգտում, իւր պաշտօնակիցներից պարեկամական կապ պահպանելու համար ծրաբներում էածախ դրամական նւէրներ» ստանում և վերջը, միլաւ կարողութիւն իւր համար շինելով և եղբարձներին զրկելով հազրենական կաչքից՝ ինքը բոլորին տիրում է, մի հիանալի երկարկանի տուն շինում իւր ծննդավայր Օ. դիւզում, և սկսում «մուժիկների» արիւնը ճեկլ, Օ. դիւզի բոլոր գործերի վերաէ նայել իւր սեպհական շահերի տևսակէտից:

Բալասան աղան իբրև ծառաւող, «Հինովնիկ», անպատճութիւն է համարում ոչ միան իւր համագիւղացի «մուժիկների» հետ կանգնել մասլահաթ անել, այլ և իւր մօրը թող տալ իւր մօտ կենալ, իւր «խանումի» հետ սեղան նստել. այն գիւղացի մուժիկի պառաւ կին է, նորան ինչ վայել էր զվարաց հասկացող հարսի հետ ձգւել... մի սենեհակ լավակացրի իրեն, որ ախտեղ վեր ու նիստ անի մեր պառաւ քօծի հետո — ասում է իւր բարեհոգութիւնը զովելով Բալասան աղան, ինչպէս սարդը իւր ոստանի մէջ է բանում ճանճերին, նունպէս և Բալասան աղան իւր վաշխառուական ցանցերի մէջ — «մուժիկներին». «մի տարւագ չահն էս զվիսից հաշւիր թումանին մի ապասով, գրի՞ր ըստ առաջին պահ ան չման... էղ օ. բէնքն միան մնձաւորների պատիւնէ», ասում է նա պարզամիտ «մուժիկներին», ծծելով նոցա արկւնքարտին:

քի աշխատածը և դեռ «մուննաթ» էլ դնելով, որ փող է տալիս նրանց,

Օգտակար իւր զիրքից, նա բոլոր գիւղի հասարակական գործերը շինել է իւր ձեռքում խաղալիք. — տանուտիրը, գրագիրը, դաստաւորները, տէրատէր՝ բոլորը նորա գործիքներն են:

Այդ դեռ քիչ է. նա սկսում է և մուրհակների թւականները, գումարները փոխելու իրան անախործ մարդկանց գէմ կեղծ թղթեր շինել, գիւղի կողմից «նաչալնիկի» անւամբ խընդիր գրել իւր ցանկացած մարդուն տանուտէր շինելու համար, իւր պատէրով ուրիշին սպանողին աղատելու համար՝ անմեղին (Սամոնին) կեղծ թղթով պատոհասի մէջ է դցում և ալին: Այդ բոլոր խարդախութիւնների համար նա գոտնում է մի ճարպիկ ընկերակից—շողոքորիթ վանեցի՝ Տաճատ Գնթունուն:

Մեծ տաղանդով և նուրբ հեգնութեամբ է դուրս քերւած ազդ խաչագողի տիպը: Վանեցի ուխտաւորի շարժւածքը, խօսելու ձևերը և առհասարակ ամբողջ անձնաւորութիւնը անքան կենդանի է ու բնարոշ, որ նսեմացնում է այդ կողմից վէպի միւս տիպերը: Հայրիկի անունը ամիակ զօրավիդն» համարելով իւր նմանների «քաջակորով շահաղիտական ձեռնարկութեանց», նա ամեն տեղ իրան Հայրիկի աշակերտ է հուչակում և իւր խոնարհաբարով, կեղծ, արտաքին ձևերով ու ճարտարախօսութեամբ ալեսէս է աղդում դիւղացիների վերավ, որ նոքա խակոն ազդ՝ ցնցոսաիներով ժամակական գործապատճեան մօաւ կանգնած և ջերմեանդ աղօթող ուխտաւորին վարժապետ և գրագիր են շինում: Այդ

ժամանակից նա դառնում է ամենամեծ ցեցերից մէկը. ամեն միջոց և խարդախութիւն նա ներթիվ է համարում իւր «շահաղիտական ձեռնարկութիւնների» իրազործման համար: Մինչև անգամ հայրենասիրութեան պէս վեհ զգացմունքը, որին և դուգակից Խրիմեան հայրիկի անունը, նորա ձեռքում հարստահարելու մի միջոց է: Քիւրդերից ու տաճիկներից տանջւող «հայ եղբավրների» համար իւր ձեռքով ուղարկող հրացան ու փամիկուտները նորա գործակատարները ձախում են նուն քիւրդերին և տաճիկներին՝ հայերին կոտորելը աւելի զիւրացնելու համար:

Մի բան միայն այդ անձնաւորութեան բնաւորութիւնից անբընական է վէպում: Այդ զգուշ և խորամանկ Վանեցին չէր կարող անքան անհոգ լինել, որ թուլ տար կեղծած թղթերի սևագրութիւններով երեսփոխի տան պատոհանները թըղթել:

«Ցեցերում» Գնթունուն հակադրւած է երիտասարդ Սիսակը, որ զիւղական հասարակութեան շահերի աներիկուղ պաշտպան է հանդիսանում, աշխատում է բանալ իւր համագիւղացիների միաքը, և չը նաքելով, որ խաւար ամրոխը, մանաւանդ սկզբում, փոխարէն ըստ արժանւոցն դնահասուելու, ծաղրում է նորան և լետերից «ուհուալով» ծիծաղրում՝ անու ամենալինիւ նա չի վիճատում գործելու նուն հասարակութեան համար: Սիսակով ցոյց է տալիս հեղինակը, թէ ինչ մեծ զեր կարող էն կատարել մեր թեմական զարոցները և Գէորդեան ձեմարանը ժողովրդի վերածնութեան դոր-

ծում, տալով գիւղերին պատշաճաւոր պատրաստութիւն ունեցող վարժապետներ և քահանաներ Մեր համալսարանական ինտելիգենցիան ներկաչ պահանջներում չի փնում գիւղնա, ուրեմն, անմիջական աղբեցութիւն անել գիւղացիների վերաէ չի կարող Նորա մէջ կրթութիւնը դարգացրել է մեծ-մեծ կենսական պահանջներ, որոնց գոհացնելու համար հարկաւոր են և նիւթական միջոցներ: Ճիշդ է, մինչև կեանք մտնելլ շատերը նոյանից երազում են բարձր իդէաներ, վսեմ գաղափարներ, ժողովուրդ և ազն, և վրդովում են կեանքում գործողների փչացած «բնաւորութիւններով»: բաց երբ իրանք էլ կեանք են մտնում, իսկոն փոխում են և դառնում նոյն «չինովնիկները», որոնց սկզբում այնքան ատում էին, Մի աշդախի համալսարանական դուրս է բերւած «Յեցերում»: դա Վլադիմիր Նեստորիչի փոքր եղբայրն է՝ Արտեմ Նեստորիչ Սելինիկով: Այդ սկզբում մեծ-մեծ բրթող պարոնը, կորիկ ոռնիկով մի տաք պաշտօն ճարելով, կամաց կամաց այնքան ընտելանում է փչացած մթնոլորտին, որ ինքն էլ դառնում է մի երկրորդ Բալլասան աղավ: Հենց նոյն ինքն Դրիգոր Պետրովիչը (գաւառապետ) ազգիսի համալսարանականներից է:

Եթէ Սիսակը մի ողերող մնձ տիպ չէ, այդ նորանից է, որ մեր կեանքը դեռ չի տալիս ալղպիսի վսեմ, պահծառ և հոր անձնաւորութիւններ: և Պոչեանցը, իրեւ սոսկ բէալիստ գրող, կենցաղանկար, չէր կարող իւր երևակալութեան մէջ սուեղծել այնպիսին: Նա կեանքը

նկարագրում է կենդանի, բնական և ճիշդ գոյներով: «Յեցերի» ամեն մի գլուխը կենդանի պատկեր է, կարդացէք «Տղամարդի հոգին», «Հնձանաբագ», «Աւան մեղաց իւրեանց խոնարհ եղին լոյժ», «Ձջմիածնի ուխտաւորը», «Սպասիօ!», «Գիւղական փաստարաններ» գլուխները, և դուք կը համոզէք, թէ Պոչեանցը որպիսի նուրբ գիտութեամբ է պատկերացնում ժողովրդի կեանքը իւր բոլոր կենցաղական գծերով: Պոչեանցի վէպերը մի շարք կենդանի պատկերներ են, ամսպէս ասած՝ կեանքի գրքից կտրած երեսներ: Պոչեանցը բոլորովին ուրոն կերպով է գրում իւր վէպերը: Նա տալիս է մի շարք կենդանի պատկերներ, որոնք, միմեւանց հետ կապւելով, լաւոնում են բոլոր վէպի նպատակը, բովանդակութիւնը: Նա շատ էլ չի մտածում ընդհանուր կապի, արտաքին լզկման և ամբողջութեան մշակելու մասին, և այդ պատճառով նորա իւրաքանչիւր վէպը մի միապաղազ գրական ձեռակերտ չէ, որտեղ ամեն մի խօսք, ամեն մի նախաղասութիւն և երես հաշւած է, իւր տեղումն է, և անհրաժեշտ ամբողջութեան համար: Այդ կողմից «Յեցեր»-ը մինչև այժմ գրւած վէպերից ամենաաջղն է: թէ կան դեռ գլուխներ, ուր այս կամ այն խօսակցութիւնը աւելրոդ է: օրինակ՝ «Խօսակցութեան աղը» գլուխը բացառապէս կարծես նորա համար է, որ ցոց տաէ թէ Մելիք-Բաղալը առանց համեմելու իւր խօսակցութիւնը փշոցներով, չի կարող ապրել:

Պոչեանցի նոր վէպը՝ «Յեցերը» մի գործ է, որը նոյն

հեղինակի «Սօս և Վարդիթեր», «Կոռւածաղիկ» և «Հացի խնդիր» վէպերի շարքում անգամ աչքի է ընկնում իւր մի քանի առաւելութիւններով. «Ցեցերի» մէջ ամբողջութեանը վնասող աւելորդ կտորներ շատ քիչ

կան, և դուրս բերւած մի քանի կենդանի տիպերը պէտք է համարել մեր գրականութեան համար ձեռք բերած գրական հարստութիւն:

Լ. Ա.

ՍԱՀԱԿԵԱՆՑ ՍԱՀԱԿ քահանայ.—1) ԴԱՍՍԳԻՐՔ ԿՐՈՆԻ, ուղեցոյց հայ կրօնուսոյցների համար. Հին-Ռւխտի նիւթի մշակութիւնը. Հատոր Ա. Թիֆլիս, տպար. Ռոտինեանցի, 1888 թ., 4-ծալ, VI+484 եր., տառ. № 12. գինը՝ 1 ր. 75 կ. 2) ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Հին-Ռւխտի, աշակերտաց և աշակերտուհեաց համար. Հատոր Ա. Թիֆլիս, 1888 թ. տպ. Մարտիրոսեանցի, 4-ծալ, 182 եր., տառ. № 12, գինը՝ 30 կ. 3) ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Նոր-Ռւխտի. Հատոր Բ. Թիֆ. տպ. Մարտիրոսեանցի, 4-ծալ, 118 եր., տառ. № 12, գինը՝ 35 կ. 4) Մի քանի խօսք Հայ կրօնուսոյցներին, Թիֆլիս, տպ. Ռոտին., 1888. փոքր 4-ծալ. 23 երես, տառ. № 10, գինը 10 կոպէկ:

Այս չորս գրքերից առաջինը Հին-Ռւխտի պատմական նիւթի մշակութիւնն է ըստ հերբարտ-ցիլերական շկօլափ 5 աստիճանների, իսկ հետեւեալ գրքերը Հին և Նոր Ռւխտի պատմութիւնից ընտրովի գլուխներ են, ինչպէս աշխատասիրող հայոն ասում է. «Մեր ցանկացած կրօնական-բարոչական իմաստները սաներին հաղորդելու համար, քաղաքածօրէն ընտրեցինք այս նիւթերը՝ ըստ կարելուն պահպանելով բնագրի ոճը»:

Նախ քան Ռւղեցոյցի մասին խօսելը, որ իւր տեսակում բոլորովին նոր երեսով է մեր մանկավարժական գրականութեան մէջ, մի ակնարկ ձգենք «Մրբազան Պատմութիւն» Հին

և Նոր Ռւխտի ձեռնարկների վերակ, որոնք կազմւած են աշակերտների համար. Այս վերջին գրքերի բովանդակութիւնն է իսկապէս, որի շուրջը պտուղ է գալիս Ռւղեցոյցը. Ինչպէս աշխատասիրովի «Աղդ»-ից երևում է, նորա կարծիքով «աշակերտաց ձեռքը Մրբազան Պատմութեան մի առանձին դասագիրք տալն աւելորդ է, ամենաընտիր և նպատակավարմար դասագիրքը հէնց Սուրբ Գիրքը՝ բնագիրն է»: Նա այնու ամենանիւ այս դասագրքերն առաջարկում է ինկատի ունենալով գիւրըմբունելի և արժանագին բնագրերի պահասութիւնը մեղանում: Այդ ուղիղ է. բայց և այնպէս՝ եթէ մենք պատրաստած ունենակինք այս մեթօդին

խստութեամբ հետեւող հմուտ կրօնուսոցներ, այն ժամանակ և ալս դասադրքերն աւելորդ կը լինէին. որովհետեւ, ինչպէս զատոնի է, նոր նիւթի իւրացուցումը և սերտողութիւնը իսկապէս պէտք է գասատան մէջ ուսուցչի օժանդակութեամբ լինին. Ի հարկէ, նայելով ուսումնարանի և դասարանի զարգացմանը՝ ուսուցիչը պատմում, կարդում կամ աշակերտների մտաւոր շրջանի միջոցով և իւր օժանդակութեամբ կազմում է նիւթը. Այս եղանակների մասին լիտու, երբ մննք քննութեան կ'առնենք Ուղեցուցը. Առալժմս ընդունելի պէտք է համարել ալս աշակերտական ձեռնարկները, մինչև որ մենք կ'ունենանք անպիտի կրօնուսոցներ, որոնք ինչպէս ցարդ լինում է, միան ձեփ համար չեն պատմում նոր դասը, այլ պատմելուց չետու ան միջակ է ս չետ և ն հարցնում ե ալսպիտով աշակերտների միտքը միշտ լարւած դրութեան մէջ պահում. Ապա թէ ոչ աշակերտները միան լսում են (?) այն դիտաւորութեամբ, որ իսկապէս տանը պէտք է սերտեն կամ, աւելի լաւ է ասել, բերան ան են դասագիրքը. Մենք, խորը քննելով աշակերտի հողեկան արամադրութիւնը ալդ դէպում, մինչև անգամ ուսուցչի ալդ պատմեն էլ աւելորդ կը համարէինք. աւելի քիչ ժամակորոշ կը լինէինք, եթէ ասէինք՝ «ալստեղից ալստեղ պատրաստուցէք. բայց գրքերդ բացէք տեսնեմ բոլորը հականում էք»: Եւ ալսպէս անողներ էլ կան. Բանը նրանում է, որ ով անդիւ է պահանջւած մեթօդին և անելիս՝ ես օրինակ կը բերեմ ալս

գործնականապէս հմուտ չէ զրանում՝ նորանից չի կարելի սպասել, որ և՛ նոր դասը դասարանում իւրացնել տակ և՛ անցնի նախագծած ծրագիրը. Ուրեմն ապահով ժամանակ իւր գիր է, որ պէտք է չը վրիափի կրօնուսոցի և ալս դասասուի աչքից:

Դասադրքի կարևորութիւնը մեր ներկայ հանգամանքների մէջ ընդունելով՝ դառնանք նիւթի ընտրութեան և նորա ոճին. Ով կարդացել է մանկական հոգուն համակերպւած ալս պատմութիւնները, նա կարող է, առանց գժւարութեան, մէկիկ-մէկիկ գուրս բերել նորա արժանաւորութիւնները նմանօրինակ դասագրքերի առաջ:

Նախ՝ պէտք է ըմբռնել մեթօդի ողին և ապա ձեռք առնել «կրօնուսուցի Ուղեցուցը». միան ալդ դէպօւմ կ'ունենան ընթերցողի համար հշանակութիւն և իմ հետեւալ կարծիքները ալդ տեսականի գործադրութեան վերաբերութեամբ. Մի անգամ կրօնուսուցի մանկապարժական հայեացքը ինքնուրուն ընթացք ստանալով՝ նորա մէջ ևս կը ծագեն կատարել ագործ ութեան նորանոր մտքեր, որոնց գործ աղքան մէջ մեր ուսուցչական գործունէութեան ամեն ագրաւելի չ կողմն է:

Առաջարկած խնդրի ուսումնասիրութիւնը վերովիշեալ ուղղութեամբ լաւած տանելով՝ հարկ պէտք է չը զգանք իւրաքանչիւր լաւածած կարծիքին «Ուղեցուցից» օրինակներ բերել, այլ ձևական աստիճանների մասին ընդհանրապէս նկատողութիւն տեղեակ է պահանջւած մեթօդին և անելիս՝ ես օրինակ կը բերեմ ալս

կամ ան նիւթի կամ միութեան  
մշակումը:

Նպատակը, որ վերլուծութեան կամ 1 աստիճանի սկզբան է դնում, պէտք է անպիսի բատկութիւն ունենաց, որ դատարանի միտքը գրաւէ և լարէ դէպի այն մտապատկերների շրջանները, որ աւանդելի պատութիւնն է պարունակում: Նպատակի զիմանը բատկութիւններըն էն հակիրճ և գրաւիչ լինելը: Ընդհանրապէս ասելով՝ դրած նպատակները համապատասխան են թէօրիակի պահանջներին (տ. § 18, 26, 39 և այն. շատ շատերը հէնց սկըզբից ու վերջերից), բաց կան և անտեղի ձղձգւած (որ շատ վնասում է մտապատկերների լարմանը) կամ շատ յամաք նպատակներ (տ. § 23, 17 և նմանները): Առանձին արժանաւորութիւն ունին այն բաղմաթիւ նպատակները, որոնք աշակերտների ինքնուրովն մտածողութեամբ են դանում, և այս պէտք է անել, որքան որ հնարաւորութիւն լինի, որովհետեւ այս մեթօդով մննք աշակերտների մէջ կը զարգացնենք պատմական եղելութիւնների պը ըր ագմատ ի կական ուղղութեամբ պատմելը, այսինքն՝ պատճառն եր և զրակացնելու և նրանց դործադրեն եր և զրակացնելու և նրանց դործադրեն ողին: Ազգանկարում նպատակները լիսկասարար են դրած, ապա կրօնատած. ի հարկէ, պէտք է միշտ աւելացնել՝ «մինք պէտք է տեսնենք, լիսկա, տեղեկանանք, կարդանք»:

1. Վերլուծութիւնները

մեծ մասամբ շատ ինամբով են մըշակւած. նրանք աշակերտների մէջ այնպիսի մտապատկերներ ու սրանց վերակից զգացումներ են վերարտագրում, որոնք լիովին պատրաստակամ են լինում նոր աւանդելին իւրացուցանելու (տ. § 26 բ. հ. եր. 166, § 38, 39 և այլն): Այս կատարելութիւնը շատ անգամ չափազանցութեան է համուսմ, բանը ծանրանում է, մինչեւ անգամ 2 աստիճանի սահմաններն է մտնում և նորը տեղ-տեղ արդէն աւանդում (տ. § 7, 8, 18, 26 և այն): Երբ նորը աչդպէս դիւրաւ գուշակելի է վնասում, այն ժամանակ պէտք է վերլուծութիւնն ու լանդիմանարարութիւնը (նորը) իւ առն ել: Այս դէպքում ուսուցիչը միայն հարցեր է տալիս, իսկ զասարանը մակարեւում Ուսուցիչը միայն այն է լըրացնում, ինչ որ զասարանին անկարելի է և ախատեսել: Աշակերտների ինքնուրութիւնն աշխատութեամբ նորի կազմելու այս մեթօդը գերմաններէն darstellend է անւանում, որն իսկապէս աջող չէ արտավագում պիտ մեթօդի իմաստը: Այս մեթօդը ակժմ առանձին կարիւրութիւն է ստացել Հերբարտի չկօլախում, որովհետեւ նա մեծ առաւելութիւններ ունի լանդիմանարարութեան ավելանակների առաջ, իրարև ինքնուրութիւն զարգացնող ուղղութիւն, ինքնուրութիւն, որ թէ կրօնական-բարողական գործառնութիւնների և թէ ավել բոլոր գործերի մէջ ամենապլիսաւոր ըանն է:

2. Յանդիմանարար ըութեան աստիճանի մի մասի, այսինքն՝ հում

Նիւթի մատակարարութեան մասին ես արդէն խօսել եմ, երբ առաջ եկաւ աշակերտական դասագրքերի հարցը: Հում նիւթի դասաւորութեան վերաբերութեամբ ես համակարծիք եմ «Schuljahr» III հետեւեալ մաքերին, ի հարկէ դատելով ընդհանուր մանկավարժական տեսակիտից և ի նկատի չ'ունենալով այս կամ այն ուսումնարամի նախագծած ծրագիրը: Ազդ հեղինակաւոր գիրքն ասում է: «Եւ մինչդեռ մենք սանին պատրիարքների պատմութեանը ծանօթացնում ենք, մենք կամենում ենք, որ նա սովորի ընկերական հեղինակութեանը լիակատար և մաքուր մանկական հնագանդութեամբ խոնարհել, ինչպէս և ապագակում՝ հիմունքների գիտակցութեամբ: Սորանով ևնթադրում է, որ ընկերական հեղինակութիւնը նորան երևակ ամենահասարակ ընկերավարական (social) լարաբերութիւններով և իրան անպէս ցուց տակ, որ այս չարաբերութիւնները բոլոր ապագայ չարաբերութիւնների համար օրինակելի լինել կարողանան»:

«Որ Ստեղծագործութեան և նորա հետեւեալ պատմութիւններն այս խընդիրը չեն կարող լուծել, հարկ չենք համարում բացատրելու: Բացի սրանից աս նիւթերն իրանց կրօնական փիլիսոփական հիմունքներով մեր աստիճանի համար շատ դժւար են: Պէտք է միան մտածել Պատուիրազանցութեան և Աշտարակաշինութեան մասին! Թէև կարելի է այս պատմութիւններն և այս աստիճանում աւանդել, բայց անկասկած ի մեծ վեաս նրանց ներքին խորին բո-

վանդակութեանը: Յանկալի է աշնուամնեանիւ, որ, ինչպէս շատ բանում, նողնպէս և աշստեղ՝ հեռու մնացին կրօնական նիւթերի և իդէաների անժամանակեալ դասաւանդութիւնից (Verfruehung) և սրանց մի այնպիսի ժամանակի վերապահէին, երբ մանուկների մաքերի աւելի հարուստ պաշարը և ոգեկան աւելի հասունութիւնը դասաւանդութեան ճշմարիտ հետեանքի խորին հասկացողութեան համար գրաւական լինել կարողանակին (!): Մենք ուրիշն ստորին աստիճաններում չենք աւանդում նախնական պատմութիւնները և սկսում ենք Սրբազն Պատմութիւնը Արքա հ ա մ ի ց: Երբ մենք այս սկզբունքով ենք զեկավարուում, սանին պէտք է միան անպիսի պատմութիւններ անել, որոնք հոգեբանօրէն նորան մօտ են»:

Ես դիտմամբ այսքանո մշջ բերի, որպէս զի գննէ ալսուհեսն ծրագիր և դասագիրք կազմողների աչքից չը վրիպի ալս շատ կարևոր քննական հայեցակէտը:

Կրկին զառնալով մեթօդին՝ պէտք է և աշստեղ զիշել, ինչ որ խօսեցի վերը darstellend եղանակի գործադրութեան մասին, որ օրինակ՝ § 8ում շատ չարմար էր, նոցնպէս § 26, եր. 166 և նոյն § 26 երկրորդ հասւածում նմանները առաջից ու վերջից: Առհասարակ լանդիմանարարութեան օրինակների մեծամասնութիւնը լաւ տպաւորութիւն է գործում (տ. § 23, 17, 18: Ա. խառն, խկ բ. աջող, § 26 Ա. ա. նոյն § 26-ի երկ. հասուածում՝ աջող. Ա. գ., § 38, 39, Ա. բ. § 70 և այլն): Բայց վե-

րովիշեալներից աջողւած են և հետևեալներն, օրինակ՝ § 18 Ա. § 39, Ա. և նմանները. Այս աստիճանում մի պակասութիւն ևս աչքի է ընկնում. այդ այն է, որ «նիւթի մէջ խորասուզվիլը» (Sachliche Vertiefung) և կրօնական-բարոյական նոյն գործառնութիւնը (այրօցեսսը) միշտ միմեանցից խստութեամբ զանազանւած չեն, որ կարդացածներիս մէջ սական սակաւ աչքի էր ընկնում:

Այս աստիճանի ամենազնահատելի արժանաւորութիւններից մէկն է քաղաքակրթական—պատմական (կուլտուր-հիստորիկական) և աշխարհագրական նկազրութիւններն ու տեղեկութիւնները, որոնց քիչ չեն նպաստում բաւականին աջողւած պատկերներն ու քարտէզները. Այս կողմից, որքան ես գիտեմ, մեր նմանօրինակ դասագրքերը զուրկ են, ուստի և պատմութիւնը հէքիաթի բնարութիւն է ստանում, երբ ժամանակներն էլ մանաւանդ չեն զիշում:

3. Զուգորդութեան մշակումը նոյնպէս ընդհանրապէս աջողւած է, (օրինակ § 17, 18, 38, 39 Ա. Ա. իսկ խառն են, օրինակ՝ § 7 Ա. Բ., ուր 2 աստիճանի դատողութիւններ են (Vertiefung), § 38-ում 1 և 2 աստիճաններ, § 26. Երդ. հատ. Ա. խառն, ուստի և ճապալ, § 39 Ա. Բ. պարունակում է 5 աստիճանի հարցեր և ազն: Այս աստիճանը, որի գործն է թանձր բազմակողմանի նիւթերից վերացուցման միջոցով զուտ գաղափարներ կաղմել՝ պէտք է աշխատի, որքան հնարաւոր է, խուսափել մանրամասնութիւններից:

Գովասանքի արժանի է աշխա-

տասիրողի ձգտումը՝ այս համեմատութիւնների ժամանակ հաջկական պատմական կեանքի երեւութիւններից էլ օգուտ քաղելը (տ. § 39, 43, Ա. և § 50 և ազն), որ սական որքան շատ լինէր, ազնքան լաւ:

Համակարգութիւնը ընտրութեան համար հարուստ նիւթ ունի, որ զանազան տեսակ պէտք է կատարի: Այս աստիճանի բատկանիչն է մի երկու խօսքով՝ վկացութեամբ, ասացւածքով և ազն արտավատել դասի դաղափարը: Եթէ աշակերտի ձեռքը դասագիրք տրւած չը լինէր, պէտք էր ես առաւել համառօտ վկացութիւններ բերել, որ աշակերտները պէտք է իրանց տեսրակների մէջ դրէն:

Այս աստիճանում աչքան աչքի չեն ընկնում հակական կրօնական դրականութիւնից մէջ բերած օրինակները. իմ կարդացածների մէջ՝ միան 245 Երմ. ժամագրքից:

Գործադրութեան աստիճաններն ես շատ լաւ օրինակներ ունիմ: Աստեղ աւելի կարեոր էին հայ աշակերտների կեանքի դէպքերը մէջ բերել կամ երեւակալական խարաբերութիւններ ներկազացնելով՝ աշակերտի դատողութիւնը լսել: Վերջինս չը կար բաց որ ամենազլիսաւորն է, եթէ դասաւանդութիւնը կանոնաւոր ընթացք է ունեցել, աշակերտները պէտք է գործն ական կեանքի նմանօրինակ դէպքերում զեկավար ու է ին Սրբազն Պատմութիւններից ստացած սկզբունքներով և ամեն անդամ իրանց հարց ու փորձ անէին. «Արդեօք աչսպէս որ անեմ,

համապատասխան կը լինի այն ժամանակ սովորած սկզբունքին»։ Եւ այս պէտք է լինի կրօնուսուցման և ամբողջ կրթական ուսումնարանի կէ տն պատակ ըւ։

Գրքի վերջը համախմբւած են ժամանակադրական, աշխարհագրական, կուլտուրական-պատմական նիւթերն ու բարոքական կրօնական իմաստները։ Որպէս զի ուսուցիչը կարողանար հարկ եղած ժամանակ օգուտ քաղել աշխարհադրական ու կուլտուր-պատմական տեղեկութիւններից (3 և 5 աստիճանների համար), աւելի լաւ կը լինէր ազստեղ մանրամասն դրեւ և ոչ թէ միայն անունները տալ. իսկ ինչ վերաբերում է բարոքական-կրօնական իմաստներին՝ որոնք պէտք է արդէն ոչ թէ ժամանակական, այլ գաղափար արակ ան տեսակէտից համախմբւէին և նման խմաստներից մի. քանի հիմն ական (կարդինալ) սկզբունքները նարէին իրրեն զեկավարիչն երկ կաչաց իշներ։

Կրօնուսուցը պէտք է առանց կարդալու ըստ թողնէ և «Մի քանի խօսք հաչ կրօնուսուցներին» տեսրակը. և ոչ միայն աղքան. նա պէտք է խոր մտածէ նորա սրտաբուզին արտաքանակութեամբ արտաքանակութիւնների մասին կրօնի և դասաւրութեան վերաբերմամբ։

Ես կարծում եմ, որ այսու ամենալիւ մի բան ես պակաս է այս աշխատութիւնների լաւագուն արդիւնաւորելուն-։ Ուսուցիչների համար կազմած զասազրում պէտք էր կրօնի հինդ աստիճանների գործադրութեան վերաբերմամբ ուզեցոց նկատողութիւններ տար, որովհետեւ ես ես,

օրինակ՝ որ արդէն ծանօթ եմ այդ մեթօդին և պարապել եմ աղդ եղանակով շատ անգամ՝ չէի կարող տեսնել, աշակերտն է խօսողը, թէ ուսուցիչը ինձագէսին հեշտ էր, ի հարկէ, ճշմարտութեանը հասնելը, բայց ով նոր է ոկտոմբեր նորա համար զժւար է։

Վերջացնում եմ ասելիքս, որ սական շատ երկարեցաւ. Ի՞նչ արած, թէ և խմբագրութեան կողմից ինձ լանձնարարած էր «Մուրճ»-ի սովորական հակիրճ եղանակով քննելու բաց տեսաչ, որ ինպրի կարևորութիւնը և բազմակողմանիութիւնն անհնարին արին իմ մտքերը մասշտաբի տակ դնելու։

Ահա և այս ուսումնարանական տարին վերջանում է, քննութիւններն սկսել են, ուսումնարաններն հաշիւեն տեսնում իրանց սաների մտաւոր և բարոքական կեանքի առաջադիմութեան։ Թոնդ այս մեթօդով ոգեւորւած մարդիկ իրանց պաշտօնակիցների մէջ ատարածեն նորա դաշտավարները, օրինակելի դասերով և այլ միջոցներով ուսումնարանական կեանքը մայնեն և այս նոր ուղղութիւնը, և այն ժամանակ պէտք է լուսալ, որ նորա տեսողական գործադրութեամբ այլ արդիւնքների կարելի է գալ. Ակիզը, ճշմարիտ է, գժւար է աջողւում, բայց վերջը շատ գրաւիչ է։

Մենք տեղեկանում ենք, որ արժանապահիւ հայր աշխատասիրողն արդէն պատրաստել է ե՛ «Նոր Ուսութի» «Ուզեցուցը»։ Տաչ Աստուած, որ նորան օժանադակ լինին ձեռնհաս ընկերութիւններ կամ անձնաւորութիւններ, մանաւանդ այս մեր համար շատ կարևոր կրօնուսուցման վերա-

Նորոգիչ գործին (վերանորոգումն | առաջին Վարդապետի, Քրիստոսի,  
քրիստոնէական վարդապետութեան | մեթօղի): Յ. Տ.-Մ.

## ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

1. BARCHUDARIAN, D-r IOHANNES. Inwiefern ist Leibnitz in den Psychologie ein Vorgaenger Herbarts. Ein Beitrag zur Geschichte der Psychologie. Iena, Frommannsche Buchdruckerei (Hermann Pohle), 1889. (Բարխունարեան, Գոքտօր Յովհաննէս՝ Որքանով Լէլբնիցը Հոգեբանութեան մէջ Հերբարտի նախորդն է: Մի նպաստ հոգեբանութեան պատմութեան: Ենա, 1889.)

2. ԲԱՅԱԶԻԴՅԻՑԻ. «ԹԱՍԻԲԻ». Տաճկահայ պատաճիների կեանքից: Տպար. Վարդանեանցի, Թիֆլիս, 1889. գինը 20 կոպ.:

3. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ ԿՈՍՏԱՆԴԻՒՆ՝ «ՈՒՂԵՑՈՅՑ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ»: Թիֆլիս. տպ. Վարդանեանի. 1885. գինը՝ 60 կոպէկ:

4. Նոյն հեղինակ՝ «ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ-ԱՆՄՇԱԿ և ՄՇԱԿԻԱԾ ԾԱՌԻ ԿԵԱՆՔԸ»: (սկզբունք ավելցործութեան: Հրատարակութիւն «Աղբիւր»-ի: Թիֆլիս. տպ. Մարտիրոս. 1885. գինն է 30 կոպէկ:

5. Նոյն հեղինակ՝ «ՇՕՇՎԱՅՑ ՂԱԼԻՆ ԽԵԲՆ ՈՒ ՇԱՌՈԼ»: Կիրեց ՏԸՄԲ-ԼԱԶԻ ԽԱԶԱՆ: Թիֆլիս. տպ. Վարդանեանցի. 1887. գինը՝ 45 կոպէկ պատկերով, 35 կոպ. առանց պատկերի:

6. Նոյն հեղինակ՝ «ԾԽԱԽՈՑԸ ԵՒ ԻՒՐ ՎՆԱՍՆԵՐԸ»: Շուշի. տպար. Հայոց Հոգ. Տեսչութեան: 1888. գինը՝ 10 կոպէկ:

7. Նոյն հեղինակ՝ «ՓՇՐԱՆՔ»: I. Շուշի, տպ. Հայոց Հոգ. Տեսչ. 1888. գինը՝ 15 կոպ.

8. Նոյն հեղինակ՝ «ՈԳԵԼԻՑ ԸՄՊԵԼԻՆԵՐԻ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ»: Շուշի, տպ. Հայոց Հոգ. Տեսչ. 1889. գինը 10 կոպէկ:

9. ՓԱՆԵԼԱՆՅ ԹՈՄԱՍՄ «ՄԵԼԻՔԻ»: Պատկերներ հայ գիւղական կեանքից: Թիֆլիս, տպ. Վարդանեանցի, 1889 թ. գինը՝ 25 կոպ.: Ծախուռմէ յօդուա Ռաշտ քաղաքի Հայոց ծխական դպրոցի:

10. ԳԵ ԱՄԻՉԴԻՍ ԷԴՄԱՆԴԻՑ, թարգմանութեամբ ՓիլիՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՍԻՐԸ, աշակերտի լիշտակարանը: Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի, 1889 թ. գինը՝ 1 րուբ.:

11. Նոյն հեղինակ, նոյն թարգմանիչ ԱՊԵՆԻՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՒ ԱՆԳԵՐԸ, Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի, 1889 թ., գինը 20 կոպ.:

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

Անցեալ ամիսը սկսւեց մի ընդհանուր շարժումով, որը տարածւեց ամեն տեղ, որտեղ կան կրթութիւն ստացող երեխաներ և պատանիներ. Դուք տեսնում էք, որ «Մանուկների արշաւանքը», որը չը գիտեմ թէ խաչակիրների ռեերորդ արշաւանքն էր, միմիան միջին դարերում պատահելու բան չէր, այլ և մեր ժամանակների. Բայց այս զանազանութեամբ, որ առաջինը, պատմականը, միայն մի անգամ պատահեց և պրծաւ. մեր ժամանակներինը՝ դատապարտւած է միշտ և ամեն տարի և ամեն տարւաց միենուն ամսին կրկնւելու. Յունիսի ամիսը, ումն էլ որ չը լինի, աշակերտները իրանցը կարող են համարել ի ուղեք, չ'ուղեք՝ նոքա ձեղ կը ստիպեն իրանցով զբաղւել, նոցա մասին հաշիւ տալ, իրանց մէջ հերոսներ հանդիսացածների անունները ոչ միայն կողմնակի կերպով իմանալ, այլ և ազդ անունները հրատարակել լրագիրներում, իմանալ նոցա որ ազգին, որ կրօնին, որ զաւանութեան պատկանելը, ճանաչել նոցանից մեղալաւորներին. Նոքա ձեղ կ'ասին և զուք էլ կը լսէք մեծ հաճութեամբ, թէ ուր պիտի այսուհետե գնան, ինչի՞ն պէտք է նւիրեն իրանց միտքն ու ուշքը, ինչ գիտութիւն պէտք է սովորեն:

Զգացւեցէք, պատանիներ, այն ուշադրութիւնից, որ ձեղ նւիրում է հասարակութիւնը: Դուք զեռ ևս գործ չէք կատարել, այլ միայն լսել էք, ինչ ձեզ լսել են հրամագել: Ձեր բոլոր քաջազործութիւնը այն է եղած, որ դուք, պարտաւորւած, ձեր զբուխն էք մտցրել շատ թէ քիչ տարրական գիտելիքներ, որ մշակել են գիտութեան հանճարները և որ դուք ընդունել էք ոչ հանճարների ձեռքով, այլ հասարակ մահկանացուներից, որ պիսիք են ձեր վարժապետները: Դուք զեռ ևս միայն մնունդ էք առել, ուրիշ ոչինչ: Այն, ինչով բնութիւնը, Աստուածը ձեղ օժտել է՝ բանականութիւն, նորա սնունդն էք առել զուք հասարակութիւնից, ազգից, պետութիւնից և այնքան, որքան կարողացել է ձեղ համար մնունդ պատրաստել մարդկութիւնը և այն ձեռվ, ինչպէս կարողացել է մարդկութեան մտքի նիւթից խմոր պատրաստել հասարակութիւնը, ազգը, պետութիւնը: Աւ-

դեռ ալդ բոլորը ձեղ տւած է միայն ազնքան, որքան ձեր խելազատակը կարող է ձեր հասակում իւր մէջ ընդունել՝ մարսնելու համար: Եւ դուք ինքներդ կը վկաէք, որ ձեղ տւած հատիկներից, օհ, ո՛րքանը, ո՛րքանը մնացել են ձեր ուղեղների քչամանում—առանց արիւնի մէջ անցնելու...»

Ալդ ամենը զիտէ հասարակութիւնը, բաց և ազնպէս նա ուրախութեամբ կարդում է ձեր մասին տեղեկութիւններ, և որը հալքական ու մալքական, որը եղբայրական ու քոյրական լափշակութեամբ իրանց տածած զգացումներով զէպի ձեղ՝ կարծես եկել էլն ձեղ ողջունելու զպրոցի չէմքից ձեր ոտք դուրս դնելը, ինչպէս 7—8 տարի առաջ ձեր ծնողները, ձեր ձեռը բանած, երկիւղածութեամբ և սրտները վերը ջերմ աշօթքով ողջունում էին ձեղ զպրոցի չէմքի ներսը ձեր ոտք դնելը:

Ալդ լնչի՞ցն է արդեօք, Նրանից, որ նա ձեղ վերաէ է զնում իւր չոփերը մեր երկրի, ազգի, գիտութեան և բարովական լաւաջդիմութեան գործի համար: Ալդ սպասելիքը ամեն մարդ թաղցրած ունի իւր սրտում, վկաէ նա ալդ, թէ չը վկաէ—ալդ նոյնն է: Տայց խմացած կացէք, պատանի երիտասարդներ, ձեր հալքների ժողովուրդը երբ ալդ առիթով ոգեւորութիւն է լայնում ոչ ձեր գիտութեան վերաէ, որ չնչին է, ոչ էլ ձեր ասլազակ անձնական լաջողութիւնների պատկերով է դրայւած: Ալդպիսի լաջողութիւններով չէք զարթեցնիլ ոչ ոքի մէջ ողեւորութեան զգացումներ, կամ նոյն խոկէբարեհամ ուշապրութիւն զէպի ձեղ: Միթէ ալդ հասկանալի չէ և զեռ բացարութեան կարօտ: Ո՛չ երբէք:

Երիխան որ երեխաէ է, նա էլ կը զառնար ատելի սրարած, եթէ միան մարդս կարողանար տեսնել նորա սրտում ապազապ ոճրազործի, ապազապ հարստանարդի, ապազապ անպիտանի մէկի կենդանի պատկերը: Եւ ապօր եթէ հասարակութիւնը ձեղ ողջունում է, նա ենթազրում է ձեր մէջ ապազապ լաւ զործիչներ: Նա ենթազրում է, որ ձեղնից ամեն մէկը դառնալու է մի անհրաժեշտ անզամ ձեղ կեանք տւած հասարակութեան, նորա կարիքները հասկացող, ձեր գիտութիւններով ու ձեռք բերած ձեռն-հաստութիւնովը նրան օդնող և ոչ թէ նորա տպիտութիւնից կամ անձարութիւնից օգտագործ, գործող և կամ ուղղակի անպէտք, զործից փախչող ինքնահաւան և ծովը զիտաւններ:

Միմիայն և միմիայն ալդ սպասելիքն է, որի շնորհիւ դուք հասարակութիւնն քաղցրութիւնն էք վաելում ապօր: Զգացւեցէք, ուրիմն, ալդ ուշապրութիւննից և աշխատեցէք, որ ձեր ապազապ զործունէութիւնով և ձեր զգացումներով արդարացնէք մեր ամենքիս սպասելիքը: Ալդ ատելոց վետ, մազթում եմ և ես բարի ճանապարհ:

Մի հաղւագիւտ երեսով, դուցէ մեզանում դեռ՝ չեղած երեսով. այս տարի միջնակարդ զպրոցների դասընթացը աւարտողների մէջ ամենքը և զարմացմամբ և՛ հաճութեամբ կարդացին երեք թուրք օրիորդների անունները Ուրեմն, մտածեցին ամենքը, թուրք հասարակութիւնը պատում է խաւարով ծածկւած քողը, որի ետև պաքան զարեր փակւած է մնացել մահմեղական միտքը: Միթէ մահմեղական աշխարհի սիւները այնքան խարխուլ են զառել, որ մի քանի աղատամիտների դիմադրութեան ըստ դիմանար... 0'հ ոչ, անշուշտ ոչ—շտագեցին պատասխանել նորաւարա թրքուհիներից մէկի աղատամութեան մէջ «մոլորած» ծնողներից մի զուգ: Հետաքրքրական է փաստը, որի հասարակական նշանակութիւնը ոչ ոք չի հերքիլ: Եւ ահա թէ փաստը ինչումն է: Ուսւաց օրիորդաց ինստիտուտում աւարտողներից մէկին արդէն շտագել են տալ «հարեմ» և, ուրեմն, զաստապարտուած է կրել այն ստրկական դրութեան կազերը, որը մինչև անդամ թուրքերի հասարակ զասակարգի աշքում համարում է ամօթալի: Տիկին Ա., հաւատացնում է ուսւաց ներից մէկը, մտել է հարեմ արդէն հասակն առած և ամուսնացած մի մարդու, որը, որպէս ասում են, իւր նոր կնոջ հասակի աղջիկներ ունի: Մահմեղական պսակի, քեթինի խորհուրդը կատարւել է շատ վկաների ներկայութեամբ, և յօդուտ աղջկաւ հօրը կարած տուգանքը, պսակալուծութեան դէպքում, որոշած է 30.000 բուբլի: Եւ այդ օրիաբլը, որ այժմ հարեմի անդամ է, միակ աղջիկն էր իւր հօր, որը, չաւելումն բոլորի, մի բոլորովին ապահոված մարդ է և խոչը դիրք ունի բոնած թրքական հասարակութեան մէջ. բանից ուրեմն դուրս է գալիս, որ մի ծիծնակ զեռքարուն ըստ բերեց թուրքերի համար: Սական, ի պատիւ Թիֆլուսի թուրք հասարակութեան, պէտք է ասել, որ նա սրասանց զալբացած է այդ դէպքի առիթով:

Յունիսի ընթացքում խօսած ճառերից ես գտնում եմ երկուսը, որոնցից մէկը ես իմ ձեռքով կ'ուղեի դնել իմ ընթերցողների առջև, թողնելով որ պարոն Ձա-ը երկլարդից անէ այն զործադրութիւնը, որ նա կ'ուղէ անել: Երկուսն էլ խօսեցել են քրանսիացիք. նոցանից մէկը Ռընանն է, միւսը Ջերրին. այս վերջինը քրանսիացում իշխող կուսակցութեան պարագլուխ, առաջինը, Ռընանը, ո'ւմը չէ լավանի այդ՝ զբականութեան և գիտութեան ալժմ փազիլող աստղերից մէկը, բայց մէկը, որը գիտութեան պահանջների խառնութեան հետ կարողացել է միացնել խօսելու մի չնորհք, որը նորանից դարձել է հրապարակախօս-պատմաբան-գրամէր-հուետօր, այն ստիճան ժողովրդական, որին սակաւ զիտնականներին լաջողել է ներկայ դարում: Գնացէք մի ծողով՝ կաղմաւած 99 քնթի մազ արխէօլոգներից, ստատիստիկսաններից և էլ ի՞նչ զիտեմ ինչ զիտնականներից: բայց երբ 100-րդը

Ռընանն է, իմացէք, որ լսողութիւնը լարելու արժանի մի խօսք կ'ասւի, որը և կը կազմի բոլոր խօսակցութեան աղբ։ Համովհոտով մի մարդ է, որին մարդս բոլորովին այն կերպ չի կարող երևակալի, քան ինչ նա է խսկապէս։ Երբ ես նորան առաջին անգամ տեսակ, մտածեցի. —Այս մարդը, որ Գրիստոսի կենսագրութիւնն է գրել և «Գրիստոնէութեան սկզբնաւորութիւնների» մի քանի հասորները, այս մարդը, ասացի, որի մտանազիտութիւնն է երրակներին լեզուն, այնքան խորն է մտել իւր մասնազիտութեան մէջ, որ ինքը վերջ ի վերջու երրակնցի է դառել։ Collège de France անունով Պարիզում ինչ որ մի դպրոց, թէ համալսարան, թէ ճեմարան, թէ ինչ քար—քացախ կաէ, որի պրօֆեսորներիցն է Ռընանը։ Անշուշտ բարձրագոյն ուսումնարան է ացի Կոլլէժ դը Ֆրանսը. բաց կանոնաւոր համալսարաններին աշք ու ականջը սովոր մարդը չի կարող նորա համար ջատուկ մի անուն ստեղծել, այն աստիճան անորոշ բնաւորութիւն ունի նա։ Լսողները ուսանողներ չեն, այլ միմիացն լսողներ. փողոցով անցնողը, մանաւանդ երբ նա դադրած է, ապահով է, որ լսարաններից մինում կարող է երկար աթոռներից մինի վերակ նըստած քուն մտնել էստետիքի մասին դասախոսութեան ակոմպանիմենտով։

Ինչ և իցէ, դադրածութիւնից է, թէ ճետաքրքրութիւնից—մի անգամ երբ մտալ ալդուղ, դասախոսութիւնների ցուցակում ընկաւ աչքիս Ռընանի սննունը. ճիշդ այն ժամին նա պիտի դասախոսէր։ Որոնեցի նորա լսարանը, մտակ... Հասարակ մեծութեան մի սենեակ, մեծ սեղան, որի շուրջը նստած 25—30 հոգի խորին ուշադրութեամբ հետեւում են նոյն սեղանին նստած պրօֆեսորին։ Դա Ռընանն էր. մեծ, հաստ գլուխ, անբեղ, անմորուս, փոքր ինչ ճաղատ, ինքը լիքը, կենդանի՝ բաց հեղ կապատ աչքեր։ Կը լինէր լիսուն տալեկան (այդ 1878-ին էր), ֆնսում էին ինչ որ ձեռագիրներ և համեմատում բնագիրներ։ Ինչ խօսք, որ երրակներով էին դրադւած։ Խմ ուշագրութիւնը ամբողջապէս կլանւած էր Ռընանի անձնաւորութիւնով։ Միթէ, մտածեցի ես, այս հաստ և չաղ գլխում այն ուզեղն է, որի ծալքերից բղխում են քրանսիական լեզուի ամենանուրը թելերը. որովհետեւ ոճի կողմից ոչ ոք Ֆրանսիացում Ռընանի հետ չի մրցում, նաւմանաւանդ որ իւր ոճի մէջ նա զիտէ դիտութեան հետ միացնել մի անսահման բարութիւն և մի ինչ որ ոգի, որը նոյն ինքն մարդկանութիւնն է։ Դասից գուրս գալուց ես գնեցի մօտակաց մագաղիններից մինում նորա պատկերը, իբր լիշատակ, որին զիմում եմ ամեն անգամ, երբ Ռընանից լրագիրը մի լուր է բերում—այն աստիճանի չեմ կարողանում հաշտել նորակերպարանքի հետ, երբ նորա մտքիրն եմ կարողում։

Դիմում եմ, ուրեմն, Ռընանի խօսածին, քանի որ Ռընանը մինչև այժմ ոչ ոքին չի ճանձրացրել։

Պէտք է ստեմ, որ Ֆրանսիակում տարին մի անդամ լինում է դիտ.

Նական ընկերութիւնների ընդհանուր ժողով։ Այդ ժողովումն է, որ Ռը-  
նանը արտասանեց հետեւելը.—

Պարոնն է ը.

«Երբ հասարակաց լուսաւորութեան պ. մինխատրի մի պատգամաւոր  
եկաւ ինձ պատւելու, մի ամիս առաջ, որ ես մասնակից լինեմ այս հան-  
գիսաւոր ժողովին, ես այնքան զգացւեցի հաճուքից, թէ ես մի քանի րո-  
պէ ձեղ հետ խօսակցելու առիթը պիտի ունենամ, որ ես մոռացակ մի  
քանի տարի առաջ արած իմ խելացի վճիռը՝ այլ ես երթեք չը խօսել մի  
մեծ ամֆիթատրոնում, որ իմից աւելի երիտասարդ և աւելի վասահ ձագ-  
ների համար է շինած։ Սական, փորձութիւնը շատ էր մեծ։ Մի ձեղ նուան  
առողջարիսա, որը այնքան լուսաւոր ընտրութեան արդիւնք է, ինձ հա-  
մար սակաւագիւտ բաղդ է թւում։ ձեր ժողովը ինձ թւեց՝ որպէս մի կեն-  
դանի ապացուց մի մտքի, որը ինձ սովորական է, կամ, աւելի լաւ ասած,  
որպէս վճռական ապացուց չօգուտ մի բողոքի, որը ինձնից դուքս է պըրծ-  
նում տմեն անդամ, երբ ես լսում եմ այն ցաւալի և սխալ կարծիքը, իբր  
թէ Պարիզից դուքս աշխատել չի կարելի։

«Մի այնպիսի ժամանակ, որպիսին առօր է, այդպիսի հաւեացք ուղ-  
ղակի անմիտ է, նա է մի non-sens,

«Այսքան բարձր պարզեների ու աշխատութիւնների այս ահազին  
մասսակի առջև, որին ամենաձեռնհաս դատաւորները բարգանք են ցուց  
տալիս՝ ձեր վիճաբանութիւնները անսահման, բաղմազան առարկաների  
մասին լսելուց լսուի, որոնցով զբաղւում է մարդկավին ողին, դաւարի զիտ-  
նական արգասաւորութիւնը կարօտ չէ ապացուցի։ Բայց և այնպէս հակա-  
ռակ կարծիքը զավթակցում է շատերին և շատերին ճանապարհից հանում  
է. ես կ'ուղեկի որոնել նորա պատճանները ե, եթէ կարելի է, ցուց տալ մի  
քանի միջոցներ, որոնցով մի քանի խսկական անգամարութիւններ կա-  
րելի կը վնի նումացնել։

«Այն կարծիքը, թէ դաւառում չի կարելի աշխատել, հարիւր տարի  
չը կաէ, որ զուգութիւն ունի։ Հարիւր տարի է, որ Տիւֆֆօնը նոր մեռած  
էր և բնական պատմութեան ընդհանուր գծերը նոր գտնւեցին Մոնլար՛ում։  
Մի քիչ զորանից առաջ Մօնակեսքիօն դաել էր քաղաքական պատմութեան  
ամենախոր օրէնքները Բօրդուամ։ Այն ժամանակ ոչ միան աշխատում  
էին դաւառում, այլ այնտեղ ստեղծում էին գործոց-դլուխներ։ Ազեկան  
իրերի կենդրոնացումը Պարիզում է 19-երորդ զարու սկզբի տարի-  
ներում։ Ողու լուսոյ այս հրաշալի կենդրոնի շուրջը կազմւեց տումբի մի  
խաւ։

«Փրանսիակի մտաւոր ոչինը մի զօրեղ տեղափոխումն էր կատարւում։  
III թւականի սահմանադրութիւնը վճռել էր, որ ամբողջ Հանրապետու-  
թեան համար լինի մի աղքակին խնստիտուտ, որի պարտականութիւնը լինէր

հաւաքել կատարելազործութիւնների գիտերը, գեղարւեսար և գիտութիւնները: Մի քանի շաբաթ լեռով, Դաշնագրութիւնը վճռեց. «Գիտութիւնների և արհեստների ինսարտուար պատկանում է ամբողջ Հանրապետութեան. Նա հաստատած է Պարիզում»:

«Պարզ է, որ ազգ վճիռը չը լարուցեց ոչ մի հակառակութիւն: Իւր առաջին կազմակերպութեամբ, ինտոփտուարը բաղկացած էր մի քանի անդամներից Պարիզում բնակւող և մի նախքան անդամներից՝ բնակւող Հանրապետութեան ազ և ազ մասերում: Քանի մի տարիներից լեռու տեսան, որ անհնարին է մի տեղ ժողովել զաւառաբնակներին. Պարիզ բնակելը դառաւ պարտաւորիչ: Անխուսափելի օրինքը կատարւում էր: Մի մաքսիմ, որը պրակարիկի մէջ պաշտպանում էն նոյն իսկ նոքա, որոնք թէօրիազով նորան հերքում են, չէր կարաղ չ'ունենալ իւր իոր արմատները: Հակառակ ուղղութիւնը՝ չափազանց կենդրոնացումը Պարիզում՝ մի քանի կողմերից իրաւացի էր:

«Ես արդարեւ իրաւացի էր ան իրական անհրաժեշտութեան առջև, գիտութեան մի առժամանակեալ գրութեան մէջ, որը պահանջում էր, որ ստեղծող ոչմերը կենդրոնանան մի կէտում: Գիտութեան ըիւջէտը ան ժամանակ թուլ էր. պարագաները շատ սահմանափակ էին, չէր կարելի ցրւել: Վարպետները նմանապէս քիչ էին թւով: Երբ Լապլասը միակ ինքը ունէր ըսնած ափեղերքի մեխանիկի խնդիրը, երբ Բերթուլի լարօրատօրիան կենդրոնացնում էր ջանքերը նոր ծնած քիմիալի, երբ բնական գիտութիւնների կոխւը ամբողջապէս կատարւում էր Կիւտիէ՛ի և նորա մրցողների շուրջը, երբ արեեւազիտութիւնը ծագում էր Սիլվեստր Սասի՛ից, — դպրոցների շատութիւնը աւելորդ էր: Ազ շատութիւնը մինչև անգամ կարող էր աղէտաբեր լինել Գիտութեան, գրականութեան և գեղարւեսարի մէջ ստեղծագործութիւնը սովորաբար կատարւում է շատ որոշ կէտերի վերակ. ստեղծագործութեան գարը անհրաժեշտ կերպով միաւորական է: Այն աեղջը ուր աշխատում էր Գավլէլը, դէպի իրան էր քաշել ամբողջ աստեղագիտութիւնը: Երբ Պէկարտը և Նիւտոնը իրանց ուղևորում պահած ունէին իրանց ժամանակի ամենարձր զալափարը, նոքա ևս զարհուրելի կենդրոնացնողները էին:

«Ուրեմն զարմանալի չէ, որ այն փաղլուն և պաղալեր շրջանը, որ ֆրանսիան անցել է այս վերջին հօթանասուն և հինգ տարիներում, պահանջած լինէր ծնելու մի տեսակ բուն, ուժեղ կերպով տաքայրած և զիտոնականօրէն սարքատձ՝ այնքան սերմնը ջլրմացնելու համար, որոնք այս բոտէին դառել են չոկ աշխարհների Հայիների համար, որպէս և մարմինների համար, տաքութիւնը գուանում է մերձաւորութիւնից: Ամեն զիտութեան սկզբնաւորութիւնները մեղ տանում հասցնում են մի շատ փակ զպրոցի, մի ձուլ, ևթէ համարձակւեմ աղլպէս առել, որ իւր մէջ է պազլրոցի, մի ձուլ, ևթէ համարձակւեմ աղլպէս առել, որ իւր մէջ է պազլրոցի, մի ձուլ, ևթէ համարձակւեմ աղլպէս առել, որ իւր մէջ է պազլրոցի: Երկնքի

քարտէղը շինելու համար հարկաւոր էր մի դիտարան, օբսերվատօրիա։ Հին բնագիրների վերականգնումը ուրիշ տեսակ անկարելի էր, և թէ ոչ մի ընդարձակ դրագարանի մերձակաջութեամբ։ Արէլ Ռէմիւզա՞ն չէր ստեղծիլ շինարէնի դիտութիւնը մի քաղաքում, ուր չը լինէիր չինական գրքերի մի ժողովածու։

«Բայց աչժմ իրերի դրութիւնը այլ է։ Հասունութիւնը, որին հասել են բաղմաթիւ գիտութիւններ, այն կենդրոններից դուրս է, ուր ստեղծել են նոքա։ Դրգերը և գիտական ժողովածուները այնքան բաղմաթիւ են դարձել, որ նոցա ընթերցումից կարելի է գալ ուրով եղբակացութիւնների թողնենք տեղական պատմութիւնը, որը այնքան հետաքրքրական է. զիտութեան գործի կէսը կարող է կատարել կարբինետի աշխատանքով։ Դիտութեան շատ ճիւղերում, արևելալիուսութեան վերաբերեալ, ուսւածքների մեծագուն մասը, օրինակ, հին գրքերը, որ գրւած են նորազան մեթօդների հաստատելուց առաջ, միան երկրորդական նշանակութիւն ունին։ Մի փոքր զոհաբերութիւնով մի խորաթափանց հետազոտող կարող է բազմաթիւ առաջնակարդ խնդիրների վերաբերեալ ունենալ իւր շուրջը լույր տարրերը՝ բոլորովին նոր քննադատական հետազոտութիւններ անելու համար։ Եւ շատ զարմանալի է, որ հէնց ամենանոր զիտութիւններն են, որոնք պահանջում են ամենից քիչ պարագաներ և որոնք աւելի լաւ կարող են մշակւել հին գրքերի պահետաներով սակաւ հարուստ քաղաքներում։ Հէնց ձեզ օրինակ՝ համեմատական լեզուազիտութիւնը։ Սկզբից մի քանի հազար ֆրանկ վեր զներով ու բաժանորդ զրւելով երեք կամ չորս մասնագիտական ժողովածուների, ձևոք կը քերտեն բոլոր անհրաժեշտ պարագաները ալս երկար և համբերութիւն պահանջող համեմատութիւնների համար, որոնց համար հոգու հանգստութիւնը, որ կարելի է վաելել զաւառում, ներկայացնում է այնքան նպաստաւոր պահմաններ։ Այսպիսով բազմաթիւ ճիւղեր կան ուսումնասիրութիւնների, որոնք կարող են մշակւել միանգաման մասնաւոր կերպով և ամենաչետնեալ տեղերում։ Դորա ամենալաւ օրինակը տեսց հոչակատոր Քօրդհեղի, որը զիտմամբ ընտրեց Սէն-Մարէն<sup>1)</sup>, որ լատինական արձանապարութիւնների զիտութեան՝ էպիգրաֆէալի ուսումնասիրութեան կենդրոնը դարձրեց։ Նա գերազանց մի զիւղ, ուր նորանով զբաղւում էին նորան միմիան լարդանքով զլուխ տալու շափով, քան պապական Հռոմը, ուր նրանով շատ կը զբաղէին բաց միան նորան խանգարելու համար։ Ես նունը կ'ասէլի Փիլոսօֆական գաղափարների համար։ Դարսինը երբէք չ'ուզեց թողնել այն դիւզը, ուր մի տեսակ բաղդի բերմունքը նորան հաստատել էր։ Թողնելով Պարիզին և մեծ կենդրուններին սակաւազիւս բաները, սահմանափակ մասնազիտութիւնները, հետազուսութիւնները, որոնք ողահանջում են ուժեղ դործիքներ, դաւառը

1) Մի փոքրիկ հանրապետութիւն՝ 7000 բնակչներով, ամեն կողմէց շքչապատաժ նույնացնով։

աշրպիսով կարող էր արդիւնքով ձեռնարկել աճթիւ աշխատութիւնների, որոնք ցալժմ բաժին էին գիտական մալրաքաղաքներին, բայց որոնք աչժմ ամենուրեք կարելի են...

«Մինչև անդամ աճսպիսի աշխատութիւններ, որոնք պահանջում են հին գրքերի ընդարձակ պահեստներ, աշխատութիւններ, որոնց համար Պարիզը ներկաչացնում է մեծամեծ առաւելութիւններ, գոյս համար իսկ գտաւոր ունի միջոցներ, որոնց նաև չը գիտէ: Ֆիլոսօֆակութեան քննութիւնը տալուց քանի մի օր լետով, 1848 թ.-ին, ես նշանակւեցի ուսուցիչ Վանդոմի լիցեռմ, որ ինձ մի քիչ զիւր չեկաւ, որովհետեւ ես արդէն սկսել էի իմ աշխատութիւնը Աւերրօիսի և աւերրօիզմի մասին: Պ. Կուզենը (հըռչակաւոր Քրանսիացի Փիլոսօֆան) և պ. Լըկերկը բարութիւն ունեցան իմ գործով հետաքրքրւելու: Ես զիմեցի պ. Կուզենին, որը ինձ պատասխանեց մի տումսակով մօտաւորապէս աշխափէս գրած. — «Եթէ հարկ լինի վկաչութեամ, իմ թանկապին Ծընան, թէ Վանդոմը աշխարհիս ամենավատ ընտրած տեղն է Աւերրօիսի մասին գրելու համար, ես նրան կ'ասեմ աչդ անժխտելի ճշմարտութիւնը»: Ես չը գիտեմ թէ Վանդոմը հին գրքերով հարուստ է թէ ո՛չ. բայց ես պէտք է ասեմ, որ գոնէ աշխատութեանս մի մասը ես զրել եմ աչդ ծովագերում: Մի քանի ամսով դնացած լինելով Սէն-Մալօ, — մի քաղաք, որը աւելի չէ գիտական, քան Վանդոմը, ես աճսեղ գտաչ մի գրադարան՝ կազմւած վաճքերի հին մնացորդներից, ուր փոշիի մի խափ տակ քնած էր ամբողջ սիոլաստիզը, ես գտակ Արխտողելի հրատարակութիւնները Աւերրօիսի Նկատողութիւններով, տպած Վենետիկում, Զիմարաբի ցանկերը և բաւականի թւով մնկնութիւններ Պաղտաւի վարժապետների: Վ'հ, ի հարկէ, շատ ժամանակ է, որ նրանց կարդացող չի եղել և դեռ ինդիր է, թէ երբ և իցէ նրանց կարդացել են: Բայց ինչ և իցէ, ալս փոշտ հատորների մէջն է, որ ես շարադրեցի աւերրօիզմի պատմութեան մի քանի զլուխները: Դորանից ես դուրս բերի ալս համոզմունքը, որ երբ մարզս լաւ որոնի, գտաւում կը զանի նիւթեր անասելի աւելի քան կարծում են, նաև ընդհանուր պատմական աշխատութիւնների համար:

«Եւ որքա՞ն նպաստաւոր են հանդստութեամ պակմանները, որ ներկայացնում է գտաւուր, քան անձուկ, վրդով, անհաստատ պայմանները Պարիզի կեանքի: Գիտնականի պահանջներից մէկը բնակարանն է՝ ընդարձակ, չարմարաւոր, ուր մարդ չը վախինաւ ոչ տեղափոխութիւններից և ոչ խանդարումներից: Լեզուազիտական, որպէս և Գիլդիական գիտութիւնները կարօտ են ընդարձակ սեղաններով կահաւորւած գործանոցների, որպէս զի զանազան աշխատութիւններ և թղթեր իրար հետ չը խառնւեն: Եւ բացի դորանից, ճշմարտութեան մէրը մարդուս զարձնում է միանակեաց, գտաւուր տալիս է աղդ առանձնութիւնը, հանգստութիւնը, աղաստութիւնը: Ես կամացնէի ընութեան հաճողքը և ժամանական աշխատութիւնների համար:

թիւնների համար հարկաւոր է ոգու անդորրութիւն և բերկրութիւն, ազստ ժամանակ և կատարեալ ինքնիշխանութիւն։ Մի մեծ քաղաքի արւարձաններում մի գեղեցիկ տուն, մի երկար դահլիճ՝ զրբերով կահաւորած, արտաքրուստ ծածկած բենգալիան վարդերով, մի պարտէջ՝ նեղ ուղիներով, ուր կարելի լինի զբաննել մի բաղէ այս գրքերից քաղած ծաղկները հետդ, —դոցանից և ոչ մեկը առելորդ չէ հոգու առողջութեան համար, որ անքան անհրաժեշտ է մտաւոր աշխատանքների համար, բացի երբ մարդու միլլիօնատէր է (որ հազւագիւտ է մեր մէջ)։ զէ որոնեցէք ազգական բան Պարփառմ, մի որ և իցէ չորրորդ լարկում, աս անհամ տների մէջ, որ շինել են ճարտարապետները, որոնք ոչ մի բաղէ գրասէր կենողի ենթագութիւնը չեն արել։

«Մեր գրադարանները, ուր մենք անքան սիրում ենք զրօննել մեր գրքերի և մեր մտքերի բազմազանութեան մէջ, սև կարինեաններ են, ամբարներ են, ուր գրքերը կուտակւած են, չ'արտադրելով ազօտ լուս անդամ։

«Պարփառ ունի Կօլլէժ զը Ֆրանս. աչդ բաւական է, որ ևս կպչեմ անտեղին Բացց, հարկաւ, եթէ Կօլլէժ զը Ֆրանսը լինէր սուրբ Բերնարդի Ժամանակաւ մի վանք, անտառի խորքերում կորած, օփինների երկար ծառուղիներով, կաղզնեների, եղիգնեների, ժարուերի մէջ, փակ ձեմելիքալի, ուր կարելի լինէր անձննի ժամանակ մանգալ, ապարագիւն սենեակների մի շարք, ուր երկար սեղանների վերակ կը բերէին դարսելու նոր արձանագրութիւններ և ալճ,—աճնակ մարդու աւելի քաղցրութեամբ կը սպասէր մահւան ժամին, և զիտական արդիւնաբերութիւնը աչդ հաստատութեան աւելի գերազանց կը լինէր, քան ինչ կաէ այժմ։ որովհետեւ միանակութիւնը լաւ ներշնչող է, և աշխատութիւնների արժեքը համեմատ է այն հանդըստութեան հետ, որով նորա շինուում էն։

«Մենք կը չափազանցնէինք մեր ասելիքը և նորան կը չեղաթիւրէինք, եթէ մենք ուղենալինք պնդել, թէ ամեն տեղ լարմարութիւնները նոնն են, Բոլոր քաղաքները չեն կարող ունենալ Պարփառի ինսալիտուուը, մի Կօլլէժ զը Ֆրանս, մի դիտարան, մի թանգարան, մի գրքոց ձեռազիններին Ամեն համալսարանի զրականութեան ֆակուլտէտ չի կարող ունենալ մի ամբիոն՝ արաբերէնի համար, մի ամբիոն՝ եկիսալուազիտութեան համար, մի ամբիոն՝ ասորագիտութեան համար։ Աւ վերջապէս, մի լաւանի տեսակ ընդհանուր դրդումն կաէ, եթէ համարձակեամ տեսէլ, զէպի նւիրումն, որի գաղտնիքը Պարփառ զետ երկար ժամանակ կը պահպանի։ Մեծ կրթութեան կնիքը ուրիշ տեղ չի կարող ստացել, եթէ ոչ Պարփառմ, Բացց մի անգամ նորա օծումն առած երկար կարելի է պահպանել նորա աղղեցութիւնն ու հոտը, Զերմենուանդ մահմեղականը, որը գնում է սրբազան քաղաքները, չի հարկադրւած աճնաեղ ապրելու, ամին տեղ, ուր նա գնում է, նա տանում է իւր հետ աճնաեղից—գուրս բերած սրբազան կրակը, զրոշմը, որ նա ալնանդ ստացել է, ողին, որ նրան ներշնչւած է, Պարփառ, միջին դարե-

րում, մտաւոր կրթութեան կենդրոնն էր ամբողջ աշխարհիս համար. այն-տեղ ձևակերպում էին, բայց այնտեղ չէին մնում: Ամեն ոք, այնտեղ ուսանելուց չետու, վերադառնում էր իւր երկերը և իւր ձեռվ զարգացնում էր այն արմատը, որ պատւաստած էր նրան...

Այս նրանցից չեմ, պարոններ, որ կարծում են թէ ողու կրթութիւնը պիտք է դաւառական լինի:

«Մարդկակին ողին չի ճանաչում դաւառներ: Լաւ մեթօղը չունի տեղալին կամ դաւառական բնաւորութիւն: Միմիան մի քիմիա կաչ, մի ֆիզիքա, մի ֆիզիօլոգիա, և կաչ միան մի լազուափառութիւն, մի քննազատութիւն: Զւարձութիւնը, կրօնական դրացումները, մանկական և երիտասարդական վշշութիւնները կարող են ունենալ տեղակին ձեւ, բայց գիտութիւնը մի է, որպէս մարդկակին ողին, որպէս ճշմարտութիւնը: Հիւանդը—այդ ամենաանաշառը բոլոր մարդկանցից, որովհետեւ նա միան մի բանի է ձգտում՝ բժշկւելու—երբեք չի դիմիլ դաւառական բժշկականութեան, եթէ ազգականի մէկը զուտթիւն ունենար: Նա միշտ կը լինի բժշկականութեան կողմը առանց ածականի, այն է լաւի կորմը:

«Գաւառի բարձր մտաւոր արդինաբերութիւնը չը պիտի դաւառի գրոշմ ունենա: Մարդ խար ամրողջ կեանքում սիրում է վիշել ժողովրդական բարբառով ան երգը, որով նա հրճւել է մանկութեան օրերին. բայց երբեք մի դիտութիւն, ֆիլոսօֆամութիւն, քաղաքա-անտեսութիւն չեն ստեղծվել բարբառով:

«Յառաջիւմութիւնը, գլուխական աշխարհում, չի բաժանում մարդկա-վին ողին դաւառների մէջ. Նա պիտի է ջնջի մայրաքաղաքի և դաւառնե-րի մէջ եղած տարբերութիւնները, և ամբողջ երկրից ստեղծի մի միակ զօրք, որը կ'աշխատի լոգուտ դիտութեան, բանականութեան, քաղաքա-կրթութեան»:

Մոռաւորապէս ակսողէս է խօսում մի ՌԸՆԱ, իմ ընթերցողներ: Որքան մարդկանութիւն է բուրում ան բոլոր խօսքերից և ողքան բարութիւն խօսողի սրաց: Ազդ բոլորը ուժի, զերազանց ուժի նշաններ են, ա-զատ հողու և կրթւած մաքի զեղմունքներ են: Եւ ես պինգում եմ, որ բա-րութիւնը, մարդկանութիւնը միմիան լաւ մշակւած ուղեղների արդիւնք են: Երբ ես ազդ տողերից աչքս կետ եմ զարձնում և նացում մեր լեզւով զրած ու տողած ճառերի վերաց կամ լողւածների, որոնք ճառերի տեղը պիտք է տան իրը թէ, մի մի անդամ իմ կատարեալ զզւանքս է զալիս, որից կիսով չափ թեթեանում եմ զետնին թքելով: Չը կայ, չը կայ նոցա մէջ ան ողին, որը կրթութեան աղն է, առանց որի զրականութիւնն ինքը դառնում է մի հարստահարութիւն կամ հարստահարութեան մի միջոց: Ցնցել ընթերցողների ներւերը ակմուկներով, համոզւած լինելով տոռւ-

թեան մէջ,—դա առանձին կարդի «համոզւածների» արհեստն է: Ես միմի հարցնում եմ ինձ.—թէ ինչպէս ևն կարողանում հանգիստ կերպով քնել ակնյալտնի կերպով չարանենգութիւն ծածկող գրադներ, որովհետեւ ևս այսպէս եմ մտածում, թէ դրելու պարապմունքը ամենաստոր ապրանքի վաճառականութիւնից էլ ստոր գիշակ է, երբ նորա մէջ, այդ զահրումար դրելու մէջ, չի գնուամ մարդկանութիւնից ներշնչւած ոգին, այն, որ կարող է տալ միան լաւ մշակւած ոգին:

Ներկայ ժամանակումս այսպիսի զգացումներ ծնեցնում են իմ մէջ առհասարակ այն բոլորը ինչ ուղղած է «Մուրճ»-ի դէմ, ում զվախից ու բերանից նա բղիսած էլ վնի և ինչ ձեռվ արտակացուած—այդ միենոն է: Եւ Աստուած միան գիտէ—թէ որքան մեծ է նոցա թիւը—և ինչպէս հետամուտ են նորա «Մուրճ»-ի ամեն մի տողին ու գարձւածին:

Ռընանը, որպէս տեսաւ ընթերցողը, շատ հաստատ է խօսում Պարփղի նշանակութեան մասին: Կա ասաց, որպէս լիշում էք, թէ մեծ կրթութեան կնիքը չի կարող ստացւել ուրիշ տեղ, եթէ ոչ Պարփղում: Ես ուղում եմ հաւատալ, որ Ռընանը հասկանալով է բան խօսում: Ահա ինչու ևս կ'ուղէի, որ Պարփղ գնացողները լինէին ոչ միան խմբադրութիւնների ներկաչացուցիչները, այլ բոլոր խմբադրատունները տնովտեղով, իրանց ամեն աստիճանի ծառալողներով ու աշխատակիցներով, որոնց պակաս են չափնի բաներ: Բայց թող ինձնից մի խորհուրդ առանց զլանալու լին, ով գնում է Պարփղ, թող գոնէ երեք.չորս ասրւաչ պաշար վերցնի հետը, որովհետեւ մի-երկու ամսում հազիւ կարող է մարդուս միտքն ու ոգին մշակել նոյն խոկ Պարփղը:

ԼՈՒՍԻՆԻ

## „ՄՈՒՐՃ“-Ի ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ: Հետեւելով մեր բաժանորդների շատերից չափանած յանկութեանը՝ ներկայ համարով ուղարկում ենք մեր բոլոր բաժանորդներին «Մուրճ» ամսագրի կյա տարւայ բոլոր համարների բովանդակութիւնը, որպէս զի կցւի ն-րդ համարի վերջում, ով կամենում է 6 հասորը միասին կազմել:

Առիթից օգտում ենք՝ խնդրելու մեր բաժանորդներին, որ բովանդակութեան թերթիկներով չը զլանան ծանօթացնել «Մուրճ»-ի հետ նրանց, որոնք ղեւ ևս բաժանորդ չեն «Մուրճ» ամսագրին:

«Մուրճ»-ին նոր գրւողները կը ստանան տարւայ բոլոր համարները:

ՄԱՐԱՇ. Տէր Նահապետեանցին: Ուղարկեցինք Ձեղ «Մուրճ»-ի 5 համարները առանձին ծրարով, իսկ 6-րդը՝ հատարակ բանդերով:

ՊՈԼԻՍ. պ. Կ.-ին: Մեր գրական լեզուում ընդունած է եւրոպական կարգը՝ անձանօթին և ոչ մտերիմ ընկերին «Դուք», «Ձեր» ասել և բայրը չոգնակի գործածել: Տաճկահայերը, պրակտիկի մէջ, այդ սովորութիւնը խստութեամբ չեն պահում, երեխ տաճկական լիպուի ազգկցութեան տակ: Այդ պատճառով դուցէ Դուք, Պոլ-սեցիք և Տաճկահայերդ առհասարակ, չը գիտէք թէ որքա՞ն խորթ է մեղ Ձեր սովորութիւնը: Մենք այդ կարգը չիմացող ներին անկիրթների շարքն ենք զատում:

ԻԶՄԻՐ. պ. Միհրան Աղնաւանին: «Խենթը» նոր սպաղրւած չը կաչ, իսկ առաջին տպագրութեամբ՝ նա սպառւած է: Քայց կը ներէք, եթէ սուելու լինինք, որ խմբագրութիւնը կողմնակի լանձնարարութիւններ չի կատարում, իսկ կատարելու դէպքում, նա ստանում է նախ վճարը և ոչ թէ հակառակն է վարւում:

ԲԱՔՈՒԻ Մարդասիրական Ընկերութեան 25-ամեակ լօրէլեանին, տպելով հանդիսին ստացած հեռագիրների և ուղերձների ցուցակը,

մինք նոյնքան ուրախութեամբ տեղ էնք սալիս ակստեղ մեր թղթակից աշխատակից պ. Ա. Զ. Նի նամակին, որից քաղում հնք հետեւեալը.

«Շամախու թեմի սրբազն առաջնորդ Մեսրոպ արքեալիսկոպոս Ամրատեանից, հանդիսից քանի մի օր հասոց, ստացւեց մի ուղերձ, որը իւր ժամանակին չէր ստացւել միմիան այն պատճառով, որ երկաթուղարին երթեւեկութիւնը երկար ժամանակ դադարել էր. Այդ ուղերձի մէջ նորին սրբազնութիւնը բանդում է իւր խնդութիւնը և ուրախութիւնը հանդիսի առիթալ և օրհնում է Ծնկերութեանը, որ նա հրկար դարեր յարաւել»:

Ստացւած էր նաև մի հեռազիր Թիֆլիսի Հաջոյ Բարեգ, Ընկերութեան ընդհանուր ժողովի նախադահ պ. դօքոր Բագրատ Նաւասարդեանցից:

ԵԲԵՒԱՆ. պ. Յովհաննէս Վարդանեանցին. Հինգ րուբլին ստացանք, ՇՈՒԵՆԻ. Պէրսէկ. Չեր ոտանաւորը Խմբագրութեան կողմից ուշադրութեան առնեց:

ԲԱՐԲՈՒ. Մելիք. Չեղնից տեղեկութիւններ հնք սպասում:

ԿԱՐՈՒ. Հեռազրասէր 11 պարոններին. Չեր «հոգու ամբողջ կարողութիւնից» վեր Դուք սիսալ էք զործել. Չեղ խարել են, զայթակդեւ, Դուք խաբւել էք, զայթակվել. Կարդացէք «Մուրճ»-ը վրը հաւատով, և կը գտը այն եղբակացութեան, որ այս ամսագիրը զիտէ ճանաչել և դնահատել մարդկանց ոչ անպէս, ինչպէս Չեղ սովորեցրած են ցացօրինթէ անցեալով չէք խրառած, «Մուրճ»-ը ապագալում Չեղ ցոց կը տաէ, թէ ո՞ւմ դասողութեանը և աղղամասութեանը Դուք պէտք է հաւատաք:

ԲԱՐԲՈՒ. պ. Միրդա-Աւագեանցին. Ստացանք մի րուբլին, բայց չուղարկեցինք. Չեր հասցէն չունենալու պատճառով. Մի բաց նամակալ լավանեցէք, «Քերարամը և Առլին» արժէ 60 լուպ.:

ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ. Նոյս, որոնք «Յեցեր»-ի Տաճատ Գնթունու ախալի մէջ ակնարկութիւն են տեսնում Հայովիկի մասին, բայսնում հնք, որ «Մուրճ»-ի խմբագրութիւնը, «Յեցեր»-ի ձեռագիրը կարդալիս, ոչ մի թագցրած տենգենցիա չի նկատել և չի էլ նկատում. Խալ եթէ ազգակիսի տենդինցիա նկատած լինէր, նա երբէք չէր թողլտալ մի ադրբիսի վէպի տապագրութիւնը «Մուրճ»-ի էլեկտրում. Մինք ընդունել ենք պ. Պոօշեանցի վէպը իբրև լոկ վէպ,

որի մէջ դուրս են բերած ժողովրդի զանազան կարգի ցեցերը, Հալլիկը ոչ մի զեր չէ խաղում «Յեցեր»-ի մէջ՝ որպէս մի անձ նաւորութիւն, մի տիագ:

«Յեցեր»-ի մէջ դուրս բերած գլուղական հանգամանքները և ախալերը, մեծից մինչև փոքրը, անքան ճիշդ են երևում, որ մենք դուշակում ենք, թէ ինչ ահազին հասարակական նշանակութիւն պիտի ձեռք բերի մեր հրատարակած վէպը։ Երևանեան նահանգից եկողները պատմել են մեղ այն բարերար ազդեցութեան մասին, որ արել է «Յեցեր»-ի ընթերցանութիւնը։ Ինչ մենք լսել ենք նոցանից, որպէս նաև համալսարական ուստանողներից, մեղ աւելի ու աելի հաստատում են այն համոզման մէջ, որ նենգաւորների ջանքերը «Յեցեր»-ին մի այլ լուսաբանութիւն տալ—հրէշաւոր կերպով արհեստական են, Վերջին տարիներում լոյս տեսած վէպերից, Պոօշեանցի «Յեցեր»-ը իւր հասարակական նշանակութեամբ, ըոնում՝ անկասկած առաջին աեղը։ Արհեստական լուսաբանութիւնից ուրախացած ները այն ցեցերն են, որոնց դէմ լարւած են մեր շանթերը, Նրանք երեխ շատ գոհ են, որ իրանց դիմակները կը ծածկւեն լրագրական կույներով։ «Մշակ»-ը ձեղ օգնական, Բալասան աղաւ, Տաճատ Գնթունի և պարոն Խուզօ:

**ԱԽԱԼՔԱԼԱՔ.** Պ. Գր. Դ., «Թէ խոռվախող»-ը հաւանեցինք և կը ապագրւին Երկրորդը՝ «Սիրու բերկրանք» չի տպւելու։

**ՄՈՍԿԻՍ.** Պ. ԱՐԾԻԻԵՍՆԻՆ. Թողւեց հետեւեալ անգամին, ուշ հասաւ մեղ։

**ՎՐԻՊԱԿ.** Երես 921, Ֆէօզօրովի ոտանաւորի մէջ, առաջին տող վերջին տաճ՝ «մի զարթեք», պէտք է լինի՝ «մի ջարդիր»։

«ՄՈՒՐՃԱ-Ի ԽՄԲԱԳԻՐԱՏԱՆ ՄԵԶ ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ»

թ. կ.

|                                                                                       |      |
|---------------------------------------------------------------------------------------|------|
| ԱՐԱՄԽԵԱՆԵԱՆՑ ԱԻ.— «Ազգաբնակութիւնը և ազգա-<br>բընակչական շարժումները» . . . . .       | — 40 |
| ՆՈՅՆ ՀԵՊԻՆԱԿ.— «Հողատիրութիւնը և հասարա-<br>կութիւնը» . . . . .                       | — 40 |
| ԲՈԿ ԲԺԻԾԿ.— «Ֆիզիքական և մուաւոր դարդացման<br>մասին» . . . . .                        | — 30 |
| ԱՐԱԾԽԱՆԻԱՆՑ Ա.— „Զակազակա խլենայ тор-<br>говъля“ . . . . .                            | — 75 |
| ” ” — „Զակազаціє шелкометальне<br>заводы“ . . . . .                                   | — 80 |
| ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆՑ ՏԻԳՐԱՆ.— «Փողովրդական հեքիաթ-<br>ներ», 4-րդ գիրք . . . . .               | — 50 |
| ” ” «Փողովրդական հեքիաթ-<br>ներ», 5-րդ գիրք . . . . .                                 | — 50 |
| ՊՌՈՇԵԱՆՑ ՊԵՐՃ.— «ՅԵՅԵՐ»—(վէպ) . . . . .                                               | 1 —  |
| Ճանապարհածախար խմբագրութեան վերայ է: Դրամի տեղ կա-<br>րելի է ուղարկել ազատի մարկաներ: |      |

## ՄՈՒՐՃԱ ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԵՇԱՅՐԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ուսուցիչների, վարժուհիների և բարձրագոյն դպրոց-ների ուսանողների համար:

ԹԻՖԼԻՍՈՒԽՄ վճարում են կամ միանւագ 8 րուբլի տարւայ սկզբին  
և կամ տարեկան 10 րուբլի այսպէս՝

|                  |   |   |   |   |   |   |   |   |      |
|------------------|---|---|---|---|---|---|---|---|------|
| Յունարի 1-ին     | . | . | . | . | . | . | . | . | 2 ր. |
| Փետրւարի 1-ին    | . | . | . | . | . | . | . | . | 2    |
| Մարտի 1-ին       | . | . | . | . | . | . | . | . | 2    |
| Մայիսի 1-ին      | . | . | . | . | . | . | . | . | 2    |
| Սեպտեմբերի 20-ին | . | . | . | . | . | . | . | . | 2    |

ԳԱԻԱՌԻՆԵՐԻՑ ուղարկում են տարեկան 9 րուբլի այսպէս՝

|               |   |   |   |   |   |   |   |   |      |
|---------------|---|---|---|---|---|---|---|---|------|
| Յունարի 1-ին  | . | . | . | . | . | . | . | . | 3 ր. |
| Փետրւարի 1-ին | . | . | . | . | . | . | . | . | 3    |
| Մարտի 1-ին    | . | . | . | . | , | . | . | . | 3    |


Բարձրագոյն դպրոցներում ուսանողները վճարում են տարեկան 8  
րուբլի այսպէս՝

|               |   |   |   |   |   |   |   |   |      |
|---------------|---|---|---|---|---|---|---|---|------|
| Յունարի 1-ին  | . | . | . | . | . | . | . | . | 3 ր. |
| Փետրւարի 1-ին | . | . | . | . | . | . | . | . | 3    |
| Մարտի 1-ին    | . | . | . | . | . | . | . | . | 2    |

Հասցէ Տիֆլիս. Ռեդակցիա յարն. ՄՈՐՉՅ.

Ի ՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ  
,,ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿԱԽՄ

Ա Ր Ժ Ա Ն Ա Յ Ա Ն



աշխարհի մեջ կարևոքենաների բոլոր ցուցահանդեսներում

**ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐՊԵԽՆԵՐԻ**

Նարմանը ընկերներ տան տիկինների և ազնիւ օգնականներ բոլոր արհեստավորների համար

**ԳՏՆԻՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ**

Թիվ լիսում. Զինդերի ընկերութեան կենդրոնական պահեստում. Գոզգինսկի պրօպերեանտ վերայ, Միքամանվի տան և. Նրան բաժանում. Դների մէջ.

|                               |                   |
|-------------------------------|-------------------|
| Բազւում. Մեքայէլեան փողոցում, | Բաթումում.        |
| Միջան Աւագեանի առ.            | Պոլեցիական փողոց, |
| Քոյթայսում. Բորլարի գեմ,      | Միջամանվի առ.     |
| Հեշեկովի առ.                  | Մարզ-Միլդանի գեմ, |

|                          |                          |
|--------------------------|--------------------------|
| Պաթում. Պոլեցիական փողոց | Պաթում. Պոլեցիական փողոց |
| Արագեանի առ.             | Մարզ-Միլդանի գեմ,        |
| Գոյթայսում. Երանեցի գեմ, | Մարզ-Միլդանի գեմ,        |
| Հեշեկովի առ.             | Մարզ-Միլդանի գեմ:        |

և նրանց ճանապարհութուղ գործակալների հօռ

Միջան են Հիւսիսացին Երանեցի ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ և ԲԵԿԵՐ. Գլխարու ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՈՏ

Գ. Ն Է Ց Ֆ Լ Ի Ն Գ Ե Ր

Գնողները կօրող են, եթէ կամնում են, դրամը հետզետէ վճարել սակաւ քանակութեամբ, այն է՝ չարաթով կամ ամսով և կամ ժամանակոմիջոց ստանալ զրաւականվ դրամը վճարելու համար:

Յ. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում զտնուում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս են. ասեղներ, թել, մետաքս և ալ մեքենային պատկանելի իրեղէններ ամենաչափաւոր գներով:

արտօնութիւն ստացած



Հ Ա Կ Ա Ր Ա Վ Ե Ա Ն



A man in a suit stands next to a large, ornate circular object.



# ՄԱԿԻՃ

## ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ է:

|                                 |                   |
|---------------------------------|-------------------|
| Տորեկոն բաժանորդագինը . . . . . | <b>10 ր.</b>      |
| Կէս տապուանը . . . . .          | <b>6 ր.</b>       |
| Երեք տանուանը . . . . .         | <b>4 ր.</b>       |
| Մի գրքովկը . . . . .            | <b>1 ր. 50 լ.</b> |

Աւագիչները, վարժուհիները և բարձրագոյն զոլոտյների տանողները վայելում են զիջումներ, հանեմաս առանձին սպած յայտարարութեան:

Մուրճի ամեն մի համարը, որպէս առաջին «Հրահրա»-ի մէջ տաւած էր, ունենալու է 8—10 տապարական թերթ, կամ՝ որ նոյնն է 128 մինչ 160 երես: Մուրճը ցայդում տաւած է 185 երես աւելի, քան միջին թւով խոստայցածը: Ամբողջ տարին Մուրճը կազմելու է 12 գիրք, երեք մէծ հասորներ, շուրջ 1800 երեսով:

Նոր բաժանորդները կը ստանան նախարդ համարները:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ ԵՆ

|                                  |              |
|----------------------------------|--------------|
| Ամսուկոն մի երեսի համար. . . . . | <b>10 ր.</b> |
| ,, կէս երեսի համար . . . . .     | <b>6 ր.</b>  |
| ,, քառորդ երեսի համար . . . . .  | <b>4 ր.</b>  |

Գրքերի յայտարարութիւնների համար կարելի է վճարել նույն յայտարարւած գրքերով՝ ողյա զների համաձայն:

Խմբագրութեան հասցէն՝ Տիֆլիս. Բъ Редакцію журнала „МУРЧ“. Խմբագրութիւնը գտանուում է՝ Գանօվեան փողոց, տուն Յովհաննիսեանի, (Гановская улица, домъ Иоаннисяни). բոլորովին մօտ Երեանեան հրապարակին:

Արտասահմանից՝ Tiflis, Rédition de la Revue «MOURTCH».